ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ ԵՒՐՈՊԱՅԻ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ
ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ
ԵՒ
ԱԶԳԱՅԻՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

PESSIMIST (ԳԻՒՏ ԵՄՍ.)

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ
ՎԵՐՋԻՆ ՓՍԱՆԵՒՀԻՆԳԱՄԵԱԿՈՒՄ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՍԱՀՄԱՆԱՊՐՈՒԹԻՒՆԸ
ՅԼ. ԴԱՐՈՒՄ

ՌՈՒՍԱՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԻՃԱԿԸ
ԱԶԳԱՑԻՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ

28/II 27 Կ. Տատրաշյանի նվիրատվություն

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ


ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ

ԵՒ

ԱԶԳԱՅԻՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

ԿԵՎ 1273

PESSIMIST (ԳԻՒՏ ԵՄՍ.)



ՏՊԱՐԱՆ **ՄԱՍԻՍ** - ՓԱՐԻԶ
208 bis, ԼԱՖԱՅԷԹ ՓՈՂՈՑ, 208 bis

1926

Հայ եկեղեցու բարեկարգութեան խնդիրը լուծել կարող է Ազգային Եկեղեցական ժողովում:

Ամենայն Հայոց կաթուղիկոսը պաշտօնական կարգադրութիւն է արել 1923 թ.ից մշակելու բարեկարգութեան հարցերը եւ նախապատրաստութիւններ տեսնելու Ազգ. Եկ. ժողով գումարելու:

Այդ միեւնոյն խնդրի երկու կողմերի պարզաբանութեան են նուիրուած յետագայ երեք համառօտ գեղուցումները, որոնք թէեւ միմիանց շարունակութիւն չեն, սակայն միեւնոյն խնդրին են վերաբերում եւ այդ տեսակէտից մի ամբողջութիւն են:

Բարեկարգութեան խնդիրը պէտք է լուծուի. ուրեմն անհրաժեշտ է Ազգ. Եկեղ. ժողով գումարելու. որքան բազմակողմանի եւ տարբեր տեսակէտներից պարզաբանուեն խնդիրները, այնքան հարցերի լուծումը կ'դիւրանայ:

PESSIMIST (ԳԻՒՏ ԵՊՍ.)

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ

ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ

ՎԵՐՋԻՆ ՔԱՆՆԵՒՀԻՆԳԱՄԵԱԿՈՒՄ (*)

1.

Հասարակական իրաւակարգի, տնտեսական փոխ-յարաբերութիւնների, գաղափարների և մտահայեցողութեան խոշոր պատմական բեկումն տեղի ունեցաւ Եւրոպական մեծ պատերազմից յետոյ։ Տեղի ունեցան իրաւական-տնտեսական խոշոր փոփոխութիւններ մի քանի մեծ ու փոքր պետութիւններում. յեղաշրջումները ազդեցին կողմնակի կերպով և միւս երկրներին։ Պատմական այդ մեծ յեղաշրջումի ազդեցութիւններից զերծ չմնաց և քրիստոնեայ եկեղեցին, իբրեւ նոյն հասարակական կարգերի և կազմի մի արտայայտութիւնը։ Վերջին տարիներում ծայր տուած քրիստոնէական եկեղեցիների համագումարները Եւրոպայում և Ամերիկայում նպատակ ունեն քրիստոնեայ եկեղեցիներին նոր ըմբռնումների և փոխ-յարաբերութիւնների համապատասխան կազմակերպութիւն տալ, միութիւն առաջ բերել եկեղեցիների մէջ, ժամանակի հրատապ հարցերին (կապիտալի և պրօլետարիայի փոխ-յարաբերութիւնը) իրենց ըմբռնմամբ որոշ լուծում տալ, թէեւ այս ժողովները գործնական արդիւնքներ դեռ չեն տուել և դժուար թէ նրանց յաջողուի որ եւ է լուծում

*) Կարդացուել է 1924 թ. փետր. 20ին, Էջմիածնի Միաբանական ժողովում։

տալ այն հարցերին, որոնք աւելի դասակարգային բնոյթ ունին:

Կարեւորն այն է, որ եկեղեցին եւս ընդհանրապէս փոփոխութիւնների, բարենորոգութեան ճանապարհն է բռնել: Եկեղեցին մի վերացական ըմբռնումն չէ և ոչ էլ փիլիսոփայական մտահայեցողութիւն, այլ կենդանի մարմին է, որն ապրում է, գործում հասարակութեան մէջ: Փոխւում է հասարակութեան կազմը, նրա դասակարգերի փոխ-յարաբերութիւնը, մտահայեցողութիւնը, փոխւում և հասարակական կեանքի մի արտայայտութիւնը եղող եկեղեցին:

Հայ եկեղեցին եւս անմասն չէ մնացել բարենորոգութեան շարժման մէջ: Իրրեւ ուրոյն կազմ ու բնոյթ ունեցող եկեղեցի նա աւելի շահագրգռուած է իր տեղական, զուտ հայ եկեղեցուն վերաբերող հասունացած հարցերին լուծումն տալու խնդրով, քան համաքրիստոնէական - տիեզերական եկեղեցուն վերաբերող հարցերով: Հայ եկեղեցու անցեալը նրան իւրայատուկ կազմակերպութիւն և արժէք է տուել հայ կեանքում. այս հանգամանքն էլ նրա բարենորոգութեան հարցին տուել է առանձնայատուկ բնոյթ:

Հայ եկեղեցու բարենորոգութեան հարցը սերտ կապ ունի նրա առանձնայատկութեան հետ. առանց նրա այդ ուրոյն կողմն ի նկատի ունենալու այդ հարցով զբաղուողները միակողմանիութեան մէջ կընկնեն և վատնզաւոր սխալ լուծումներ կառաջարկեն:

Ճշմարիտ է մեր մամուլում և գրականութեան մէջ այդ առանձնայատուկ կողմը շատ է շեշտուած, սակայն գիտական տեսակէտից քիչ է պարզաբանուած. իսկ այս անհրաժեշտ է:

Հասարակական զարգացման էութեանը անտեղեակ անձինք միայն կարող են միամտութիւն ունենալ յայտարարելու, որ եկեղեցին քարացել է, փթել է և այլ նման որակումներ, քանի որ եկեղեցին եւս հասարակական ծնունդ է և հասարակական զարգացման օրէնքներին ենթակայ, մանաւանդ հայ եկեղեցին, որը շատ աւելի կողմերով կապուած է եղել հայ կեանքի հետ, քան միւս եկեղեցիները իրենց հաւատացեալ համայնքների հետ:

Հայ եկեղեցու բարենորոգութեան խնդիրը, որը իսրն անցեալ ունի և սերտ կապ հայ կեանքի զարգացման հետ, իւր վերջին 25-ամեայ գոյութեան ընթացքում ունեցել է միմիանցից տարբեր երեք ջարեւոր շրջան, որոնց ուրուագծօրէն պարզաբանութիւնն իսկ ցոյց կ'տայ, թէ ինչպէս այդ խնդիրը հայ կեանքի զարգացման հետ փոխւել է շարունակ և որ հայ հասարակութեան (խօսքը միշտ էլ նախկին ռուսահայ հատւածի մասին է) իրաւական տնտեսական փոփոխութեան հետ փոխւել է և հայ եկեղեցու բարենորոգութեան խնդրի բնոյթը. մի հանգամանք, որ մի կողմից բնորոշում է թէ հայ եկեղեցին ի՞նչ առանձնայատուկ կողմ ունի և միւս կողմից կանխորոշում ապագայ բարենորոգութեան խնդրի ընթացքը:

Եկեղեցու բարենորոգութեան խնդրով զբաղուողները, որոշ չափով անգիտակցաբար, խնդիրը խճողում, բարդացնում են, առաջ են բերում շփոթութիւններ մտքերի և անտեղի բանակռիւներ. եկեղեցին հոգեւորականութիւնից, Աւետարանը եկեղեցուց չտարբերողները և իրար ծածկող զաղափարներ յայտարարողները անկասկած բարենորոգութեան հարցին սխալ ընթացք են տալիս և սխալ լուծումն առաջարկում: Եկեղեցին պէտք է տարբերել հոգեւորականութիւնից, Աւետարանը եկեղեցուց, որովհետեւ տարբեր հասարակական կատեգորիաներ են, որքան և կապ ունին իրար հետ:

Որ և է հասարակական ուսմունք չի կարելի անընդունելի համարել նրա համար, որ այդ ուսմունքը կեանքում կիրառողները ապիկար են ներկայ վայրում և այժմեան պարագաներում, և ոչ էլ հիմնարկութիւնը

կարելի է աւելորդ համարել, որովհետև նրա պաշտօնեաները անհամապատասխան են իրենց կոչման: Դպրոցը աւելորդ հիմնարկութիւն չէ այն պատճառով, որ այնտեղ պաշտօնավարող դասատուն մանկավարժ չէ. մանկավարժութիւնը անօգուտ գիտութիւն չէ, երբ դպրոցը խեղաթիւրում է այդ ուսմունքը և դարձնում միակողմանի, խալիֆայական սիստեմի է վերածում:

Մեզանում քննադատները եկեղեցին, կրօնը և հոգեւորականութիւնը միմիանց հետ շփոթում են. վատ հոգեւորական լինելու հանգամանքից եզրակացնում են թէ եկեղեցին աւելորդ է. եկեղեցում որոշ պայմանների շնորհիւ տեղանուսական հին սովորութիւններ մնած լինելու պատճառով Քրիստոսի բարոյական վարդապետութիւնն են պախարակում, անգամ կրօնը աւելորդ յայտարարում: Բարեներոգութեան խնդրով լրջօրէն զբաղուողը կ'տարբերէ այս ամենը իրարից և այդ դէպքում հարցը պարզ և հասկանալի կ'դառնայ:

Քանի որ Ամենայն Հայոց Կաթողիկոսը պաշտօնապէս հայ եկեղեցու բարեներոգութեան խնդիրը քննութեան է դրել և թէ՛ դրսում թէ՛ մեզանում կան այս խնդրի պարզաբանութեամբ զբաղուողներ և հետաքրքրուողներ, կարեւոր է ծանօթանալ բարեներոգութեան խնդրի վերջին 25-ամեայ ընթացքի էական կողմերի հետ. տեսնել ի՞նչ պայմաններում բարեներոգութեան ի՞նչ հարցեր են դրուել և արդեօք հայ եկեղեցին յիրաւի՞ խուլ է մնացել այդ հարցերի նկատմամբ, ինչպէս մի քանիսը տարածում են, յամենայն դէպս ո՛չ եկեղեցու օգուտն ի նկատի ունենալով. այնու ամենայնիւ լուծուել են հարցեր և մնացել են այնպիսիները, որոնց լուծումը գերազանցապէս հայ ազգ. եկ. ժողովին է վերապահուած, որի գումարման համար էջմիածինը 1924 թուից նախապատրաստութիւններ է տեսնում:

2.

ԺԹ-րդ դարու վերջում հայ եկեղեցու բարեներոգութեան հարցը նախկին ռուսահայ հասուածում երկու կարեւոր խնդիր ունէր. քահանայական հարց, քահանաների ռոճիկի հարցի հետ, և էջմիածնի միաբանութեան հարց: Այդ հարցերի շուրջը, յատկապէս քահանայական հարցի, գրքեր էին գրւում (Արիստակէս եպ. Սեդրակեանի քահանայական հարցը, Լեւոն Սարգսեանի Հին ցաւը), սուր բանակռիւներ էին տեղի ունենում մամուլում:

Քահանայի դերը հայ համայնքի կրթական, բարոյական դաստիարակութեան գործում պատասխանատու էր և բազմակողմանի: Քահանայից պահանջում էին լինել ամենագէտ, իր համայնքի և՛ նիւթական և՛ բարոյական վէրքերին ապեղանի դնող: Քահանան պիտի լինէր և՛ Աւետարանի քարոզիչ, եկեղեցու պաշտօնեայ, և ուսուցիչ և գիւղատնտես և բժիշկ և փաստաբան, որ կարողանար իր համայնքի ամենատեսակ պահանջներին բաւարարել:

Ջեռնադրուող քահանաները շատ էին հեռու այդքան պատրաստութիւն ունենալուց. շատերը նոյնիսկ միջնակարգ դպրոցաւարտներ չէին. այսպիսիները սովորաբար քաղաքներ էին ճամպարում «կուլտուրական կեանքով ապրելու». գիւղը նրանց նիւթական ապահովութիւն և կուլտուրական յարմարութիւններ չէր տալիս: Գիւղերում քահանայ էին դառնում անպատրաստ անձինք, որու առաջն առնելու համար քահանաներին ռոճիկ տալու հարցն էր բարձրացել. շատ ծրագրներ են առաջարկւել, կազմւել են քահանայական մ/ութիւններ, կանոնագրութիւններ, գանձարկղներ, սակայն վախճանական, բաւարար լուծումն չի տացւել ցայսօր:

Երկրորդ հարցը — էջմիածնի միաբանութեան

հարցն էր, որին խստօրէն քննադատում էին, ասելորդ և վնասակար էին համարում միաբաններից արտասահման գնացողների ստուգաբանութիւն սովորելը. առաջարկում էին գործնական դիտելիքներ սովորել: Բողոքում էին և այն բանի դէմ, որ ճեմարանի, թեմական դպրոցների և ծխական եկեղեցական դպրոցների ղեկավարութիւնը միաբանութեան, էջմիածնի ձեռքում էր գտնւում. պահանջում էին, որ այդ ամենը յանձնուի աշխարհականներին:

Այսրկովկասում այդ շրջանում կառավարչապետ իշխան Գօլիցինի ամեն ազգային ինքնուրոյն կուլտուրական շարժում ուիններով ճնշելու դաժան քաղաքականութիւնն էր իշխում: Հայ տարրական դպրոցներից մեծագոյն մասը փակւել էին, ոստիկանական հակողութեան տակ էին առնւել հայ հասարակական հիմնարկութիւնները (բարեգործական, հրատարակչական). հայ մտայնութիւնն աշխատում էր հայ եկեղեցու, հոգեւորականութեան միջոցով հայ կուլտուրայի սաղմերը իր ըմբռնումով կենդանի պահել ռուսահայ հասւածում: Ժամանակի հասարակական հայ ուժեղ հոսանքը «Մշակական» հոսանքն էր որը և տօն էր տալիս հասարակական խնդիրներին. սրա դէմ գործում էր ասելի թոյլ «Նոր-Դարական» հոսանքը, որը դէմ էր եկեղեցական բարենորոգութիւններին և մշակականների առաջարկները այդ ուղղութեամբ ազգի համար վնասակար էր համարում:

Ռուսահայ հասւածում դեռ կերպարանաւորուած, կազմակերպւած քաղաքական հայ կուսակցութիւններ չկային, կային միայն հոսանքներ և իրը այդպիսիները նրանք երերուն էին, շփոթ, չպարզուած, իրենց մէջ ունէին տարբեր խաւերի և դասակարգերի ներկայացուցիչներ: Վերոյիշեալ երկու հոսանքների մէջ էլ կային և պրօլետարական և քաղքենի և բուրժուական և հոգեւորական դասերի և դասակարգերից մարդիկ:

Ականաւոր առաջնորդներն էին մի կողմում Գր. Արծրունին, որոշ տեսակէտով Ա. Աբասխանեանը իրենց հետեւորդներով. միւս կողմում, Աբգար Յովհաննիսեան, Սպ. Սպանդարեան իրենց կողմնակիցներով:

Սրանց կարծիքներից մի երկու օրինակ բերելով դաղափար կարելի է կազմել նրանց եկեղեցական բարենորոգութեան հանդէպ ունեցած հայեացքների մասին:

Գր. Արծրունին 1890 թ. յունվ. 20-ին հետեւեալն էր գրում Արիստակէս եպ. Սեդրակեանին. «Ձերդ Սրբազնութեան յայտնի է, որ ես 17 տարուայ ընթացքում միշտ պաշտպանել եմ այն միտքը, որ մեր եկեղեցին պէտք է վերանորոգուի...: Միայն վերանորոգելով և միշտ վերանորոգելով ազգային դարաւոր հաստատութիւնները կարելի է պահպանել նրանց և թոյլ չտալ, որ նրանք հետզհետէ քայքայւին: Այդ է պատճառը որ ինձ համարում են անհաշտ թշնամի մի հաստատութեան որի օգտի համար ես միշտ քարոզել եմ շարժում և ոչ թէ անշարժութիւն, համերաշխութիւն հոգեւորական դասակարգի և ժողովրդի մէջ, յարգանք հոգեւորական դասակարգի կողմից դէպի հոգեւորականները, յարգանք հոգեւորականների կողմից դէպի ժողովրդի իրաւունքները:» *)

«Մուրճ» ամսագիրը գրում էր. «Ամենքի համար էլ պարզ է և անվիճելի, որ մեզ հարկաւոր են կրթւած և լուսամիտ հովիւներ, ի սէր այն հասարակական հիմնարկութիւնների և խնդիրների, որոնք կապուած են եկեղեցու՝ հետեւաբար և հոգեւոր իշխանութեան հետ: Զգտել հեղեղել գիւղերն ու քաղաքները տգէտ քահանաներով կը նշանակէ գնալ հակառակ թէ՛ հասարակական շահերին և թէ՛ մեր եկեղեցու ժողովրդական ոգուն, ոգի որով այնքան պարծենում ենք:» **)

*) «Շովխ.» 1908 Թ. N. 5 եր. 78
**) «Մուրճ» 1896 Թ. 107 եր.

Սեդրակեան Արեւտակէս եպ.-ը, որ մշակական ուղղութեան էր պատկանում և Մկրտիչ Ա.-ի ժամանակ Արծրունու կաթողիկոսական երկրորդ թեկնածուն էր, իր «Քահանայական խնդիր» գրքում եկեղեցու բարենորոգութեան հետեւեալ հարցերն էր առաջարկում. ա.- կրթուած քահանաներ ունենալ. բ.- քահանաների թիւը կրճատել. 2-3 գիւղի համար մի քահանայ ձեռնադրել. գ.- կամաւոր տուրքերը վերացնել և ոճիկ նշանակել. դ.- եկեղեցիներում գանձանակ շրջեցնելը վերացնել. ե.- քահանաները պարտաւոր լինին ժողովրդի մէջ եղած հնէթանոսական սովորութիւնները վերացնել. զ.- եկեղեցիները զարդարել և կահաւորել միօրինակ. է.- աստուածապաշտութիւնը եկեղեցիներում միօրինակ դարձնել. և այլն նման պահանջներ:

«Նոր-դարական» հոսանքը, քննադատելով հոգեւորականների պակասաւոր կողմերը, դէմ էր եկեղեցու որ և է սովորոյթի, ծէսի, ձեւի ձեռնամուխ լինելուն: Արշակ Տէր-Միքայէլեանը, 90-ական թուականների պահպանողական հոսանքի աստուածաբան ներկայացուցիչը, յանդգնութիւն էր համարում եկեղեցական ծէսերին կպչելը և այդ առթիւ վկայութիւն էր բերում անցեալ եկեղեցական հայ հայրերից: *)

«Մշակական» հոսանքը, իբրեւ աւելի ուժեղ հոսանք, եկեղեցական բարենորոգութեան հարցը արծարծելով առաւելապէս ի նկատի ունէր քաղքենի մտայնութեան պահանջները. հաշւի չէր առնում հայ ժողովրդի խոշորագոյն տոկոս կազմող հայ գիւղացիութեան, որը կուլտուրապէս յետամնաց էր, անոտիապաշտութիւնների գերի և հետու այն պահանջներից, որ «ազատամիտ» հոսանքն էր առաջադրում: Գիւղացին

*) Արշ. Տէր-Միքայէլեան «Հայաստ. եկ. եւ իր ս. կաւմը» 18-22 եր.

անկազմակերպ, իներտ տարր էր, նրա մէջ հասարակական քաղաքական աշխատանքներ կատարողներ չէին եղել: Գիւղացին դեռ եւս «մի թաս արաղ» խմելով տպէտ տիրացուին քահանայ ձեռնադրելու համախոհական էր տարրագրում, տէրտէրի ասածը իմաստութիւն համարում և իր տուրբ եկեղեցուն հաւատարիմ էր աւելի քան ենթադրում էին մտայինները, թէեւ այդ հաւատարմութիւնը սովորութեան, աւանդութեան պահպանութեան հետեւանք էր, քան–տողջ գիտակցութեան և հիմնաւորուած համոզման:

Էջմիածնի միաբանութեան որոշ մասի և «մշակական» հոսանքի մէջ եղած պայքարը հայ հասարակական կեանքում դիրքեր գրաւելու և դրանք ամրապնդելու պայքար էր, որքան և այդ պայքարը աստուածաբանութեան օգտակարութեան կամ վնասակարութեան շուրջն էր պտտում: «Մշակական» հոսանքի համար եկեղեցում ազգայինը պէտք է գերակշռողը լինէր, և այս դէպքում աշխարհիկ տարրը առաջաւոր դիրքերը կ'գրաւէր. կրօնականը պիտի ստորադասը լինէր: Հակառակորդների համար երկու տարրն էլ հայ եկեղեցու մէջ հաւասար արժէք ունէին: Այս հոսանքների պայքարի պարզաբանութեան են նւիրուած մի կողմից «Արարատ»ի 1895 թ. Կարապետ, մասամբ Գարեգին վարդապետի յօդւածները, միւս կողմից «Մշակ»ի և «Մուրճ»ի մէջ եղած Լէօի, Լ. Սարգսեանի յօդւածները: *)

Երկու հոսանքներն էլ մշակուած ծրագրներ չունէին. «օրւայ չարիք» համարուող հարցերի շուրջը տեղի էին ունենում, երբեմն սուր կերպարանքով, բանակռիւներ:

Տաճկահայ նախկին հասուածում այս խնդիրները

*) Մանրամասնութիւնները տե'ս Գիւտ արեղայի «Կարապետ եպ.-ը իբրեւ հոգեւորական» բրօշիւրը, 1917 թ. Էջմ.

10-րդ կէտ. «Խղճի ազատութիւն. վերացնել բոլոր դաւանական և կրօնական սահմանափակումները։ Ազատութիւն տալ երդուելու մայրենի լեզուով բոլոր պետական և հասարակական հիմնարկութիւնների մէջ։»

11-րդ կէտ. «Վերականգնել ինքնավար հայկական եկեղեցու իրաւունքները, վերացնելով բոլոր սահմանափակումները ու խոչընդոտները, մանաւանդ ա) հայոց եկեղեցու կալուածքները, կուլտուրական-կրթական, բարեգործական հաստատութիւնները կառավարելու գործում, բ) ս. Էջմիածնի տիեզերի անդամների, թեմական առաջնորդների, յաջորդների և ուրիշ հոգեւոր վարչական պաշտօնեաների համակրական ընտրութեան գործում, և գ) թէ՛ ռուս-հայկական թեմերի և թէ՛ ամենայն հայոց հոգեւոր ազգային ժողովները պարբերաբար գումարելու գործում։»

12-րդ կէտ. «Վերադարձնել հայկական եկեղեցուն նրա ծխական դպրոցները և կալուածները, վերացնելով 1884-ից մինչեւ 1903 թւերի բոլոր օրէնքները և կարգադրութիւնները, որոնք վերաբերում են թէ՛ ծխական դպրոցներին և թէ՛ այդ դպրոցների և հայոց վանքերի, եկեղեցիների և հոգեւոր դպրոցների կալուածներին։»

13-րդ կէտ. «Հիմնել Կովկասում հայ կաթոլիկական թեմ թեմական առաջնորդի, հայազգի և հայ կաթոլիկ ընտրուած եպիսկոպոսով։»

Այս դիմումն արել էին նախկին ազատամիտ հոսանքի հետեւողները, քաղքենի-կապիտալիստ դասակարգի դաղափարախօսները։

Այսրկովկասում այս շրջանում արդէն գոյութիւն ունէին կազմակերպուած քաղաքական հայ կուսակցութիւններ, որոնք տարբեր վերաբերմունք ունէին դէպի հայ եկեղեցին, և տարբեր պահանջներ արին, որոնք բղխում էին իրենց քաղաքական ծրագրից։

Հայ եկեղեցին ռուսական քայքայող միապետու-

թեան հետ կապուած էր ոչ միայն իբրեւ կրօնական հիմնարկութիւն, այլ նաեւ իբրեւ հայ ժողովրդի ազգային միութեան կենտրոն։ Ռուսական կառավարութիւնը ոչ միայն չէր ուզում հայ եկեղեցուն վերադարձնել նրա կորցրած իրաւունքները, այլ ընդհակառակը, ձգտում էր նրան ամբողջովին ենթարկել իր տիրապետութեան։ Ռուսական կառավարութիւնը ոչ միայն չէր ուզում հայ եկեղեցուն վերադարձնել նրա կորցրած իրաւունքները, այլ ընդհակառակը, ձգտում էր նրան ամբողջովին ենթարկել իր տիրապետութեան։

թեան աչքում միշտ էլ անթաքնոյա էր ճանաչելու նրա բազմապիսի ճնշումներին հնթարկելը. փակել էին եկ.-ծխական դպրոցները. թոյլ չէին տալ նախկին ռուսահայ վեց թեմում էլ թեմական միջնակարգ դպրոցներ բանալ. (Շամախու և Ատրպատականի թեմերը չունեցան թեմական դպրոցներ մինչեւ վերջն էլ, չնայելով կաթողիկոսների անվերջ դիմումներին). 1903 թ.ին գրաւել էին հայոց եկեղեցական բոլոր կալուածները, հոգեւորականներից շատերին աքսորել էին Ռուսաստան: Հիւծուող բիւրոկրատիան իր կարդերն էր մտցնում աստիճանաբար հայ եկեղեցու մէջ, ամէն տեղ նշանակելով առաջնորդներ, փոխանորդներ, կոնսիստորիայի ծառայողներ հաստատելով: Հայ եկեղեցին ուրախութեամբ ողջունեց յեղափոխական նոր նուաճումները և առաջին հերթին աշխատեց օրւայ պահանջ դարձած, հաստատած բարենորոգումները:

Հայ հոսանքներին հետապրքրում էր դպրոցական-կալուածական հարցը և թեմական իշխանութեան ընտրական սկզբունքով կազմակերպելը: Այդ պահանջներին արձագանգ տւեց Մկրտիչ Ա. ը, 1906 Մայիսի 10 ի թ. 549 տւած կոնդակով, որով թեմի բոլոր պաշտօնեաների ընտրական սկզբունքն էր հաստատում: Այդ կոնդակում նա ասում էր. «Տեղ ենք տալիս, ժողովուրդ Հայոց, թեմական առաջնորդների, յաջորդների, գործակալների և հոգեւոր վարչական հաստատութեանց պաշտօնեաների ընտրութեան իրաւունքը, որից յետոյ ընտրեալները կ՚հրաւիրուեն իրենց պաշտօնին պետութեան կողմից սահմանուած օրինական կարգով»

Մի տարի յետոյ՝ Յունիսի 7 ին թ. 693 կոնդակով «Ռուսահայ սահմաններում ապրող հայ ժողովրդի ընտրեալ պատգամաւորների կենտրոնական ժողովն է» հրաւիրում: Կենտրոնական ժողովի նպատակն էր «իրբեւ Ռուսահայոց եկեղեցական գործերի կարգադրիչ և

Հայ 1243

տնօրէն քննութեան ենթարկել և որոշումներ տալ Ռուսահայոց բոլոր եկեղեցական գործերի վերաբերմամբ: Կենտրոնական ժողովի առաջիկայ նստաշրջանի առաջ դնում ենք իբրեւ անյետաձգելի կարեւորութիւն ունեցող խնդիրներ՝ դպրոցական, տնտեսական գործերը և թեմական ժողովները կարգաւորելու հարցերը:»

Մի կողմ թողնելով ժամանակի յեղափոխական հոսանքների վերաբերմունքների պատճառութիւնը դէպի եկեղեցին ու եկեղեցական բարեփոխութիւնը, նկատեմ, որ կենտրոնական ժողովը նպատակի չծառայեց, կառավարութեան կարգադրութեամբ ցրուեց, յետադարձ շարժումը Ռուսաստանում ուժեղացաւ, պետական Դուման աստիճանաբար խօսարան դարձաւ, իսկ Հոկտեմբերի 17 ի կայսերական հրովարտակը որով ազատութիւններ էր տրւում և սահմանադրական կարգ հաստատւում Ռուսաստանում, մնաց միայն թղթի վրայ:

Հայ մամուլում եկեղեցու բարենորոգութեան հետեւեալ հարցերն էին արծարծւել.

1.— Պօլօժէնիան բարեփոխել.

2.— Վարչական բոլոր գործերում գործադրել ընտրական սկզբունքը՝ ուղիղ, հաւասար, գաղտնի և ընդհանուր սիստեմով.

3.— Եկեղ. ծխական և թեմական դպրոցների համար կազմել, մանկավարժական սկզբունքները ի նկատի ունենալով, ուսման նոր ծրագիր.

4.— Վարչական բոլոր անձանց պաշտօնի կանչել ժողովրդական ընտրութեամբ.

5.— Դպրոցների դեկավարութիւնը հանել հոգեւորականութեան ձեռքից և յանձնել ժողովրդին.

6.— Վանական, եկեղեցական կալուածները կառավարելու գործը յանձնել մշտնջենաւորների, իսկ վե-

բանակոդուխիւնը աշխարհականներից ընտրուած մարմիններին:

7.— Ռուսահայ թեմերը կառավարել ոչ թէ միայն առաջնորդների, փոխանորդների և գործակալների միջոցով, այլ ընտրել գործակալական, վիճակային և թեմական խորհուրդներ:

8.— Իգական սեռին տալ ընտրական հաւասար իրաւունք արական սեռին:

9.— 21 տարին լրացած բոլոր հայ անդամներն, առանց սահմանափակութիւնների, իրաւունք ունենան հասարակական պաշտօններում ընտրելու և ընտրուելու:

*10.— Ուսումը պարտադիր դարձնել և ընդհանուր տուրքի սիստեմը մտցնել: *)*

Կենտրոնական ժողովում Դաշնակցական հոսանքը պահանջում էր.

*1.— Կրօնը պարտադիր չէ. 2.— Եկեղեցական-վանքական կալուածները համայնացնել, եկամուտները ազգային կուլտուրական հաստատութիւններին յանձնել. 3.— Հոգեւորականութեան թողնել միայն ծիսական, արարողական և դաւանական հարցերը. 4.— Կուլտուրական ներքին գործերի վերաբերմամբ օրէնսդրական տնօրէն մարմինը քառանդամ սիստեմով ընտրուած կենտրոնական պատգամաւորական ժողովն է: **)*

Աւելի ձախ հոսանքները յայտարարում էին «Եկեղեցու, էջմիածնի Կաթուղիկոսի, վարդապետների, հոգեւորականութեան ամեն բանի վրայ խաչ դնել:»

Բացի այս հիմնական սկզբունքներից, մամուլում արծարծւել են նաեւ հետեւեալ հարցերը.

1.— Եթէ հայ ու վրացի ամուսնանում են, չպահանջել, որ կրօնափոխ լինին, եթէ ամուսիններից մէկը օտարադաւան է:

---

*) «Արարատ» 1908 Թ, 1076 եր.
**) «Մշակ» 1906 Թ. N. 186:

2.— Քարոզչական կուրսեր հիմնել թեմի կենտրոնում ամառուայ 3 ամիսների ընթացքում, համաձայն քարոզչի դեկավարութեամբ, գիւղական քահանաների համար:

3.— Որբոց և այրեաց գանձարկղը կանոնաւորել՝ չքաւոր հոգեւորականների ընտանիքները ապահովելու:

4.— Տնօրինէքը վերացնել:

5.— Ամուսնացողների տարիքի տարբերութիւնը 10 ից աւելի չլինի:

6.— Դպիրների նիւթականը բարւոքել, հաստատուն ռոճիկ նշանակել և կրթական որոշ ցենզ պահանջել:

7.— Վանականութիւնը հեռացնել վարչական և հասարակական բոլոր պաշտօններից:

8.— Վարչութիւնը կազմել այսպէս, ապակեդրոնացման և կօլլեգիալ սիստեմով. միանձնեայ իշխանութիւն չլինի առաջնորդի, յաչորդի:

9.— Եկեղեցում մտցնել գործնական երաժշտութիւն:

10.— Տարին մի անգամ Ս. Պետրոսի լումայի պէս «Լուսաւորչի Լումայ» հաւաքել եկեղեցիներում:

11.— Կուսակրօնութիւնը գրկել արտօնութիւններից:

12.— Այրի քահանաներին ամենալայն իրաւունքներ տալ:

13.— Հայ եկեղեցին հաւասարեցնել նախնական պարզութեան. Մաշտոցը կրճատել:

14.— Եկեղեցում վերացնել գրաբարի գործածութիւնը:

15.— Պետական և ազգային դպրոցներում կրօնի ուսուցումը կամաւոր դարձնել:

16.— Էջմիածնում հրաւիրել ընդհանուր համազգային ժողով, առանց դաւանութեան խորութեան:

17.— Եղովբը եկեղեցում վերացնել:
18.— Օտար սրբերի թիւը քչացնել:
19.— Մեծ պասի ճաշուայ ժամերգութիւնը կրճատումով միացնել առաւօտեան ժամերգութեան:
20.— Հալաւօրհնէքը վերացնել:
21.— «Մեղայ»ն կրճատումներով ասել:
22.— «Հրաժարիմք»ը կրճատել:

Յեղափոխական շրջանում առաջարկւած բարեփոխութեան պահանջները արդէն շատ էին տարբեր ԺԹ-րդ. դարու խղճուկ քահանայական սիրացուական երէցփոխի հարցերից: Հասարակական կեանքում այդ ժամանակ դեր էին կատարում քաղաքական կազմակերպւած կուսակցութիւնները, որոնց ծրագիրները որոշ էին, բղխում էին դասակարգային պահանջներից: Հայ եկեղեցու բարեփոխութեան հարցն էլ ընդլայնուեցաւ և խորացաւ, ստանալով ծայրայեղ արտայայտութիւններ, որ յատուկ է յեղափոխական շրջանի առաջին ուժեղ թափի ժամանակ: Այդ շրջանում բարեփոխութեան խնդիրը դառնում է պարզապէս պայքար ուղղւած հոգեւորականութեան և եկեղեցու դէմ. հոգեւորականութեան դերը աշխատում են ամփոփել ծիսական - աստուածապաշտական արարողութիւնները կատարելու մէջ:

Ժամանակի նշանաբանը «ամեն ինչ ժողովրդականացնելն» էր. այդ նոյն պահանջը դրւեց և հայ եկեղեցու առաջ. սակայն 1905 թւի կիսաշունչ յեղափոխութիւնը շուտով իր նւաճումներով գրեթէ պատմական անցեալ դարձաւ, և որովհետեւ հայ եկեղեցու բարենորոգութեան ծրագիրը այդ շրջանում յեղափոխութեան հետ էր կապւած, ուստի և յեղափոխութեան թուլացումով թուլացան և բարենորոգութեան պահանջները. Էջմիածնում այլ եւս կենտրոնական ժողով չդումարւեց. ոչակցիան աւելի քան ուժեղ էր. երկրի ներսում ազգամիջեան (հայ-թուրքական) արնոտ ընդ-

հարումները կային, «գարնան ցնորքները» վերյուշել իսկ հնարաւոր չէր, որովհետեւ վաղաժամ աշնանը հետեւեց ցուրտ ձմեռը. հասարակական հոսանքները կրկին իրենց վաղեմի գաղտնարանները մտան, կրկին փորփորելու խարխլուած միապետութեան շէնքի հիմքերը:

4.

Եկեղեցական բարենորոգութեան երրորդ կարեւոր շրջանը սկիզբն առաւ ռուսական 1917 թւի մեծ յեղափոխութեան հետ. սակայն մինչեւ այդ էլ բարենորոգութեան հարցը քննութեան առնւեց թէ՛ մամուլում, թէ՛ մասնակի ժողովներում:

1908 թ. Մատթէոս Բ. Կաթողիկոսի ընտրութեան համար գումարւած ազգ. եկ. ժողովի պատգամաւորներից ոմանք իրենց հետ բերել էին պահանջներ ժողովրդի կողմից, որոնք պատգամաւորների կողմից քննութեան առնւեցին: Այդ պահանջներից էականներն էին՝

ա.- «Պօլօժէնիան» վերացնել. բ.- ընդհանուր ազգային պարտադիր տուրք նշանակել. գ.- համազգային ժողով գումարել, վերաքննելու եկեղեցու նախնի կանոնները և բարեփոխութեան ենթարկել ամուսնական և այլ կանոնները որոնք ներկայ պայմաններին անհամապատասխան են. դ.- Մինոդից սկսած բոլոր պաշտօնեաները ընտրովի լինին. ե.- Կաթուղիկոսին մօտ լինի մի ազգընտիր խորհուրդ հոգեւորական և աշխարհական անձերից. զ.- Սինոդում լինի յատուկ կալւածոց տեսչութիւն: *)

Մամուլում դրւեցին նոյն շրջանում հետեւեալ հարցերը.

1. Քահանաներին ապահովել՝ 250-300 ռուբ

*) «Արարատ» 1908 Թ. 1083 եր.

տալով իւրաքանչիւր քահանայի, դիւղերը միացնել երբ փոքր են և մի քահանայի յանձնել.

2. Ձատկի օրը սանիկի քաւորին գառ ուղարկելու սովորութիւնը վերացնել:

3. «Պօլօժէնիայով» նախատեսնուած թեմերի թիւը ռուսահայերի մէջ աւելացնել:

4. Հրահանգ երէցփոխի, աւագերէցի և եկեղեցու միաբանների յարաբերութիւնը որոշող:

Տփխիսի քահանաները Մատթէոս Բ. ին ուղերձ ներկայացնելով միաժամանակ խնդրում են՝ ա.- կուսակրօնութիւնը վերացնել. բ.- ձաշոցի ընթերցուածքները կրճատել:

Ուշագրաւ էր էջմիածնի միաբան Երուանդ վ. Տէր-Մինասեանի «Վերանորոգութեան կարիքը Հայոց եկեղեցու համար» յօդուածը «Արարատ» պաշտօնական ամսագրում, *) որը առանձին բրօշիւրով եւս լոյս ընծայուեց, բայց յետոյ ոչնչացուեց էջմիածնի տպարանի առաջ իբր ծայրահեղ ազատամտական գրուածք: Այդ տեղ գրողը հետեւեալ էական առաջարկներն էր անում. ա.- Եկեղեցու դաւանանքը նոր մարդու աշխարհայեացքին յարմարցնել. բ.- Եկեղեցու պաշտամունքը հիմնովին վերանորոգել. գ.- անհասկանալի, երկար ընթերցուածքները վերացնել. դ.- կուսակրօնութիւնը վերացնել:

Այս յօդուածի առթիւ բաւական բանակռիւներ եղան և ուշագրաւն այն էր, որ աշխարհիկ ազատամիտները այդ բանակռւում պահպանողական դեր ստանձնեցին և էջմիածնի միաբանին պատակտման, ծայրահեղութեան մէջ մեղադրեցին:

1912 թ. Հոկտեմբերի 2-10 էջմիածնում ռուսահայ հաւատքի թեմակալ առաջնորդները և Սինոդի անդամները ունենում են միացեալ խորհրդակցու-

*) 1908 թ. Մայիս-Յունիս, Հոկտեմբեր.

թիւն. ուր նատերում քննութեան են առնում հետեւեալ հարցերը.

1.— Եկեղեցիների բարեզարդութեան խնդիր.

2.— Էջմիածնում եկեղեցական զգեստների, անօթների, պատկերների պահեստ ունենալու, էջմիածնում մոմագործարան հիմնելու հարցերը.

3.— Քահանաների կրթական ցենզի, տնտեսական ապահովութեան, տեղափոխութիւնների, ապօրինի կնապահութեան, պետական և ազգային դպրոցներում կրօնուսուցչութեան, քահանաներին քննիչ նշանակելու հարցերը.

4.— Վանքերի եկամուտների, վանական հոգաբարձութեան, վանահայրերի, վանքերի վերանորոգութեան խնդիրները.

5.— Սրբադրամի, պաղադրամի, շնչադրամի, պսակադրամի, հոգեբաժնի հարցերը.

6.— Կոնսիստորիաների և հոգեւոր կառավարութիւնների պաշտօնեաների ցենզի և ապահովութեան խնդիրը.

7.— Ամուսնալուծութեան քննութեան եղանակի, ծննդեան վկայականը երդմամբ տալու խնդիրները.

8.— Պարբերաբար թեմերը քննելու, թեմերի բաժանման, յատկապէս Սատրախանի և Բեսսարաբիայի թեմերի սահմանները որոշելու խնդիրները.

9.— Դպրոցների համար ծրագիր, կանոնադրութիւն մշակելու, բարոյական-կրօնական դաստիարակութեան, ուսուցիչների ցենզի, ապահովութեան, դպրոցների ապահովութեան, դպրոցական ֆոնդի, թեմական տեսուչների, դպրոցական ժօղների, դպրոցական նոր ձեւի շէնքերի, պետական դպրոցներում հայոց լեզու և կրօն աւանդելու խնդիրները.

10.— Օտարադաւանններին մեր եկեղեցու ծոցն ընդունելիս անունները փոխելու, ո և է աղանդի հե-

տեւողի լուսաւորչականի հետ պահակելու հնարաւորութեան խնդիրները։ *)

Պօլօժէնիայի փոփոխութեան խնդիրը դեռ Մատթէոս Ա. ից սկիզբն էր առել. կաթողիկոսը կազմել էր տուել նոր սահմանադրութիւն և ուղարկել Պետերբուրգ կենտրոնական կառավարութեան հաստատութեան, սակայն մնացել էր անուշադիր։ Էջմիածնում 1914 թ. այդ խնդիրը կրկին քննութեան առնուեց,— մասնաւոր սահմաններում, այն է ռուսահայ հատուածում, ունենալ փոխանակ 6 ի 11 թեմ, կաթողիկոսի ընտրութեան ժամանակ չորս և երկու թեկնածուների ընտրութիւնը դադարի անել, կաթողիկոսական ընտրութեան նոր հրահանգ մշակել։ Սակայն Եւրոպական մեծ պատերազմի պատճառով այս անգամ եւս խնդիրն ընթացք չստացաւ։

Բարենորոգութեան խնդիրը այս միջանկեալ շրջանում եւս քննութեան է առնւում և միայն ժամանակի քաղաքական աննպաստ պայմանները, ռէակցիան, ժանդարմական ռէժիմը ամեն կերպ արգելք են լինում այդ հարցերին ընթացք տալու, մինչեւ որ վրայ է հասնում 1917 թւի ռուսական մեծ յեղափոխութիւնը։

5.

Երկրորդ մեծ յեղափոխութեան շրջանում, երբ ողջ Ռուսաստանը ազատւեց միապետական լծից և ազգերի ինքնորոշումը կրկին հրապարակ եկաւ, ռուսահայ նախկին հատուածն եւս իր ազգային ինքնորոշման խնդրին ձեռնամուխ եղաւ։ Մեր երկրում դեռ պատերազմական գործողութիւնները չէին դադարել, ժողովուրդը իր ուշքը ինքնապաշտպանութեան էր նւիրել և աշխատում էր իր քայքայւած տնտեսութիւնը վերականգնել, ուստի և եկեղեցու հարցով զբա-

*) Գիւան Հայրապետական, գործ 1912 թ. N. 38

ղողների թիւը քիչ էր։ Եկեղեցին հնարաւորութիւն էր ստացել իր բարենորոգութեան խնդիրները աւելի արագ և լայն չափերով լուծելու. ուստի, իբր նախապատրաստական ժողով, Ամենայն Հայոց Կաթողիկոսը 1917 թ. Յունիսի 12 ին Էջմիածնում գումարեց նախկին ռուսահայ հատւածի հոգեւորականների համագումար, որը տեւեց մինչեւ Յունիսի 23 ը։ Տեղի ունեցաւ 13 նիստ. մասնակցում էին 63 կուսակրօն և աշխարհիկ հոգեւորականներ։ Համագումարի նիստերի համառօտ արձանագրութիւնները և ընդունւած բանաձեւերը 1917 թւին հրատարակւեց Էջմիածնում առանձին գրքոյկով։

Համագումարի համար Հայրապետական Դիւանը հետեւեալ օրակարգն էր պատրաստել և ուղարկել թեմերը՝ խորհրդածելու այդ առթիւ.

I.— 1. Կուսակրօն և աշխարհիկ հոգեւորականների մէջ ներքին կապ առեղծել.

2. Ժողովրդի և հոգեւորականութեան մէջ բարոյական սերտ կապ ստեղծել.

3. Եկեղեցին իբրեւ գործօն հայ ազգային եկեղեցական կեանքում ներկայումս.

4. Եկեղեցու ներքին վարչական հարցեր.

5. Հայ հոգեւորականութեան մտաւոր բարոյական բարձրացման խնդիր.

6. Գիւղական քահանաների խնդիր.

II.— 1. Կուսակրօն հոգեւորականութեան վերակենդանացումը.

2. Վանքերի վերածնութեան խնդիր.

3. Վարչական կազմակերպութիւն.

4. Վանական կանոնադրութիւն.

5. Կալւածական խնդիր.

6. Հոգեւոր միջնակարգ և տարրական դպրոցների խնդիր։

Այս խնդիրները քննելով թեմերում կազմել էին

արձանագրութիւններ բարեփոխութեան հարցի առթիւ. այդ արձանագրութիւններում արծարծւել էին աւելի հարցեր, որոնցից քաղուածօրէն կարեւորները դնում եմ առորեւ.

Թիֆլիսի քահանաները առաջարկում են Եկեղեցին կոչել այսուհետեւ «Հայ Առաքելական Եկեղեցի».

2. Կաթողիկոսը երդումը տայ ազգին և եկեղեցուն.

3. վերացնել Սինոդը, կոնսիստորիաները և հոգեւոր կառավարութիւնները և հիմնել՝ գերագոյն, կենտրոնական, թեմական և գաւառական խորհուրդներ, կազմւած հոգեւորական և աշխարհիկ ընտրուած անդամներից.

4. Կուսակրօնութիւնը պարտաւորական չէ.

5, Հոգեւորականը ամուսնանում է այնքան անգամ, որքան և աշխարհականը.

6. Քահանան կարող է ստանալ բոլոր աստիճանները, այն է եպիսկոպոսութեան և կաթողիկոսութեան.

7. Ռոճկի հարցը կանոնաւորել.

8. Հոգեւորականութիւնը քաղաքացիական տարազ հագնէ.

9. Բարեփոխել ծէսերը, աստուածպաշտութիւնը, ուժեղացնել երգը, երաժշտութիւնը և կենդանի խօսքը.

10. Կազմել եկեղեցական կանոնագիրք.

11. Գումարել ազգ. եկ. ժողով:

Մանաւոր հոգեւորական անհատների առաջարկներ.

1. Պատարագից հանել «Առաքելոց»ը, կաթողիկոսի և թեմական առաջնորդի անունների յիշատակութիւնը.

2. Հաղորդութիւնը ճաշակողներին տալու ձեւը փոխել.

3. «Հաւատամք»ը կարդալ միայն պատարագին. այլ դէպքերում «Խոստովանիմք և հաւատամք»ը.

4. «Մեղայ»ի մէջ թողնել միայն «Այլ և մեղայ»ն, միւսները կրճատել.

5. Տօնացոյցից հանել օտար սրբերին.

6. Շաբաթապահը վերացնել.

7. Ընդունել Գրիգորեան նոր տոմարը.

8. Քարոզը պարտադիր դարձնել.

9. Երեկոյեան ժամերգութիւնը ճոխացնել ի հաշիւ առաւօտեանի.

10. Եկեղեցում գործադրուող նկարների խնդիրը քննել:

Թեմերից եկած առաջարկներից քաղուածքներ.—

1. Եկեղեցում դնել նստարաններ աղօթաւորների համար.

2. Քահանան իրաւունք ունենայ ծննդական վկայական տալ.

3. Վերացնել պաղի տուրքը.

4. Գերեզմանները չօրհնել առանձին առանձին, այլ ընդհանուր գերեզմանօրհնէք անել.

5. Գիտակցութիւնը կորցրած հիւանդներին, 1-10 տ. երեխաներին և խելագարներին չհաղորդել.

6. Քահանաների ձեռնադրութեան որոշումը թողնել թեմական խորհուրդներին.

7. Ժամերգութիւնը կրճատել.

8. Ժամերգութիւնը կատարել միայն տօն, կիւրակի և շաբաթ օրերը.

9. Ժամերգութիւնը համառօտել.

10. Թաղման հետ կապւած աւելորդ սովորութիւնները.

11. Բարեփոխել և կրճատել «Մաշտոց»ը, «Ճաշոց»ը, «Տօնացոյց»ը.

12. Քահանաներին իրաւունք տալ յաճախելու թատրոն, ակումբ.

13 Վարդապետները, երբ պաշտօն չունեն դրսում, մնան վանքերում և պարապեն գրականութեամբ ու գեղարուեստով:

14. Ս. Գիրքը թարգմանել աշխարհաբար.

15. Վանական կալւածների արդիւնքը յատկացնել ժողովրդի կուլտուրական գործին.

16. Կաթողիկոս կարելի համարել ընտրել նաեւ աշխարհականներից.

17. Հիւանդ, ծերացած հոգեւորականներին կենսաթոշակ տալ.

18. Կազմել քահանայական նոր կանոնադրութիւն.

19. Կրճատել հանգստեան ժամերգութիւնը.

20. Ճաշու 3 «Ողորմեա»ները միացնել և 1 «Ողորմեա» ասել.

21. Վերացնել Ծաղկազարդին ուռ բաժանելը, Ոտնալւային իւղ բաժանելը, Աւագ-Հինգշաբթի գիշեր մոմերը խպատ հանգցնելը, կտակի ընթերցումը և կրճատել Հարչարանաց գիշերւայ ժամերգութիւնը.

22. Պատարագին լրիւ չզգեստաւորուել, բաւականանալ միայն շուրջառ ձգելով, պատարագչի ձեռքեր լւանալը վերացնել.

23. Վերացնել քշոցի գործադրութիւնը, պատարագչի աշխարհ ման գալը, «ողջոյն»ի ժամանակ գլխով ողջունելը. բուրվառը գործադրել միայն սեղանի վրայ և ոչ ժողովրդի մէջ.

24. Պատարագամատոյցից հանել չգործադրուող սաղերը.

25. Մոմավաճառութիւնը եկեղեցուց դուրս կատարել.

26. Վերացնել եկեղեցում գանձանակ շրջեցնելը.

27. Կրճատել շարականներից քաղուածքները, նաեւ նզովք պարունակող շարականները. «Հաւատամք»ից հանել «Իսկ որք ասեն»ը.

28. Ատենի ժամագիրքը աշխարհաբար թարգմանել.

29. Ատենի ժամագրքից հանել «Այսօր Անճառ»ը, «Ասուած անեղ»ը, «Հրաժարիմք»ը.

30. Ջրօրհնեաց, Աւագ-Հինգշաբթի, Վարդավառի, Ասուածածնի, Խաչի և այլ երկար ժամերգութիւնները կրճատել. յատկապէս կրճատել ընթերցուածները.

31. «Մաշտոց»ից հանել հեթանոսական սովորութիւնները, նարօտ կապելը, նաեւ հետեւեալ կանոնները, որոնք չեն գործադրւում սովորաբար. «Յետ ուխտի օրէից», «Կարգ քառասնորդի», «Հաղորդ տալոյ», «Գիշեր ժամու աղօթք», «Խաչալուայ անելոյ», «Օրհնութիւն պատարագի կամ սեղանի մատաղի», «Հաւօրհնէքի», «Դժուարին յղի կնոջ», «Սերման օրհնելոյ», «Աշակերտ օրհնելոյ», «Վանն բարձման երաշտութեան», «Վանն այսահարի և լուսնոտի», և բժշկութեան աւետարանները և աղօթքները:

32. Վերացնել պսակի հանդերձ օրհնելը, պսակը վերացնելը.

33. Աւետարանը աշխարհաբար թարգմանել.

34. Տեղական սովորութիւնները, որոնք եկեղեցու հետ են կապւած, վերացնել.

35. Քահանաներին հող տալ և թոյլ տալ տեղափոխւելու.

36. Շրջիկ քարոզիչներ ունենալ.

37. Քահանայական համագումարներ կազմակերպել.

38. Պարգեւաբաշխութիւնները վերացնել. 10 տարի պաշտօնավարող քահանային խաչ տալ.

39. Եկեղեցու Ընթերցուածներից հանել «Երգ Երգոց»ը.

40. Դպրոցում գործադրուող կրօնի դասագրքերից հանել Հին Ուխտի պատմութիւնը.

41. Սահմանել ազգային տուրք.

42. Կուսակրօնութիւնից հրաժարուող վարդապետին իրաւունք տալ քահանայ լինելու.

43. Վերացնել ժամահացը.

44. Վերացնել խնամէական չհասութիւնը.

45. Քահանաների զանցառութիւնների գործը յանձնել 3-4 քահանաներից կազմուած ժողովին՝ քննելու.

46. Քահանաները ներկայացուցիչներ ունենան վարչական ատեաններում.

47. Պահակ կատարել ամեն օր, բացի աւագ շաբաթայ օրերը.

48. Սրբերի տօները միացնել և մի-երկու անգամում կատարել:

Համագումարը ընտրում է մի ինքնայուն յանձնաժողով, որի պարտականութիւնն էր մշակել նոր ազգային-եկեղեցական սահմանադրութիւն և գումարելիք ազգ. եկ. ժողովի առաջ դրելիք հարցերը մշակել:

Քաղաքական աննպաստ պայմաններն արգելք եղան ազգ. եկ. ժողով գումարելու. ինքնայուն յանձնաժողովն էլ գործ չկատարեց:

6.

Հայաստանում խորհրդային իրաւակարգ հաստատուելուց յետոյ, երկրում տիրեց խաղաղութիւն. ժողովուրդը իր կուլտուր-տնտեսական կեանքի վերաշինութեան գործին ձեռնամուխ եղաւ. եկեղեցին եւս, իր հերթին, կրկին սկսեց արծարծել իր հին, բայց միշտ քննուող, հրահրուող Բարենորոգութեան հարցը: Ամենայն Հայոց Կաթողիկոսի պատւէրով Հայրապետական Դիւանը 1923 թ. Յուլիսի 3-ին թ. 183 գրութիւնը ուղղեց Էջմիածնի Միաբանական ժողովին. «Ժամանակի ծանր բեռմունքները, ժողովրդի դժւարին կացութիւնը հնարաւորութիւն չեն տւել հայ եկեղեցու բարեկարգութեան խնդիրը լրջօրէն քննութեան

առնել տալ և հրաւիրել ազգ. եկ. ժողով:» Առաջարկւում է ժողովին «Հայ եկեղեցու բարեկարգութեան խնդիրը, որ արծարծւած է շատ վաղուց և որի կարիքը զգացւում է ներկայումս եւս, քննութեան առնել միաբանական ժողովում զգուշութեամբ, հեռատեսութեամբ և գործնականութեան սահմաններում, կատարելով նախապատրաստական աշխատանքներ յարմար ժամանակում գումարելիք ազգ. եկ. ժողովի համար:» 1924 թ. Յունվարի 1-ին, թ. 1 կոնդակով հաստատելով Գերագոյն Հոգեւոր Խորհուրդ և վերացնելով Սինոդը և Հայրապետական Դիւանը, պարտականութիւն դրւեց Խորհրդի վրայ պատեհ ժամանակում գումարել ազգ. եկ. ժողով, լուծելու բարենորոգութեան հարցերը:

Միաբանական ժողովում ընտրւած յատուկ յանձնաժողովը մշակեց բարենորոգութեան հարցերի ցուցակ, որը քննութեան առնւեց և ուղարկւեց Գ. Հ. Խորհրդին, ուր կրկին մշակւեցին հարցերը. ապա 1924 թ. Յունվ. 25-ին, թ. 73 շրջաբերական գրութիւնն ուղղւեց Համամիութենական բոլոր հայ առաջնորդներին «որ նրանք յատուկ յանձնաժողովի և դիտակ անձանց խորհրդակցութեամբ քննութեան առնեն բարեփոխութեան վերաբերեալ հետեւեալ հարցերը.— 1. Ժամագրքի (ժամապաշտութեան) կրճատումն եւ բարեփոխութիւն. 2. Ծիսական Մաշտոցի կրճատումն եւ բարեփոխութիւն. 3. Ճաշոցի կրճատումն ու բարեփոխութիւն. 4. Տօնացոյցի կրճատումն և բարեփոխութիւն. 5. Սքեմի փոփոխութեան խնդիր. 6. Հոգեւորականութեան ապահովութեան խնդիր. 7. Եւ այլ խնդիրներ, որոնք կարեւոր կ'համարի յանձնաժողովը:» Գրութեամբ խնդրւում էր յանձնաժողովների եզրակացութիւնները ուղարկել Գ. Հ. Խորհրդին:

1925 թւին արտասահմանեան, Համամիութենական սահմաններից դուրս գտնուող հայ առաջնորդներին, նաեւ Սոյ Կաթողիկոսին, Երուսաղէմի և Պոլսի Պատ-

բիարքներին Գ. Հ. Խորհուրդը ուղղեց գրութիւն և առաջարկեց յանձնաժողովների միջոցով քննութեան առնել հետեւեալ հարցերը.—

ա) Ժամապաշտութեան կրճատումն ու բարեփոխութիւն, այն է ժամագրքի, շարականի, Ճաշոցի և Տօնացոյցի կրճատումն ու բարեփոխութիւնը.

բ) Ծիսարան Մաշտոցի կրճատումն ու բարեփոխութիւնը.

գ) Հայոց եկեղեցում նաեւ աշխարհաբարի գործածութեան խնդիր (ընթերցուածքների և աղօթքների վերաբերմամբ).

դ) Կուսակրօնութեան խնդիրը, որ կապ ունի Հայաստանեայց եկեղեցու նիւթապետութեան արմատական փոփոխութեան հետ.

ե) Հայաստանեայց Եկեղեցու ընդհանուր սահմանադրութեան հարցը.

զ) Հոգեւորականութեան նիւթական ապահովութեան հարցը.

է) Հոգեւորականութեան սքեմի փոփոխութեան խնդիրը. (այս հարցը արծարծւել է 1917 թւի համագումարում և այժմ Թիֆլիզի քահանայութեան կողմից).

ը) Եւ այլ խնդիրներ, որոնք կարեւոր կը համարէ տեղական խորհրդակցութիւնը Հայոց եկեղեցու բարենորոգութեան վերաբերմամբ:

Այս է խնդրի պաշտօնական ընթացքի առայժմ վերջին փուլը:

Ազգ. եկ. ժողովք թէև չի գումարւել, սակայն Ընդհանրական Հայրապետները առանալով Սսոյ Կաթողիկոսի, Երուսաղէմի և Պօլսի Պատրիարքների, Կ. Պօլսի Ազգ. ժողովի, Էջմիածնի Սինոդի կարծիքները, մի շարք հարցերի վերաբերմամբ, իրենց իշխանութեամբ լուծել են անյետաձգելի մի քանի խնդիրներ, որոնցից կարեւորները հետեւեալներն են.—

Մկրտիչ Ա.ի ժամանակ լուծւել են.—

1.— 1906 թ. Մայիսի 10ին, թ. 549 կոնդակով, թեմական առաջնորդների, յաջորդների, գործակալների և հոգեւոր վարչական հաստատութիւնների պաշտօնեաների ընտրական իրաւունքը տրւել է ժողովրդին.

2.— 1906 թ. Օգ. 15ին, թ. 693 կոնդակով Ռուսահայոց կենտրոնական ժողովն է գումարւել.

3.— 1906 թ. Նոյ. 6ին, թ. 758 կոնդակով հոգեւոր կառավարութիւններին թոյլ է տալիս պահպի դէպքում ազգակցական 7րդ, խնամէական 5-րդ և կնքահայրութեան 3-րդ աստիճանները.

4.— 1906 թ. Էջմիածնի միաբանութեան թոյլ է տալիս Էջմիածնի ներքին հաստատութիւնների պաշտօնեաներին ընտրել:

Մատթէոս Բ.ի ժամանակ.—

5.— 1909 թ. Հոկտ. 15-ին, թ. 153 կոնդակով վերատին Էջմ. Միաբանական ժողովին է իրաւունք տալիս ներքին պաշտօնեաների ընտրութիւնը կատարել, որովհետեւ Մկրտիչ Ա.ի հաստատած կարգը 1907 թւին դադարել էր.

6.— 1910 թւին հաստատում է թեմերում թեմական պատգամաւորական ժողովներ և տալիս է հրահանգ.

7.— 1910 թ. Յունվ. 1ին եկեղեցական վարչական մարմիններում գրագրութեան համար աշխարհաբարի գործածութիւնն է մտցնում:

Գէորգ Ե.ի ժամանակ.—

8.— 1912 թւին յատուկ կոնդակով պահպի օրերի թիւն է աւելացնում.

9.— 1917 թւին թեմական պատգամաւորական ժողովներն ու խորհուրդներն է վերահաստատում և հրահանգներ տալիս, որովհետեւ 1910 թւից սկսած

ռուս միապետական կառավարութեան կարգադրութեամբ դադարել էին.

10.— 1917 թւին Էջմիածնի միաբանական ժողովն է հաստատում յատուկ կանոնադրութեամբ.

11.— 1922 թ. Նոյեմբեր 11ին, թ. 644 կոնդակով թոյլ է տալիս այրի քահանաների կրկնամուսնութիւնը,

12.— Նոյն ժամանակ թ. 645 կոնդակով թոյլ է տալիս ազգակցական 5-րդ աստիճանի և խնամէական 4-րդ աստիճանի պսակը, վերացնում է հոգեւոր ազգակցութեան (կնքահօր և սանիկի միջեւ եղած) ամեն տեսակ արգելքները ամուսնութեան վերաբերմամբ:

13.— 1923 թւին հայ եկեղեցում նոր տոմարը գործադրելու և ժամապաշտութեան ժամանակ երգեհոն գործադրելու իրաւունքն է տալիս.

14.— 1924 թւի Յունվարի 1-ին, թ. 1 կոնդակով հաստատում է Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը:

Այսքանն էլ բաւական է ասելու, թէ ոչ թէ եկեղեցին չի ցանկացել բարեփոխութեան հարցերը լուծել, այլ ժամանակի անյաջող բերմունքները արգելք են եղել այդ բանին: Եկեղեցին միշտ էլ յարմար առթի դումարել է խորհրդակցութիւններ, ձեռնարկել է միջոցների՝ լուծելու հարցեր և վերջապէս մի շարք հարցեր լուծել է: Եկեղեցու օգուտը պահանջում է բարեփոխութեան հարցերը լուծել. պայմանները պէտք է նպաստաւոր լինեն, որ խնդիրը յօգուտ և ոչ ի վնաս հայ հաւատացեալների լուծումն առանայ:

7.

Սոյն ուրուագծից երեւում է, որ հայ եկեղեցու բարեկործութեան խնդիրը սերտ կապ ունի հայ հասարակական կեանքի քաղաքական - տնտեսական դրութեան հետ և համապատասխան վերջինիս կրած փոփոխութիւնների, փոխւում է և բարեկործութեան

ծրագիրը: Որքան բարդ ու բազմակողմանի էր 1906 թւի ծրագիրը, այնքան պարզացել է այն վերջին շրջանում: Առաջնորդներին ուղարկւած հարցացուցակից երեւում է, որ բարեկործութեան խնդիրը այժմ առաւելապէս ծիսական-առտւածպաշտական ու վարչական-կազմակերպչական բնոյթ ունի: Աւել թէ այդ հարցերն այժմ աւելի հեշտ կարելի է լուծել, սխալ կ'լինի, քանի որ հարցերը խիստ պատասխանատու են և դրանց լուծումը ազգ. եկ. ժողովի իրաւասութեան է պատկանում:

Ուշադրութեան պէտք է առնել նաեւ մի այլ հանդամանք: Եկեղեցին իր ներկայ կրօնա-բարոյական, ծիսական-առտւածպաշտական կազմութեամբ դարերի ընթացքում կուտակւած այլ և այլ շրջանների ըմբռնումների մի հիւսուածք է ներկայացնում, ուր դուռ բարոյական գաղափարները՝ մնոտիապաշտականի, դաւանական - փիլիսոփայականը՝ գործնական-առօրեայի հետ հիւսւել են և կազմել մի այնպիսի բարդ խառնուրդ, որ այդ տարրալուծելու և ֆիլտրացիայի ենթարկելու համար լուրջ աշխատանք է պահանջւում:

Եկեղեցու մէջ ժամանակի ընթացքում և՛ մտաւոր դասն է իր ըմբռնումները մտցրել և՛ չկրթւած դասը. եկեղեցու վրայ և՛ մտայինների դասն է ազդել իր ըմբռնումներով և՛ հասարակ ժողովուրդը. կարելի է ասել, որ բոլոր ուժեղ հոսանքները իրենց ըմբռնումները և պահանջները եկեղեցու մէջ մտցրել են. այս կամ այն ձեւով (դաւանանքի, ծէսի, վարչաձեւի): Եկեղեցում կան և՛ նախնական քրիստոնէական կոմմունայի ձնշացորդներ և՛ միապետական կարգերի հետքեր, և՛ փիլիսոփայական հոսանքների հետքեր և՛ մնոտիապաշտական-նախնական կրօնի ըմբռնումներ և սրաբողութիւններ. ծէսն ու սրաբողութիւնը հասարակ դասակարգի պահանջի արդիւնք է. դաւանանքը մը-

տային դասի: Աւետարանի վարդապետութեան կողքին կայ ժողովրդական կրօն. նէօպլատօնիզմի հետ կայ միջնադարի սխօլաստիկան, ֆէօտալիզմի շրջանի հետքերին կից միապետական կարգերի ւնացորդներ. և այս ամենը զանազան հոսանքների պահանջներ են, որոնք այժմ էլ կողք կողքի ւնում են:

Այժմ, երբ բարեկարգութեան մասին խօսք է լինում, այս հանգամանքը մոռացութեան է տրւում: Բարեկարգութեան հարցը բարձրացնողը մտայինների դասն է. բնականաբար սա էլ իր պահանջներն է առաջադրում և ցանկանում է եկեղեցին կազմակերպել իր պահանջների համեմատ: Կուլտուրական ցած աստիճանների դասերի, հոսանքների համար այդ պահանջները ե՛ւ խորթ են ե՛ւ անծանօթ. եթէ մտայինը բաւարարութիւն կարող է գտնել տեսական միտիկ ըմբռնումներով, բարձր գեղարուեստական (երգ-երաժշտութիւն, նկար) արտայայտութիւններով, հազիւ զրազէտ հայ գիւղացին այդ ամենին անմասն պիտի ւնայ և եկեղեցին այդպէս կազմակերպելու դէպքում նրա համար պիտի դառնայ չորս, ցամաք, սառը մի հիմնարկութիւն: Նրան բաւարարողը աչքին ու ականջին նիւթ տւողն է:

Եկեղեցու կազմութիւնը, ընոյթը համադասային-ընդհանուր ժողովրդական է, այնտեղ իր հոգեկան պահանջներին գոհացում ստանում է ե՛ւ գիտունը ե՛ւ տգէտը, և կրթւածը և անկիրթը, ուստի և մտային հոսանքները չպէտք է մոռանան այդ և չպէտք է պահանջեն, որ եկեղեցին կազմակերպւի միայն և եթէ իրենց պահանջներին բաւարարելու տեսակէտից: Եկեղեցին որ եւ է դասի, հոսանքի մենաշնորհ դառնալով կ'կորցնէ իր ժողովրդական ընոյթը. այդ կ'լինի հակառակ նրա պատմական կազմութեանը:

Հայ հաւատացեալների խոշորագոյն տոկոսը գիւղացի-բանուոր դասակարգն է, որն իւր մէջ ունի դեռ

ֆէտիշիզմ, անիմիզմ, որի մնոտիապաշտութիւնը պարսկա-բաբելական-հրէական-յունական կրօնների ազդեցութիւններով լի է, որի համար բնութիւնը ոգիներով լեցուն է, նիւթը զերբնական ոյժի արդիւնքն է, երկինքն ու երկիրը հակադիր ոյժերի ծնունդ են: Նրան այդ ըմբռնումներից ազատագրողը առաջին հերթին դպրոցն է, դուրսը՝ հասարակական միջավայրը, այլ և այլ կրթական-կուլտուրական հիմնարկութիւնները՝ թատրոն, թանգարան, ժողովրդական համալսարան, բնագիտական դասախօսութիւններ. ապա թէ նաեւ եկեղեցին պէտք է աշխատէ նրա հոգեկան աշխարհը ազատագրել մնոտիապաշտական-կրօնական հին ըմբռնումներից: Եթէ այս խնդրում ամեն բան վերապահւի եկեղեցուն և նա իր միջից հանէ բոլոր ձէսերը, պաշտամունքները, դրանով գիւղացին չի ազատագրւի իր ներքին կաշկանդումներից. աւելի շատ նա նոր ֆէտիշներ, նոր ձէսեր, ձեւեր կ'յօրինէ եկեղեցւոյ դուրս, իր պահանջներին բաւարարող և յետինը կ'լինի չար քան առաջինն էր:

Կրօնական ըմբռնումները զերբնական ծագումն չունին և ոչ ալ տարածութիւնից, ժամանակից դուրս են: Նրանք զուտ մարդկային են. հասարակական կեանքում առաջ եկած, հասարակական կեանքի հետ զարգանում են: Ինչպէս որ հասարակական որ եւ է դասակարգը, որ եւ է հոսանքը կուլտուրապէս աւելի է զարգանում քան միւսը, բայց հասարակութիւնը ապրում է իբր մի սօցիօլօգիական ամբողջութիւն և զարգացած դասակարգը մի հարւածով անկարող է յետադիմացին ազատագրել, ժամանակ է պէտք դրա համար և յարմար պայմաններ, այնպէս էլ եկեղեցին անկարող է մի հարւածով ամեն ինչ սրբագրել և մի յարմարի վերածել: Հոգեւորական դասը պէտք է աշխատէ յետադիմացը դասին ազատագրել անոտիապաշտութիւններից, բայց նա միայնակ անել այդ անզօր

է. հասարակական միջավայրը պիտի փոխուի, յետաւինաց դասը պիտի իրաւատէր լինի իր իսկ ոյժերով իրեն կուլտուրական-անտեսական յառաջդիմութեան հարցերը տնօրինելու։

Դումարելիք ազգային եկեղեցական ժողովն այս հանգամանքները պէտք է աչքի առաջ ունենայ։ Եկեղեցու նպատակը մարդու հոգեկան ազատագրման ու բիւրեղացման հասցնելու գործին ծառայելն է. եկեղեցին Քրիստոսի քարոզած աստւած-որդի, այն է ամենակատարեալ մարդ դառնալու օժանդակ կարեւոր միջոցներից է. բարեկործութեան նպատակը պիտի լինի նրա այդ դերը աւելի դիւրին և օգտակար ձեւով կատարելու նպաստաւոր պայմանները առաջ բերել։

ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ *)

I.

Հայ եկեղեցին իւր գոյութեան ընթացքում ծանր կացութեան ու պատասխանատու խնդիրների լուծման համար դիմել է ազգային եկեղեցական ժողով գումարելուն, որի միջոցով էլ լուծել է հարցերը։ Հէնց սկզբից մեր եկեղեցու բարձրագոյն օրէնսատու և հիմնական կանոններ որոշողը եղել է առաւելապէս ազգային-եկեղեցական ժողովը. առաւելապէս եմ ասում այն պատճառով, որ ա) երեք տիեզերական՝ Նիկիոյ, Կ. Պոլսի և Եփեսոսի ժողովների կանոնները ևս պարտադիր են եղել մեր եկեղեցու համար. բ) Մեր ականաւոր հայրապետների ոմանց մշակած և հրատարակած կանոնադրութիւնները եւս անարգել գործադրւել են եկեղեցում և պարտադիր են եղել։ Այսպէս Լուսաւորչին, Սահակ Պարթեւին վերագրած կանոնադրութիւնները, Յովհ. Մանդակունու, Գիւտ Կաթողիկոսի, Ներսէս Շնորհալու, Սիմէօն Երեւանցու եկեղեցական ժամերգութեան մէջ կատարած փոփոխութիւնները ընդունւել են և գործադրւել։

Մի ուշագրաւ կէտ կայ այս դէպքում, այն, որ ազգային-եկեղեցական ժողովից դուրս եղած փոփոխութիւնները, գործադրուող կանոնադրութիւնները, վերջ ի վերջոյ պէտք է ազգային եկ. ժողովից հաս-

*) Կարդացուած Գ. Շ. Խորհրդում 1924 Թ. Ապրիլի 8ին։

տատուեն, որ վաւերական լինեն. այլապէս նրանք կ'նկատուեն ժամանակաւորապէս ոյժի մէջ եղող կանոններ։ Այսպէս Շահապիվանի ժողովում՝ դումարուած 447-ին՝ վաւերացնում են երեք տիեզերական ժողովների, նախորդ հայրապետների հրատարակած կանոնները։

Ներկայում ևս մեր եկեղեցին տնտեսական-իրաւական և որոշ չափով կրօնական-եկեղեցական ծանր վիճակում է գտնւում և նրանում կուտակւած հարցերի լուծման համար բնականաբար, մեր եկեղեցու պատմութեան համաձայն, պէտք է ազգ. եկ. ժողովին դիմենք։ Վեհափառ Հայրապետը 1924 թ. Յունվար 1-ի թ. 1 կոնդակով պատւիրել է Գերագոյն Հոգեւոր Խորհրդին ի պատեհ ժամու գումարել ազգ. եկ. ժողով, որպիսի խնդրով զբաղւում է Խորհուրդը հարկաւոր նախապատրաստութիւնները տեսնելով։ *)

Ինչպէս եկեղեցու բարեկարգութեան խնդիրը 30-35 տարուայ անցեալ ունի, նոյնպէս և ազգային եկեղեցական ժողով գումարելու խնդիրն ունի նոյնչափ անցեալ, քանի որ բարեկարգութեան հիմնական խնդիրները կապուած են ազգ. եկ. ժողով գումարելու հետ։

Մամուլից և Հայրապետական դիւանից յայտնի է, որ ազգ. եկ. ժողով գումարելու հարցը արծարծւել է 1892-93 թւերին, ապա մեծ չափերով 1906 թւին, երբ միայն Ռուսահայոց կենտրոնական ժողովը գումարուեց, ապա 1908-ին՝ Մատթէոս Բ.ի ընտրութեան ժամանակ, 1909-ին և 1917-ին, երբ իբր նախապատրաստութիւն տեղի ունեցաւ Յունիս ամսին ռուսա-

*) Թեմերում յատուկ յանձնաժողովներով քննութեան են առնւում ազգ. եկ. ժողովում դրւելիք հարցերը. վիճակագրական տեղեկութիւններ է հաւաքւում, զեկուցումներ է պատրաստւում։

հայ հոգեւորականների համագումարը, որից յետոյ վեհափառը հաստատեց մի ինայուն յանձնաժողով ապագայում գումարելիք ազգ. եկ. ժողովի նիւթերը պատրաստելու։ 1923 թւին վեհափառ Հայրապետի ներկայացուցիչը (Խորէն Արքեպ.) վեհի յանձնարարութեամբ Հայաստանի խորհրդային կառավարութեան հետ բանակցեց այդ առթիւ և վերջապէս 1924 թւի Յունվար 1-ի կոնդակով Գ. Հ. Խորհրդին վեհափառը պատւիրեց ժողով գումարելու նախապատրաստութիւններ տեսնել։

Ուշադրութեան պիտի առնենք այն հանգամանքը, որ Մկրտիչ Ա.ի թաղման, Մատթէոս Բ.ի ընտրութեան և թաղման ժամանակները գումարուած պատգամաւորների և ազգ. եկ. ժողովի անդամների խորհրդակցութիւններ են եղել եկեղեցական բարեփոխութեան խնդիրների վերաբերմամբ, սակայն այդ խորհրդակցութիւնները ապարդիւն են անցել, որովհետեւ ազգ. եկ. ժողովի հաւանութիւնը չեն ստացել։ Ռուսական միապետական կառավարութեան ժամանակ դումարուած ժողովները իրաւասու էին միայն Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրելու և այլ հարցերով չէին կարող զբաղւել. բացի այդ, պատգամաւորները միայն Կաթողիկոս ընտրելու յանձնարարութիւն ունէին ընտրողներից և ոչ նաեւ բարեկարգութեան հարցեր մշակելու կամ լուծելու։

Այսպիսով Էջմիածինը չէ, որ խուսափել է կամ խուսափում է ազգ. եկ. ժողով գումարելուց, ինչպէս ենթադրում են ոմանք. ընդհակառակը Էջմիածինը ինքն է միջոցներ ձեռք առել և միայն մեր ժողովրդի քաղաքական դժբախտ կացութիւնը Ռուսաստանում միապետական կառավարութեան ժամանակ և յատկապէս Տաճկաստանում սուլթանական ռէժիմի օրօք արգելք են եղել ազգ. եկ. ժողովը գումարելուն։

Ի նկատի ունենալով մեր երկրի խաղաղութիւնը

և տնտեսական կեանքի բարելաւումը, շինարար աշխատանքը, կարծում եմ այս անգամ գոնէ կ'յաջողւի եկեղեցու ներքին կեանքում թարմութիւն, կարգ ու կանոն մտցնող ազգ. եկ. ժողովը գումարել, ուստի անհրաժեշտ է զբաղւել նրա կազմակերպութեան խնդրով, թէ ո՞րտեղ պէտք է գումարել ժողովը, ի՞նչ կազմ պիտի ունենայ նա, ի՞նչ խնդիրներ կան ժողովի առաջ դնելու, ի՞նչպէս պիտի կատարւեն ընտրութիւնները եայլն. մի շարք գուտ կազմակերպչական հարցեր, որոնց պարզաբանութիւնը նախօրօք կարեւոր է:

Այս հարցերի պարզաբանութեան համար ուշադրութեան պիտի առնենք մեր եկեղեցու անցեալը, եկեղեցական ժողովների պատմութիւնը, կանոնագրքերը, որոնցից կարող կ'լինենք ստանալ պատասխաններ հետեւեալ հարցերին.— Ո՞վ է ժողով հրաւիրողը, ո՞րտեղ, ի՞նչ կազմ է ունեցել ժողովը, ի՞նչ խնդիրներ է որոշել:

Մեր գրականութեան մէջ չկան յատուկ գրւածքներ ազգ. եկ. ժողովի կազմակերպութեան վերաբերող, ուստի մնում է եկեղեցու պատմութիւնից, կանոնագրքերից ծաղկաքաղ անել հարցերը պարզաբանելու:

Ինձ հետաքրքրողը հարցի գործնական կողմն է եղել. այդ տեսակէտից էլ նայում եմ հարցերին, մի կողմ թողնելով պատմական դէպքի, տեղի-թւի բանասիրական քննութիւնը:

II.

Ա. ՀԱՐՑ. Ո՞վ է հրաւիրել ազգ. եկեղ. ժողովը.— Մեր եկեղեցու պատմութիւնից յայտնի է, որ եկեղեցու հոգեւոր պետ կաթողիկոսը միշտ միահեծան իշխանութեան տէր չի եղել. աւելի շատ նա գործել է իրեն կից գտնւող խորհրդարանի հետ. այս խորհրդարանը պատմութեան ընթացքում փոփոխութիւնների է ենթարկւել. այսպէս Ներսէս Մեծն ունէր 12 խորհրդական եպիսկոպոս, Սահակ Պարթեւի մօտ կային եպիսկոպոսներ և 60 վանական. յետոյ կաթողիկոսներն ունեցել են աթոռակիցներ. ԺԹ-րդ դարու սկզբից սկիզբն է առնում Դանիէլ Կաթողիկոսից սկսած Էջմիածնի «Բարձրագոյն Խորհրդարանը» կամ Սիւնհոդոսը, որը յետոյ վեր էր ածւում «Պօլօժէնիայով» նախատեսուած Սինոդի: Ըստ «Պօլօժէնիայի» հ. 1117-ի Սինոդը «ամեն բանում գործակցում է կաթուղիկոսին». ըստ հ. 1141-ի ժ. ԺԱ. և ԺԲ. կէտերի, Սինոդը կարծիք է յայտնում նոր ձեռնադրուող եպիսկոպոսների և այլ նման խնդիրների մասին: Սինոդը դադարեց 1924 թ. Յունվարի 1-ից և հաստատւեց Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը, որը ԺԹ-րդ դարու սկզբի բարձրագոյն Խորհուրդն է յիշեցնում կամ հին եպիսկոպոսական խորհուրդը: ԺԸ-րդ դարում եւս կաթողիկոսները կարեւոր խնդիրների համար տւած

դրութիւնները իրենք չէին միայն կնքում, այլ և իրեն խորհրդական եպիսկոպոսները. օրինակ Աղթամարի կամ Աղուանից կաթուղիկոսների Էջմիածնի Ամենայն Հայոց կաթուղիկոսին հպատակ լինելու դրութիւնը, կամ երբ սրանք ըմբոստանում էին սրանց դատելու, պատժելու և ներելու դրութիւնները. ինչպէս և որեւէ առաջնորդ եպիսկոպոսի դատը, մանաւանդ տնտեսական հարցերը որոշող դրութիւնները ստորագրում էր կաթուղիկոսը և եպիսկոպոսները և բոլորն էլ դնում էին իրենց կնիքները *): Այսպիսով կաթուղիկոսը միահեծան չէր ամէն խնդրում, այլ սահմանադրւած էր եպիսկոպոսական դասով: Ազգային եկեղեցական ժո-

*) Տեսնել «Պիւռան Հայոց Պատմութիւն» աշխատութիւնները Պիւռա ա. ք. հրատարակած, նաեւ. Եփրեմ Կաթ.ի կոնդակները:

դով հրաւիրողը եղել է պաշտօնապէս կաթողիկոսը, նախօրօք խորհրդակցելով եպիսկոպոսական դասի հետ իրրեւ կարեւորագոյն խնդիր: Եղել են դէպքեր, երբ առաջնորդները, նշանաւոր վարդապետները գումարել են ժողով բացառիկ դէպքերում. օրինակ 1441 թւի Աթոռի Սսից Էջմիածին տեղափոխելու դէպքը:

Ժողով հրաւիրելու դէպքում կաթուղիկոսները սովորաբար ստացել են երկրի իշխանութեան, լինի այդ հարազատ հայրենի, թէ օտար տիրող, հաւանութիւնը: Առաջին տիեզերական երեք ժողովքներն եւս Բիւզանդական կայսրների հաւանութեամբ և մասնակցութեամբ են հրաւիրուել. Նիկիոյ ժողովը 325 թ., Կոստանդին Մեծ. կ. Պօլսինը 381 թ., Թէոդոս Մեծ. և Եփեսոսի 431 թ., Թէոդոս փոքր:

Հայրենի իշխանութիւնների օրօք իշխանութեան դլուխ կանգնողներն իրենք ժողով են գումարել տւել եկեղեցական հարցերի համար. օր. Անիի ժողովը գումարուեց Աշոտ Թագաւորի հրամանով 970 ին. Լօռու ժողովքները 1205-1207 թւերի Զաքարէ Սպասալարի կարգադրութեամբ եղն.:

Ուրեմն, ազգ. եկ. ժողով հրաւիրողը ամենայն Հայոց կաթողիկոսն է իւր մօտ գտնուղ մարմնի խորհրդակցութեամբ, (ներկայ դէպքում Գ. Հ. Խորհրդի), ստանալով առ այդ երկրի իշխանութեան հաւանութիւնը:

Բ. ՀԱՐՑ. Ո՞րտեղ է գումարուել ժողովը.— Ժողովի գումարման տեղը սովորաբար եղել է Էջմիածնի Ամենայն Հայոց կաթողիկոսի աթոռանիստը. իսկ աթոռանիստը փոփոխուել է ժամանակի ընթացքում: Աթոռանիստ եղել են վաղարշապատը, Դուինը, Անին, Կիլիկիայում Հռոմկլան, Սիսը, երբեմն կարճ ժամանակով Աղթամարը եղն.: Սակայն եղել են դէպքեր, երբ ժողովը գումարուել է և այլ տեղ. օրինակ. Աշտիշատի ժողովը, որ առաջին ազգ. եկ. ժողովն է 365 թ. այստեղ գումարուել է այն պատճառով, որ Աշտիշատի հետ կապուած մեծ տօներին մեծ քանակութեամբ ուխտաւորներ՝ իշխաններ, ազնուականներ, հասարակ դասակարգի մարդիկ են գնացել: Կամ Աշոտ Բագրատունու ժամանակ աթոռանիստը թէեւ եղել է Դուինը, բայց ժողովը գումարուել է Շիրակաւան. կամ 768-ին փոխանակ Դուին լինելու, լինում է Պարտաւում, որովհետեւ քաղաքական հանգամանքներն անյարմար են եղել. Դուինում արաբական ամիրան կար, որից խուսափում էին առհասարակ:

Ուրեմն, ազգ. եկ. ժողովի տեղը Ամենայն Հայոց կաթողիկոսի աթոռանիստն է. եթէ կան անյարմար պայմաններ, կաթողիկոսի համաձայնութեամբ կարող է այլ տեղ գումարուել. ներկայ դէպքում ուրիշ տեղ ժողով գումարելու ոչ մի առիթ չկայ, ուստի և ժողովը պէտք է գումարուի Էջմիածնում, ուր Ամենայն Հայոց կաթողիկոսի աթոռն է:

Գ. ՀԱՐՑ. Ազգ. եկեղեցական ժողովների պարբերական լինելու հարցը.— Ազգ. եկ. ժողովները պարբերական չեն եղել, այսինքն սահմանուած չի եղել, որ որոշ ժամանակամիջոցներից յետոյ պիտի ազգ. եկ. ժողովը գումարուի, ինչպէս պարլամէնտներն են, ոչ էլ որոշ է եղել, թէ ազգ. եկ. ժողովի նստաշրջանը ո՞րքան պիտի տեւէ: Ամէն ինչ կախուած է եղել ժամանակի պահանջից և ժողովի առաջ դրուելիք խնդիրների բովանդակութիւնից: Բայց յայտնի են դէպքեր, երբ աշխատել են ժողովների պարբերական դարձնելու սկզբունքը գործադրել, համաձայն տիեզերական ժողովում ընդունուած որոշման, այն է տարեկան 2 անգամ ժողով գումարել: Պարտաւի 771 թւի ժողովից յայտնի է, որ մեզանում աշխատել են տարեկան մի անգամ ազգ. եկ. ժողով գումարելու սկզբունքը գործադրել հիմնուելով Պօղոս առաքեալի թղթի վրայ, թէ

տարին մի անգամ պիտի ժողով անել: Պատմութիւնից, կանոնագրքից յայտնի չէ, թէ այդ սկզբունքը գործադրւե՞լ է թէ ոչ: Ս. Սահակին վերագրուող կանոնների հ. 5-ից երեւում է, որ տարեկան ժողովներ կոչել են. հաւանօրէն, սակայն, միայն եկեղեցականների ժողով, և ոչ ազգ. եկ.: Կանոնն ասում է. «Քանզի պարտ և պատշաճ է յամենայն տարւոջ յորժամ ժողովք կատարիցեն ըստ կանոնական սահմանադրութեան, շրջել քորեպիսկոպոսաց հաւատացեալ նոցա եկեղեցիսն»*)

Այսպիսով եթէ ազգ. եկ. ժողովը պարբերական չի եղել, սակայն հոգեւորականների ժողովի պարբերականութեան սկզբունքը ընդունել և գործադրել է, որպիսի հանգամանքը ազգ. եկ. ժողովը անուշադիր չպիտի թողնի:

Դ. ՀԱՐՑ. Ազգ. եկ. ժողովի կազմը.— *Մեր եկեղեցական ժողովները կոչւում են նաեւ ազգային, որովհետեւ այդ ժողովներին աշխարհականները միշտ էլ մասնակցել են, ժողովներում վճռւել են նաեւ ոչ զուտ եկեղեցական հարցեր: Մեր ժողովների պատմութիւնից այդ է երեւում և այդ հիման վրայ Մկրտիչ Ա. Կաթողիկոսը 1906 թ. Մայիսի 10-ի թ. 549 կոնդակով դիմելով ժողովրդին ասում էր. «Մեր այս հայրապետական կոնդակով վերականգնելով հայոց առաքելական եկեղեցու դարերով սրբագործուած իրաւունքը, քեզ ենք տալիս, ժողովուրդ Հայոց, թեմակալ առաջնորդների, յաջորդների, գործակալների և հոգեւոր վարչական հաստատութեանց պաշտօնեաների ընտրութեան իրաւունքը:»*

Առաջին ազգ. եկ. ժողովը Աշտիշատում 365 թ. ըստ Խորենացու հետեւեալ կազմն ունէր.—

«Ժողով արարեալ եպիսկոպոսաց և համօրէն աշխարհականք կանոնական սահմանադրութեամբ հատատեաց» (Խորենացի գիրք Գ. գլ. Գ.): Ըստ Փաւստոսի «Ժողովեցան ի գեղն Աշտիշատ, ուր գառաջինն ղեկեղեցին էր շինեալ, զի մայր եկեղեցեացն, և ի տեղի լեալ նախնեաց և ժողովոց Սիւնհոդոսին:» — «Եւ ամենայն աշխարհին պատուիրէր (Ներսէս Մեծը) և զխովին թագաւորին առհասարակ ամենայն մեծամեծաց և ամենեցուն:» Ժողովում մասնակցում էր եկեղեցական և աշխարհական ներկայացուցչութիւնը:

Աւելի բազմամարդ էր Շահապիվանի ժողովը 447 թ-ին, որի կազմն էր «20 եպիսկոպոս, շատ երէցներ, սարկաւագներ և եկեղեցու համօրէն ուխտը, իշխաններ, գաւառապետներ, գաւառակալներ, պետեր, բռնաւորներ, զօրագլուխներ, հարիւրապետներ, ազատներ, կուսակալներ, բոլոր նախարարները...:» Դուինի Բ. ժողովը կազմուած էր «յազատաց և համօրէն ժողովրդականաց»: Անիի 1036 թ-ի ժողովը աւելի քան բազմամարդ էր. մասնակցում էր մօտ 4000 մարդ, հոգեւորական և աշխարհական: Այստեղ որոշւում է նաեւ այն սկզբունքը, որ ազգ. եկ. ժողովը պէտք է բաղկացած լինի հոգեւոր և աշխարհիկ ներկայացուցիչներից. ո՛չ թագաւորը, իշխանները առանձին և ո՛չ կաթողիկոսը, եպիսկոպոսները առանձին իրաւունք չունեն եկեղեցու նկատմամբ հիմնական փոփոխութիւնների կարգադրութիւններ անել, կաթողիկոս ընտրել կամ հեռացնել: Մեր վերջին կանոնադիր Սսի ժողովում 1243-1246 թ. մասնակցում էին եկեղեցականներ և աշխարհականներ, հետում թագաւորը և իր որդին: Աթոռի Ս. Էջմիածին տեղափոխելու համար գումարւած ժողովում 1441 թ-ին, կային 17 եպիսկոպոս, Աղուանից կաթողիկոսը, չորս գլխաւոր աթոռների (Բգնի, Տաթեւի, Հաղբատի և Թադէոս առաքելոյ վանքերի) առաջնորդները, որոնց համաձայնութեամբ էր կաթողիկոսի ընտրութիւնը լինում, նաեւ կային բազմաթիւ վարդապետներ, քահանաներ, կրօնաւոր-

*) Նեղեսս Վ. Մ. Թանգ. Հայոց եկ. իրաւունքը. Ա. հտ. եր. 533:

ներ, իշխաններ, թուով եօթն հարիւր անձն։ Այն եպիսկոպոսները և վարդապետները, որոնք ժողովին չէին կարողացել ներկայ լինել, իրենց կարծիքը գրաւոր էին յայտնել։ Պարտաւի ժողովում եւս մասնակցել չկարացողները իրենց կարծիքը յայտնել են գրաւոր։ Ուշադրութեան պիտի առնել այն հանգամանքն ևս, որ հոգեւորականների ներկայացուցչութեան մէջ մտնում են սովորաբար նշանաւոր վանքերի վանահայրերը, երէցների ներկայացուցիչները և մենաստանների (մօնաստոնների) գլխաւորները, ինչպէս այդ երեւում է 506 թւին Բաբգէն կաթողիկոսի գումարած ժողովի մասնակցողների ցանկից։ ԺԹ. դարում տեղի ունեցած մասնակի ժողովներում՝ ընդդէմ յունասէր և լատինասէր կաթողիկոսների գումարած, մասնակցում են նշանաւոր վանքերի վանահայրերը և գիտնական վարդապետները։ Այդպիսի կազմ ունէին Լօռու 1204 և 1205 թ. ժողովքները, Անիի 1207-ի, Սիւնիքի 1294 թ. ժողովը։

Քանի դեռ վրաց եկեղեցին բաժանուած չէր Հայոց եկեղեցուց, ժողովներին մասնակցում էր և վրաց կաթողիկոսը. մասնակցում էին յետագայում նաեւ Աղթամարի և Աղուանից կաթողիկոսները։ ԺԻ. դարում Փիլիպպոս կաթողիկոսի Երուսաղէմում գումարած ժողովին մասնակցում էին Սսի կաթողիկոսը, Երուսաղէմի և Պօլսի Պատրիարքները։ ԺԸ-րդ դարում կաթողիկոսներ ընտրելու համար գումարուած ժողովների կազմը խառն է, աշխարհականները ոչ միայն մասնակցում են, այլ և դեկավար դեր են կատարում. պարակա-տաճկական ընդհարումները երկիրը անիշխանութեան էին մատնել, ուստի և ժողովները ըստ բերմունքի էին կազմւում. Ղուկաս կաթողիկոսին ընտրում է Էջմիածնի միաբանութիւնը Երեւանից եկած մի քանի ներկայացուցիչներով։ Կարապետ Ջէյթունցուն 1726-ին Պօլսի Պատրիարքն ու ամիրաներն են

ընտրում։ Ռուսները Էջմիածինը գրաւելուց յետոյ ընտրական որոշ կարգ են մտցնում և ԺԹ-րդ դարում մի քանի անգամ փոփոխում. յատկապէս վէճի առարկայ դառնում է Սսի կաթողիկոսի և իր թեմերի մասնակցութիւնը, տաճկահայ թեմերի թէ խնդիրը և մինչեւ վերջն էլ այդ խնդիրը մնում է չլուծուած։ Ընտրական հրահանգը մշակում է միապետական ռուս կառավարութիւնը, որը մի քանի անգամ փոփոխութեան է ենթարկւում։

«Պօլօժէնիայ» ի ն. 1118-1125-ով 2ի որոշւում է ընտրական կարգը. Ռուսաստանի հայութիւնը եկեղեցական վարչական տեսակէտից բաժանւում է վեց թեմի. Տաճկահայերը ունենում են 46 թեմ. իւրաքանչիւր թեմի առաջնորդ մասնակցում էր իբր հոգեւորական ներկայացուցիչ. աշխարհականները ընտրում էին իւրաքանչիւր թեմում մի պատգամաւոր։ Էջմիածնի Սինոդի 8 անդամը և Մ. Աթոռի միաբանութիւնից 7 հոգի ըստ աւագութեան կարգի մասնակցում էին ընտրութեանը։

Մեր եկեղեցու ժողովների ընտրական կարգի մէջ փոփոխութիւններ մտցնում է Մկրտիչ Ա. Կաթողիկոսը իր 1906 թ. Յունիսի 7-ի թ. 693 կոնդակով, որով 9 կէտից բաղկացած մի հրահանգ է տալիս, Ռուսահայոց կենտրոնական ժողովի պատգամաւորներ ընտրելու ասթիւ։ Ժողովին կարող էին մասնակցել երկու սեռի անձինք. տարիքը պիտի լիներ 21. 1000 շնչից բաղկացած ծուխը պիտի տար մի պատւիրակ. այն ժողովը, որ պէտք է պատւիրակ ընտրէր, օրինական էր համարւում եթէ ներկայ էին ծխականների $^1/_5$ը. պատւիրակները պիտի ընտրէին մի պատգամաւոր. այսպիսով ընտրութիւնը ուղղակի չէր, այլ երկաստիճան. 20,000 հոգին պիտի մի պատգամաւոր տար. եթէ պատւիրակների կէսից աւելին ներկայ էր, ժողովը օրինական էր համարւում։

1917 թ-ին թեմական պատգամաւորական ժողովների համար վեհափառի տուած հրահանգում ընտրական կարգը որոշ փոփոխութիւն կրում է. ընտրողը և ընտրուողը կարող են երկու սեռից էլ լինել. տարիքը պիտի լինի 20. 5000 շունչը ընտրում է մի պատգամաւոր. ժողովն օրինական է, որքան էլ լինի ժողովականների թիւը: վեհափառը 1923 թ. Խորէն արքեպ-ին տեղապահ նշանակելով կոնդակով որոշ փոփոխութիւն մտցրեց կաթողիկոսական ընտրութեան կարգի մէջ. ոչ թէ իւրաքանչիւր թեմ պիտի մի աշխարհական պատգամաւոր ներկայացուցիչ տայ, այլ 50.000 շունչը մի պատգամաւոր. այս տեսակ բազմաթիւ թեմերը ոչ թէ մէկ, այլ մի քանի պատգամաւոր կարող են ընտրել. սակայն ընտրական կարգի մանրամասնութիւններ դեռ մշակուած չեն: *)

Թէ հնում ի՞նչպէս են եղել ընտրութիւնները, պարզ չէ. յայտնի է, որ հոգեւորականները սովորաբար մասնակցել են ի պաշտօնէ, օրինակ պատրիարքները, մասնաւոր կաթողիկոսները, նշանաւոր վանքերի վանահայրերը, առաջնորդները, ականաւոր վարդապետները, երէցների գլխաւորները. աշխարհականներից՝ թագաւորը, իշխանները, տանուտէրերը. իսկ ազատներից և շինականներից ովքե՞ր են մասնակցել, ի՞նչ ընտրութեամբ, պարզ չէ: ԺԸ-րդ դարում գրեթէ ընտրութիւն չկար, այլ հրաւիրում էին նշանաւոր աշխարհական անձանց և առաջնորդներին ժողովի:

Ժողովի նախագահը եղել է կաթողիկոսը կամ երբեմն նաեւ աթոռակալը. երբ քննութեան է առնւել կաթողիկոսի գործելակերպը, բնականաբար կաթողիկոսը բացակայել է ժողովից:

Ամփոփելով վերոյիշեալը, տեսնում ենք հետեւեալը.—

*) Գ. Շ. Խորհուրդը յատկապէս մշակում է ընտրական կարգի նոր կանոնադրութիւն եւ. հրատարակ:

Ա.— Ազգ. եկ. ժողովների կազմը եղել է խառը, հոգեւորականներից և աշխարհականներից կազմած.

Բ.— Հոգեւորականներից մասնակցել են. 1) առաջնորդները, 2) մեծ վանքերի վանահայրերը, 3) մենաստանների գլխաւորները, 4) քահանաների ներկայացուցիչները, 5) ականաւոր գիտնական վարդապետները.

Գ.— Աշխարհականներից մասնակցել են. 1) թագաւորը կամ նրա ներկայացուցիչը. 2) իշխանները, 3) մելիքները, իւզբաշիները, տանուտէրերը. 4) շինականների ներկայացուցիչները.

Դ.— Հնում ժողովների ընտրական յատուկ կանոններ և հրահանգներ չեն եղել. ԺԹ-րդ դարում ռուսահայ եկեղեցու համար ընտրական կանոններ են մշակել, որոշ փոփոխութիւններ կրել, ընդունել է ընտրութեան քառանդամ կարգը՝ հաւասար, գաղտնի, ընդհանուր և ուղղակի. վերջինս վեր է ածւել երկու աստիճան ընտրութեան կարգի.

Ե.— Ժողովի նախագահը կաթողիկոսն է եղել, կամ նրա բացակայութեան դէպքում իր ներկայացուցիչը. 20-րդ դարում գումարուած ժողովներում (1906 թ. ռուսահայ կենտրոնական ժողով, 1917 թ-ին ռուսահայ հոգեւորականների համագումար) ժողովների նախագահը կաթողիկոսն է համարւել, իսկ ժողովը իր համար իր իսկ անդամներից ընտրել է առենապետութիւն, որը և կառավարել է ժողովը:

Ե. ՀԱՐՑ.— Ազգ. եկեղ. ժողովի իրաւասութեան սահմանը.— Թէ ի՞նչ հարցեր կարող էր և իրաւունք ունէր ազգ. եկ. ժողովը վճռելու, երեւում է մեր կանոնադրութիւններից և ժողովական որոշումներից: Մի քանի ժողովների որոշումներ թեթեւով կարելի կ'լինի գաղափար կազմել ժողովի իրաւասութեան մասին.

Շահապիվանի ժողովում որոշում են 1) ընդունել,

հաստատել սինեզերական 3 ժողովները և Ս. Հարց կանոնները. 2) մարմնական և այլ պատիժներ յանցաւոր հոգեւորականների և աշխարհականների համար. 3) առաջնորդներին նշանակում է կաթողիկոսը, վանահայրերին՝ առաջնորդը:

Դուինի Բ. ժողովում որոշում են. 1) քահանաների եկամուտների աղբիւրները. 2) եկեղեցական արարողութիւններից՝ պատարագի, մկրտութեան ձեւերը:

Օձնեցու 719 թ. գումարած Դուինի Ը. ժողովում որոշում են. 1) քառասնորդական պահոց շաբաթ և կիւրակի պատարագ մատուցանել. 2) հացը անխմոր և պինդ անապակ լինի. 3) միւռոնը պէտք է Հայրապետը օրհնէ. 4) պատարագի սեղանը վէմքար լինի և ոչ փայտ. 5) Ս. Աստուածը ասել երեք անգամ «խաչեցար»ը կրկնելով. 6) պիշերապաշտօնին 4 աղմոս ասել. 7) երեկոյեան ժամերգութեան ասել՝ Խոնարհեցո և Ապրեցո, ապա մեսեդի, քարոզ. երեքսրբեանը նւագել, ապա աղմոս ասել. 8) կիւրակի օրւայ ժամապաշտութեան կարգն է որոշւում մանրամասն:

Պարտաւի ժողովում որոշւում են ամուսնական կարգի սահմանները: Երնջակի 842 թ., Անիի 970 թ. և 1036 թւի ժողովները վերաղել են ժամանակի կաթողիկոսների գործունէութեան քննութեամբ (Յովհաննէս Օձայեցու, Վահանի, Պետրոս Գետադարձի և Դիոսկորոսի): Ժողովներից երեւում է որ 1) ազգ. եկ. ժողովը կարող է կաթողիկոսի գործունէութիւնը քննել. 2) ժողովը կարող է կաթողիկոսին հեռացնել, բանադրել, մի վանք աքսորել, գրաւոր փաստաթղթեր ունենալով և վկաների հարցաքննելով:

Հարքի 1002 թ. ժողովը բանադրել և նզովել է Թոնդրակեցոց աղանդը:

Սսի 1243-6 թւի ժողովում որոշում են. 1) պըսակը և կնունքը եկեղեցում կատարել, պատարագ անել, քահանան պիտի անաւաղ լինի. 2) աւազանը

պէտք է հաստատուն լինի. 3) պսակուողներից տղան պիտի 14 տարեկան լինի առնուազն, իսկ աղջիկը 12 տ. 3) օտար թեմի վարդապետը կամ եպիսկոպոսը իրաւունք չունի մի այլ թեմում շրջելու. 4) պահքը պիտի առանց պինու, ձէթի և ձկան պահել: Օձնեցու ժամանակ 720 թւին կազմւում է եկեղեցական կանոնագիրքը: Օձնեցին և Մանդակունին ժողովներով աստուածպաշտութեան կարգերն են կանոնաւորում: Մանազկերտի ժողովում 726 թ. Քրիստոսի մարդեղութեան, կրից, ապականացու լինելու հարցերն են որոշում. Պարտաւի ժողովում Ս. Գրքի կանոնականութիւնն են որոշում և թէ ի՛նչ գրքեր են մտնում Ս. Գրքի մէջ. 1441 թւի ժողովում Ամենայն Հայոց Կաթողիկոսի աթոռանիստի տեղն են որոշում:

ԺԹ-րդ դարում եկեղեցական ազգ. ժողովները չեն կազմւում վերոյիշեալ և նման խնդիրների համար. բայց Հայոց ընդհանրական հայրապետները իրենց կոնդակներով որոշ հարցերի լուծումը մանաւանդ ժողովների և խորհուրդների են վերապահում, որով այդ խնդիրների համար ժողովրդի ներկայացուցչութիւնն է իրաւասու դառնում որոշումներ կայացնելու: Մատթէոս Ա.-ից ծխական-եկեղեցական հոգաբարձուների կարգն է մտնում՝ եկեղեցական-ծխական դպրոցների տնտեսական, վերջերը նաեւ որոշ կրթական հարցերը լուծելու. նոյնը և թեմական հոգեւոր դպրոցների համար է հաստատւում: Մկրտիչ Ա.ը, Մատթէոս Բ.ը, ապա ներկայ կաթողիկոսը թեմական խորհուրդներ են հաստատում, որոնք բացի դպրոցական գործից, պէտք է նաեւ թեմի կալուածական-տնտեսական հարցերը որոշէին: Մկրտիչ Ա.ը Ռուսահայոց կենտրոնական ժողովը գումարել տալով 1906 թւին տւած կոնդակի հ. 8-ով հետեւեալ խնդիրներն էր վերապահում ժողովի իրաւասութեան. «կենտրոնական ժողովը իբր Ռուսահայոց եկեղեցական գործերի կարգադրիչ և տը-

նօրէն կարող է իւր քննութեան ենթարկել և որոշում-
ներ տալ Ռուսահայոց եկեղեցական բոլոր գործերի վե-
րաբերմամբ։ Կենտրոնական ժողովի առաջիկայ նստա-
շրջանին առաջ դնում ենք իբր անյետաձգելի կարե-
ւորութիւն ունեցող խնդիրներ՝ դպրոցական, տնտե-
սական գործերը և թեմական ժողովները կարգաւորե-
լու հարցերը։» 1917 թ. Յունիսի 12-ին Էջմիածնում
գումարած ռուսահայ հոգեւորականների համագու-
մարն զբաղւում է. 1) Եկեղեցու և եկեղեցականութեան
բարեկարգութեան խնդիրներով. 2) տնտեսական խըն-
դիրներով. 3) դպրոցական-կալուածական, 4) վարչա-
կան և 5) այժմէական հրատապ խնդիրներով։

Ամփոփելով վերյիշեալը, տեսնում ենք հետե-
եալ պատկերը.

1. Ազգ. եկ. ժողովը իրաւասու է եղել որոշելու
դաւանական հարցեր. երեք սինեզերական ժողովները
ընդունելուց յետոյ, այլեւս նրանց որոշումները երբեք
չի քննադատել, սինացել է հաւատարիմ.

2. Որոշել է ժամապաշտութեան կարգը.

3. Որոշել է ծիսու կարգերը.

4. Եկեղեցականների իրաւունքները և պարտա-
կանութիւնները հաստատել է կանոնագիրքը.

5. Ս. Գրքի կանոնական գրքերն է որոշել. աստ-
ւածպաշտութեան գրքերն է կազմել, աւելացրել և պակ-
ասցրել.

6. Ընտրել է կաթողիկոս. բացառիկ դէպքերում
նաեւ քննել է կաթողիկոսի գործունէութիւնը, ընթաց-
քը և հեռացրել.

7. Դպրոցական, կալուածական, վարչական հար-
ցեր է որոշել.

8. Եկեղեցու սահմանադրական կարգերն է որո-
շել և փոփոխել։

Ազգ. եկ. ժողովը հայ եկեղեցու ամենաբարձր
մարմինը լինելով ամենատեսակ հարցեր որոշել է ե-
կեղեցուն վերաբերող։

III.

Հիմք ունենալով մեր եկեղեցու պատմութիւնը,
անցեալ ազգ. եկ. ժողովները, ըստ իս ազգ. եկ. առա-
ջիկայ ժողովը պիտի կազմակերպել ըստ այմ.

1. Ազգ. եկ. ժողովը հրաւիրում է Ամենայն Հայոց
Կաթողիկոսը՝ Գ. Հ. խորհրդի հետ խորհրդակցելով.

2. Ժողովի տեղն է Մ. Աթոռ Ս. Էջմիածինը.

3. Ժողովին մասնակցելու են՝ Սոյ Կաթողիկո-
սը, Երուսաղէմի և Կ. Պօլսի Պատրիարքները, Էջ-
միածնի և Երուսաղէմի միաբանութեան ներկայացու-
ցիչները, բոլոր առաջնորդները, քահանայական դասի
ներկայացուցիչները.

4. Իւրաքանչիւր թեմի աշխարհականների ըն-
տրեալ ներկայացուցիչները, հիմք ընդունելով 25-
30,000 հոգւոյ մի ներկայացուցիչ պատգամաւոր.

5. Այն գաղութները և թեմերը, որ անկախ են,
հեռու ընկած և 25-30,000 անձ չունեն, նոյնպէս մի
պատգամաւոր կարող են ուղարկել.

6. Ընտրութեան ժամանակ պիտի առաջնորդւել
1917 թւին վեհափառ Հայրապետի հաստատած և թե-
մերն ուղարկած թեմական ժողովների ընտրութեան
հրահանգով.

7. Ժողովին դրւելիք խնդիրները լինելու են՝ ե-
կեղեցու սահմանադրութիւնը, ի նկատի առնելով այն
որ «Պօլօժէնիա»ն վերցւած է և քաղաքական նոր
պայմաններ են առաջ եկել, եկեղեցու կանոնագիրքը,
եկեղեցու բարեկարգութեան խնդիրը, եկեղեցու ըզպ-
րոցական-կուլտուրական գործը և հոգեւորականու-
թեան տնտեսականի հարցը և այլ ընթացիկ հարցեր։

Հայ եկեղեցու բարեկարգութեան հարցը վաղուց
է սպասում իւր լուծման. այդ կարող է անել ազգ. եկ.
բազմամարդ ժողովը։ Շուրջ 5-6 դար է, որ այդպիսի

ժողով չի ունեցել հայ եկեղեցին. (Չեմ հաշւում կաթողիկոս ընտրելու համար գումարած և այլ մասնակի ժողովները)։ Հարկ է ուրեմն, որ հայ հասատացեալ համայնքները, հայ եկեղեցու գործունէութիւնը գնահատողները, այդ եկեղեցու պայծառութեան նախանձախնդիրները լուրջ ուշադրութեան առնեն այս հարցերը։

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ

ԺԸ. ԴԱՐՈՒՄ

(ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹԻՒՆ)

Հայ եկեղեցու բարենորոգութեան խնդիրների մէջ առանձին յօդուածով յիշւում է «Հայոց եկեղեցու սահմանադրութեան խնդիրը»։ Էջմիածինը այս հարցը դրել է ի նկատի ունենալով հետեւեալ հանգամանքը։ 1917 թւի ռուսական մեծ յեղափոխութիւնից յետոյ, երբ եկեղեցին պետութիւնից բաժանուեց ու եկեղեցին յայտարարուեց մասնաւոր հիմնարկութիւն, նա դադարեց համապետական օրէնսդրքով պետական իրաւական մարմին լինելուց, դարձաւ մասնաւոր ընկերութիւն և նրա մասին եղած «Պօլօժէնիա»ն ու յարակից բոլոր օրէնքները դադարեցին գոյութիւն ունենալուց։ Եկեղեցին նախկին ռուսահայ հատւածում ունց առանց որոշ սահմանադրութեան, որով պիտի նա կազմակերպւի և ղեկավարւի նոր ստեղծւած պայմաններում։ Այս հանգամանքն ի նկատի ունենալով Էջմիածինը հարկ է զգացել այդ հարցն էլ ազգ. եկ. ժողովի առաջ դնելու։

Այդ հարցի պարզաբանութեան են նւիրւած, որոշ չափով, յետագայ տողերը, որոնցով աշխատել եմ ցոյց տալ, թէ ժԸ-րդ դարում ի՞նչպիսի կազմութիւն է ունեցել հայ եկեղեցու սահմանադրութիւնը, ի՞նչ էական պայմաններ դեր են խաղացել հայ եկեղեցու վարչութեան այս ու այն կերպարանքն ստանալուն։

Որքան մօտ ծանօթանանք հայ եկեղեցու տարբեր ժամանակներում ունեցած իրաւական-վարչական կազմի հետ, այնքան աւելի համոզեցուցիչ փաստեր կ'ունենանք հաւատալու, որ պատահականութեան արդիւնք չէ հայ եկեղեցուն «ազգային» - «ժողովրդական» ածականները տալը: Հայոց պատմութեան մէջ եղած փաստերի չափ ուշագրաւ փաստեր կ'գտնենք և հայ եկեղեցու սահմանադրութեան, որա կրած փոփոխութիւնների մէջ՝ համոզւելու, որ մեր եկեղեցին ինքը ժողովուրդն է, ժողովրդի զանազան դեկավար հոսանքների ըմբռնումները ազդել են եկեղեցու սահմանադրութեան վրայ, և ամենից քիչ հոգեւորականութիւնն է իբր ուրոյն դաս այդ սահմանադրութեան կազմակերպութեան մէջ գործօն և ազդեցիկ դեր խաղացել:

I.

Որ եւ է հիմնարկութեան սահմանադրութեան մէջ նշւում են նրա պատմութեան կարեւոր անցքերը և գործօն ոյժերը, որոնք տւեալ ժամանակում ամենից աւելի կարեւոր դերն են կատարել: Սահմանադրութիւնը, կարելի է ասել, հիմնարկութեան պատմութեան տւեալ շրջանի խտացրած պատմութիւնն է. տարրալուծելով, վերլուծելով սահմանադրութիւնը, կարելի է խոշոր գծերով ստանալ հիմնարկութեան որոշ շրջանի պատմութիւնը առանց թւականների, տեղերի և անուններիւ Սահմանադրութիւնը հետեւանք է պատմական շրջանում գործող հոսանքների և միջավայրի: Որքան կենդանի և գործօն ոյժ է հիմնարկութիւնը, այնքան աւելի նրա սահմանադրութիւնը լայն չափով տւեալ շրջանի պատմութիւնը կ'արտայայտի ըստ իս. սահմանադրութեան վերլուծմամբ հնարաւոր է հիմնարկութեան պատմութեան որոշ շրջանն ուրւագծել, յատկապէս այնպիսի հիմնարկութեան, որի հիմքը կազմող համայնքը իր եւ հիմնարկութեան մէջ ան-

ջրպետ չի ստեղծել, երբ հիմնարկութեան դեկավար տարրի և համայնքի մէջ իշխողի ու հպատակի՝ իրաւաբանական ըմբռնումով հասկացւած՝ մեկուսացնող յարաբերութիւն առաջ չի եկել:

Վերջին հանգամանքը կարեւոր է շեշտել այն պատճառով, որ կան հիմնարկներ, որոնց սահմանադրութիւնը խոշոր չափերով դեկավար տարրի շահերի և պահանջների արտայայտութիւնն է. այդ դէպքում սահմանադրութիւնը դադարում է համայնքի պատմութեան արտայայտութիւն լինելուց և դառնում է դեկավար իշխող տարրի շահերի արտայայտութիւն:

Մեր եկեղեցու հոգեւորականութիւնը չէ եղել մի անջատւած, ուրոյն շահերով դաս կամ դասակարգ, որ նա իր շահերը թելադրէր ժողովրդին. նա նոյն ժողովրդի մի հատւածն է, ժողովրդից անբաժան, նրա հետ և նրա մէջ: Ժողովրդի ամբողջութիւնը կ'խանգարւի, կ'նւազի, կ'կորցնի իր լրութիւնը երբ անջատէք հայ եկեղեցու հոգեւորականութիւնը հայ ժողովրդից: Ժողովուրդը ինքը թելադրել է իր հոգեւորականութեան այս ու այն անել. նա է իր պահանջները առաջարկել հոգեւորականութեան և վերջինս կատարել է. ստեղծւել է մի յարաբերութիւն, որ գոյութիւն ունի տիրոջ և գործակատարի մէջ, ուր տէրը ժողովուրդն է, գործակատարը հոգեւորականութիւնը:

Ի հարկէ ընդհանուր առմամբ և խոշոր գծերով գործակատարի հմտութիւնը, բարեխղճութիւնը կարեւոր է գործի յաջողութեան համար. որքան գործակատարը շահատէա, յաջող է կատարում իրեն վրայ դրւած պարտքը, այնքան գործն է շահում և գործակատարի դիրքն է ամրանում, խոշորանում: Եթէ մեր եկեղեցու պատմութեան մէջ այս ու այն կաթողիկոսը խոշոր ընդունակութեան տէր է եղել, վարչական տաղանդ, նա ժողովրդի վստահութիւնը գրաւել է և գործակատար լինելուց երբեմն դադարել է ու տնօրինողի

դերի մէջ է մտել, սակայն միշտ էլ հիմք ունենալով ժողովրդին, որի վստահութիւնը լիովին վայելել է:

Հայ եկեղեցու առանձնայատուկ կողմը եղել է այն, որ նա հայ ժողովրդի հասարակական կեանքի ամենակենդանի արտայայտութիւնն է եղել: Հայ եկեղեցու մէջ և նրա միջոցով է նա իր հասարակական-քաղաքական ձգտումները, հայրենի քաղաքական իշխանութեան բացակայութեան դէպքում, հանդէս բերել: Հայ եկեղեցում է նա վարժւել, փորձեր արել, մարզանքներ կատարել համայնօրէն կազմակերպւելու և հասարակականօրէն ապրելու. ուստի և հայ եկեղեցու սահմանադրութիւնը հայ ժողովրդի համայնավարական ըմբռնումների, հասարակական հոսանքների ձգտումների և գործունէութեան կնիքները ունի իր մէջ: Ըստ իս, հայ եկեղեցու սահմանադրութիւնը մի տեսակ համառօտ ծրագիր-բովանդակութիւն է հայ ժողովրդի հասարակականօրէն ապրելու, համայնօրէն գործելու պատմութեան, ի հարկէ խոշոր գծերով:

Հայ եկեղեցին ինքը ժողովուրդն է իր բոլոր առաւելութիւններով ու պակասութիւններով. ժողովրդի համար եկեղեցին մի օջախ է, մեծ քեարխանա տուն, թովջատեղի, տեղի ապաստարանի, համայնական կեանքի մի ժողովարան-աշխատանոց: Հայը չի ունեցել հասարակական կեանքի գործունէութեան այլ միջավայր, հիմնարկութիւն, և իրեն հետաքրքրող, իրեն յուզող, իրեն առաջ տանելու, զարգացնելու, իր միշտ վրդովւած կեանքը խաղաղացնելու նպաստող խնդիրները տարել, մաշել է եկեղեցի, այնտեղ լուծել, այնտեղ ընթացք տւել:

Հայ հոգեւորականը նոյն հայ գիւղացին է, շատ քիչ բացառութեամբ՝ այն էլ անցեալում՝ ազնւականը: Այսօր արխալուխ հագած, փափախը գլխին հայ գիւղացին վաղը վերարկու է հագնում, քահանայի ֆէս կամ կրօնաւորի վեղար դնում և դառնում է հոգեւորա-

կան. միւս օրը հանում է այդ և դառնում նոյն գիւղացին. նա յատուկ հոգեւորական դիսցիպլինի չի ենթարկւում, չի կաղապարւում, նրա միտքն ու հոգին չի մարզւում պատրաստի մշակւած հրահանգներով. այս ամենը խորթ է հայ եկեղեցուն, որովհետեւ ժողովուրդը ինքը չունի իր մէջ այդ տարրը: Նրա մէջ զարգացել է անհատօրէն ապրելու, անարխիկ լինելու մի կեանք, որը և իւր եկեղեցու մէջ ցուցադրել է նա:

Կարգապահութիւնից, դիսցիպլինից աւելի դուրկ եկեղեցի, քան հայ եկեղեցին է, դժւար է գտնել մի այլ եկեղեցու մէջ:

Պատմական բերմունքները հարկադրել են հայ ժողովրդին ամբողջովին հայ եկեղեցին իրենը դարձնելու, նրա մէջ տեղաւորւելու, նրան իրեն ենթարկելու, նրանով ու նրա մէջ ապրելու: Բնականաբար ինքն էլ կազմակերպել է եկեղեցու սահմանադրութիւնը, փոփոխել, աւելացրել, պակասցրել, լրացրել, նայելով դրսի քաղաքական, տնտեսական պայմաններն ի՞նչ են թելադրել: Իր ազգային ամբողջութիւնը պահելու համար, ոմանց համար գիտակցական, ոմանց համար բնախօսական-բնազդական պահանջ, նա եկեղեցում և նրանով դրսեւորել է և իր ստեղծագործութիւնը — ըմբռնողութիւնը ոգու և իր հպատակութիւնը - յարմարումը պայմաններին:

Այս պայմաններում է առհասարակ հայ եկեղեցու սահմանադրութեան կազմակերպութիւնը կազմակերպւել. պայմաններ, որ հայ եկեղեցուն են իրապատուկ:

II.

ԺԸ-րդ դարու հայ եկեղեցու սահմանադրութիւնը խոշոր չափով իր մէջ ունի ժամանակի մահմետական աշխարհի (Պարսկաստան և Տաճկաստան) քաղաքական-տնտեսական իրաւակարգի տարրը:

Հայ ժողովուրդն այդ շրջանում գտնւում էր այդ երկու պետութիւնների իշխանութեան տակ. նա հպատակ էր, բայց ոչ սոսկ հպատակ, այլեւ «ռայա», սոցիալական հպատակից աւելի իրաւազուրկ: Նա թուով քիչ էր, անկազմակերպ, ցրւած ու մնտեսապէս թոյլ. բնական է, որ գերիշխողի, ուժեղի և մնտեսապէս աւելի բարձր դասակարգի՝ իշխող մահմեդականի կենցաղի ձեւերն ընդօրինակէր, նրան յարմարւէր իր եկեղեցիով, նիստ ու կացով, իր գոյութիւնը ապահովելու համար: Հպատակ հային կառավարողը մահմեդականի քմահաճոյք-օրէնքն էր. այդ նոյնը տեղ էր գտնում և հայ եկեղեցու վարչակազմի և սահմանադրութեան մէջ:

ԺԸ-րդ դարու հայը իր հագուստով, կենցաղի արտաքին ձեւերով, կահ-կարասիքով, տան և նրա զարդարանքի ոճով-ճաշակով, իր փոխյարաբերութիւններով շատ էր նման մահմեդականին: Նրա գործածական լեզուն հայերէնին հաւասար պարսկերէն-տաճկերէնն էր, ինչպէս ժամանակի գրութիւնները, մատեաններըը, հաշիւները ցոյց են տալիս: Այդ նոյն ազդեցութիւնը գտնում ենք և հայ եկեղեցու սահմանադրութեան մէջ:

Հասկանալու համար այդ սահմանադրութիւնը, պէտք է ուրուագծել ժամանակի մահմեդական պետութեան կազմը — սահմանադրութիւնը, որից հայ եկեղեցին մեծ չափերով ազդւում էր: Տիրող մահմեդականը չէր թոյլ տայ և հայն էլ չէր կարող դեռ իր ինքնօրէն կազմութիւնն ունենալ, որքան էլ այդ մասին հեռաւոր գաղութներում ձրագրներ մշակէին: Մասսան շատ էր կաթուածահար իր ըմբռնումով, կամքով, իր գիտակցութեամբ, որ ինքնօրէն լինելու խիզախութիւնն ունենար. նրան հաճելի էր առանց ցնցումի և տաժանների ձթրել մի տիպ, կուչ գալ մի անկիւնում, որ «սուրգիւն» չլինի, որ չխողխողւի: Նրա համար պարսկի փափախ կամ տաճկի ֆէս դնելը, երկար կապա հագնելը, գօտի կապելը, մաշիկով շրջելը հաճելի էր, որ իրեն «օտար» չզգայ իր հայրենիքում իրեն իշխող ցեղի պետութեան մէջ: Այդ նոյն հասկացողութիւնը նա պիտի յայտնաբերէր և իր եկեղեցում, ուր նա իբր համայնք հասարակականօրէն ապրում, գործում էր: Մահմեդականը ուժեղ էր և տիրող. նա թելադրում էր, և հպատակ հայը, որ և թոյլ և քիչ էր թուով, կատարում էր այդ թելադրանքը. այդ նոյնը հայ մարդը մուծում էր և հայ եկեղեցու, նրա վարչակազմի ու սահմանադրութեան մէջ, աշխատելով իր քրիստոնէական դաւանական ինքնուրոյնութիւնը պահել:

Մահմեդական աշխարհի կառավարութիւնը աւատական-ֆէօդալական էր: Ֆէօդալական տերմինը, որը պատմական որոշ բովանդակութիւն ունի, ներկայ դէպքում լրիւ չի արտայայտում մահմեդական աշխարհի ժամանակի սոցիալ-քաղաքական վիճակը: Արեւելքի ֆէօդալիզմը ունէր առանձնայատկութիւն՝ կապւած ցեղային-ռասսայական և աշխարհագրական կլիմայական պայմանների հետ: Ներան աւելացնենք և արեւմուտքի արդիւնաբերող երկրների դէպի արեւելքի հում նիւթ արտադրող աշխարհն սկսած տնտեսական արշաւանքը, նւաճողական քաղաքականութիւնը և կ'տեսնենք, որ այդ աւատականութիւնը քայքայող էր և քայքայւում էր ինքը:

Արեւելքում ժողովուրդների մէջ անհատի պաշտամունքն աւելի մեծ է եղել առհասարակ, քան արեւմուտքում. արեւելքին միստիկ-մետաֆիզիկ է և ներառ դէպի հասարակական-տնտեսականը: Հարուստ արեւելքում արեւելքին միշտ աղքատ է եղել. Արեւելքի միապետը պէտք է լինէր անհատ-եզակի, ազդեցիկ, իւր տեսակի մէջ միակը, որ պաշտամունք ապրացնէր և այդ ամենը նա աշխատում էր իր իշխանական պրերօգատիւները գործադրելու ցայտուն արտայայտութիւններով դրսեւորել: Սարսափ ազդելը

իշխողի ամենից բնորոշ կողմն է եղել, հեղինակութիւնը բարձրացնելու միջոցը իրենից առաջ չեղած, չլսած ձեւերով հպատակներին ու ստորադրեալ իշխանաւորներին ահաբեկիչն է եղել:

Արեւելքի ֆէօդալ իշխանը, լինի նա շահ և կամ սուլթան կամ խան, փաշա, բէգ, աղա, քեթխուդա, քալանթար, մէլիք տիտղոսով, անգամ ֆարրաշ ու քէօխվա, իշխանութեան հեղինակութիւնը իր անձնաւորութեան հետ է կապել: Իւրաքանչիւր ստորադաս իշխանաւոր իր ստորադրեալի համար եղել է միահեծան, բռնակալ, իրենից բարձր եղողի առաջ ստրուկ, հպատակ: Նա կտրում էր իրեն հպատակի վիզը և քծնում, ոտքը համբուրում իր իշխանաւորի:

Երկրի հասարակական կեանքը դեռ համայնօրէն լինելու աստիճանին չէր բարձրացել. հասարակութիւնը դեռ դիֆֆէրէնցիացիայի չէր ենթարկւել և անհատը, այսինքն որ եւ է եղանակով գիւղի, շրջանի, երկրի մէջ դիրք ձեռք բերողը իրանով սկսում և վերջացնում էր իշխանութեան հեղինակութիւնն ու կայունութիւնը: Իշխանութեան համար հռոմէական օրէնսգրքի նօրմաներով որոշւած սահմաններ չկային. պարտականութեան և իրաւունքի սահմանները որոշ լինելուց շատ էին հեռու: Իւրաքանչիւր իշխանաւոր ինքն էր իր ընթացքով, իր կարգադրութիւններով այդ հարցերը որոշում, թողնելով, որ իր յաջորդն էլ նոյնն անէ:

Ժամահաճոյքը, կամայականութիւնը օրէնքի աղբիւր էր. այդ կ'նշանակէ՝ օրէնք առաջ գոյութիւն չունէր արեւմտեան ըմբռնումով: Օրէնքը ոյժն էր, բռնութիւնը. ով ուժեղ էր՝ նա էր տէրը:

Բնական է ուրեմն, որ արեւելեան-մահմետական ֆէօդալական կազմի մէջ հաստատուն, որոշ իրաւակարգ փնտռելը միամտութիւն կ'լինի: Ի հարկէ կային սովորութիւններ, հնուց ւլնացած աղաթներ, որոնք օգտա-

գործում էին իշխանաւորները իրենց քմահաճոյքով. սակայն դրանք, բացի այն որ ո'չ գրի էին առնւած կանոնաւոր ձեւով, ո'չ իրր հաստատուն, որոշ իրաւակարգ ճանաչւած, այլ և եղած դէպքերում էլ (ֆարման, բարաթ) ըստ քմահաճոյքի կա'մ մոռացւում էին կա'մ փոփոխւում: Նախորդը յաջորդ իշխողի համար առաւելապէս անցեալ էր, յիշատակ և ոչ պարտադիր օրէնք սահմանող: Հպատակը չունէր իր անտեսական-իրաւական դրութեան համար որոշ ուղեցոյց. նա անորոշութեան մէջ էր իր կենցաղը. անօրինելու, կանոնաւորելու տեսակէտից և ամբողջապէս կախւած էր իշխանաւորի վատ ու լաւ տրամադրութիւնից:

Բնական հարստութիւններով առատ ու անտեսապէս աղքատ այդ երկրում իշխանաւորի համար նիւթական հարստութիւն ձեռք բերելը իշխանաւորի գլխաւոր նպատակն էր: Ով շատ ու շուտ դրամ տար իշխանաւորին, նրանն էր իրաւունքը, նրա կողմն էր արդարութիւնը, ա'յն իրաւունքը ու արդարութիւնը, որի աղբիւրը իշխանաւորն էր, որն այսօր կար, վաղը չէր լինի, և հետեւապէս այսօրւայ իշխանաւորի քիմքը քաղցրացնելուց յետոյ վաղը եկող նոր իշխանաւորին եւս պիտի «ընծաներով» դիմաւորէր, որ նրանից եւս արդարութիւն ակնկալէր:

Այս էր արեւելեան ֆէօդալի առանձնայատուկ կողմը, որը և տնտեսական կեանքի մէջ էր երեւան գալիս, մի տնտեսութիւն որը դեռ գրեթէ փակ տնտեսութիւն էր, տնայնագործութեան արդիւնաբերութեամբ բաւականացող: Ժողովուրդը բնական տուրքի, բերքի որոշ մասի հատուցումով էր իր ապրելու, գոյութիւն ունենալու իրաւունքը ձեռք բերում: Բնական բերքով տուրքի չափը անորոշ էր. $^1/_{10}$-ից մինչեւ $^1/_2$-ն էր հասնում. ծայրայեղ դէպքերում ամբողջ բերքն էր գրաււում: Յաճախ երէկւայ տասնեակ դիւղեր ունեցող խանը միւս օրը դառնում էր մուրացիկ, և ընդհակա-

ռակը: Ֆեոդալական անտեսական կեանքում ամենից աւելի սոսկալի, աւերիչ արտայայտութիւններ էր ստանում, որը և անտեսութեան քայքայման էր նպաստում: Զկային երկրում հաղորդակցութեան կանոնաւոր միջոցներ, չկար խաղաղութիւն, չկար դրամագլուխ, չկային շուկաներ: Հասկանալի է, որ այս պայմաններում անտեսութիւնն էլ չէր զարգանայ. գիւղացին վատահ չէր, որ իր ունեցածի տէրն է լինելու· արհեստաւորը արդիւնաբերող միջոցների չէր դիմում, որովհետեւ արտահանութիւնը դարպացած չէր. իր արհեստանոցն ու գործիքներն էլ պրիմիտիւ էին: Մաքսերն ու հարկերը բազմաթիւ էին. երկրում աւելի շատ ապրանք էր ներածւում, քան արտահանւում. անվերջ պատերազմներն էլ աւելի եւս ուժասպառ էին անում աւատական իշխանութեան խախուտ օրգանիզմը:

ԺԸ-րդ դարում Պարսկաստանում ծայր տւին խըլըրտումներն ու ապստամբութիւնները այլ և այլ գեղերի, որոնք այդ ֆէօդալական երկիրը վերածեցին անիշխանութեան: Ամբողջ Պարսկաստանը պատառ պատառ եղաւ, ծւատման ենթարկւեց և՛ ներքուստ և՛ արտաքուստ: Ռուսաստանն ու Տաճկաստանը փոխադարձաբար անդամահատեցին նրան: Այդ անիշխանական վիճակից օգուտ քաղեցին երկրի ֆէօդալ իշխանները, անարխիկ կեանքի տրամադիրները, որոնք իրենց յաճախակի ապստամբութիւններով երկիրը դարձրին իսպառ աւազակների ու թալանի միջավայր: Մի դարու ընթացքում մի քանի տարբեր տոհեր կազմող շահեր ընկան ու բարձրացան: Այս յեղաշրջումների ժամանակ ամենից մեծ չափով տուժողն եղաւ ժողովուրդը: Իսկապէս որ «Սահման քաջաց զէնն իւրեանց» էր. երկրում չկար հաստատուն կարգ, չկար գոյքի, անձի ապահովութիւն. գիշերը սարսափ էր ազդում, ցերեկը թալանի երկիւղն էր տիրում:

Երկրում գոյութիւն ունէին շահեր, սուլթաններ, սակայն սրանք աւելի շատ տիտղոսաւորներ էին, քան իրենց տիտղոսից բղխող իրաւունքների տէր իշխանաւորներ: Իրապէս նրանք էլ խաներ, փաշաներ էին, երկրի մի քանի աւելի թոյլ խաների և փաշաների դէմաւոր: «Իշխանութիւնը տեղումն էր», այսինքն ամեն փաշա, խան, որ որ եւ է նահանգի կամ գաւառի տէր էր, ամեն ինչ երկրում ինքն էր վճռում, որոշում. սուլթանի կամ շահի հրամանը չէր կատարում, երբ իր գինական ոյժի վրայ վատահ էր. կամ եթէ լսում էլ էր շահի կամ սուլթանի հրամանը, աշխատում էր նրա հրամանի կատարումը այնպէս ձգձգել, բարդութիւնների հետ կապել, որ այն հպատակը որը սուլթանից կամ շահից հրովարտակ էր ստացել որ եւ է խնդրի համար, ստիպւած էր լինում աւելի ծախքեր անել տեղի փաշայի սիրտը շահելու, որ վերջինս բարեհաճէ կատարել: Յաճախ ցածր պաշտօնեան աւելի իրաւատէր էր հանդիսանում հպատակի վերաբերմամբ քան բարձր պաշտօնեան:

Յայտնի է, որ Յակովբ Ջուղայեցի ու Եղիազար Ամթապցի կաթողիկոսները շուրջ 15 տարի կռիւ մղեցին Էջմիածնի կաթողիկոսութեան համար, առաջինը Էջմիածնի ընդհանրականութիւնը պահպանելու, երկրորդը, քանի դեռ Էջմիածին չէր հրաւիրւած, Տաճկաստանում առանձին կաթողիկոսութիւն հիմնելու համար: Երկուսն էլ տասնեակ հազարներ ծախսեցին իրենց նպատակների համար, նոյն սուլթաններին և իրենց շրջապատողներին նոյն նպատակի համար մի քանի անգամ կաշառելով: Եթէ նոյն շահն ու սուլթանը միեւնոյն խնդրի համար տարեկան մի նոր հրովարտակ կարող էր տալ, վերջինն առաջինին հակասող, բնական է որ մի սուլթան մի այլ սուլթանի որոշումը կարող էր չընդունել, և ամեն անգամ միայն կաշառքն էր խնդրին նոր որոշում բերում: Ընչաքաղց

արեւելյու համար ֆէօդալական կարգը ձեռնտու էր, որքան և ժողովուրդը տուժէր չարաչար։

Եւրոպան ԺԸ-րդ դարում այլ և այլ պատրւակներով, յատկապէս տնտեսական չաջողութիւններ, շուկաներ գրաւելու նպատակով, դեսպանութիւններ էր ուղարկում ֆէօդալական Արեւելքը, միջամտում էր «բարեկամաբար» երկրի ներքին համարւող գործերում ու իր հերթին աւելի շատ նպաստում էր, քան առաջն առնում, քայքայելու։ Հպատակ մանր ազգերին իրեն տնտեսական քաղաքականութեան ծառայեցնելու առատ նիւթ գտնելով բռնապետական քմահաճոյքներից զրւած այդ ազգերի մէջ, մանաւանդ որ իր դեսպանութիւնները կաթոլիկ հոգեւորականներ էլ էին լինում, ոչ պակաս քաղաքական քան կրօնական նպատակի ծառայող, Եւրոպան հրահրում էր, դրդում հպատակներին ինչ որ ազատագրական խլրտումների, որոնց հիմքը ինքն էր դրել, իր հետ էր բերել։

Եւրոպան հում նիւթ արտադրող այդ երկրներից ամենից մեծ չափերով վաճառականական արտօնութիւններ ձեռք բերելու էր հետամուտ, քան երկրներ նւաճելու։ Ծանր, փաշայի հրամանով ականջից, քթից, ձեռքից, ոտքից մի ակնթարթում զրկւող, ունեցածչունեցածից մի օրում ունայն մնացող այդ ազգերի մէջ նա հարուստ նիւթ էր գտնում նրանց զրգռելու տիրապետողների դէմ, իբր թէ ինքն էլ նպաստելու է նրանց ազատագրելու այդ ծանր ու դառն լծից։ Սակայն ամեն անգամ քրիստոնեայ անունով մանր ազգերին հրապուրող ու միշտ էլ խաբող այդ Եւրոպան մի ոսպէթանով անդրանկութիւնը վաճառում էր։ Չէնց որ «բարբարոս» արեւելցին - մահմեդականը «կիրթ» Եւրոպային որ եւ է իւղապատառ էր մատուցանում, «քրիստոնեա» Եւրոպան անմիջապէս մոռանում էր իր կեղծ ցուցանակը և մանր ազգերին յանձնում էր իշխողների վրէժխնդրութեան, և իշխողը բնականաբար

իր վրէժը թոյլ հպատակից էր հանում, և ոչ ուժեղ Եւրոպայից։

Արեւմուտքը եկել մտել էր Արեւելք առաջին հերթին իր միսիոներ - վաճառականով, որը յամենայն դէպս մանր ազգերի ազատագրութիւն չէր բերել իր հետ, այլ վաճառականի շահ, որով Արեւելքի բռնութեան վրայ աւելացաւ և Արեւմուտքու դրամատիրական շահագործումը։

Այսպիսով մի կողմում արեւելեան ֆէօդալիզմն էր իր անխիղճ տնտեսական արհաւիրքներով, տնտեսական քայքայումով, փակ բնատնտեսութեամբ ու դադրւթ դառնալու տենդներով. միւս կողմում մահմեդական երկրները մուտք գործող Արեւմուտքը իր ազատագրական արտաքին ազդակող ցուցանակներով ու դրօշակներով, որոց ետեւը թագնուած էր անյագուրդ վաճառականը ու ad gloriam mundi պապի եզուիտ ապենտը։ Այս միջավայրում էր ապրում հայ ժողովուրդը և այս գործօններն էին դեր խաղում նրա եկեղեցու տնտեսութեան կազմակերպութեան մէջ։

III.

Հայ եկեղեցին գրաւոր տնտեսութիւն, ներկայ իրաւաբանական ըմբռնումով, չունի. կամ աւելի շուտ, մեր ձեռքը հասած չկայ մի տնտեսութիւն, ուր որոշւած լինէին եկեղեցու իրաւական հիմքերը, նրա գործունէութեան ֆունկցիաները, նրա պաշտօնեաների փոխադարձ յարաբերութիւնները, իրաւունքների և պարտականութիւնների տնտեսները և այն ամենը, ինչ որ մի պետութեան, մի իշխանութեան կանոնաւոր գործունէութեան անհրաժեշտ մասերի իրաւական դրութիւնն է որոշում։ Ռուս միապետութեան կազմած «պօլօժէնիա»ն, տաճկահայերի ազգ. տնտեսութիւնը դադարել են գործելուց, և սրանք որոշ հատւածների եկեղեցիների էին վերաբերում,

այն էլ ոչ ամեն կողմերը պարունակող և ոչ ամբողջ հայ եկեղեցուն:

Հարկ եղած դէպքում օգտագործւել են եղած կանոնագրքերը, հայրապետական կոնդակներով սահմանուած կանոնները, հրահանգները, աւանդութիւնները, սովորութիւնները, որոնք ցրուած են, ոմանք հնացած, ոմանք արդէն իրաւական արժէք լինելուց դադարած:

Ժ-ը-րդ դարում եւս հայ եկեղեցին չունի պրաւոր սահմանադրութիւն և ժամանակի պատմական անցքերից, եղած դէպքերից հնարաւոր է դառնում տեսակներ քաղել եկեղեցու սահմանադրութեան վերաբերեալ, նրանց համադրել և որոշ գաղափար կազմել: Առանց մանրամասնութիւնների մէջ մտնելու, տեսակներից երեւում է որ հայ եկեղեցին հետեւեալ կազմն ունէր.

Կար չորս կաթողիկոսութիւն՝ Էջմիածնի, Սսի, Աղթամարի և Աղուանից: Սրանց մէջ Էջմիածնի կաթողիկոսը ընդհանրականն էր: Աղուանից և Աղթամարի կաթողիկոսները ենթարկւում էին Էջմիածնի կաթողիկոսին, այսինքն պէտք է կոնդակով հաստատւէին, օծւելուց առաջ Էջմիածին գային. բայց այդ կարգը անխախտ չէր պահւում. երբ տիրող մահմեդական իշխանութիւնից աջակցութիւն էին գտնում, Էջմիածնի կաթողիկոսին չէին հնազանդւում, նրա դերիշխանութիւնից ելնում էին: Սսի կաթողիկոսը անկախ էր, չէզոքացած, երկիրն էլ մայր երկրից կըտրըւած էր, յարաբերութիւն պահելը այն շրջանում դժւար էր:

Կար երկու պատրիարքութիւն՝ Երուսաղէմի և Կ. Պօլսի. վերջինս յաճախ էր աշխատում անկախանալ, ամենայն Հայոց կաթողիկոսին չենթարկւել. երկուսն էլ պատրիարքական տիտղոսները ձեռք էին բերել, ըստ Սիմէոն կաթողիկոսի «Ջամբռ»ի, մահմեդական իշխանաւորների աջակցութեամբ, ի հարկէ կաշառքով, և ամենայն Հայոց կաթողիկոսը ի վիճակի

չէր չընդունելու նրանց պատրիարք լինելու հանգամանքը:

Կային առաջնորդութիւններ, կապւած թեմի նշանաւոր վանքերի հետ, որոնք հպատակւում էին այս կամ այն կաթողիկոսին կամ պատրիարքին: Առաջնորդների սրան կամ նրան ենթակայ լինելը հաստատուն, որոշ չէր. առաջնորդը իր ժողովրդի հետ անցնում էր պատրիարքից կաթողիկոսին կամ հակառակը. կաթողիկոսն ու պատրիարքն էլ իրենց հերթին աշխատում էին այս ու այն առաջնորդութիւնը իրենց հպատակեցնել մահմեդական իշխանաւորին կաշառելով, ընծաներ տալով: Առաջնորդը իր թեմի տէրն ու տնօրէնն էր, պատասխանատուութիւնից բացական ազատ. նախ որ երկրի ֆէօդալական կազմը այդ բանին նպաստում էր, երկրորդ՝ տեղի իշխողը նրան թեւ ու թիկունք էր դառնում և երկուսով միասին թեմը շահագործում էին: Քահանաները, որ անմիջապէս առաջնորդներին էին ենթարկւում, անիշխանական հակումներ ունէին, առաջնորդին չէին ենթարկւում, թեմից թեմ էին շրջում առանց թոյլտւութեան: Կային և թափառական վարդապետներ, ժողովարարներ, վատ վարքի համար վանքից վտարւածներ, որոնք երբ այլ եւս ոչ մի տեղ չէին գտնում, յարում էին կաթոլիկութեան, բողոքականութեան, որ այդ ժամանակ ծայր էր տւել, շնորհիւ ժողովրդի անտեսական նեղ դրութեան և երկրի քաղաքական վիճակի շփոթութեան: Եկեղեցու նւիրապետութեան մէջ եւս տիրում էր այն անիշխանութիւնը, ինչ որ երկրի մէջ կար, որովհետեւ եկեղեցու կազմակերպութիւնը խոշոր չափերով աշխարհիկ իշխանութիւնից էր կախուած, նրանից էր առանում իր իրաւական վիճակը որոշող նօրմանները, նրանով էր պայմանաւորւած իր կազմակերպութիւնը:*)

*) Թուս միապետութեան ժամանակ էլ նախկին ռուսահայ հատւածի եկեղեցին կեդրոնացած միապետական-բիւրօկրատիկ կազմակերպութիւն էր առանում, որովհետեւ երկրի աշխարհիկ իշխանութիւնը այդպիսին էր:

Կաթողիկոսի և թեմերի, պատրիարքութիւնների, կենտրոնի և շրջանների մէջ կապ պահողը նւիրակն էր։ Նւիրակին նշանակողը կաթողիկոսն էր. նւիրակին տւած կոնդակում որոշւում էր նւիրակութեան սահմանները, թէ ո՞ր տեղերը և ո՞րքան տարով կարող է շրջագայել։ Նւիրակը սովորաբար շրջում էր 1-3 տարի, երբեմն աւելի. պատահում էին նւիրակներ որոնք մի շրջան նւիրակելուց յետոյ նորից էին նոյն տեղը նշանակւում. պատահում էին և այնպիսիները, որոնք ըմբոստանում էին ու չէին վերադառնում, ընդհարւում էին տեղի առաջնորդների հետ ու իշխողի աջակցութեամբ նրան հեռացնում էին, իրենք ինքնագլուխ առաջնորդ դառնում։ Նւիրակները ունէին մատեաններ ուր պիտի արձանագրէին ստացած նւէրները թէ՛ դրամով թէ՛ նիւթով (խունկ, մոմ, կտորներ, սպասի առնօթներ). նւիրակները ժողոված գումարի և նիւթի մէջ գեղծումներ էին անում, ուստի կաթողիկոսը երբեմն երբեմն նշանակում էր նաեւ ընդհանուր քննիչ նւիրակ, որին անւանում էր «նւիրակաց նւիրակ» և որը շրջագայում էր գլխաւոր նւիրակատեղիները և ստուգութիւններ էր կատարում, նւիրակին պատասխանատւութեան էր ենթարկում։

Նւիրակի պարտքն էր. ա) տեղի ժողովրդին կաթողիկոսի կողմից ողջոյն և օրհնութիւն յայտնել. բ) աւետարանը քարոզել. գ) եթէ եկեղեցիներում, հոգեւորականութեան մէջ կան անկարգութիւններ՝ զսպել, կարգի հրաւիրել, եթէ օտար եկեղեցիներից մտած սովորութիւններ կան՝ վերացնել. դ) հերձւածողներին, դաւանափոխներին կարգի հրաւիրել, հաւատարիմ մնացածներին խրախուսել. ե) յորդորել, որ ծոմը, պահքը պահեն, եկեղեցի յաճախեն, չլսողներին յանդիմանեն, ծայրայեղ դէպքում նաեւ բանադրեն, որովհետեւ նւիրակը կաթողիկոսի ներկայացուցիչն է, ո՛վ նւիրակին չլսէ՝ նշանակում է կաթողիկոսին չի լսում,

չի հնազանդում. զ) թեմերում միւռոն բաշխել։ *) Այսպիսով նւիրակը կապ էր պահում կենտրոնի և շրջանների մէջ, այն ժամանակ, երբ երկրում աւազակախմբերը վխտում էին, երբ ուխտաւորները ստիպւած էին զինւած պահակներ առնելով կարաւանների հետ գնալ գալ, երբ երկրում յաճախ էին թալանում վաճառականներին ճանապարհելիս և անպատասխանատու էին մնում։

Նւիրակի աւելի մեծ պարտքն էր էջմիածնի համար հանգանակութիւն անել, ժողովրդից թեմերում դրամ հաւաքել միւռոն բաշխելու համար, նւէրներ ստանալ էջմիածնի, կաթողիկոսի և միաբանութեան համար։ Նւիրակների հանգանակած գումարները այդ շրջանում էջմիածնի պահպանութեան ամենամեծ աղբիւրներն էին, ուստի և կաթողիկոսները յատուկ ուշք էին դարձնում նւիրակութեան վրայ, աշխատում էին միշտ նւիրակներ ունենալ թեմերում։ Երբ պատերազմների պատճառով մի երկու տարով հնար չէր լինում նւիրակ ուղարկելը, էջմիածինը նիւթապէս տուժում էր։ Նւիրակը մի տեսակ եկեղեցական հարկահան էր, որ յիշեցնում էր ֆէօդալական կարգի հարկահաններին։ Էջմիածնի կալւածների եկամուտները սակաւ էին, չէին բաւարարում բազմանդամ միաբանութեան, ուխտաւորների, և հիւրերի պահպանութեան յատկապէս ընչաքաղց մահմեդական իշխողների որոշեալ տուրքերը տալուն։ Հարկաւոր էին ընծաներ, կաշառքներ, հրովարտակ ստանալու համար ծախքեր. այդ ամենը հոգացւում էր նւիրակաց գումարներից։

Աշխարհականները միայն մուծաֆիլի, եկեղեցական, որ կ'նշանակէ մեր բառով երէցփոխ, էին լինում. եկեղեցական հոգաբարձութիւններ, թեմական ժողովներ, խորհուրդներ չկային։ Աշխարհական տար-

*) Դիւան Հայոց Պատմ., ԺԱ հատոր, 228_230 եր.

րի դերը ուժեղ էր և խոշոր, սակայն ոչ եկեղեցական նախրապետութեան կանոններով սահմանած, այլ շրջնորհիւ պատմական բերմունքների: Անպաշտօն կերպով նրանք էին դեկավարում եկեղեցու գրեթէ բոլոր գործերը. նրանք որ եւ է տեղի դիրք ունեցող, հարուստ անձինք էին, տեղի առաջնորդին, պատրիարքին և երբեմն կաթողիկոսին խորհուրդներ էին տալիս, առաջարկներ անում, երբեմն և պահանջներ դնում և հարկադրում որ այդ պահանջները կատարեն:

IV.

Ամենայն Հայոց կաթողիկոսը հայ եկեղեցու սահմանադրութեան կենտրոնն է. նրա և միւս կաթողիկոսների, պատրիարքների, առաջնորդների մէջ եղած փոխյարաբերութեամբ ուրւագծւում է եկեղեցու սահմանադրութիւնը:

Էջմիածնի կաթողիկոսը այդ շրջանում իր իրաւունքներով, վերաբերմունքով նման էր պարսիկ խաներին կամ տաճիկ փաշայինն: Էջմիածինը նոյն փակ բնաւորութիւնն ունէր, ինչ որ ֆէօդալական երկրում կար: Էջմիածինը մի մեծ օջախ էր, որի գլուխ նահապետն էր կաթողիկոսը և նրան ենթարկւում էին օջախի զաւակները: Կաթողիկոսը իր օջախ տան անկարգ զաւակի հետ վարւում էր այնպէս, ինչպէս խանը կամ փաշան իր ստորադրեալ պաշտօնեաների հետ: Կաթողիկոսը զանցառու եպիսկոպոսին կամ վարդապետին բանտարկում էր վանքի որ եւ է խցում, նկուղում, միրուքը խուզել էր տալիս, ձեռնել էր տալիս, Էջմիածնի օգտին էր գրաւում նրա ունեցածը, ոտքերը ֆալախկա էր դնում, ինչպէս Երեւանի խանն էր անում իրեն ենթարկւող մի պաշտօնէի: Կաթողիկոսը նստում էր վանքի բակում կամ վեհարանի պատշգամբում, շրջապատւած եպիսկոպոսներով, ու պատիժը իր ներկայութեամբ, իր աչքի առաջ էր ի կատար ածել տալիս, խանի կամ փաշայի օրինակով:

Էջմիածնի կաթողիկոսին առաջնորդները, վանահայրերը տարին մի անգամ պիտի ներկայանային նուէրներով, ընծաներով: Ի հարկէ այդ սովորութիւը բոլոր առաջնորդները ճշտութեամբ չէին կատարում: Երբ նոր կաթողիկոս էր օծւում, առաջնորդները, վանահայրերը պարտաւոր էին ներկայանալ նոր կաթողիկոսին, որ իրենց պաշտօններում վերահաստատուեն. կարող էին և հեռացնել: Ներկայանալու ժամանակ երկրի ֆէօդալական կարգի համաձայն կաթողիկոսին պէտք է նուէրներ բերէին:

Կաթողիկոսի վեհարանում կային մօտաւորապէս այնպիսի պաշտօնեաներ, որպիսին մի ֆէօդալ իշխանաւոր ունէր: Աբրահամ Կրետացին յիշում է իր վեհարանի պաշտօնեաներին, որոնք հետեւեալներն են. դալայչի, ախոռապետ (իմլախոռ), հիւրընկալ (մեհմանդար), նժոյգապահ (եդաքչի), ամբարդար, շաթիր, ուղտապան, ձիապան, Լորեպան, քէվխա, աշչի, պաշչի: *) Այս պաշտօնէութեան ցանկն էլ ցոյց է տալիս, որ կաթողիկոսը իր վարչական-տնտեսական կազմով մի խան կամ փաշա էր:

Կաթողիկոսի պրապրութեան ձեւերն էլ նոյնն են, ինչ որ պարսիկ կամ տաճիկ իշխանաւորների մէջ ընդունւած ձեւերն են: Սիմէօն կաթողիկոսը մանրամասն հրահանգ է մշակել, թէ կաթողիկոսը ի՛նչ ձեւով պէտք է սրան կամ նրան դրութիւն ուղղէ, ի՛նչ տիտղոսներով դիմէ, անունը թղթի ո՛ր մասում գրէ, վե՞րը թէ վարը, ո՛ր կնիքը դնէ, մե՞ծը թէ փոքրը: Օրինակ, սուլթանին կամ շահին, փաշաներին և խաներին և նրանց մեծերին ու գործակալներին երբ կաթողիկոսը գիր գրէ, պէտք է նրանց լեզուով գրէ և փոքր կնիքը թղթի վերեւում դնէ, այն էլ կարմիր ներկով կնիքը.

*) Աբրահամ Կրետացի, Պատմ. Նադիր Շահի, 28-29 եր.

(կարմիր էր ներկը, որովհետեւ պատրիարքներն ու առաջնորդները ևս ունէին կնիքներ սեւ ներկով. կաթողիկոսինը կարմիր էր, որ միւս ներկից տարբերուի)։ Յիշեալներին ուղղուած գրութիւնը պիտի լինի «արդույապէս» — խնդրի ձեւով. իշխաններին, մեծերին ուղղուած գրութիւնը պիտի լինի «որպէս առ սիրելիս և առ բարեկամս», Յովհաննէս կամ Մոսկովի թագաւորին գրելիս նախ պէտք է թագաւորի անունը յիշէ, ապա սկսէ սովորական «Յս-ի, Ք-ի ծառայ...» եւն.։ *)

Սիմէօն կաթողիկոսը մանրամասն յիշատակում է և այն էտիկէտը, որ պիտի գործադրւի, երբ կաթողիկոսը սուլթանին կամ շահին ընդունում է կամ ինքն է նրանց մօտ գնում, կամ աւելի ցածր պաշտօնեաների հետ յարաբերութիւն ունի։ Օրինակ, երբ կաթողիկոսին շահը կամ սուլթանը կանչում է, պէտք է անպայման գնայ, նամի այնտեղ, որտեղ շահը կ'հրամայէ. երբ նրանք են էջմիածին գալիս, կաթողիկոսը ինքը պիտի ելնէ նրանց դիմաւորէ և «ծառայէ»։ Երբ ատրպատական պաշտօնէի մօտ է գնում կաթողիկոսը, նա պիտի կաթողիկոսին դիմաւորէ և իրեն դիմաց նստեցնէ «հաւասարապէս»։ Հրահանգ կայ և այն մասին, թէ ի'նչպէս պիտի թուղթ գրէ Վրաց, Աղուանից, Աղթամարի, Սսի կաթողիկոսներին, Երուսաղէմի պատրիարքին. վերջինիս գրելիս պէտք է նախ անօրինակ տեղերի անունները յիշէ, ապա սովորական «Յս-ի, Ք-ի ծառայ...» (Դիւան Հ, պատմ. Դ. հ. 21 եր.)։ Պօլսի պատրիարքին, եթէ ծեր է և արժանի, նոյն աստիճանին է համարում, ինչ որ Երուսաղէմի պատրիարքն է. եթէ ոչ աւելի ցած է դասում։ **)

Այս մանրամասն հրահանգը պաշտօնական յարաբերութիւնների ֆէօդալական շրջանի կնիք ունի

*) Ջամբռ., 59—61 եր.

**) Մանրամասնութիւնները՝ «Ջամբռ.» 58—63 եր.

իր վրայ. արեւելքում յատկապէս այս ամէնը արժէք էր, և էտիկէտի այս ու այն ձեւը գործադրելու մէջ երեւում էր թէ ի'նչ փոխ-յարաբերութիւն կայ իշխանաւորի և ստորադաս պաշտօնէի կամ մի այլ իշխանաւորի մէջ. միջնադարի նախարարական «բարձի» խնդիրն է այս, այլ ձեւերով գործադրւող։

Կաթողիկոսը ֆէօդալ իշխանի հանդամանք ունէր մահմեդական արեւելքում ԺԲ-ԺԴ դարում. ընտրելուց յետոյ պէտք է շահից և սուլթանից հրովարտակ ստանար իր պաշտօնում հաստատուելու համար. այս նպատակով յատուկ պատգամաւոր պիտի ուղարկէր եպիսկոպոսներից կազմւած, որոշ տուրք պիտի տար հրովարտակի համար, այլ և ընծաներ ուղարկէր, ոչ միայն շահին, այլ և մերձաւոր իշխանաւորներին։ Կաթողիկոսները մի ժամանակ իրենք անմիջապէս, մի ժամանակ էլ Պօլսի պատրիարքի միջոցով սուլթանին վճարում էին սկզբներում 56 դուռուշ, 26 փարայ, 2 ասակ (6800) ասակ. իսկ երբ Պօլսի պատրիարքներն իրենք սկսել են հրովարտակն ստանալու ծախքերն անել, 2-3000 դուռուշի է հասել ծախքը։ Սիմէօն կաթողիկոսի ժամանակ 90 դուռուշի է հասնում, որ հաւասար է 10,800 ասակի։ Առաջներում, ըստ Սիմէօն կաթողիկոսի, սովորութիւն չի եղել «բէրաթ» ստանալու. յետագայում հայ հոգեւորականների ուրնդգրութիւնների պատճառով, յատկապէս Պօլսի պատրիարքի, այդ սովորութիւնը մտել է։ *)

Իրենց հերթին Աղուանից և Աղթամարի կաթողիկոսներն էլ էջմիածնի կաթողիկոսներին էին ընծաներ տանում և նրանից պարգեւներ ստանում, ինչպէս էջմիածնի կաթողիկոսն էլ շահից ու սուլթանից էր պարգեւ ստանում, երբ անձամբ էր ներկայանում։ Այս ևս ֆէօդալական կարգի seigneur և vassal-ի փոխ-

*) «Ջամբռ» 238 եր.

յարաբերութեան պատկեր է *): Աղթամարի կաթողիկոսի յարաբերութիւնը Էջմիածնի կաթողիկոսի հետ կայ յիշած Դիւան Հ. պատմ. Դ. հ. 497 եր.:

Հարկը պահանջած ժամանակ Էջմիածնի կաթողիկոսը Աղուանից կաթողիկոսին իր «նայիբ», «վէքիլ» է յայտարարում Պարսից Շահի առաջ, որ Աղուանից կաթողիկոսութիւնը չվերացնեն **). բայց Ռուսաց իշխան Յիցիանովը, երբ գրաւում է Գանձակը, վերացնում է այդ կաթողիկոսութիւնը՝ Լլատելու համար Ղարաբաղի մէլիքների ոյժը և ֆէօդալ իշխանների թիւը պակասեցնելու համար: Ռուսները Կովկասը նուաճելուց յետոյ, կաթողիկոսի վերաբերմամբ ժամանակաւորապէս արեւելեան իշխանաւորների ունեցած կարգերն են պահում, և «պօլօժէնիա»ն իր շատ մասերով ԺԸ-րդ դարու վերջերում հայ եկեղեցում գործադրուող սովորոյթների, կարգերի հետքեր ունի իր մէջ, որոնց յետոյ փոխում են համաձայն ռուս բիւրոկրատիայի ձեւերի և աւելացնում ռուս եկեղեցում գործադրուող կարգերը: Օրինակ ԺԸ-րդ դարու կաթողիկոսը վեղարի վրայ ճակատի բրիլիանտէ խաչ չէր կրում, այլ վզից մի կապ էր կախում ***) կամ գօտի, որ ուսերից պէտք է վար իջնէր ****): Վարդապետը կամ քահանան լանջախաչ կրելու սովորութիւն չեն ունեցել և ոչ էլ եպիսկոպոսը՝ պնակէ. այդ սովորութիւնները ռուս եկեղեցուց են մտել Յովսէփ Արղութեան կաթողիկոսի դեռ Ռուսաստանի թեմի առաջնորդ եղած ժամանակ *****):

Կաթողիկոսին չէին ասում «Վեհափառ Տէր». սա տաճիկ սուլթանին անելիք դիմումի ձեւն է, որ Հա-

*) «Ջամբռ» 97 եր.
**) Աբրահամ Կրետացի, 74 եր.
***) Դիւան Հ. Պատմ., Ե. հ., 509 եր.
****) «Ջամբռ» 61—62 եր.
*****) Դիւան Հ. Պատմ., Ա. հ. 156—335 եր.

յերը գործադրել սկսեցին Էջմիածնի կաթողիկոսի դիրքը բարձրացնելու համար.— նմուշներ. որոնք ցոյց են տալիս, որ հայ եկեղեցու վարչութիւնը օտար տիրող ժողովրդի կարգերի համակերպում էր և իր մէջ ընդունում զանազան սովորութիւններ:

Էջմիածնի կաթողիկոսը օրէնքով նախատեսած ազդեցութիւնը չէր ստանում՝ իր վճիռները ստորադաս պաշտօնեաների վերաբերմամբ գործադրելու ժամանակ: Սուլթանը կամ շահը հրովարտակ տալիս յիշում էին հրովարտակում, որ կաթողիկոսին պիտի լսեն, սակայն երկրի ֆէօդալական վիճակը գրեթէ անարժէք էր դարձնում այդ հրամանը. ուստի կաթողիկոսը աւելի շատ դրամի, կաշառքի, ընծայի միջոցով էր կարողանում տեղի իշխանաւորին գրաւել, որ սա ազդեցէ կաթողիկոսի վճիռը ի կատար ածելու, այն է ըմբռնած առաջնորդին հեռացնելու, Աղուանից կաթողիկոսին դապելու, եւն.:

Ֆէօդալական կարգի հետեւանքով, երբ ամենայն Հայոց կաթողիկոսը դասում էր ըմբռնած կաթողիկոսին՝ Աղուանից, երբեմն և Աղթամարի, կամ առաջնորդի, Էջմիածնի եպիսկոպոսներից ատեան էր կազմում Տաճարի Իլման սեղանի առաջ, գործը քննում էր. վճիռը գրաւոր կազմելուց յետոյ ստորագրում էր ինքը և կնքում. նոյնն անում էին և դատարանի անդամ եպիսկոպոսները *): Այս նոյն ձեւն էր, ինչ որ խանը կամ սուլթանն էր գործադրում, որ եւ է խոշոր պաշտօնէի դատելիս:

Կանոնական կոնդակները, կարեւոր թղթերը որ ուղարկւել են Ռուսաց կայսրին, գրամական հաշիւները ստորագրում էր նախ կաթողիկոսը և կնքում, ապա և միւս եպիսկոպոսներն էին և՛ ստորագրում և՛ կնքում, առաջին հերթին պաշտօնատար եպիսկոպոսնե-

*) «Ջամբռ» 80 եր. եւ չրկ.

րը՝ լուսաբարձակա, աթոռակալ գրադիր, համաբարձակալ *): Նոյն կարգը կար և դեռ եւս Եփրեմ կաթողիկոսի ժամանակ, որի դրամական հաշիւներ պարունակող կոնդակները կնքել և առորագրել են էջմիածնի ժամանակի եպիսկոպոսները, մի առորութիւն, որ առեւելեան ֆէօդալ իշխաններից անցել էր հայ եկեղեցուն ևս, մի կարգ, որ անհրաժեշտ էր համարւում առեւելքում, որովհետեւ իշխանաւորները հեշտութեամբ փոխւում էին, կաշառքով կաթողիկոս էին դառնում (Աւետիս, Մէլիք-քէթ կաթողիկոսները **): Կաթողիկոսի իշխանութիւնը հաստատուն չէր. նահապին հարկերի, տուրքերի պատճառով տոիպւած էին լինում հեռանալ, փախչել Աթոռից, և նրանց՝ փախչող, հեռացող, փոխւող կաթողիկոսի փոխարէն պատասխանատու էին լինում առորագրող եպիսկոպոսները. միաժամանակ այդ առորագրութիւններով դրսի Հայերը, օտար իշխաններ հաւատում էին, թէ յիրաւի առորագրողը կաթողիկոս է և ոչ ինքնակոչի մէկը ***):

Կաթողիկոսը տեղից շարժւելու դէպքում պէտք է այդ մասին տեղի իշխանաւորին յայտնէր. երբեմն և իր տեղ թողնւած աթոռակալի մասին պիտի տեղեկացնէր: Իշխողը կաթողիկոսին պիր էր տալիս, որ շրջադայութեան ժամանակ նրան ոչ ոք չնեղացնէ ****):

Առել, որ վերոյիշեալ կարգերը կայուն էին և միշտ պարտադիր, ի հարկէ սխալ կ'լինի. դրանք միայն օրինակներ են որոշ ժամանակ ու շրջաններում գործադրւող սովորոյթ-կարգերի, որոնք փոփոխւել են քաղաքական պայմանների փոփոխութեան հետ: Կար-

*) Դիւան Հ. Պատմ., Բ. հ. 194 եր.

**) Դիւան Հ. Պատմ., ժ. հ.

***) Եւրոպայում ընդունւած կարգ է միապետների իրավասութեան վաւերացնել, կնքել նախարարի առորագրութեամբ:

****) «Ջամբռ» եր. 215.

կի պահանջներին յանուն ժողովրդի ֆիզիքական գոյութեան և եկեղեցու ամբողջութեան պահպանութեան: Կաթողիկոսը նոյն իսկ կանոնական կարգը փոխել է, երբ ժողովրդի շահն է պահանջել. օրինակ Բաղդադում Հայերի թիւը քիչ է եղել, պահպի կանոնները անխախտ պահել հնարաւոր չի եղել և Ղուկաս կաթողիկոսը այրին կոյսի հետ ամուսնացնելու իրաւունք է տւել. կամ երբ Պօլսի պատրիարքը ընդդիմացել է կաթողիկոսին, չի ուզեցել ճանաչել նրա իշխանութիւնը, կաթողիկոսը համբերութեամբ տարել է, երկպառակութեան առաջն առնելու համար *). կամ հարկը պահանջել է և Եղիազարին, որ աշխատում էր հակաթոռ յայտարարել իրեն Պօլսում, էջմիածնի միաբանութիւնը հրաւիրում է կաթողիկոս: Սիմէօն կաթողիկոսի մահից յետոյ քաղաքական պայմաններն ստիպում են 7 օր յետոյ Ղուկասին կաթողիկոս ընտրել, առանց Պօլսի հաճութիւնը կանխաւ առանալու:

Ուշադրաւ և այն է, որ կաթողիկոսները կարգերի կանոնների դերի չեն եղել, որ նրանք առաջնորդւել են մի սկզբունքով, թէ եկեղեցին ժողովրդի համար է և ոչ ընդհակառակը և որ ժողովրդի ամբողջութեան, խաղաղութեան շահը առաջնակարգն է, որ կանոնը ժամանակաւոր է, ժողովուրդը տեւական:

V.

ԺԸ-րդ դարու կաթողիկոսը իր իշխանութեան հիմքը համարում էր Աստծուն և թագաւորին՝ շահին ու սուլթանին: «Աստուծոյ շնորհիւն և հրամանաւն և թղթով թագաւորաց հնոց և նորոց, պարսից և օսմանցոց.» այս էին կաթողիկոսի իրաւունքի աղբիւրները: Թէեւ նա ընտրւում էր ժողովրդից և ուրեմն «կամօք ազգի» էր կաթողիկոս, սակայն այս հանգամանքը չէր

*) Դիւան Հայոց Պատմ. Բ. հ. 147, 594 եր.

յիշում կոնդակում *): Ասուածոյ շնորհիւ նա քահանայապետ էր և եկեղեցու կարգերի, կանոնների պահապան, հսկիչ և մեկնող «համաոօտող», իսկ թագաւորի հրամանով նա իշխանաւոր էր եկեղեցու պաշտօնէութեան և տնօրինող նրա նիւթականի:

Այդ դարաշրջանում Հայաստանի մեծ մասը երբեմն Պարսից տիրապետութեան տակ էր ընկնում, երբեմն Օսմանցոց. քաղաքական դրութիւնը յաճախ էր փոխւում. պատերազմներ շատ էին լինում երկու հարեւան մահմեդական պետութիւնների մէջ. կաթողիկոսն էլ, համաձայն ժամանակի քաղաքական վիճակի, սուլթանին կամ շահին աւելի էր հպատակում: Սուլթանն ու շահը իրենց հրովարտակներով որոշում էին կաթողիկոսի իրաւունքները, նրա դիրքը: Օրինակ, Աբրահամ Կրետացի կաթողիկոսին Նադիր շահը 15 բախամ (ոսկի) է տալիս այլ եւ այլ հարցեր որոշող: Ժէ-րդ դարու վերջերին Շահերը Էջմիածնի թեմ են դարձնում Նախիջեւանը, Գեղարքունին, Մոյը, Սալմաստը, Կէնճը, Բարդան, Ախտոն, Ջաւախները, Լօռու շրջանները, որոնք մասամբ Աղուանից, մասամբ Աղթամարի կաթողիկոսների թեմերը էին: Շահ-Աբբասը հրովարտակ է տալիս, որ ամեն հայ, ուր էլ նա լինի, հպատակւի Էջմիածնի կաթողիկոսին:

Շահերի հրովարտակներով հայ եկեղեցու համար հետեւեալ կարգերն են որոշւում.— 1) Հայերն իրաւունք ունին եկեղեցիները վերանորոգելու. 2) մահմեդական դարձած հայը իրաւունք չունի իր ազգակիցներից ժառանգութիւն պահանջելու. 3) եկեղեցում իրաւունք ունին ազատ մեռել թաղել, պսակ կատարել, բարձր ձայնով երգել, զանգերը խփել եւն. 4) կաթողիկոսներին հաստատում են և վերահաստատում, երբ կաթողիկոսը հեռացւում է և նորից հրա-

*) Գիւան Հայոց Պատմ. Գ. հ. 357 եր.

ւիրւում աթոռ. 5) որոշում են տուրքերի և բահրանների չափը. 6) արգիլում են ֆրանկներին հայերի մէջ քարոզել, դպրոց բանալ, հայերից կին առնել. 7) թոյլ են տալիս նւիրակներին ազատ շրջագայել թեմերը և ժողովարարութիւն անել. 8) Էջմիածնից բռնութեամբ դրաւած մուլքերը վերադարձնում են. 9) արգելում են թուրք հոգեւորականներին հայ հոգեւորականների գործերում խառնւել. 10) հոգեւորականներին ազատում են տուրքերից. 11) կաթողիկոսին ճանաչում են իր ազգը կառավարող. 12) Էջմիածնից չեն պահանջել բահրա, բաղաթ, մալուճհաթ, ոչխարի, անասունի, քարվանսարայի, Ջրաղացի, ձիթհանքի, համամի և այլ հարկեր *):

Օսմանեան սուլթանները որոշել են՝ 1) որ Էջմիածինն է ամենայն Հայոց կաթողիկոսի աթոռանիստը և միւռոնն այնտեղ պիտի օրհնւի. 2) արգիլել են նւիրակներին նեղել. 3) կաթողիկոսներ են հաստատել. 4) արգիլել են Էջմիածին ուխտ գնացողներից հարկ առնել. 5) արգիլել են թուրք հոգեւորականներին հայ հոգեւորականների գործերում խառնւել. 6) կարգադրել են աթոռակալներին չնեղացնել. 7) արտօնել են կաթողիկոսին ազատ շրջագայելու, ուր և կամենայ. 8) արգիլել են բայրամին կաթողիկոսից դուսաշ, շաքար պահանջել. 9) ֆրանկ դարձածներին (կաթոլիկացած հայերին) արգիլել են շրջագայելու հայերի մէջ Զմիւռնիա, Անկիւրիա և այլ տեղեր. 10) Էջմիածնի կաթողիկոսի թեմ են ճանաչել Էրզրումը, Կարսը, Ախալցխան, Բրդստանը եւն., որոնք ուրիշ կաթողիկոսի կամ պատրիարքի թեմ են եղել **):

Կաթողիկոսի մահից յետոյ նրան թաղելու իրաւունքը Երեւանի խանն էր տալիս ***). մահւանից յե-

*) «Ջամբռ» 209—238 եր.
**) «Ջամբռ» 234—248 եր.
***) Աբրահամ Կրետացի, 8 եր.

տոյ կնքւում էր վեհարանը. սպասաւորներին պահում էին միաբաններից շարքում մինչեւ նորի ընտրութիւնը: Թաղման մանրամասնութիւնը նկարագրում է Սիմէօն կաթողիկոսը *):

Թէեւ Ամոռը ի բնէ «յամենից հարկաց ազատ» է եղել, սակայն տեղի իշխանաւորները բռնութեամբ տուրքեր են դանձել և շահերը կամ սուլթանները հրովարտակներով կա'մ վերջացրել են պահանջները կամ պակասցրել պահանջի քանակը: Առհասարակ եկեղեցու նիւթականը որոշողը եղել է շահը կամ սուլթանը **): Ղուկաս կաթողիկոսը խնդրում է սուլթանին, որ իրեն տրւելիք հաստատութեան հրովարտակի մէջ յիշւի և այն, որ կաթողիկոսի մահից յետոյ նրա գոյքը էջմիածնի սեփականութիւն է և տեղի իշխանաւորը իրաւունք չունի «միրիսա» առնելու այն, այսինքն գրաւելու ևն., ևն.: Առհասարակ կաթողիկոսի տւած դրամից էր կախւած իր իրաւունքի սահմանները. որքան շատ կաշառք, ընծայ, այնքան լայն իրաւունքներ: «Բէրաթ»ով կաթողիկոսը հաստատւում էր, ֆէրմանով երկրի աշխարհիկ իշխանութիւններին տեղեկացւում էր թէ կաթողիկոսը ի'նչ իրաւունքներ ունի ***):

Շահերից և սուլթաններից զատ տեղական իշխանները, խաները, փաշաներն եւս թղթեր էին տալիս կաթողիկոսին տեղական հարցերի վերաբերմամբ և նոյնպէս որոշում էին կաթողիկոսի այս ու այն իրաւունքը, այնպէս որ կաթողիկոսը կախումն ունէր ե'ւ շահից ե'ւ սուլթանից ե'ւ հայաբնակ վայրերում գտնւող նշանակովի և ժառանգական իշխանաւորներից: Երբեմն կաթողիկոսը եկեղեցում դառնում էր միահեծան տէր, երբեմն իրաւազուրկ, երբեմն խոշոր կալւածատէր, երբեմն մեծ մասից զրկւում էր: Բազմիշխանութիւն կար երկրում, որն անդրադառնում էր նաեւ հայ եկեղեցու կարգերի վրայ, մանաւանդ կաթողիկոսի իրաւունքների, որ եկեղեցու կենդանի ներկայացուցիչն էր: Անկերպարան էր երկրի վարչութիւնը, նոյնը ե'ւ եկեղեցում կար եւ կաթողիկոսի ընտրական գործում:

*) «Ջամբռ» 58—63 եր,
**) «Ջամբռ» 132 եր.
***) Դիւան Հայոց Պատմ. Ե. հ., 401—8, 408—410.

VI.

Եկեղեցու պաշտօնեաների ընտրովի լինելը հայ եկեղեցու հիմնական կանոններից է և գործադրւել է մեր եկեղեցու սկզբնաւորութիւնից սկսած: Կաթողիկոսը ընտրութեամբ է եղել նոյն իսկ այն ժամանակ, երբ որոշ շրջաններում կաթողիկոսութիւնը ժառանգական է եղել (Պարթեւական և Պահլաւունեան տոհմեր): Վերջին դէպքում ժառանգ եղող կաթողիկոսին հաւանութիւն են տւել ընտրողները և գոնէ այս ձեւով ընտրական կարգը պահւել է:

Այդ պատմական սովորոյթ-կանոնն ի նկատի ունենալով է ահա, որ Սիմէօն կաթողիկոսը գրում է.— «Մինչ կաթողիկոսն առանց ընտրութեան լինիցի, ո՞վ ոք հնազանդի նմա, կամ ո՞վ է պարտական տալ նմա փարայ մի:» *) Ընտրական կարգն էր ապահովողը կաթողիկոսի հեղինակութեան և դիրքի:

Կաթողիկոսի ընտրութեան որոշ կարգ, հրահանգ ԺԸ-րդ դարում չկային. սովորոյթները և ժամանակի քաղաքական պայմանները են որոշել ընտրական կարգը: Աբրահամ Կրետացուն Երեւանի խանն է բռնութեամբ կաթողիկոս ձեռնադրել, որովհետեւ Պարսից և Օսմանցոց մէջ պատերազմներ կային. Ղուկաս կաթողիկոսին ընտրում են էջմիածնի միաբանները և Երեւանից եկած ներկայացուցիչները. տարբեր ձեւերով են լինում Յովսէփ Արղութեանի, Դաւթի, Դանիէլի ընտրութիւնները:

*) Դիւան Հայոց Պատմ. Դ. հ., 315 եր.

Երբ Ռուսները Կովկաս մուտք գործեցին ԺԸ-րդ դարում, սկսեցին հայ կաթողիկոսներին իբրեւ իրենց միապետական նւաճողական ձեռնարկութիւններին նպաստաւոր ոյժ նկատել և ԺԸ-րդ դարու վերջերից սկսած, էջմիածնի կաթողիկոսների ընտրութեան գործում ղեկավարի դեր ստանձնել, այնպէս որ Յովսէփ Արղութեանից սկսած ռուս միապետական արքունիքի թելադրանքը և միջամտութիւնը ընդհանրական կաթողիկոսների ընտրութեան մէջ խոշոր է դառնում ի հաշիւ մահմեդական իշխանաւորների ազդեցութեան: Կաթողիկոսները յիրաւի Ռուսների Արեւելքում կատարած նւաճումների ժամանակ դեր կատարել են, յատկապէս Յովսէփ Արղութեան կաթողիկոսը, մասամբ Դանիէլ կաթողիկոսը և վերջապէս Ներսէս Աշտարակցին վարդապետ և եպիսկոպոս եղած ժամանակ: Առհասարակ ԺԹ-րդ դարում ընդհանրական կաթողիկոսների ընտրութեանց մէջ ռուս միապետական արքունիքը իր թելադրանքը արել է ուղղակի կամ անուղղակի, հաշւի առնելով իր քաղաքական նպատակները:

Միամտութիւն կ՚լինի ենթադրել, որ հայ ընդհանրական կաթողիկոսների ընտրութիւնը առաջներում եղել է դէմոկրատիկ և ժողովրդական ներկայացուցչութիւնն է եղել կաթողիկոս ընտրողը: ԺՀ-րդ դարում, ներկայումս մեզանում գործադրւող քիչ թէ շատ կանոնաւոր ընտրութեան ձեւը երբեք չի եղել և չի գործադրւել: Այդ դարում կատարւած ընտրութիւնների նկարագրութիւններից որոշ գաղափար կարելի է կազմել: Սիմէօն կաթողիկոսն էլ «Ջամբռ»ում յատուկ գլուխ ունի, թ., «յորում յայտնին որպիսութիւնք վախճանման կաթուղիկոսին Ս. Էջմիածնի և վերստին ընտրութեան և օծման...» (58 եր):

Այս նկարագրից պարզւում է, որ կաթողիկոսի մահից յետոյ Էջմիածնի գործակալներին (պաշտօնեաներին) մօտակայ քաղաքների գրւել է և հրաւիրել են նրանց և «երեւելի առաջնորդներին և գլխաւոր իշխաններին» կաթողիկոս ընտրելու (59 եր.): Այստեղ ուշադրութեան պէտք է առնել երկու կէտ. նախ, որ հրաւիրւում են և ոչ թէ ընտրւում եկողները. երկրորդ, որ հրաւիրւողները երեւելի առաջնորդներն են և գլխաւոր իշխանները. ուրեմն ժողովրդական ներկայացուցչութեան մասին ներկայ ըմբռնումով խօսք չկայ:

Երեւելի առաջնորդները, եկեղեցական ժողովով դեռ միջին դարերում, առաջին հերթին էին չորս նշանաւոր վանքերի՝ Տաթեւի, Բջնու, Հաղբատի և Թադէոս Առաքելոյ վանահայր առաջնորդները. ուրեմն սրանք ոչ թէ ընտրովի են, այլ ի պաշտօնէ մանակցողներ են կաթողիկոսական ընտրութեան: Երեւելի իշխանները, աղնւական տոհմի գլխաւորներն էին, որոնք դարձեալ ի կոչմանէ էին մանակցում ժողովին և ոչ թէ ընտրւում էին:

Դանիէլ կաթողիկոսի ընտրութեան համար Պօլսում գումարւած ժողովը հետեւեալ կազմն ունէր.— ներկայ էին՝ Էջմիածնի նւիրակը, Էջմիածնից գնացած «մահսարատար»ը (հանրագիր տանողը), Երուսաղէմի պատրիարքի վէքիլը, և «յոլով վարդապետք, աւագերէցք, աթոռակալք, եկեղեցականք, քաղաքին մուխթավէլիք, եկեղեցպանք, իշխանապետք, իշխանք և բոլոր արհեստաւորաց գլխաւորք, աւելի քան 200 անձինք:» *) Բոլորն էլ ի պաշտօնէ հրաւիրւած անձինք են և ոչ թէ յատկապէս կաթողիկոսական ընտրութեան համար ընտրւած, և այն էլ միայն Պօլսից. գաւառները, ժողովրդի խոշորագոյն մասը, ընտրութեանը չեն մանակցում: Երբ Դաւիթը բռնութեամբ կաթողիկոս է օծւում Էջմիածնում, Դանիէլի կողմնակիցները երկրորդ անգամ Պօլսում ժողով են գումա-

*) Դիւան Հայոց Պատմ. Ա.-Բ. հ. 55 եր.

բում, որի կազմը հետեւեալն էր.— 15 եպիսկոպոս և վարդապետ, 30 քահանայ, ընդամենը 45 հոգեւորական, 102 ամիրա և էնաֆների պլխաւոր, 10 մութավէլի, 20 եկեղեցական, ընդամենը 132 աշխարհական. ժողովականների ընդհանուր թիւն է 177, որից 25 %ը հոգեւորական, 75 %ը աշխարհական:

Ընդհանրապէս ԺԸ-րդ դարում կաթողիկոսի ընտրութեան գործում դեր խաղացողը եղել է Պօլիսը, որանից պակաս չափով էջմիածինը, ապա Սպահանը: Պօլիսը և Սպահանը դեր են խաղացել իբրեւ մայրաքաղաքներ. հայ մտաւորականութիւնը և ունեւոր դասը աւելի ուժեղ են եղել Պօլսում. և որովհետեւ երկրի կենտրոնական իշխանութիւնն այնտեղ է եղել, կաթողիկոսի հաստատութեան հրովարտակն այնտեղ պէտք էր ստանալ և այդ ստանալու համար պէտք էր դիրք, ծանօթութիւն, և այդ կարող էին ամիրաները, Պօլսի ունեւոր Հայերը, բնականաբար Պօլիսն էլ դառնում է կաթողիկոսական ընտրութիւններին ոճն ուղղը: Առանց Պօլսի հայութեան համաձայնութեան կաթողիկոս չպիտի ընտրէր. այս մասին շեշտում է Աբրահամ Կրետացին: Մայրաքաղաքներն են եղել ընտրութիւններին ոճն ուղղը և ընտրելին որոշողը. մայրաքաղաքի որոշ խմբակ, որոշ դասակարգ է ղեկավարել ընտրութիւնը կամ աւելի շուտ իր միջից և իր թելադրանքով կազմակերպել է ընտրութիւնը:

Էջմիածինն էլ Երեւանի իշխանների, մելիքների, տանուտէրերի հետ է ընտրութիւնը կազմակերպել. սովորաբար ընտրել է երկու թեկնածու և ուղարկել ցուցակը Պօլիս, որ այնտեղ երկուսից մէկին հաւանութիւն տայ և սուլթանի հաստատութեանն առաջարկէ *). երբ Ղուկաս կաթողիկոսի ժամանակ Պօլսից համաձայնութիւնը նախօրօք չի ստացւում, Պօլսի

*) Թանիէլ կաթողիկոսի օծման մասնաւորում յիշատակւում է երեք թեկնածու. (Դիւան Հ. Պատմ. Ե. հ. 153 եւ շրկ.):

պատրիարքը արգիլում է Ղուկասի անունը եկեղեցիներում յիշատակել: Պատրիարքը Ղուկաս կաթողիկոսի հետ բանակցութեան է սկսում ընտրական նոր կարգ սահմանելու, որով Էջմիածնի կաթողիկոսի իրաւունքները սահմանափակւում են. Ղուկաս կաթողիկոսը հակառակում է և խնդիրը անկատար է մնում *): Ղուկասի մահից յետոյ Էջմիածինը ի նկատի ունենալով Ղուկաս կաթողիկոսի ընտրութեան ժամանակ Պօլսի բռնած դիրքը, չի ցանկանում ընտրութիւն կայացնել: Թէեւ վրաց Գէօրգի պահաժառանգը յատուկ դրութեամբ դրդում է Էջմիածնին Յովսէփ Արղութեանին ընտրել, Էջմիածինը պատասխանում է թէ «թարց համահաւանութեան նոցա (Պօլսեցոց) ոչ ոք հաստատի կաթողիկոս Ս. Աթոռոյս» **). Պօլսեցիք եւս նոյնն են պնդում իրենց մի դրութեան մէջ, թէ արդէն Ներսէս Շնորհալին իր ընդհանրականում հաստատել է, որ «առանց ընտրութեան աստուածայնոց արանց համօրէն ազգիս» չի կարելի ընտրութիւն կայացնել, որ Կարապետ, Աբրահամ, միւս Աբրահամ Կրետացի, Ղազար, Մինաս, Սահակ, Յակովբ, Սիմէօն և Ղուկաս կաթողիկոսները, Յակովբ Աստուածաբան և Զաքարիա Պօլսի պատրիարքները նոյնը պնդել են և «բազմակնիք մահառաջօք հաստատեալ են, առանց համազգային ընտրութեան, մանաւանդ մեծի մայրաքաղաքիս Պօլսի բազմաժողով ազգիս հաճութեան, ով ոք և նատցի ընդունելի չէ»***). Պօլիսը ինքն է իր առաջնութեան իրաւունքը պաշտպանում և Էջմիածինն էլ մեծ մասամբ ընդունել է այդ և իր հերթին նոյնը պաշտպանել:

Պօլիսը իր գրութեան մէջ ընտրութեան համար գործ է ածում ազգ բառը, որը ոչ թէ ազգի լրութիւն,

*) Դիւան Հ. Պատմ., Դ. հ. 66 եր.
**) » » Դ. հ. 701 եր.
***) » » Ե. հ. 140 եր.

ամբողջ ազգ է նշանակում, այլ ազգի մի մասը, մի որոշ դասակարգերի ներկայացուցչութիւն: Ազգը ժողովուրդը ինքը չէր, այլ միայն նրա վերին խաւի ներկայացուցչութիւնը, որի ձեռքին էր ժամանակի եկեղեցական խնդիրների լուծումը, լինի այդ կաթողիկոսի կամ պատրիարքի ընտրութիւն կամ փոփոխութիւն, որ եւ է նիւթակ ընդունելու կամ չընդունելու հարց: Ժամանակի հասարակական խնդիրները եկեղեցում էին ամփոփւած. այդ հարցերին ընթացք տուողը, լուծողը, նրանց ղեկավարողը, հասարակութեան այն դասակարգն էր, որն ունեւոր էր, որը տիրողն էր և որին միւս դասակարգերը հետեւում էին: Սօցիօլօգիայի տեսակէտից «ազգ» տերմինը չի համապատասխանում նոյն տերմինի ազգագրական ժողովրդագրական-պատմական ըմբռնման. եթէ վերջին ըմբռնումով ազգը մէկ միլիոն արու, էգ, փոքր, մեծ անդամներ ունի, հասարակագիտական ըմբռնումով այդ թւի գուցէ հազիւ 1|500-րդ մասն է ազգ կազմում. քանի հասարակութիւնը զարգանում է, այնքան այդ յարաբերութիւնը փոխւում է, յարաբերութիւնը աւելի մեծանում է:

Այսպիսով, երբ ԺԸ-րդ դարում խօսք է լինում կաթողիկոսի ընտրութեան համազգային բնոյթ ունենալու մասին չպէտք է մոռանալ թէ ի՛նչ կ՛նշանակէր ազգ բառը և ի՛նչպէս էր կիրառւում այդ դաղափարը: Մի մեղմացուցիչ հանգամանք կար, որով իբր թէ ազգը իր բուն իմաստին էր մօտեցւած, այն է, որ գաւառներում կազմել էին տալիս «մահսարական» թղթեր, այսինքն գաւառական քաղաքները («գաւառ» այդ շրջանում նահանգի մտքով էր գործածւում) էրզրում, Կարս, Բայազէտ, Խոյ, Սալմաստ, Թաւրիզ եւն. ստորագրում էին մահսարական թուղթ. ստորագրողներն էին՝ տեղի առաջնորդը, իշխանները, տանուտէրները, որով իրենք էլ համաձայնութիւն էին յայտնում Պօլսի և Էջմիածնի կայացրած ընտրութեանը: Սակայն այդ

«համահաճական» գրութիւնները գործնական, իրական ոչ մի իրաւունք չէին վերապահում ստորագրողներին և տեղի ժողովրդին. նախ որ գիւղական ազգաբնակութիւնը չէր մասնակցում այդ գրութիւններին. երկրորդ, քաղաքից էլ մասնակցում էին իշխանաւորները, անհատները և ոչ բոլորը. երրորդ, սրանք միայն ստորագրում էին արդէն կազմւած պատրաստւած ընտրական թուղթը. իրենք նոր ընտրելի չէին առաջարկում կամ չէին բողոքում ընտրւածի դէմ: Էապէս գրութիւնն այն էր, որ Պօլիսն էր ուզածն անում և միւս վայրերը, անդամ Էջմիածինը, իրենց իբր թէ «կամաւոր» համաձայնութիւնն էին յայտնում:

Ռուսների տիրապետութեան տակ անցնելուց յետոյ Էջմիածնի նշանակութիւնը, ռուս միապետութեան օժանդակութեան շնորհիւ, աւելի մեծանում է: Քանի դեռ Պօլիսն էր հուժեղը, Պօլսի «ազգ»ն էր ղեկավարողը. երբ ծանրութեան կենտրոնը Հայերի համար Պետերբուրգ տեղափոխւեց, վերջինս եղաւ ոտն տուողը. այս ցոյց է տալիս, որ հայ եկեղեցին և իր ժողովուրդը իր սեփական քաղաքականութիւնը չի վարել եկեղեցու խնդիրներում, այլ տիրող պետութեան քաղաքականութեամբ է առաջնորդւել. իսկ այդ հանգամանքը կաթողիկոսի ընտրութիւնը դարձնում էր ձեւական, որքան և մի քանի հարիւր հայ ներկայացուցիչներ հաւաքւէին մի տեղ «ընտրութիւն» կատարելու: Այս նոյնը շարունակւեց ԺԹ-րդ դարում. ռուս միապետական արքունիքը շարունակեց Ստամբոլի արքունիքի քաղաքականութիւնը աւելի ուժեղ և խըստացրած միջոցներով:

Սիմէօն կաթողիկոսը լաւ էր ըմբռնել այդ դրութիւնը և նա կաթողիկոսի ընտրութեան հրահանգում առաջարկում էր կաթողիկոս ընտրողներին նախ ընտրուղի անձնաւորութեան մասին մտածել «և մանա-

ւանդ ըստ ժամանակին» *), որ նշանակում էր հաշւի առնել այն հանգամանքը, թէ ո՛րքան ընտրելին համապատասխանում է ժամանակի քաղաքականութեան: ԺԸ-րդ դարու կաթողիկոսները կրօնապետ-ազգապետներ էին («խալիֆա»), որոնց կրօնական, Քրիստոսի աշակերտ լինելու հանգամանքը արգելք չի եղել մահմեդական մեծաւորին խաբելու, կաշառելու, կեղծաւորութիւն անելու, ծածկելու այս ու այն, արեւելցու նման խաբող, յարմարուող, ճկուն լինելու: Այդ ամենը պէտք էր ժողովրդի ապահովութեան, ֆիզիքական գոյութեան, տնտեսականի պահպանութեան համար: Ըստ երեւոյթին այս ամենը անհամապատասխան էր Աւետարանի սկզբունքները քարոզելու կոչում ունեցող կաթողիկոսին, սակայն հայ կաթողիկոսները ոչ թէ քաղաքագէտներ էին. «ազգ»ը նրանից ամենից առաջ ֆիզիքականի ապահովութիւն էր պահանջում և «ազգ»ի պահանջն էր, որ կատարում էր կաթողիկոսը: ԺԸ-րդ դարու հայ կաթողիկոսների յիշատակարանները, կոնդակները, գրութիւնները թերթողը կը նկատի, որ նրանք եղել են աւելի ազգապետ քան կրօնապետ, որ նրանց գրութիւնների 95 %-ը տնտեսական-քաղաքական հարցերին են վերաբերում, քան կրօնական-բարոյական: Այս հանգամանքը հայ եկեղեցու առաւելութիւնն է, որ նա չի եղել իրօք ինչ որ ուրոյն մարմին, ուրոյն դասակարգի՝ հոգեւորականութեան շահերի համար աշխատող, այլ ժողովրդի, ազգի ժամանակի կարեւոր պահանջները բաւարարող, կատարողը: Ժամանակի պահանջի հետեւանք էր, որ ԺԸ-րդ դարում սկսեցին կաթողիկոսական երկու թեկնածու ընտրել և ոչ թէ հին սովորութեան համաձայն մէկին ընտրել, կամ նախորդ կաթողիկոսը իրեն յաջորդ է նշանակել, որ ընտրական կարգին հակառակ էր: Ժամանակը պահանջում էր, տիրող դրութիւնը

*) «Ջամբռ», 59 եր.

թելադրում էր և եկեղեցին ժողովրդի խաղաղութեան ամբողջութեան տեսակէտից ձեւականը զոհում էր բովանդակութեանը. այս հանգամանքն էր որ եկեղեցուն ժողովրդական էր դարձնում, նրան կապում էր ազգի հետ և ոչ թէ անջրպետ ստեղծում երկուսի մէջ:

Նոյն ձեւով էր կատարւում և Պօլսի պատրիարքի ընտրութիւնը, որի մէջ գլխաւոր դերը պատկանում էր ամիրայութեանը, որը որոշ տեսակէտով տաճիկ կառավարութեան քաղաքական նպատակներին էր համակերպում, հակառակ դէպքում պատրիարքին հրաժարեցնել էր տալիս: Պօլսի պատրիարքի ընտրութիւնը նոյնն էր, ինչ որ ամենայն Հայոց կաթողիկոսինը, սահմանափակւած Պօլսով: Նոյն ձեւերն էլ կային Աղթամարի, Աղուանից կաթողիկոսների ընտրութեանց խնդիրներում, — տեղական մահմեդական իշխողի կամքը և հայ ունեւոր դասի ցանկութիւնը և իշխողի կամքի ի կատար ածելը: Ուժեղը՝ տիրողն էր, հայը հպատակ էր և թոյլ. հարկաւոր էր գոյութիւն պահպանելու համար յարմարուել տիրողին, և հայ կաթողիկոսը, պատրիարքը յարմարուել է. ժողովուրդն ինքն է թելադրել այդ և նա կատարել է: Եկեղեցու սահմանադրութիւնն էլ այդ քաղաքականութեան արդիւնք է:

VII.

Ընտրական կարգը գործադրւում էր նաեւ թեմերի առաջնորդների, մեծ վանքերի վանահայրերի ընտրութեան և նրանց եպիսկոպոս ձեռնադրելու խնդիրներում: «Առաջնորդն ըստ ժողովրդեան խնդրոյն պարտի կարգիլ» *). սա ժամանակի ընդհանուր ոգին էր: Այդ ընտրութիւնն էլ իւր էութեամբ կաթողիկոսականն ընտրութեան նման էր. գլխաւոր վանքի միաբանները, մօտակայ մեծ քաղաքի ունեւորները և էնաֆների

*) Դիւան Հ. Պատմ. Դ. հ. 410 եր.

ռուս միապետութիւնը ռուսահայ առաջնորդներին հաստատում էր և կիսանկախ վիճակում դնում ընդդէմ կաթողիկոսի, և եղել են դէպքեր, որ կաթողիկոսները ուզեցել են հեռացնել նշանակած առաջնորդներին, բայց չեն կարողացել, որովհետեւ առաջնորդը պատճառաբանել է թէ ինքը կայսերահաստատ է, կայսրը միայն կարող է հեռացնել։ Կաթողիկոսի ընդհանրականութեան իրաւունքը նսեմացել է։ Ուրեմն դարձեալ օտար իշխողի կամքը գերակշռող է, օտարի քաղաքականութիւնն է ոչն տուղը եկեղեցու անհմանադրութեան և այս կէտում։

Այս դրութիւնը և քաղաքական շփոթ վիճակը Դաւիթ-Դանիէլեան խռովութիւնների ժամանակ ուժի գարձան, որ 1806 թ. Յուլիսի 10-ին Դանիէլ կաթողիկոսը Էջմիածնում հաստատեց Սրբազան Սիւնհոդոս, որին ձգտում էին Պօլսի պատրիարքները դեռ ԺԸ-րդ դարուց և որպիսի պահանջ դրել էին Պօլսեցիք իրենց Զաքարիա պատրիարքին, որ նա առանց ժողովրդի ներկայացուցիչների գործեր չվճռէ։ Դանիէլ կաթողիկոսը սիւնհոդոսին, որին նաեւ «բարձրագոյն խորհրդարան» է անւանում, հետեւեալ իրաւունքներն էր վերապահում. «Նախ եղեցին հանրիշխան ձայրագոյն կառավարիչ ընդհանուր ազգի և եկեղեցւոյ Հայաստանեայց հանդերձ Տերամբ Քրիստոսիւ և ունիցեն զկարողութիւն դատելոյ նաեւ զձայրագոյն պատրիարդն ըստ կանոնաց հարց եւս և զամբաստանեալ ընկերս իւրեանց։» *)

Ուշագրաւ են Դանիէլի բերած հիմքերը բարձրագոյն խորհրդարան հիմնելու առթիւ. «Մեծը ձեզանից թող ծառայ լինի միւսին։ Մեծը իր խոնարհութեամբ պարծենայ. Քրկիչը առաքեալների ոտքերը լուաց։ Եպիսկոպոսը ոչ թէ տիրէ իր վիճակին, այլ օրինակ

*) Գիւան Հ. Պատմ., Ա.-Բ. 212.

ներկայացուցիչները համախոհական էին կազմում և ուղարկում կաթողիկոսին, որ իրենց համար ընտրեալին առաջնորդ նշանակէ կամ եպիսկոպոս ձեռնադրէ։ Տեղի իշխողը՝ տաճիկ, պարսիկ կամ քուրդ, նոյնպէս վաւերացնում էր ընտրական թուղթը. երբեմն հէնց իշխողները միջնորդում էին կաթողիկոսին, որ իրենց առաջարկածին առաջնորդ նշանակէ։ Նայելով թէ կաթողիկոսը ի՛նչ յարաբերութեան մէջ էր իշխողի հետ, կամ սա ի՛նչ դիրքի տէր էր, ըստ այդմ էլ խնդիրն ընթացք էր ստանում։ Իշխողն ինք էլ երբեմն վանահայր, առաջնորդ էր հաստատում իր շրջանում որ եւ է հայ եկեղեցականի, որ հետեւանք էր երկրի անիշխանական վիճակի։ Նոյն դրութեան արդիւնք էր և այն, որ որոշ թեմերում ժողովուրդը յաճախակի փոփոխում էր առաջնորդներին, պահանջում էր կաթողիկոսից սրան կամ նրան անպատճառ առաջնորդ նշանակել, հակառակ դէպքում սպառնում էին Պօլսի կամ Սսի թեմ դառնալ. եղել են և հակառակ դէպքերը։ Առաջնորդների այդ կիսանկախ ֆէօդալ իշխանիկներ լինելու հանգամանքը դրդում է Սիմէօն կաթողիկոսին ձեռնադրող եպիսկոպոսից ստորագրութիւն պահանջել, որ նա հաւատարիմ կ՚ինայ Էջմիածնին, որ ուղիղ դաւանութիւնից չի հեռանայ, (որովհետեւ եղել էին դէպքեր, որ կաթողիկոսի դէմ ըմբոստանալով, կաթոլիկ էին դարձել մի քանի վարդապետներ, քահանաներ), որ առանց թեմի ժողովրդի, քահանաների և իշխանների համաձայնութեան ձեռնադրութիւն չի անի, որ կուսակրօն չի ձեռնադրի առանց նրա վարքն ու բարքը լաւ իմանալու և որ եթէ այդ խոստումները չկատարէ, պիտի կաթողիկոսի պատժին ենթարկւի և տեղի իշխողին 2000 դուռուշ տուգանք տայ։ Պօլսի թեմերի առաջնորդներին հաստատում էր Պօլսի պատրիարքը, բայց և պէտք էր սուլթանի հրովարտակը, որն այս դէպքում եկամտի աղբիւր էր միայն, մինչ

լինի, որ եպիսկոպոսապետը եպիսկոպոսի հետ և սըրբանք եպիսկոպոսապետի հետ գործերը միաձայնութեամբ վճռեն։» *) Բոլորն էլ Նոր Կտակարանից և կանոնագրքից առնւած են։

1808 թ. Մայիսի 15-ին Էջմիածնի միաբանութեան անունով տւած կոնդակում Դանիէլն ասում է.— «Եւ շնորհեցի կամակար մտօք իմովք արտօնութիւն ժողովին ազատօրէն և անբռնադատ վասն ամենայն հարկաւորութեանցն բարեկարգութեանց խորհիլ միաբանութեամբ լինել Ջատագով օրինաց, յապաւել զաւելորդս, ներսպրդեալս, վնասակարս առաքինութեանց, կարգել ղկանոնս բարեկարգս և շահաբերս, և լինել գործադիր ամենայն կառավարութեանց ներքնոց և արտաքնոց, հոգեւորականաց և մարմնաւորականաց պատկանեցելոց բարեհրամանի իշխանութեան պերազան Աթոռոյն Արարատեան և նորին ծայրագոյն քահանայապետութեան միաբան խորհրդով յորս և ինքն ծայրագոյն քահանայապետն, որպէս գլուխ ի վերայ անդամոց շրջիցի բարձրացեալ փառօք և պատուօք իւրովք և պատուեսցի ի մէջ երկաքանչիւրցն կարեկցութիւն հարազատ, զտեալ յամենայն մասնէ բռնադատութեան։» **) Խորհրդարանի կանոնագրութիւնը ուղարկւում է Պետերբուրգ, որ կայսրը հաստատէ։ Դանիէլը 1808 թ. օգ. 11-ին խնդրում է Աղէքսանդր Ա.-ին, որ հաստատէ «կառավարիչ Ս. Ժողովը»։ Խորհրդարանը գործել է ակտւմ և կաթողիկոսը իր կոնդակում յիշատակում է, թէ վճիռը եղել է խորհրդարանում. ***)։ Այս խորհրդարանը շարունակում է մինչեւ կարքնեցու օրերը, երբ «Պօլօժէնիա»ն հաս-

*) Դիւան Հ. Պատմ., Ա.-Բ. 208—210 եր.

**) Դիւան Հ. Պատմ., Ա.-Բ. 223—4 եր., Խորհրդարանի կանոնադրութիւնը տես 228—231 եր.

***) Դիւան Հ. Պատմ., Ե. 584 եր.

տատւում է և խորհրդարանի փոխարէն Սինոդն է հիմնւում, իբր կաթողիկոսին կից եղող խորհուրդ։

Մի քանի տողով ամփոփելով վերոյիշեալ ոչ լրիւ տեսութիւնը, որովհետեւ ձեռքիս տակ չեն եղել ձեռագիր աղբիւրները, կ'ստանանք հետեւեալ պատկերը.—

Ա.— Հայ եկեղեցին ԺԸ-րդ դարում գրաւոր սահմանադրութիւն չի ունեցել.

Բ.— Հայ եկեղեցին երբեք զերի չի եղել ձեւին. նրան տօն տւողը եղել է ժամանակի պահանջը. նրա զերազոյն նպատակը հայ ժողովրդի ֆիզիքական գոյութեան ապահովութիւնն է եղել, ժողովրդի ամբողջութեան պահպանութիւնը, որ կրօնական երկպառակութիւնների շնորհիւ հատւածների չբաժանւեն.

Գ.— Տիրող պետութեան կարգերը կարեւոր զեր են խաղացել հայ եկեղեցու սահմանադրութեան կազմակերպութեան մէջ.

Դ.— Եկեղեցական-դաւանաբանական հարցեր չեն արծարծւել և ազգ. եկ. ժողովներ չեն գումարւել հարցեր լուծելու. կաթողիկոսն է տեղական պահանջների համեմատ ժողովրդի խնդրանօք այս ու այն կանոնը փոխել, թեթեւացրել.

Ե.— ԺԸ-րդ դարու հայ եկեղեցու վարչութիւնը կազմւած է եղել ժամանակի տիրող մահմետական կառավարութիւնների ֆէօդալական վարչաձեւի օրինակով.

Զ.— Հայ եկեղեցին, նրա ժողովը չէր եկեղեցու վարչաձեւը, սահմանադրութիւնը որոշողը, այլ տիրող պետութիւնն էր թելադրում և հայ ժողովուրդը, թւով քիչ, որ եւ է քաղաքական կազմակերպութիւն չունեցող, միայն յարմարւել է եղած առաջարկին, որքան այդ նրա դաւանանքին ու ազգային գիտակցութեան չէր դիպչում.

Է.— Հայ եկեղեցին ունեցել է ԺԸ-րդ դարում ա-

բեւելեան ֆէօդալական տնտեսա-իրաւական կազմակերպութիւն, ուր իշխող տարրը օտար, տիրող պետութիւնն է եղել.

Ը.— Հայ եկեղեցու վարչական պաշտօնէութեան մէջ ընտրական կարգը պարտադիր է եղել, ուր դեր խաղացողը եղել է քաղաքական-պետական կենտրոնի հայութեան ունեւոր դասը, մտաւորականութեան հետ.

Թ.— Հայոց ընդհանրական հայրապետը բացարձակ միապետ չէ եղել, այլ սահմանադրուած է եղել խորհրդով.

Ժ.— Հայ եկեղեցու կառավարութեան ազգային-հասարակական խնդիրների լուծման մէջ գերակշռող դերը եղել է աշխարհականների և ոչ հոգեւորականների ձեռքին:

Այս պատմական տւեալները կարեւոր է աչքի առաջ ունենալ, ապագայում մշակելիք եկեղեցական սահմանադրութեան համար:

1925 Թ. Մայիս
Էջմիածին

ՌՈՒՍԱՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԻՃԱԿԸ
ԱԶԳԱՅԻՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ

(ՈՒՐՈՒՑԱԳԻՐ)

I.

Կենդանի, ներկայումս ապրող, մեզ՝ իբր հոգեւորականների՝ համար նշանակութիւն ունեցող, մեր գործունէութիւնը, գոյութիւնը արդարացնող ու պայմանաւորող հիմնարկութեան մասին գրելը դժւարութիւնների հետ է կապւած: Հիմնարկութիւնը ապրում է, մենք նրա մէջ դեր ունենք, շահագրգռւած ենք նրա լաւ ու վատ դրութեամբ, հիմնարկութիւնը արժէք է միլիոններով հաշտող հայ ժողովրդի համար, հետեւապէս պահանջւած օբիեկտիվիզմը ունենալ ներկայ դէպքում անհնար է:

Եթէ ներկայ. ուրուագծի նիւթը պատմական անցեալը լինէր և իբր լոկ ուսումնասիրողներ աշխատէինք կատարւած իրողութեան, մեռած, հանգած հիմնարկութեան մասին մեր կարծիքը պարզել, հեշտ կ'լինէր օբիեկտիւ լինել. պատմական անցեալի մասին դիւրին կ'լինէր անաչառ խօսել և մեր ձգտումները հրապարակ չէինք հանի: Բայց երբ մենք ձգտում ենք որոշ հիմնարկութիւն պահել, ապրեցնել, բնական է որ մեր անձնականը հանդէս կ'գայ. ւնում է միայն չափաւորել այդ, միշտ աչքի առաջ պահել հանրայինը, չա-

փանիշ, որով պիտի սանձ դրւի մեր անհատականին:

Հաշւի առնենք և այն, որ վերջին հաշւում այնու ամենայնիւ խնդրին վերջնական լուծում տուղը մենք՝ անհատներս չենք, այլ սոցիալ-տնտեսական և քաղաքական պայմանները, ուր հասարակական խնդիրների խմորը հունցւում պատրաստւում է, ուր պատրաստւում է այն միջավայրը, որը իր կնիքն է դնում խնդրի վրայ:

Ուրւագիծ եմ անւանել այս զեկուցումը, ի նկատի ունենալով վերոյիշեալ հանգամանքները, այլ և այն, որ պատկերացնել նախկին ռուսահայ ճիւղաւորւած, այլ և այլ կից հիմնարկութիւններով հարուստ եկեղեցու վիճակը լրիւ, դժւար է: Միայն ընդհանուր պատկերն է, որ աշխատել եմ ուրւագծել, իսկ այդ պատկերը մեզ ասում է թէ հայ եկեղեցին կազմալուծւում է նախկին ռուսահայ հատւածում:

Թւեմ մի քանի փաստեր, ցոյց տալու, որ կազմալուծւում բառը տեղին է և խիստ որոշում չէ: Եւրոպական մեծ պատերազմի հետեւանքով նախկին տաճկահայ 45 թեմերն այլեւս գրեթէ չկան. չկայ այդ ժողովրդի մեծագոյն մասը. ւնացորդի մի մասը ապաստան է գտել Ռուսաստանում և Այսրկովկասում, միւս մասն էլ ցրւել է Եւրոպայում, Ամերիկայում: Սոյն կաթողիկոսութիւնը Կիլիկիայից տեղահան է եղել խոշոր կորուստներով և այժմ Սաորիքում ւնացորդ ժողովրդի հետ հազիւ իր գոյութիւնն է պահում: Պօլսի հայութիւնը գաղթում է, պատրիարքութեան իրաւունքները սահմանափակւել են, պատրիարքարանը միայն հոգեւոր ներկայացուցչութիւն է: Նախկին տաճկահայ եկեղեցիների կալւածքները, սեփականութիւնները չկան: Այսպիսով շուրջ 3 միլիոնից աւելի հաւատացեալ ունեցող հայ եկեղեցին այժմ հազիւ կէսն ունի. վարչականօրէն 64 թեմ ունեցող մարմինը այժմ ունի 15 թեմ, որից 3-ը նոր աւելացած են ռուսահայ հատւա-

ծում շնորհիւ նոր բաժանումների (Շիրակի, Սիւնիքի և Գանձակի թեմեր). իրօք ւնացել է 12 թեմ: Աղթամարի կաթողիկոսութիւն չկայ. Պօլսոյ պատրիարքութիւնը հոգեվարքի մէջ է:

Եկեղեցին տնտեսական ճգնաժամի մէջ է. այլեւս նա սեփականատէր չէ *). Չունի հաստատուն եկամուտներ. քահանաները բաւարար եկամուտ չունեն. կան այնպիսիները, որոնք եկամուտ չունենալու պատճառով հեռանում են քահանայական կոչումից. ռուսահայ առաջնորդները տնտեսական ծանր վիճակ ունեն և Մ. Աթոռից են ակնկալում նիւթական աջակցութիւն, հակառակ դէպքում հարկադրւած կ'լինեն հեռանալ: Մ. Աթոռում կուլտուրական-զրական-դիտական աշխատանքը կանգ է առնում, որովհետեւ միջոցներ չկան հրատարակութիւններ անելու, դպրոց պահելու, պարբերական ունենալու:

Հոգեւորականութեան թիւն էլ բաւական պակասել է. տաճկահայ հոգեւորականութեան գրեթէ 45-50 %ը չկայ. Էջմիածնի միաբանութեան անդամների թիւը 29 է, մինչդեռ մի տաճնամեակ առաջ 60 էր. ուրեմն 50 %ով պակսել է. Չորրորդ տարին է նոր միաբան չի մտնում վանքը: Եկեղեցին պետութիւնից բաժանւելուց յետոյ այլեւս վարչական ոյժ չունի, այլ միայն բարոյական՝ իր պաշտօնեաների վերաբերմամբ: Առաջնորդները թեմերում վկայում են, որ օրինապանց քահանաներին ի կարգ հրաւիրելը դժւար է, իսկ զանցառու հաւատացեալների վերաբերմամբ ոչինչ ի վիճակի չեն անելու:

Եկեղեցական կարգերի պահպանութեան նախանձախնդրութիւնը զգալիօրէն պակասել է. անհետեւանք չի անցնում հակակրօնական պրօպագանդան: Հոգեւորականութեան բարոյական հեղինակութեան մասին յատկապէս գաւառներում խօսիլ չարժէ, որով-

*) Մ. Աթոռն ունի իր այգինները եւ ջրաղացները:

հետեւ դրեթէ չկայ այդ հեղինակութիւնը։ Անցեալ թւի Օգոստոս ամսում հրապարակ եկած երկու բախտախնդիր կուսակրօնների (Աշոտ Շախեան նախկին եպ. և Բենիկ Տ. Դանիէլեան նախկին ծ. վարդապետ) հրապարակ գալը իրենց այլասեռած բրօշիւրներով ապացոյց-սիմպտօմներ են, թէ ինչպէս Մ. Աթոռի անունով 30-40 տարի կոկորդ պատռող հոգեւորականները իւ հարկին հեշտութեամբ salto-mortale կարող են գործել և իրենց բարոյական կմախքացած մերկութիւնը ծածկելու համար յանուն ինչ որ կասկածելի եկեղեցու մասին խօսել։ Երեւոյթը ըստ ինքեան տգեղ է, որքան էլ այդ պարոնների ելոյթը եկեղեցու ամբողջութեան պահպանութեան տեսակէտից անարժէք լինի։

Ի մի դումարելով վերոյիշեալ փաստերը, կ'տեսնենք որ հայ եկեղեցու վիճակը կազմալուծւել է, և որ այդ կազմալուծումը դեռ շարունակւում է, կանգ չի առնում։ Մեզ համար կարեւոր է գտնել այն պատճառները, որոնց հետեւանքով նա կազմալուծւում է, որոնել և պարզել այն տեսլները որոնք հայ եկեղեցու օրգանիզմի մէջ կազմալուծող հիւանդութիւն են մտցրել։

Ըստ իս ռուսահայ եկեղեցու այդ դրութիւնը հասկանալու համար պէտք է ուշադրութեան առնել մեզնից մի դար առաջ ունեցած նրա կեանքի դիխաւոր հանգրւանները, պարզել բախտորոշ պատմութեան մէջ դաղաթներ կազմող անցքերը, որից և կ'պարզւի ներկայ դրութեան էութիւնը և այն, թէ ի՛նչ պէտք է անէ դումարւելիք ազգ. եկ. ժողովը հայ եկեղեցու օրգանիզմի առողջացման համար՝ յատկապէս ռուսահայ նախկին հատւածում։

II.

Վերջին տարիներում հրատարակւած նախկին ռուս միապետական կառավարութեան պաշտօնական

անձանց՝ մինիստրների, գեներալների, դեսպանների յիշողութիւնները պարզ ցոյց են տալիս այն մտաւորբարոյական, տնտեսական-վարչական մնանկութիւնը, որ ունէր այլասերւած այսպէս կոչւած ռոմանովեան բազմաճիւղ և բազմանդամ տոհմը, որը վաղուց դադարել էր ռոմանովեան ռուս բօյարների տոհմ լինելուց և դարձել էր գերմանական մանր դքսութիւնների արենակցական խառնուրդ։

Կալւածատիրական-միապետական ռուս բիւրոկրատիան, արքայական պալատի մեծ ու փոքր ստրէց - մօնախների կոյր երկրպագութեամբ, հասարակական - պետական դրամները իրենց շայտութեան համար միլիոններով ծախսող անդամներով, առհասարակ միապետութեան յատուկ գաղտնի և յայտնի «կամարիլլայ»ով, վաղուց անանկացել էր և իր արժէքը կորցրել մտաւորականութեան ու հասարակ ժողովրդի աչքում։

Պետական գանձարանից իրենց անձնական բարեկեցութեան, իրենց տարբեր ազգերի ներկայացուցիչ հոմանիների պահպանութեան, իրենց անտեսապէս անանկացած հովանաւորեալների նիւթականը բարելաւելու համար միլիոններ կորզող մեծ իշխանները, իրենց գեղխութեան, արուեստական և իգական անառակութեան համար տանեակ և հարիւր հազարաւոր դեսիատին հող ձեռք բերող «նոցին պայծառափայլութիւնները և գերազանցութիւնները» աշխարհի $^1/_6$-ըդ մասը բռնող, մօտ 160 միլիոն այլազգի և այլակրօն ժողովուրդ ունեցող վիթխարի Ռուսաստանին ստիպել էին գօրանոցի վերածւել, մինչեւ այն աստիճան, որ երբ նախկին մայրաքաղաք Պետերբուրգ-Պետրօգրադում ցարը գոռար սմիրնօ!, ողջ ժողովուրդը, մեծից մինչեւ փոքրը, Արխանգելսկից մինչեւ Կարաւուրգան և Ռիգայից մինչեւ Վլատիվաստօկ, պէտք է նա քաբաւել կանգնէր։ Ռուս բիւրօկրատիան պրուսիական

միլիտարիզմի փիլիսոփայութեան ուղնուծուծն էր աշխատում ներշնչել ժողովրդին, — «զատողութիւն չանել, այլ կատարել»: Եւ եթէ Վիլհելմեան շրջանի Գերմանիայի միլիտարիզմի ծաղրութեան դէմ բողոքող երգիծաբանական թերթերը գերմանական ամբողջ ժողովրդին՝ սկսած դայեակից ու իր խնամքին յանձնուած մէկ տարեկան օրօրոցի մանուկից մինչեւ 70-80 ամեայ, 2-3 ակնոց միաժամանակ քթին դնող, հովանոցը իր աշխատանոցի բազկաթոռին իրեն փոխարէն դնող և իրեն սենեակի անկիւնում հովանոցի փոխարէն կանգնեցնող շուար ուսուցչապետը նկարում էին պրուսիական երես առած զինուորի սաղաւարտով, ցոյց տալու համար որ ողջ Գերմանիան մի զինուած բանակ է, ապա նոյն կերպ և էլ աւելի հարազատօրէն կարելի էր Ռուսաստանի ողջ ժողովրդին նկարել պապուղն կոճակներով զարդարուն համազգեստներ հագած, կօկարդով գլխարկներով և 17 ռանգի «աստիճանակարգութեան տիտղոսներ»ով և մանր ու մեծ շքանշաններով զարդարուած, որովհետեւ ռուս բիւրօկրատիան Չանք չէր խնայել մունդիրի (համազգեստ) և չինի (աստիճան) պաշտամունքը զարգացնելու և նրան կեանքի բարձրագոյն իմաստը հռչակելու:

Ռուսաստանի բնակչութեան մեծամասնութիւնը կազմող ռուս գիւղացու համար ահա ի՛նչ կարծիք ունէր ռուս բիւրօկրատիան. «Գիւղացին անասուն է, ծոյլ, արբեցող, գող, այրերում ապրող, չիմար, եւրոպական կուլտուրայի համար սարսափելի... Ախտ և ոչ աւելի. ինչպէս Բիւրիկի ժամանակ էր, այնպէս էլ այժմ է. ոչ մի յոյս չկայ նրա վերածնութեան:» *)

Եւ այդ գիւղացու համար «հայրական պրոցեսութիւն» ունեցող բիւրօկրատիան չէր դադարում օր աւուր պետական արտադատների թիւն աւելացնել և

*) «Սովրեմ. Միր» ամսագիր, 1916 թ. No. 2, եր. 110.

սրբերի նշխարների բացման հանդէսները տարէց տարի փառահեղ կազուցանել, միլիոններ կորզելու համար «անասուն» գիւղացու ծակ գրպանից:

Ռուս բիւրօկրատիայի համար ռուս նշանաւոր սոցիօլոգ Ն. Կ. Միխայլովսկին ասում է, որ նա ներկայացնում էր մի սանդուխք, որի վրայ կանգնածները բոլորն էլ պարոններ-բարիններ են, եթէ սանդուխքի վերից դէպի վար նայէիր, և նոյն բիւրօկրատիան նոյն սանդուխքի վրայ լակէյներ էին, եթէ վարից՝ ներքեւից դէպ ի վեր նայէիր: Իւրաքանչիւր իշխանաւոր իր աստղադրեալի համար պարոն-տէր էր, իսկ իրենից բարձր իշխանաւորի առաջ լակէյ:

Իշխանութեան կենտրոնացումը ուժեղ էր. ամեն ինչ պրիկազ — հրամանով պիտի կատարուէր, ոստիկանութիւնը, ժանդարմերիան, գաղտնի ագենտները, 3-րդ նշանաւոր բաժանմունքը: Ողջ Ռուսաստանում դեռ 1917 թւի սկզբին, յեղափոխութիւնից առաջ, կար 110,107 աստղին կարգի ոստիկան, որի համար պետական գանձարանը ծախս էր անում 64 միլիոն ռուբլի տարեկան: Հաշւի առէք ժանդարմերիան, գաղտնի ոստիկանութիւնը արտասահմանեան բաժանմունքների հետ, և կ'տեսնէք որ նոյն սիինների վրայ նստած բիւրօկրատիան միայն ոստիկանութեան վրայ տարեկան մի քանի հարիւր միլիոն ծախս էր անում՝ իր անձը պաշտպանելու համար ըմբոստացող յեղափոխականի գնդակից ու ռումբից և գիւղացուն ու բանուորին տասնեակ և հարիւր հազարներով բանտերը լցնելու համար, որոնց պահպանութեան վրայ նոյնքան, եթէ ոչ աւելի միլիոններ էր մսխում: Ռուս երգիծաբանը լաւ էր բնորոշել Ռուսաստանի միապետական կառավարութեան և ժողովրդի վիճակը հետեւեալ քառեակում.

Ռուսաստանում աւա՛ղ,
Երկու մեծ չարիք կայ.
Ստորին խաւերում խաւարի իշխանութիւն,
Վերին խաւերում իշխանութեան խաւար:

Ճշմարիտ է, ռուս մտաւորականութիւնը անկարող էր այս զարհուրելի սանձարձակութիւնը լռելեայն տանել. նա չէր կարող սառնասրտօրէն տեսնել, կարդալ ու լռել, որ Ռուսաստանի պետական խորհրդարանը օրերով քննութեան, վիճաբանութեան նիւթ էր դարձնում թէ գուսարների գնդի զինուորների համար համազգեստի ի՛նչ գոյնի մահուդը լաւ կ՛լինի, և կամ ամիսների գրագրութեան ու քննութեան առարկայ դարձնէր թէ ինչո՛ւ Շուշու պետական գանձարանի տարեկան հաշուեկշռում ելքում 1 կոպէկ աւելի է գըրուած, մինչդեռ նոյն խորհրդարանը լռելեայն անցնում էր այն խնդրի վրայով որ մեծ-իշխանները կովկասի փոխարքայ լինելով հարիւր հազարաւոր դեսիատին հողեր էին ձեռք բերում առանց որ եւ է վճարի, կամ Պետերբուրգից մինչեւ Պօրտ-Արտուր ուղարկուած մէկ միլիոն ռուբլին դառնում էր 100,000, կամ ռուսական ամեն 10-15 գիւղին պետական մենաւաճառ դարձած օղու մի խանութ էր ընկնում, իսկ 20-25 գիւղին հազիւ մի դպրոց, որի ուսուցչի ռոճիկը ամսական 7-10 ռ. էր լինում:

Ռուս մտաւորականութիւնը «ժողովրդական գիտակցութեան գործարանն է, ժողովրդի կենդանի ոյժերի համագումարը», ասում է ռուս մտաւորականութեան մասին գրող Իվանով-Ռազումնիկը *), և նա ԺԹ-րդ դարում այլ և այլ երանգաւորումներով շարունակ ըմբոստացել է, սկսած 1825 թւի Դեկտեմբերեանների շարժումից՝ նախկին Պետերբուրգում բուն դրած գերմանական իշխանական տոհմի այլասերած ժառանգ Ռոմանովեան կոչուած միապետական կառավարութեան դէմ, մինչեւ որ 1917 թ. մեծ յեղափոխութեամբ վերջ տուեց այդ նիւթապէս ու բարոյապէս խարխլուած շինուածքին:

*) Տես «Պատմութիւն ռուս հանրային գիտակցութեան», հ. Ա. 3 եր.

Ռուս մտաւորականութիւնը անցնելով սենտիմենտալիզմի, ռոմանտիզմի, իդէալիզմի շրջանները, ընդգրկեց մատերիալիստական-մարքսիստական ուսմունքը: Ռուս հրապարակախօսը տեղին է նկատում թէ առհասարակ Կ. Մարքսը և ս. դ. ական ուսմունքը շատ աւելի է ազդել ռուս մտայնութեան վրայ քան ուրիշ ազդերի. անգամ Մ. Կովալեւսկի, Պ. Միլիւկով, Կ. Միխայլովսկի իրենց աշակերտներով, ս.-ռ.ները և ի հարկէ Պլեխանովը իր դպրոցով, շատ աւելի են զբաղուել Մարքսի ուսմունքով, քան միւս ազդերը: *) Այս դիտողութիւնը ուշագրաւ է, քանի որ հայ մտաւորականութիւնն եւս նոյն շաւղով է գնացել, միշտ էլ խորապէս ազդուելով ռուս մտաւորականներից, որոնց մէջ, որոնց մօտ և որոնց հետ սովորել է նա:

Ռուս մտաւորականութիւնը միշտ էլ ռուս ժողովրդին վերագրել է մի յատուկ մեսսիանիզմ: Դոստոեւսկին լաւ է բնորոշում այդ ձգտումը, թէ Եւրոպան դադարել է մարդկութեանը նոր խօսք ասելուց և իր աչքը ձգել է Ռուսաստանի վրայ, Ռուսաստանին է յանձնել ԺԹ-րդ դարում աշխարհին նոր խօսք ասելու պարտականութիւնը: Դոստոեւսկին աւելացնում է թէ «ռուս ժողովուրդը պիտի ասէ Եւրոպային այդ նոր խօսքը և ես սարսափում եմ այդ խօսքից:» Հայ մտաւորականներն եւս հայ ժողովրդին մի մեսսիանիզմ էին վերագրում, Արեւելքի լուսաւորութեան և կուլտուրայի տարածման գործը, և արդեօք չէ՞ն կարող կրկնել նոքա եւս Դոստոեւսկու խօսքը:

Ռուս բիւրօկրատիան դիտէր իր դէմ ծառացող ոյժերի ի՛նչ լինելը և պահում էր 3-րդ յայտնի բաժանմունքը. բայց որքան Սիբիրն ու բեւեռային երկիրների տունդրաները յեղափոխականներով էր ողողում, շղթայազարկ լաւագոյն յեղափոխական մար-

*) «Սովրիէմ. Միր». 1917 Թ. No. 1, եր. 225.

դիկներով տրորել տալիս անվերջ բանտերի ուղիները, այնուամենայնիւ ժողովրդի դժգոհութեան ծովը շատ էր մեծ ու խոր, որ անընդհատ նորանոր ըմբոստներ չելնէին այնտեղից:

Այդ շրջանի մտայնութեան մէջ մի բնորոշ գիծ կար, որը հայ մտայնութեան եւս անծանօթ չէր, այդ նրա տեսականօրէն ապրելու և աշխատելու թոյլ կողմն էր, ոչ - իրական կեանքից կտրւած լինելն էր: Ռուս քննադատ գրող ուսուցչապետ Օվսեանիկօ-Կուլիկովսկին նկատում է թէ «Ռուսաստանում հողը լաւ չեն մշակում, բայց լաւագոյնս մշակոյթի են ենթարկւում ամեն տեսակ պէտքական և անպէտք իդէալոսութիւն»: Յիրաւի յիշենք օրինակ ԺԹ-րդ դարու 40-50 ական թւականների ռուս մտաւորականին, որը համոզւած էր թէ ռուս գիւղացին աոաքինութիւնների ծով է, մաքուր է. 60-ական թւականների մտաւորականը կարծում էր, որ մաքուր զգացմունքներ ունենալը բաւական է որ ժողովուրդը վերածնւի. ուսումն ու կրթութիւնն էին համարում այն լծակը, որով պիտի բոնապետութիւնը տապալւէր: 80-ական թւականներին «ժողովրդի մէջ մտնելու» նշանաբանն է գերիշխողը դառնում. ռուս մտաւորականը ուզում է «պարզանալ», գիւղացու նման ապրել ու գործել, այն համոզումով թէ այդ ձեւով պիտի ռուս հողագործ գիւղացուն հողատէր դարձնի, և շատ ուշ միայն Տուրգենեւը գրում է Գերցենին թէ «ռուս ժողովուրդը, որին դուք այնքան երկրպագում էք, պահպանողական է par excellence»: 90-ական թւականների ռէակցիային ռուս մտաւորականը «աւելորդ մարդիկ», «տխուր մարդիկ» է արտադրում: Այսպէս, կեանքից կտրւած, գրքով կերակրւող, տեսութիւններով ոգեւորւող ռուս մտաւորականութիւնը 1905 թւի յեղափոխութեան բռնկման ժամանակ ինքը չէ որ գեկավարում է ռուս յեղափոխութեան, այլ յեղափոխութիւնը - հոսանքն է

նրան իր ետեւից քաշ տալիս: Կաբինետներում յեղափոխութիւն որոճացողները՝ փողոցում կատարւող իրական յեղափոխութեան անտեղեակ էին ու անպատրաստ, մինչեւ որ 1917 թւին ժողովուրդն ինքը կուռ կազմակերպութեան գեկավարութեամբ վերջ դրեց կալւածատիրական-դրամատիրական միապետութեան: «Ժողովուրդը, ասում է Գերցենը, դժւարութեամբ և ոչ շուտով է ապստամբում. նա խաչ չէ անում և ոչ էլ խորան փոփոխութիւնների հետ. նա ա'յնքան աղքատ է, որ երկար ժամանակ ոխակ չէ անում վերջին ունեցածով. նրա ապստամբութիւնը միշտ էլ խորապէս կրած տառապանքի արդիւնք է:»

Քաղաքական այսպիսի միջավայրում է ապրել հայ ժողովուրդը իր մտաւորականութեան հետ ԺԹ-րդ դարու սկզբից մինչեւ մեծ յեղափոխութիւնը, երբ թէ՛ ռուսական միապետական կարգերը, թէ՛ ռուս մտաւորականութեան հոսանքները անմիջապէս ազդել են ռուսահայերի և նրա մտաւորականների վրայ: Սակայն ռուսահայը և իր մտաւորականը բացի քաղաքական-տնտեսական ընդհանուր ճնշումը կրելուց կրել են և յատուկ ճնշում կառավարութեան կողմից: Նախ ռուսահայը օտարազգի էր, ոչ ռուս, թէեւ ռուս պետութեան հպատակ, և ծայրագաւառում էր ապրում, սահմանի վրայ էր, և չէր վայելում պետութեան կենտրոնական նահանգների իրաւունքները (զեմստվօ չունէր, համալսարան չունէր). երկրորդ, հայ ժողովուրդը ունէր մի խոշոր հատւած իր ազգի հարեւան պարսիկ, յատկապէս տաճիկ կառավարութեան մէջ, որի հետ ուզում էր միանալ: Ռուս բուրժուազիան և բիւրօկրատիան բազմաթիւ անգամ ամենացած ձեւերով շահադործեցին հայ ժողովրդին իր այդ նպատակի համար, նրան ստոպատիր խոստումներ անելով, թղթեր տալով, առաւելապէս ձգտելով «Հայաստանը առանց Հայերի» Լօբանով - Ռոստովսկու բերանով արտա-

յայտած Համիդեան քաղաքականութեան։ «Հայկական հարց»ը, որին քաղաքական ծնունդ էր տուել Բերլինի 1878 թւի վեհաժողովում Ռուս բիւրօկրատիան, խրտւիլակ էր եւրոպական պետութիւնների համար Բալկաններում հաւասարակշռութիւնը պահելու և հայ ոսմանտիզմի գերի մտաւորականին որսալու և հարկ եղած դէպքում տաճիկ սուլթանին սպառնալու, որպէսզի ռուսական առեւտրական և արդիւնաբերական կապիտալին արտօնութիւններ տայ։ *)

Պարսկական ֆէօդալական կարգի տակ տանջւող հայ ժողովուրդը ռուսաց կայսրերին իր արած բազմաթիւ դիմումների մէջ միշտ գերադասում էր ռուսի խոտն ուտել, քան պարսիկի հացը և ամէն գնով աշխատում էր ազատուել մահմետական լծից. ռուս կառավարութիւնն էլ իր հերթին, համաձայն իր նւաճողական արեւելեան քաղաքականութեան, չէր ջանում ամենայն Հայոց կաթողիկոսներին, մէլիքներին յանուն հայ ժողովրդի «ամենաողորմած» հրովարտակներ տալ, հայերի հասցէին շռայլել «ամենահաւատարիմ, աշխատասէր» ածականները, երբեմն էլ քաղաքական անկախութեան վաղանցուկ խոստումներ տալ, այդ այն ժամանակ, երբ իր բուն երկրում միապետական-ճորտատիրական կարգերն էին իշխում։ Երբ հայ մէլիքները Պետրոս Մեծի խոստման համաձայն գօրքով պատրաստւում էին նրան ընդառաջելու Շամախի, Պետրոս Մեծը տաճիկ կառավարութեան հետ համաձայնութեան գալով թողնում հեռանում է՝ իր իսկ ապըստամբութեան հանած մի բուռն ժողովրդին տիրող մահմետական միապետի ձեռքը մատնելով։ Ամենայն Հայոց կաթողիկոսը, եպիսկոպոսը դոհաբանական մաղթանքներ էր անում ամենողորմած և ամենաբա-

*) Տեսնել «Կրասնի Արխիվ» 1925 թ., No. 2 (8.) Փոքրասիական երկաթուղագծի մասին յօդւածը։

րեպաշտ կայսրի և սրա ընտանիքի արեւշատութեան համար, իր նիւթական, բարոյական ալակցութիւնն էր ի սպաս դնում աղաւտարար ռուս զօրքին պարսկատաճկական հայաբնակ շրջանները գրաւելու, կազմելով կամաւորական գնդեր հայերից, հայ դրօշակներով, օծւած հայոց ընդհանրական կաթողիկոսից, սկսած Ներսէս Ե. ից, սրա եպիսկոպոսութեան ժամանակ, մինչեւ վերջերս։ Հայ հոգեւորականը, հայ ժողովրդի մըտաւորականն էին ԺԹ-րդ դարու սկզբներում էլ և յետոյ նրա իղձերի թարգմանը, ուստի և հայերի մահմետական լծից ռուս «քրիստոնեայ» պետութեան ղէնքով ազատագրելուն նպաստել են անմիջապէս և միջնորդապէս. այդ ժողովրդի իղձն էր, և այդ իղձի թարգման-դրսեւորողը հայ հոգեւորականն էր, հայ ազնւականութեան ներացորդների հետ։ ԺԹ-րդ դարում ռուս միապետութեան դէպ ի Արեւելք կատարած ռազմական իւրաքանչիւր յառաջխաղացում հայաբնակ որեւէ շրջանի ռուս տիրապետութեան տակ ձգելով է վերջացել, և մահմետական իշխանութեան տակից հազարաւոր հայ ընտանիքների գաղթով, որ հայ ժողովրդին երբեք «Հայ Երկիր», անկախ իշխանութիւն ունենալուն չէ նպաստել։ Այդ յառաջխաղացումների պատկառելի ողբերգական վերջաբանը 1914 թւի պատերազմն էր, երբ Հայաստանը ազատագրեց ռուս միապետութիւնը համաձայն իր ծրագրի, առանց Հայերի...

Ռուս բիւրօկրատիան «ամենահաւատարիմ հպատակ» համարած Հայերին իր իշխանութեան ենթարկելուց յետոյ նրանց ամենախիստ հսկողութեան տակ առաւ ոչ միայն Հայկական համարւած Նահանգում, հայ երկրում ոչ միայն մահմետական խոշոր կալւածատիրութիւնը պահեց, ոչ միայն մահմետական տարբի գերիշխանութիւնը հաստատելով՝ հայ գիւղերի անունները մուսուլման արտաբերութեամբ կիրառեց, այլ և հայ բնակչութեան լեռնային շրջաններում թո-

ղեց, ուր գիւղատնտեսական ցած կուլտուրա էր իշխում, հացահատիկների մշակութեան անյարմար, անապատ աւազոտ բլուրներ ու սարեր բաժին հանելով նրան, իսկ հայ ժողովրդի ունեցած մի քանի բարեր հողամասերում էլ մօլականներ, դուխաբօրներ, գերմանացիներ բնակեցրեց, իւրաքանչիւր շնչին 10-15 դեսիատին հող յատկացնելով, մինչ հայ գիւղացին $1^1/_2$-2 դեսիատին հող ունէր, քար ու աւազի հետ էր պայքարում, և հողազրկութեան պատճառով, «բարեխնամ» ցարի ռուսացման քաղաքականութեան հետեւանքով, ստիպւում էր իր մայրենի երկիրը թողնել ու հեռաւոր Ամերիկա գաղթել, կամ Բագու, Տփխիս, Բաթում, վերջերը նաեւ Հիւսիսային Կովկաս և աւելի հեռուները գնալ՝ մի կտոր հաց ճարելու, բանտը դառնալու ու երբեմն այլ եւս չվերադառնալու համար:

Ճշմարիտ է, ռուս զէնքը բերել էր հայ մարդու համար արեւելեան խան-բէգական քմահաճոյքներով հարուստ անիշխանական իշխանութեան դէմ կարգ ու կանոն, հաւատի, կրօնի, լեզւի ազատութիւն, սակայն այդ էլ վերջ ի վերջոյ դարձաւ միայն անուն, դատարկ խօսք: Յիշենք նախ թէ ի՛նչպէս հայ եկեղեցու վզին փաթաթելով 1836 թւի «պօլօժէնիա»ն, հետզհետէ բիւրօկրատական մեքենայութիւններով խճողեց այդ օրապակաս ծնունդը և Մատթէոս Ա-ից սկսած կաթողիկոսների առաջարկները վերախմբագրութեան, թողեց անհետեւանք. երկրորդ, 1885 թւի, 1897 թւի հայ եկեղեցական ծխական դպրոցների փակումը, 1899 թւին բարեգործական և այլ կուլտուրական ընկերութիւնների (Հրատարակչական, Մարդասիրական) կանոնադրութիւնների կրճատումը և սահմանափակումը. երրորդ, 1903 թւի հայ եկեղեցական կալւածների գրաւումը իր աղէտալի հետեւանքներով, երբ բազմաթիւ հոգեւորական և աշխարհական անձինք բանտարկւեցին և աքսորւեցին. չորրորդ, Կովկասի հայակեր

կառավարչապետ իշխան Գոլիցինի և իր արբանեակների դաւած հայ-թուրքական երկիրը տակնուվրայ անող 1905-6 թւերի կոտորածը. հինգերորդ՝ 1909-1912 թւի հայ յեղ. Դաշնակցութեան դէմ սկսած դատը որ մի տեսակ հայ մտաւորականութեան դէմ դատ էր, երբ հայ ժողովուրդը սեպարատիզմի մէջ էր մեղադրւում ու նախկին Պետերբուրգի բարձր իշխանութեան կողմից գրեթէ ողջ հայ ժողովուրդը քաղաքական անբարեյուսութեան վկայական էր ստանում: Աւելացնենք և հետեւեալը, որ հայ մարդը քրիստոնեայ ռուս կառավարութեան հովանու տակ մի եկեղեցի շինելու համար ոչ միայն ռուս աշխարհիկ իշխանութիւնից պիտի իրաւունք ստանար, այլ եւ Տփխուսում նստող ռուս էկզարխից. յիշենք, որ անդամ հայ ննջեցեալի դագաղը փողոցով բաց տանելու խնդիրը այլասերւած Գոլիցինի համար քաղաքական հարց էր դառնում, որ այս ու այն տեղի հայ քահանան որ եւ է պրիստաւի, գաւառապետի տեղեկագրութեան հիման վրայ նահանգապետի կողմից աքսորւում էր իբր «քաղաքական անբարեյոյս», ամեն ինչ իր տակ առնող տերմինի հիման վրայ:

Ռուս եկեղեցին, բիւրօկրատիայից դրդւած, ռուսացման ուժեղ քաղաքականութեանը նպաստելու համար Թիֆլիսում հիմնել էր «Կովկասում ուղղափառ քրիստոնէութեան վերահաստատման ընկերութիւն»ը, որը պետութիւնից դեռ 80-ական թւականներին տարեկան 19,932 ռ. նպաստ էր ստանում, ունէր և իր եկամուտները: Այդ ընկերութիւնը իր վարձու գործակալ-քահանաների միջոցով ոստիկանութեան աջակցութեամբ գործունէութեան սկսեց Շիրակում, Գեղարքունիքում, Արշարունիքում. այս շարժման համար, որի նպատակն էր քրիստոնեայ հայերին նորից «քրիստոնեայ» դարձնել՝ հողազուրկ գիւղացուն մի կտոր հող խոստանալով, կաւկազ պաշտօնական թերթը

դը որքան յարդում է թաթարին, նոյնքան ատում է հային. որքան թաթարը մաքուր է, այնքան հայը կեղտոտ է. որքան թաթարն անկեղծ է, այնքան հայը նենգ է: Երբե՛ք ոչ մի թաթար չի յօժարի վաշխառութեամբ պարապել, իսկ հայը յաճախ և ամենից շատ:» 1904 թուին Ա.յարկովկասում եղել է քրէական 3531 ոճիր, և ոուս թերթը յայտարարում էր թէ այդ բոլորը հայերն են արել, մինչդեռ քննութիւնը ցոյց է տուել, որ միայն 71-ը հայերն են գործել, մնացածը առաւելապէս թաթարների և միւս ազգերի պատկանողների գործ է: *)

Իսկ այն ազգամիջեան կռիւն ու ատելութիւնը, որ ոուս բիւրօկրատիան առաջ բերեց Կովկասում Գօլիցինի օրով, լրագրական այն սարսափելի արշաւանքը, որ վրաց մամուլը սկսեց յանձինս Իլիայի լրագրի ընդդէմ հայերի և այն թմբկահարումը, որ նրանք սկսեցին «հայերի ճնշման» դէմ, երեւում է Ք. Վերմիշեանի «Հայ-վրացական յարաբերութիւնը» գրքից. քիչ չի տուժել հայ ժողովուրդը այդ արշաւանքից և քիչ չեն նպաստել վրաց թերթերը հայ վաշխառու, հայ չարչի անարգական տիտղոսը հայ մարդու համար մականուն դարձնելու տարածման գործին:

Ահա ոուս բիւրօկրատիայի վերաբերմունքը դէպի հայերը Կովկասում ուրուագծօրէն: Կովկասը ոուսների ձեռին անցնելու ժամանակ Հայերը հազիւ 300 հազար էին. 1858 թուին դարձել էին 433,937, 1865 ին 560,684, 1873 ին 721,243, 1881 ին 916,989, իսկ 1916 ին արդէն մէկ միլիոն 600 հազարից անց: Այս աճումը եղել է ոչ միայն սովորական-բնական ճանապարհով, այլ եւ ոուս-տաճկական և պարսկական պատերազմներից յետոյ մահմեդական տիրապետութիւնից մեր երկիրը բերած հայ գաղթականութիւններով,

*) «Մշակ» 1905 Թ., N. 218.

1902 ին Թ. 203-ում գրում էր որ ուղղափառ դարձած հայերից առանձին գիւղեր կազմուեն, որովհետեւ հայ լուսաւորչականները նրանց հալածում էին:

Նախկին Պետերբուրգի նօվոյէ վրէմիա, Մոսկվայի Թօսկօվսկիա վիէդօմօստի, Տփխիսի կաւկազ պաշտօնական և կիսապաշտօնական թերթերը շարունակ ոուսահայերին անչատական ձգտում էին վերագրում, մինչեւ Ռոստով տարածուղ Մեծ Հայաստան կազմելու առասպելն էին կրկնում բազմաթիւ երանդաւորումներով: Այդ և դրանց ձայնակցող թերթերն են եղել, որ Կովկասում հայերի միւս ազգերին ճնշելու հարցն են բարձրացրել, թմբկահարել են թէ Կովկասի պետական պաշտօնէութեան մեծ մասը հայեր են, մինչդեռ ստուգութիւնը ցոյց է տուել, որ հայ պաշտօնեաները ընդհանուր պաշտօնէութեան 10 % ն են կազմում: Գիտենք և այն, որ Կովկաս ուղարկուած ոուս պաշտօնեաները առաւելապէս կենտրոնական իշխանութեան պաշտօնէութեան տակն են եղել, որ ոուսի «շլապկա»ն և «կիզիրօկ»ը հայ գիւղացուն սարսափ է ազդել, որ ոուս պրիստաւը հայ գիւղերում միահեծան տէր է եղել, որը հայ գիւղացուն ե՛ւ ծեծել է ե՛ւ բանտարկել է և կաշառք է առել նրանից: Չնայելով բազմաթիւ պաշտօնէութեան, ոստիկանութեան, Ա.յարկովկասը երբեք էլ չխաղաղուեց. թուրք աւազակախմբերը, յատկապէս Գանձակի գաւառում, շարունակ «իգիթութիւններ» էին անում թալանելով, կողոպտելով թէ՛ գիւղացուց, թէ՛ ճանապարհորդների: Յիշենք նաեւ տխրահռչակ Պուրիշկեւիչի պետական Դումայում յարուցած «կովկասեան հարցապնդումը», ուր հայ ժողովրդին ըստ ամենայնի ցեխոտել էր այդ ոուս միապետականութեան և սեւ հարիւրակային կազմակերպութեան «ճոթոռած բերան» պատգամաւորը: Յիշենք ոուս կիսապաշտօնական մամուլի կարծիքը 1905 թուին հայերի մասին. «Ամենից առաջ ոուս ժողովուր-

որ եղել է 1825 և 1828, 1855, 1878 թուերին, 1894-6 տաճկահայ կոտորածներից յետոյ։ Մի կողմից ժողովուրդն աճել է, միւս կողմից հողի քանակը պակասել. հայ մարդն ստիպւած է եղել գաղթել, պրօլէտարացման է ենթարկւել։

Ռուս բիւրօկրատիան զոյղ ընդ զմին հայ եկեղեցուն եւս շարունակ հարուածներ է տւել, աշխատել է իր եկեղեցու հետ ձուլել. պահանջել է հայ զինւորին ռուս լեզւով երդւեցնել. հայ զաւրացներին իրաւազուրկ է դարձրել, որպէսզի այդ զաւրացները չմանեն հայ երեխաները և պատանիները. ռուսական զաւրացներում հայ կրօնը հարկադրել է ռուսերէն լեզւով աւանդել, ռուսական պետական զաւրացներում հայոց լեզուն և կրօնը երկրորդական և ծիծաղելի առարկայ է դարձրել, մինչ ռուսաց կրօնը ամենաառաջնակարգ առարկան էր հաշււում. հայ կրօնուսոյցը արգահատելի ծիծաղելի վիճակում է եղել և հայ պատանին հրաժարւել է ոչ միայն կրօնից, այլ և հայ լեզուն սովորելուց։ Բիւրօկրատիան հայ բուրժուային իրեն ստրկացրել էր այն աստիճան, որ ոեւէ հայ կուլտուրական հիմնարկութիւնն 5-10,000 ռուբլի էր տալիս իր օձիքը ազատելու «մեծապատիւ հայ մուրացկաններից», իսկ կառավարական որեւէ հիմնարկութիւն քառապատիկ-հնգապատիկն էր ներում ամենահպատակօրէն, որպէսզի կարողանայ որեւէ «միջոց» վրից կախել իր ողորմելի փառասիրութիւնն ու ենչը բաւարարելու համար։

Յամենայն դէպս բնորոշ է այն, որ ռուս բիւրօկրատիան Կովկասի ազգերի մէջ միայն մէկին, այն է հայի համար ունի իր մէջ տարածւած արմեաշկա հատւածական բառը, ինչպէս և կենտրոնական Ռուսաստանում հրէայի համար ժիդ բառն է գործածում. երկու ազգին էլ մեղադրում են չարչիութեան մէջ, երկուսն էլ ենթարկւել են պօգրօմների, հրէան ատելի քան հայը։

Բիւրօկրատիկ ռուս միապետութիւնը ամեն կերպ աշխատել է հայ ժողովրդի ազգային ինքնուրոյնութիւնը ոտնահարել և դրա համար առաջին հերթին հայ եկեղեցուն է ճնշել ամեն կերպ։ Սկսած Յովսէփ Ա. Արղութեանից մինչեւ այսօր աշխատել է հայոց ընդհանրական կաթողիկոսներին իրրեւ կրօնապետների և ազգապետների իրեն հպատակեցնել—ամեն կերպ, ստիպել է իր միապետական օրէնքներին հաւատարիմ հպատակութեան երդում տալ, իրենց հօտին հնազանդութեան մէջ պահել ու հայրենիքը և ցարը։

Այս պայմաններում հայ եկեղեցին, իբր թոյլ փոքր եկեղեցի, Այսրկովկասում հետզհետէ բիւրօկրատանում էր, դառնում էր «կանցելարիաների (գրասենեակների) ժողովածու»՝ «Ներին Կայսերական Մեծութեան» հրամանով որոշումներ անող։ Բիւրօկրատիայի ազդեցութեամբ հայ եկեղեցում եւս այլ եւ այլ աստիճանի «օրդէնների» (շքանշանների), կամիլաւկայի, խառատփլոնի պաշտամունքն սկսեց ներմուծւել ռուս եկեղեցուց։

Ճշմարիտ է, օրէնքով հայ եկեղեցին կարող էր օգտւել իր որոշումները կիրարկելու դէպքում ռուս ոստիկանից. սակայն նման դէպքեր հազւագիւտ են եղել, և ռուս ոստիկանը հայ հոգեւորականին միշտ էլ հակոզութեան տակ է պահել և յաճախ էր աքսորում նրան հեռաւոր Ռուսաստանի խուլ անկիւնները իրրեւ քաղաքական յանցաւորի։

Հայ եկեղեցին ու հոգեւորականը ռուս միապետութեան աչքում միշտ անբարեյոյս էին, հալածանքի և ձուլման քաղաքականութեան ենթակայ, որովհետեւ նրանք ազգային ոգու պաշտպան-պահապաններն էին, ընտրական-ժողովական վարչաձեւն էին կիրառում, հանդամանքներ որոնք ռուս միապետութեան համար ժխտելի էին։ Հալածական հայ եկեղեցին հարկադրւած էր առաւելապէս հասարակական-քաղաքական կեան-

քով ապրել, որովհետեւ տիրող քաղաքականութիւնը և մեր ազգային կեանքի առանձնայատկութիւնը այդ էին թելադրում նրան. ժողովրդի կրօնա-բարոյական դաստիարակութեան հարցը անուշադիր էր մնացել, որը և անդրադարձաւ իր վատ հետեւանքներով հայ գիւղացու և բանւորութեան կեանքում:

III.

ՀԱՅ ԳԻՒՂԱՑՈՒ ԵՒ ԲԱՆԻՒՐԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ

ԴԷՊ Ի ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ

Հայ գիւղացին մինչեւ վերջերս էլ հայ մտաւորականի համար եղել է մի սֆինքս, մի առեղծած, որին նա աշխատել է հասկանալ, օգնութեան գալ, սակայն նրա բոլոր փորձերն էլ այդ ուղղութեամբ գրեթէ անյաջող են անցել:

Համաշխարհային պատերազմը, մանաւանդ Հայ Հանրապետութեան կազմելու նախօրեակը և առաջին երկու տարւայ ռուսահայերի անկախ քաղաքական կեանքը (1918-1920) փորձութեան լաւ բով եղան. գնահատութեան դրւեցին արժէքները, որոնք երկար ժամանակ պաշտամունքի առարկայ էին դարձել, և երեւաց որ հայ գիւղացուն վերագրւած են անտեղի այլ եւ այլ հերոսական առաքինութիւններ, մինչդեռ նա սովորական մարդ է իր ստամոքսի և կաշւի հարցով գլխովին կլանւած, ինչպէս առհասարակ և միւս մարդիկ են: Փորձութեան ժամին երեւաց, որ հայ մտաւորականն էլ ռուս նարօդնիկների նման հայ գիւղացու վրին փաթաթել է այլ եւ այլ տեսական ծրագրներ, նրան հայրենիքի, ազգի, ազատութեան, անձնազոհութեան տիպար է ներկայացրել, հաւատացած է եղել որ 500 տարւայ ստրկական լծի տակ տառապող հայը ազատութեան արշալոյսին պէտք է իր

ինչքն ու գոյքը, անձը ի սպաս դնէ հայրենիքի փրկութեան սեղանին: Սակայն «արօդ գրւելու և պատւով մեռնելու» առաքինութիւնը երգող հայը գերադասեց թոնրի մէջ թագնւել, իր կնոջն էլ թոնրի վրայ նստեցնել որ գինւոր չգնայ, ու հարկ եղած դէպքում ընտանիքն էլ ձգել տաճիկ ասկեարին, որ իրեն անձը փրկէ...

Անծանօթ էր հայ մտաւորականը հայ գիւղացուն. նա առաւելապէս տեսականօրէն էր ճանաչում գիւղացուն, իր կաբինետում էր գովել երգել նրան. հայ աւանդապահ-օսմանտիկ մտաւորականը աւելի շուտ ինքն իրեն էր գովել, ողբացել, երգել, լացել քան գիւղացուն և այդ ամենը նա գիւղացուն էր վերագրել: Մինչեւ վերջն էլ հայ մամուլը, մանաւանդ Թիֆլիսի այլ և այլ խմբագրատներում և «սալօններում» կոկորդ պատռող «ցիւիլիստրաւոր» ու «միջազգային» տիրացուները բօռում գրում էին թէ պէտք է գաւառ գնալ, գիւղ գնալ, գիւղացուն ծառայել և այլ նման ընդհանուր, ծամծմուած խօսքեր. առաջարկում էին գիւղացու փրկութեան համար լոյս, գիտութիւն, դպրոց, և այս «վեհ» նպատակների համար ահա թէ ի՛նչ խղճուկ ծրագրներ էին առաջարկում դասակարգային կատաղի պայքարին անտեղեակ և միամիտ Դօն-Քիշոտները.— որ իւրաքանչիւր հայ ծխող օրական մի ծխախոտ պակաս ծխէ և տնտեսած գումարը ուղարկէ Բարեգ. ընկերութեան. կամ ով կառքով է պտտում քաղաքում, տրամվայով գնայ և աւելցուկ գումարը հայ գիւղացու կրթութեանը նւիրէ. կամ ամէն հայ տարեկան 1 կոպէկ տայ ազգային գանձարանին. կամ հայ հարուստը տարեկան 5 ռ. տայ և կազմւի «Իսրայէլեան Ալիանս» ի նման մի ուխտ (Ծերենց, Նազարեան): Եւ այս առաջարկները ի հարկէ մնում էին լրագրի մէջ էլ մեռած տողեր, որովհետեւ հայ հարուստը ուրախութեամբ հանքային Լրերում հարիւրներ էր շռայլում

քան միակ յոգնեցնում այդ մալարիայոտ մոռածողութեան զառանցանքները կարդալու, ո՛ւր ինաց որ հետեւէր նրանց։

Մինչ հայ մտաւորականը աշխատում էր նման հիւանդոտ դեղատոմսեր գրելու վարժութիւններով մէկը միւսին գերազանցել և հայ գիւղացուն բժշկել ու ազատել, մինչ ինքն ամենից առաջ հիմնական ախտահանութեան կարիք ունէր իր տեսութիւններով ու մոռածելակերպով, հայ գիւղացին սակաւահողութեան պատճառով Ամերիկա - Լօս Անջէլոս էր գաղթում, գործարաններում պրօլէտարացման էր ենթարկւում և անձանօթ էր ինում ու ինաց մինչեւ վերջն էլ այն բազմապիսի դեղատոմսերին ու ծրագրներին որ հայ մտաւորականը գրում ու խմբագրում էր այդ նոյն գիւղացու համար։ Գիւղացին չգիտէր որ իր մասին «ազգի գործիչներ» կան, վերջիններս էլ երբեք չհասկացան, որ գիւղացին սովամահ է լինում ու գաղթում։

Պարսկա - տաճկական ֆէօդալական կարգերից խաչապաշտ ռուսաց զէնքով ազատուած հայ գիւղացին դարձեալ ինաց հողատիրական նոյն կարգերում, դարձեալ թուրք խոշոր կալւածատէրերի ոչան ինաց, կալւածատիրոջից հողը վերցնող մշակող և արդիւնքի հազիւ կէսը իրեն վերցնող։ Ռուս միապետական կառավարութիւնը Ա.յսրկովկասը նւաճելով ահագին տարածութեամբ պետական հողեր ձեռք բերեց, որից որոշ մասեր կապալով էր տալիս գիւղացուն և ահագին տուրք գանձում։ Մինչ Ա.յսրկովկասի մի նահանգում (Գանձակի) գիւղացոց հողի տարածութիւնը 629,126 դեսիատին էր, կալւածատէրերը 429,982 դ. հող ունէին։ Հայ գիւղացուն ինաց էին արօտատեղիները, լեռները, ուր մեծ քանակութեամբ քուրա, եղիւր, թուրք, թարախեամա վաչկատուն ցեղերն էին «եայլա» գնում, իսկ դրանց սար գնալ գալու ժամանակ գիւղացու ցանքսերը մեծ չափերով տուժում և քոչ-

ւորների ու գիւղացոց մէջ ընդհարումները, սպանութիւնները, թալանները անպակաս էին։ Հայ գիւղացին մինչեւ 1912-ին էլ եղել է մեծ մասամբ կա՛մ արքունի կա՛մ կալւածատիրական հողի կապալառու, գիշատիչ տնտեսական պայմաններում, և հարկադրուած է եղել չնչին գներով իբր բատրակ օրական 12 - 13 ժամ աշխատել և օրական 7 կոպէկ ստանալ 80-ական թւականներին։

Հայ մտաւորականը ռուս նարօդնիկի նման գնացել է այդ պայմաններում ապրող հայ գիւղացուն լուսաւորելու և հիւանդութիւնն ու զարմացել է, որ իր «հանճարեղ մտքերը» գիւղացին ուշադրութեան չի առնում, որ սոված փորով ապրող հայ գիւղացին «լուսաւորութեան սրբազան դաղափարներով» չի տոգորւում ու վատաբանելով գիւղացուն վերադարձել է քաղաք (Մուրացանի «Առաքեալը», Ադելեանի «Նոր հոգի հետեւից», «Մշակ» 1892 թ.)։

Ռուս բիւրօկրատիան 1882 թւին որոշել էր Կովկասի կալւածատէրերից հողերի մի մասը յետ գնել և տալ գիւղացոց, սակայն եթէ 1861-ին կառավարութիւնը յանձն էր առել ռուս ճորտերին տրւող հողի գինը ինքը վճարել կալւածատէրերին, որի փոխարէն նա գիւղացիներից հնգապատիկը հաւաքեց և մինչեւ վերջն էլ գիւղացին այդ պարտքից չազատուեց, ապա Կովկասում այդ վաղանցուկ, երեւակայական աջակցութիւնն էլ ցոյց չտուեց և թողեց որ հայ գիւղացին էլ միւս գիւղացիների նման կալւածատիրոջ հետ պայմանաւորւեն, գները որոշեն և գիւղացիք իրենք վճարեն այն հողի գինը, որը իրենց է եղել, որը իրենք էին մշակում, բայց որը ռուս կալւածատիրական պետութիւնը տւել էր այլ եւ այլ կալւածատէրերի՝ գանազան կեղծ ու շինծու վկայաթղթերի, ազնւական տոմի ծագում ցոյց տուղ սարքովի հրովարտակների հիման վրայ։

Ի հարկէ այդ ծիծաղելի ռէֆօրմը մնաց միայն թղթի անարժէք կտոր մինչեւ 1912 թիւը, ուղիղ 30 տարի, որովհետեւ հողերը յետ գնելու անտանելի պայմաններ առաջարկուեցին: Միայն Գանձակի գաւառում Աղալարով թուրք կալւածատէր գեներալը ունէր շուրջ 500,000 դեսեատին հող. կալւածատէրերի ներկայացուցիչները գնահատում էին դեսեատինը 50-60 ռ., գիւղացիների ներկայացուցիչները 10 ռ., կառավարութեան ներկայացուցիչ-միջնորդը գնահատեց 49 ռ.: Հէնց միայն Աղալարովի կալւածքը գնելու և գինը մաս մաս վճարելու, տոկոսներն էլ տալու համար հարկաւոր էր 20 միլիոն ռուբլի, որպիսի գումար Այսրկովկասի գիւղացիութիւնը չէր կարող ճարել: *)

Հողի քաղցը, Ջրի ծարաւը սոսկալի էր հայ գիւղացու համար. Ջրի համար տեղի ունեցող կռիւները, սպանութիւնները քրոնիկական բնոյթ էին կրում. մինչեւ վերջն էլ իրենց հոմանիների համար միլիոններ ծախսող, պալատներ կառուցող Ռոմանովեան այլասերւած իշխողները հայ գիւղացուն Ջրից ու հողից զուրկ թողեցին: Գիւղացիք Այսրկովկասում գաղանական բնազդների գերի էին դարձել: Տեսնում էր հայ մտաւորականը այդ դրութիւնը, նկարագրում, բայց չէր ըմբռնում երեւոյթի էութիւնը, չէր կարողանում դրութիւնը փրկելու ուղիղ ճանապարհը գտնել: Ահա ի՛նչպէս է նկարագրում Ա.. Ահարոնեանը հայ գիւղի դրութիւնը 90-ական թւերին. «Դատարկ բաների համար դատ են բանում (գիւղացիք). իրար չեն օգնում. շատանում են գինետները, արբեցողութիւնը. գաւակները շուտով բաժանւում են հայրերից, արբազան աւանդները մոռանում են. հագուստը, նիստ ու կացը փոխւում է. այդ ճանապարհը մեր ժողովրդին տանում

*) «Գործ» ամսագիր. 1882 Թ. N. 1, «Հողատիրութիւնը եւ կալւածատիրութիւնը Անդրկովկասում» Հ. Առաքելեանի, 56-68 երես:

է դէպի կորստեան անդունդը.— եկեղեցու բեմից խօսք է հարկաւոր և դպրոց:» *) Գիւղում գիւղացին վաշխառուների, «խօջանների», «աղաների» ձեռքին էր տանջւում, չքաւորութեան երեսից 10 ռ. պարտք վերցնելով 50-100 % ով տարիներ շարունակ այդ գումարի միայն տոկոսներն էր կարողանում վճարել. մայր գումարը եթէ չէր բազմապատկւում, առնւազն նոյնն էր մնում: Գիւղացին ազատութիւն չէր տեսնում ո՛չ գիւղում, ո՛չ քաղաքում: Քէօխվան կաշառք էր ստանում մի շիշ օղի, երեք ռուբլի, և աղքատին ծեծում, եզը ծախում, կնկանը թակում, և գիւղացին տնտեսութիւնից զրկւելով գնում էր քաղաք մի կտոր հաց ճարելու. նրա բացակայութեան ժամանակ ընտանիքն էր քայքայւում, ինքն էլ կա՛մ քաղաքում էր հիւանդանում, կամ մոլի կեանքով տարւում. (Ա.. Ագապեան-Մուսինի զանգատը. Թիֆլիզ, 1890 թ.):

«Առաւօտից տեղից գարթնողը խեղճ ժողովրդի պլխին ա չաքուչ կոտրում... խալխումն է՛լ հալ չմնաց. եզը վեր են կալնում, տակից հոգի ուզում. զօռով մարդկանցը չուան դնում են, որ իրանք մոծակի պէս ծծեն, արնաքամ անեն:» **) Աւելի զարհուրելի պատկերներ են տալիս անանկացող, մանաւանդ քայքայւող, դրա հետ էլ բարոյապէս այլասերւող հայ գիւղացու մասին Յ. Ճուղուրեանը իր «Մոռացւած Աշխարհ»ի հատորներում, Զաւախեցին իր «Պատկերներ»ում, Ստ. Զօրեանը իր «Ցաւագար»ում: Գիւղացին մի լէշ է, իսկ քէօխվան, գղիրը, քեդխուդան, հարուստը, ձիաւորը, եասաւլը, կնդխտորը՝ ղշեր են որ այդ լէշին ճաշում են: Գիւղում կոռ ու բէգեարի գնացողը աղքատն է, հարուստը միշտ էլ ազատւում է քէօխվին կաշառք տալով: Գիւղացին մի կտոր հացի համար քար

*) «Արձագանք» 1888 Թ., 37 եր.
**) Պռօշեան, «Հացի խնդիր», 11-12 եր.

ու փէտ է կրծում, հող ու մոխիր լիզում։ *) Խճուղու վրայ քար-խիճ չարդող գիւղացին տեսնում է, ի՛նչպէս ամառը քաղաքներից ամարանոց գնացող հայ բուրժուաները կառքերով սլանում են իրեն առաջից, հողն ու փոշին, տապ արեւը, հոտած, տաք ջուրը իրեն բաժին թողնելով և կատաղի ատելութեամբ է լցւում ամարանոցում երաժշտութեան, պարի, թղթախաղի մոլութեամբ տարւած «կիզիրօկաւորների» դէմ, և ահա նա ի՛նչ կարծիք է կազմում իր փրկութեան համար ծրագրներ կազմող մտաւորականի մասին. «Մի կարդացող չեն տեսել, որ գրի սեւն ու սիպտակն իմանայ և Աստծուն հաւատայ. այլ ու բեն իմացողը ծիծաղում ա Աստծու, մատաղի, ժամի, պատարագի վրայ և աւելորդ է համարում իր երեխային կրթութիւն տալ։» **)

Եթէ հայ մտաւորականը չէր կարողանում ըմբռնել գիւղացու ցաւի հիմքը, որ տնտեսական քայքայումն էր, սակաւահողութիւնը, դրա փոխարէն ոուս բիւրօկրատիան լաւ գիտէր իր գանձարանը լցնելու և գիւղացուն տէտ թողնելու ուղին. այդ արագ խմելու մոլութիւնը տարածեցն էր։ Ախալքալաքի գաւառում 1903 թւին հազիւ տարածւում է 600-700 վեդր հայ գինի՝ հազիւ 100 ո. արժողութեամբ, մօտ 600 ո. էլ պարբերական թերթի է տրւում. իսկ նոյն տարւում 12-15,090 վեդրօ արագ է ծախւում 80-100 հազար ոուբլու արժողութեամբ 60,000 հայ բնակչութեան մէջ։

Այս և աւելի քայքայիչ երեւոյթների մասին գրում է մամուլում. Թիֆլիսի Ջոջերը բարւոք են համարում երբեմն խոստովանել թէ «Մենք շատ քիչ ենք ճանաչում մեր երկիրը և նրա բնակիչներին։» ***) Կային մի երկու ողջամիտ մտածողներ, որոնք ասում

*) «Մուշեղատ Աչ'ադրի». Ա. գիրք., 7 եր.
**) «Մուշեղատ Աշխարհ» Ա. '99—100 եր.
***) «Մշակ» 1903 թ. N. 176.

էին թէ «մեր ինտելլիգենցիան փոխանակ լո՛յս, լո՛յս աղաղակելու թող հո՛ղ, հո՛ղ ասէ.» *) սակայն այսպէս մտածողները անհատներ էին. ընդհանուր հոսանքը հայ սոված գիւղացուն դպրոց հրամցնելն էր, այն գիւղացուն, որը 10-12 կոպէկով աշխատում էր ֆիզիքապէս ուժասպառ լինում Ղարսյագի դաշտերում հունձ անելով, մալարիայով բռնւում ու մահանում, կամ Բաքուի նաւթի մրուրը խմելով ֆիզիքապէս ու բարոյապէս այլասերւում։ Հայ մշակ-դասակարգի պաշտպան համարւող Արծրունին խստօրէն յարձակւում էր հայ գիւղացու համար հո՛ղ, հո՛ղ պահանջող յօդւածագրի դէմ, և առաջարկում էր որ գիւղացիք ինքնօգնութեան կոմիտէներ կազմեն, իրար օգնեն և կառավարութիւնն էլ արգելք դնի Պարսկաստանից Բաքու եկող համշարի թուրքերի առաջ, որպէսզի պրօլէտարացող հայ գիւղացին քաղաքում գործ գտնի։ Ահա հայ լիբերալիզմի լիզերի ըմբռնումը պրօլէտարի ու բուրժուայի պայքարի և նրա լուծման։

Ժթ-րդ դարու 40-ական թւականներից հայ գիւղացու այդ վիճակը մեր գրականութեան մէջ գրի է առնւել. քաղաքի պայքարը գիւղի դէմ այսպէս է նկարագրում Ս. Աբովեան. «Քաղաքի մարդը կովը վեր է քաշում, որ տեսնի թէ տակը հորթ կա՞յ։ Սատկած իշի նալի ա ման գալիս։ Հէրը որդուն չի ճանաչում, որդին հօրը... էլի թէ հոգի կայ, հաւատ, մեզանում է։» Նոյն դարը վիճակն է նկարագրում Պ. Պոշեանը «Հացի խնդրում»։ Հայ գիւղացին տանջւել է նաչալնիկի, տանուտէրի, եասաուլի ձեռքին, կաշառք, բանտ, ձեռ, գիւղական մկիտաններն ու վաշխառուներն էլ միւս կողմից, գործակալն ու տէրտէրն էլ վրան է աւելանում. այնպէս որ գիւղացին բառի բուն մտքով դժոխքի մէջ է ապրում ու նա ակամայից քաղաք է գնում ու բանւոր դառնում։

*) «Մշակ» 1892 թ. N. 128.

Հայ գիւղացու տնտեսական դրութեան հետ փոխ-
ւում է նրա վերաբերմունքը դէպի եկեղեցին. պրօլե-
տարացող հայ գիւղացին տարբերւում է մեծ չափով
ֆէօդալ կարգերին վարժւած փակ տնտեսութեամբ
ապրող գիւղացուց: ԺԹ-րդ դարու սկզբում հայ գիւ-
ղացին այս ըմբռնումն ունէր եկեղեցու վերաբերմամբ.
«Լիան ու մութը որ բաժանուեցաւ ու աղօթարանը բաց
էլաւ... մեծ մարդիկը, միրուքները սանդրելով, պա-
ռաւ կնանիքը չարսաւները կռնատակներին կամաց
կամաց տանից դուս էլան ու Տէր ողորմեա քաղելով,
Հայր մեր ասելով, Հրաժարիմքը կամ Հաւատով խոս-
տովանիմը քթիների տակին փնթփնթացնելով, իրար
ողջոյն տալով, շատը իր տակը քցելու շորը կամ
մորթին ձեռին բռնած՝ քիթ քթի տուած, գնում են
ժամ, դուրը պաչում ու ներս մտնում:» *) Այդ շրջանի
գիւղացու համար աշխարհը դատարկ բան է, մալ,
դովլաթ ունեցողը, աշխարհի տէր դառնողը չի ազա-
տի հողը մտնելուց: Գիւղացու կրօնական լինելը երե-
ւում է այս ձեւերում. զատկին մատաղ ընկեր լինել,
խունկ ու մոմ վառել, տէրտէրին խոստովանուել, 5
նաւակատքին միս չուտել, ժամ գնալ, ծոմ, պաս
պահել, պատարագ անել տալ, հոգու հաց տալ, պե-
րեզման օրհնել տալ, աղքատին կերակրել:

Հայ գիւղացին անտիապաշտութեամբ լի է. ողջ
կեանքը կապւած, կաշկանդւած է. էֆէնդիներին նայել
տալ, կուռ չափել, գարի գցել, մոմ թափել տալ և այլ
կախարդական ձեւեր նրա կեանքին ընթացք տուող
հանգամանքներ են: Այլ եւ այլ սրբերի դուռը գնալը
մուրազով նրա ցաւի դարմանն է: Հայ գիւղացին հեթա-
նոսական սովորութիւնների գերի է. Աւետարանի
բարոյական ուսմունքը նրան անծանօթ է. նա աւելի
հաւատում է կախարդին, դրբացին քան բժշկի, մանա-

*) «Վէրք Հայաստանի» 15 եր.

դէտ գիւղատնտեսի: Նրա միտքը ամպերի, թռչուննե-
րի, ծառերի, քարերի, ջրերի մէջ իր համոզմունքով
դանւող ոյժերի գերի է. և եթէ տէրտէրին դիմում է,
միայն օրէնքները կատարել տալու համար է:

Հայ եկեղեցին հնարաւորութիւն չի ունեցել իր
հաւատացեալ գիւղացու հոգին ազատագրելու այդ
բնապաշտական կրօնի ւնացորդ կաշկանդումներից.
այդ նոյն և աւելի խիտ վիճակում են գտնւում նոյնիսկ
լուսաւորեալ Եւրոպայի գիւղացիները, որոնց հոգեկան
կեանքը աւելի մոլի անտիապաշտական ըմբռնումնե-
րով լի է, յատկապէս կաթոլիկ եկեղեցու հաւատա-
ցեալների մէջ:

Հայ եկեղեցին գիւղերում դպրոցներ բացել է,
գիւղի երեխաների կրթութեան վրայ աչք դարձրել է,
սակայն մի կողմից ռուս պետութեան անվերջ կաս-
կածները և հալածանքները դպրոցների դէմ, միւս
կողմից դպրոցների նիւթական աննախանձելի վիճա-
կը, երրորդ կողմից անպատրաստ ուսուցչութիւնը և
վերջապէս գիւղական անկուլտուր կեանքի խղճուկ
միջավայրը պատճառ են եղել, որ 60 և աւելի տարի
գոյութիւն ունեցող ծխական դպրոցները աւելի քան
խեղճ արդիւնք տան ու դեռ ի. դարում էլ հայ գիւղա-
ցութեան 90-95 %-ը անգրագէտ էր մնացել:

Այս դրութեան կողքին առաջ էր եկել հետզհետէ
մի այլ դրութիւն. ԺԹ-րդ դարու առաջին կիսի վեր-
ջերին կար մի նոր սերունդ, որի համար կրօնն ու
եկեղեցին քննադատելի էին ու այն արժէքները չէին
ներկայացնում ինչ որ հին սերունդի համար էին:
«Պապա՛յ, պապա՛յ... էս ժամանակի տղերքը հէնց
սալթ գժվել, կապովի են դառել. ո՛չ մեծի պատիւն
են ճանաչում, ոչ հաւատի գինը, ոչ ժամի, աղօթքի
զօրութիւնը: Էս ա, որ Աստւած մեր գլխին բարկացել,
ամէն կողմից զուլումը մեզանից պակաս չի ըլ-
լում է՛: Ամէնն էլ իրենց ձին են քշում. էրէկվան

էրէխէն էլ դեռ ոտը չի էլած, ոտն ա բարձրացնում, հո Աստւած չի վերցնիլ: Վէր կացար տեղիդ տօ մէկ էլա Աստծուն փառք տուր, երեսիդ խաչ հանիր, հոգիդ միտդ բեր, ու ետոյ ուզածդ արա, հօ ճաքեցիր ո՛չ: Տա տա, տա, Աստւած ազատի էս ժամանակւայ էրէխէքանց ձեռիցը, որ Թողաս, աշխարքը կ'քանդեն. լաւ ա, որ Աստւած էսպէս անօրէն բանին համբերում ա:» *) Այսպէս սրտնեղում է հին սերունդը, որովհետեւ նոր սերնդի համար «ժամ չդառաւ, մի իշի հարսանիք դառաւ» եկեղեցին իր երկար ժամերգութիւնով: Նոր սերունդը հետեւեալ կարծիքն ունէր քահանայի մասին. «Բանը էն չի, որ ծէքը տալիս մարդ ժամ գնայ, մի երկու ծունր դնի, դուս գայ, մի քիչ գրին մտիկ անի, արշաւտայ, քունը տանի, եօրդան դօշակում ձգվի, ուտի, խմի քէֆ անի, յետոյ մեր Ջանին ընկնի, թէ ինչ որ դատել էք մեզ տվէք, որ տանինք ուտենք ձեզ համար աղօթք անենք. ախպէր, աղօթք ունիս քեզ համար պահիր:» Այսպէս են խօսում այն քահանաների մասին, որոնց փորումը, ինչպէս ասում են, այբի կտոր չկայ, որոնց «բողազներին որ հուպ տաս այբ չի վեր ընկնի. անջախ մաշտոցին են զօռ տալիս:»**) 50-60-ական թւականներին ժամ գնացողները հալեւորներն էին. շատ անգամ էլ միայն տէրտէրը, ժամհարը ու եկեղեցու չորս սիւներն են եղել: Ժողովուրդը ժամ գնում էր միայն Ծաղկազարդին, Զատկին, Վարդավառին, որովհետեւ երիտասարդները պսակւելու, աղջիկ տեսնելու կարիք ունէին:

Թէ ի՛նչ էին հայ քահանաները գիւղերում, դիպերը նկարագրել են Պօշեանը, Ճուղուրեանը, «Տարազ»ում Շահ-Պարոնը իրենց պատմւածքներում. «Ամէն 50 տնաչափ գիւղում երկու երեք քահանայք կան,

*) «Վէրք Հայաստանի» 19 եր.
**) «Սօս եւ Վարդիթեր» 3 եր.

ասում է Պօշեանը, որանց ամէնքի ուսումն էլ համարեա հաւասար է, մի քանի տարի տէրտէրի մօտ ութ կանոն սաղմոս, կտակարան, ժամագիրք, շարականքրքրելուց յետոյ նրանք անգիր են սովորում եկեղեցու պաշտամունքը, այնուհետեւ ո՛վ շատ տւեց գործակալին, նա շուտ է տէրտէր դառնում. պարապ տեղ, պահանջ կա՞յ թէ ոչ, հարցնել պէտք չէ:» *) Գործակալ վարդապետն եւս հայ գիւղացուն համար ծանրութիւն է եղել եկեղեցական տուրքեր հաւաքելիս, մանաւանդ պսակահարկը, հոգեբաժինը. **) իրենց կոչման անհամապատասխան քահանաների թիւը մեծ է եղել, դրանց կողքին էլ կաշառակեր առաջնորդը, գործակալ վարդապետը, անվայել կեանք վարող վանահայրը. և ահա այդ հոգեւորական կազմի հակոդութեան տակ անտեսապէս հիւծւող գիւղացին զարմանալի չէր, որ սառէր դէպի հոգեւորականութիւնը և եկեղեցին, նրանց կարիքը չզգար և նոյնիսկ երբեմն թշնամական վերաբերմունք յայտնաբերէր: Տասնեակ տարիներ է տեւել այդ դրութիւնը և հետզհետէ գիւղացիութեան մէջ հոգեւոր-կրօնական կեանքի պահանջը այն աստիճան է թուլացել, որ նա հեշտութեամբ իր երբեմնի պաշտածին ծաղրի ենթարկել կարողանում է:

Մինչ հայ գիւղացին անոտիապաշտութիւններում էր տապլտկում, հայ առաջնորդը այնուամենայնիւ անգամ ի. դարում չէր վարանում նրան նոյնքան անոտիապաշտ, թուխ ու այլ գոյնի մանուկների Աւետարանի երկրպագող քահանաներ տալ, վերջիններից բաւական խոշոր գումարներ, կով ու իւղ ստանալով: Մինչ գիւղում 40-ական թւականներին քահանան կենտրոնական տեղ ունէր, գիւղի խելօքն ու իմաստունն էր, հասարակական գործերի առաջնորդը, ղե-

*) «Հացի խնդիր» 211 եր.
**) » » 203—210 եր.

կավարը, ԺԹ-րդ դարու վերջում քահանան չորրորդական - հինգերորդական տեղն է բռնում և նրան առաջնորդում են, նրան ղեկավարում են, մինչեւ որ Ի. դարում էլ քահանային միայն հանդուրժում են և իբր արհեստաւոր են բանեցնում. առաջ նա տան վերի մասում էր նստում, այժմ եթէ տանից դուրս էլ չեն անում, ամենաշատը տան դրան մօտ են տեղ տալիս:

Այս յեղաշրջումը տարիների ընթացքում աստիճանաբար կատարւել է և հայ հոգեւորականն էլ, հայ մտաւորականի նման, չի ըմբռնել հասարակական կեանքի մէջ կատարւող փոփոխութիւնը, չի հասկացել այն տնտեսա - իրաւական ու կուլտուրական յեղաշրջումը, որ արդիւնաբերական - առեւտրական դրամագլուխը կովկասում առաջ էր բերել:

Եղան ձայներ մամուլում քահանայական դասի դրութիւնը բարւոքելու, նրան իր նախկին դիրքը ապահովելու, գիւղում դարձեալ առաջնորդի - ղեկավարի դերը տալու, և այդ նպատակի համար ոմանք քահանաներին ռոճիկ յատկացնելու հարցը հրապարակ հանեցին, ոմանք քահանայից պահանջեցին որ նա և՛ գիւղատնտեսական և՛ բժշկական և՛ իրաւաբանական անհրաժեշտ գիտելիքները ձեռք բերէ, որ գիւղացոց հասկացնէ, կրթէ, ղեկավարէ. սակայն այդ ծրագրները մնացին միայն մամուլում մի երկու յօդւածի նիւթ, քանի որ դրա փոխարէն ընծայարաններ բացւեցին միայն զանազան տեղերում, կրթւած թեմականաւարտները գիւղ չգնացին, և քահանան տարէց տարի իր կրթութեամբ յետ մնաց, նիւթականով անապահով դարձաւ ու գիւղացու համար աւանդաբար միայն պահւող սովորոյթի արդիւնք դարձաւ վերջ ի վերջոյ:

Հայ բարձր հոգեւորականն էլ, որ հայ մտաւորականութեան մարմնից ու արիւնից էր և ոչինչով չէր տարբերւում նրանից, քանի որ նրա միջից էր ելնում, բաւականանում էր ծրագրներ մշակելով որոնցով հայ

կեանքը աւելի քան հարուստ է և դրա հակառակ իրականացնելու տեսակէտից աւելի քան խեղճ ու անճարակ:

Հայ բանւորը, որ պրօլէտարացած հայ գիւղացին էր, մինչեւ քաղաք գնալը արդէն անտարբեր էր դէպի եկեղեցին. քաղաքում նրան դասակարգային կազմակերպութեան մէջ էին առնում և նա աստիճանաբար կորցնում էր իր թոյլ, աւանդաբար պահւող կապը եկեղեցու հետ: Տնտեսական - դասակարգային բուռն պայքարի մէջ նետւող հայ բանւորը խզում էր իր կապը հայ եկեղեցուց, ու ի՛նչ զարմանք, որ նա հետզհետէ թշնամական վերաբերմունք էր ցոյց տալիս դէպի կրօնը, դէպի հոգեւորականութիւնը: Հայ եկեղեցին չափազանց թոյլ էր, իր հոգեւորականութեան կազմով խեղճ, անկազմակերպ ու անպատրաստ, որ կարողանար այդ հոսանքի դէմն առնել:

Հայ բանւորն էլ միապետական շրջանում միայն սովորոյթի հիման վրայ եկեղեցի էր գնում ու հոգեւորականին իր տունը տանում, բայց հէնց որ եկեղեցու և պետութեան յարաբերութիւնը խզւեց, հէնց որ եկեղեցին դարձաւ միայն մասնաւոր հիմնարկութիւն, բանւորի համար եկեղեցին պահանջ դառնալուց հետզհետէ սկսեց դադարել. փոխւել էին հայ գիւղացու և բանւորի հասարակական կեանքի պայմանները, փոխւել էր նրանց տնտեսական - իրաւական դրութիւնը, միայն հոգեւորականութիւնն ու եկեղեցին մնացել էին աւանդական կարգերին հաւատարիմ ու այդ աւանդութեան ուժեղ իներցիան պահում է նրանց դեռ եւս, և եթէ երբեմն էլ եկեղեցին որ եւ է հանդէսի, արարողութեան, թափօրի պատճառով լցւում է, դա աւելի շատ հանդէսի միրահար լինելու հետեւանք է, քան աղօթասէր լինելու: Աւանդութիւնը և ներքին բնազդը շատ են ուժեղ դեռ յատկապէս գիւղացու մէջ կրօնական այլ եւ այլ հաւատալիքներու կառչած մնալու, բայց այդ էլ

խախուտ հիմք է ու կրթութեան և տնտեսական կեանքի պայքարի ուժեղ հարուածներին չի դիմանալու։ Իականն այն է, որ գիւղացին ու բանուորը ներքին անհրաժեշտութեան ու գիտակցական պահանջի հետեւանքով չեն եկեղեցու հետ կապւած, այլ միայն աւանդական սովորութեան, իսկ այդ էլ վերջ ի վերջոյ կ'դադարի այժ ունենալուց, որովհետեւ երբ իրական պահանջը աւանդութեան այժով միայն պահելու վիճակին է հասնում, ժամանակի ընթացքում տեղի է տալիս ու դադարում է գոյութիւն ունենալուց։

IV.

ՀԱՅ ՈՒՆԵՒՈՐ ԴԱՍԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ

ԴԷՊԻ ԵԿԵՂԵՑԻՆ ՈՒ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Կովկասահայերի մէջ կալւածատիրական-ազնւական այնպիսի խոշոր դասակարգ չկար ԺԹ-րդ դարում որպիսիք կային հարեւան Թուրք և վրացի ժողովրդի մէջ։ Հայ ունեւոր դասը վաճառական, ապա թէ արդիւնաբերող էր առաւելապէս, որը կազմւեց Այսրկովկասը ռաց ձեռքն անցնելուց յետոյ։ Կառավարութիւնն սկսեց շինարարական աշխատանք. հայերից ոմանք այդ աշխատանքներում կապալառուներ եղան, ինչպէս ռուս-տաճկական պատերազմներին այս ու այն մթերքների մատակարարողները, և կամաց կամաց դրամատէրեր առաջ եկան 50-ական թւերին։

Այսրկովկասում արդիւնաբերական գործը օտար ազգի դրամատէրերի ձեռքն անցաւ 80-ական թւերից. Բելգիական ընկերութիւնը վրաստանի հողերի մշակութիւնը վերցրեց, Սիմենսը Գանձակի պղնձահանքի մշակումը, եւս 10,000 դեսիատին անտառ. Ռութչայի մարգանեցը անցաւ օտարի ձեռքը. Ֆրանսիական

ընկերութիւնների ձեռքն անցան Ալլահվերդու և Ղաթարի պղնձահանքերը։

80-90-ական թւերին սկիզբն է առնում մեզանում Դաւիթ Անանունի անւանած «ապերական կապիտալը», առաւելապէս Բագւում, որը հետզհետէ մեծանում է և դառնում վերջերում արդիւնաբերական խոշոր կապիտալ։ 900-ական թ.ին այդ դրամագլուխն այնքան է խոշորանում, որ ռուս բիւրօկրատիան խելք աչքով է սկսում նայել, ի հարկէ չափազանցելով եղածը և իր մամուլի միջոցով յայտնում է, թէ եթէ դարու սկզբում ցանկալի էր հայ վաճառականութեան զարգանալը, դարու վերջում այլ եւս ցանկալի չէ, որովհետեւ արդելք է հանդիսանում ռուս առեւտրականութեան կովկասում զարգանալուն։

Նկատելին այն է, որ հայ դրամագլուխը հայաշատ մասերում չի զարգանում և հայ արդիւնաբերողը իր աչքը հարազատ երկրի սահմաններից հեռու է պահում. հայ արդիւնաբերող և վաճառաշահ դրամագլուխը կենտրոնանում է Բագու, Տիֆլիս, Անդրկովկասեան երկրում և Մոսկվայում։ Այդ տեղերն էր ձգտում, որովհետեւ խոշոր տոկոսներ էին տալիս և յարմար միջավայր կար։ Հայաբնակ նահանգները և գաւառները առաւելապէս երկրագործական և անասնապահական երկրներ էին, իսկ այս տեղերում դրամագլուխը այն տոկոսները չէր բերում, ինչ որ արդիւնաբերութեան և վաճառականութեան մէջ։ Մեր երկրում հաղորդակցութեան յարմար ուղիներ չկային. Տիֆլիս-Երեւան-Կարս-Նախիջեւան երկաթուղագիծը Ի. դարու սկզբում միայն կառուցւեց, երբ հայ դրամագլուխը օտար երկրներում արդէն հիմք էր ձգել. միւս կողմից երկրում չկար ապահովութիւն, աւազակութիւնը արդելք էր լինում խաղաղ առեւտրի։ Երկիրը չունէր խոշոր հանքեր. չունէր կենդանի կապի միջոցներ՝ նաւահանգստներ՝ օտար առեւտրա-արդիւնաբերական կենտրոնների հետ.

մի փակ ուղի էր հայկական շրջանը, կտրւած հաղորդակցութեան գլխաւոր ճանապարհներից. նա մի կողմ ընկած, չքաւոր մի երկիր էր և ոուս բիւրօկրատիան այդ երկրի տնտեսական զարգացման ուշք չէր դարձընում. պակաս չէր ազդում և այն հանգամանքը, որ սահմանագլուխ էր հայ երկիրը, օտարի յարձակման վտանգին ենթակայ:

Այսպիսով քաղաքական-տնտեսական աննպաստ պայմանների շնորհիւ հայ ունեւոր դասը կտրւեց բուն հայ երկրից: Միայն Բագու-Տփխիս գնացած պրօլէտարացող ու պրօլէտարացած հայ գիւղացին հայ դրամատէրի մօտ աշխատանք գտաւ, այն էլ ճիշտ նոյն պայմաններով, ինչպէս և մի օտարազգի բանւոր էր գտնում: Օտար միջավայրում ապրող, աշխատող հայ ունեւորը բնականաբար օտարացաւ, հայ կեանքից կտրւեց. աւելացնենք և այն, որ փոքր, հպատակ ժողովրդի պատկանող հայ ունեւորը ամէն կերպ աշխատում էր տիրող մեծ ազգի լեզուն, կուլտուրան, ձեւերը իւրացնել. այսպիսով հայ ունեւոր դասը խորթացաւ հայ գիւղացուն, հայ բանւորին և առհասարակ հայ կեանքին:

Դեռ 70-ական թւերին հայ դրամատէրը ծաղրով էր նայում հայ մտաւորականութեան ոսմանտիկ ծրագրին. «Գլխիցը պէտք է հանել էդ անհիմը անձնւիրութիւնը և ազգասիրութիւնը. ծիծաղելի են հիմի էդ բաները. ամէնքը հասկանում են հիմի էդոնց անհատատութիւնը: Կատարեցէ՛ք ուրիշների համար հարկաւոր գործ և պահանջեցէք ձեր վարձը, ամօթ չէ՛:» *)

Հայ դրամատիրոջ համար ազգային խնդիր գոյութիւն չունէր, նրա համար հասարակական զարգացում, պարտականութիւն, գոհաբերութիւն դատարկ խօսքեր էին: Մինչ հայ մտաւորականը լոյս, դպրոց,

*) «Վաճառական» 1866 թ. N. 9, եր. 36.

անձնազոհութիւն էր քարոզում, լրագիրները բարոյախօսական յօդւածներով լցւում ու աշխատում էին հայ վաճառականի զգացմունքները շարժել, հայ վաճառականը ամէն ինչ տոկոսի էր վերածել, և երբ «մեծապատիւ մուրացկանները», հայ վեղարաւորն ու ուսուցիչը նրան դիմում էին այս ու այն դպրոցի, ընկերութեան համար նպաստ խնդրելու, հայ վաճառականն ասում էր. «Էլի փուղ... ազդ չդառաւ միզամա, ցաւ ու կրակ դառաւ էլի... ախպէր էդ քու ասիը ինչ կուտայ ինձ, յիփուր Չիբուսս վունչինչ չըլի. ոաղ էլէք պաժալստա:» *)

Իր այս վերաբերմունքի համար հայ ունեւոր դասը արհամարհւել է թէ՛ օտարներից թէ՛ իր ազգակիցներից. հայ մամուլում յաճախ է դատափետւել հայ ունեւորը: «Արձագանք»ը (87 թ.) հայ ազգի ամենակատաղի թշնամին համարում է վաճառականին, որ հայի անունը ամէն տեղ խայտառակում է. նոյն թերթը ասում է, որ հայ վաճառականի խանութը իր եկեղեցին է, դազգահը՝ սեղանը, դաւթարը՝ աւետարանը, անտուկը՝ սրբութիւն սրբոցը, ոսկին՝ աստւածը, վարկը՝ դաւանութիւնը: Նոյն միտքն էր արտայայտում և «Գործ» ամսագիրը, գրելով. «Բուրժուազիան, չարչիական դասակարգը բարոյապէս ապականւած լինելով չէ կարող զգալ ժողովրդի ցաւը:» Ամսագրի կարծիքով հայ ժողովուրդը իր յոյսը պէտք է դնէ երիտասարդութեան վրայ և երիտասարդութիւնը պիտի պայքար սկսէ բուրժուազիայի դէմ. հայ երիտասարդը պիտի գնայ խոնաւ բնակարանները մտնէ, ուսումնասիրէ հայ բանւորի և գիւղացու կեանքը, «համեմատէ դրանց իւղի առատութիւնից տրաքուողների հետ և բացատրէ պատճառները:» **)

*) «Կռունկ Հայոց Աշխարհի» 1862 թ. յօդւած Գ. Տէր-Ասատիքեանի:

**) «Գործ» 1882 թ. N. 1, եր. 3.

Հայ ունեւոր դասի ապազգայնացման լաւ նմուշ էր նրա մեկուսացած, կուի դաշտից փախած դրութիւնը 1905-6 թւերի հայ թուրքական ընդհարումներին, երբ ինքնապաշտպանութեան համար հայ ունեւորը, որ մի գիշերում «Ընար», «Սորէյլնեա» ռէստորաններում հազարներ էր ծախսում, հասարակական գործիչների ժողովում երկար ճառեր լսելուց յետոյ հազիւ 3-5000 ռ. էր ստորագրում ինքնապաշտպանութեան գործի համար և միայն ահաբեկչի ապտնալիքը նրան ստիպում էր որոշ գումար տալ, որ օձիքն ազատէ: Հայ բուրժուայի իներտ վերաբերմունքը հրապարակախօսի զայրոյթի առարկան դարձաւ և 905 թւին. նա կոչ էր անում հայ չքաւորին թքել հայ բուրժուազիայի վրայ, որը հայ գիւղացուն թողել է, փախել և նոյնիսկ դրամն է պլանում տալ արիւն թափող հայ չքաւորին:

Հայ դրամատիրոջ ազգային-հասարակական գործունէութեան մէջ ունեցած ողորմելի դերի, նրա հայ կուլտուրայի յառաջդիմութեան համար ցոյց տւած արգահատելի գործունէութեան աւելի ցայտուն փաստեր պէտք չեն, աւելի աղաղակող, աչք ծակող ապացոյցներ, քան այն, որ Կովկասում հայ մամուլը միշտ մուրացիկի դերում է եղել, օդու մէջ է ապրել, երեսի զօռով բաժանորդներ է մուրացել, կամ հայ բարեգործական, թատրոնական, կուլտուրական ընկերութիւնները տարիներ շարունակ դէֆիցիտներով են փակել իրենց գործունէութիւնը: Հայ գիւղական դպրոցը քիչ բացառութեամբ հայ ունեւորի ուշադրութեան չի արժանացել, որովհետեւ նա իր զաւակին ռուսական դպրոցներում էր կրթում և օտարազգի բօննաների դաստիարակութեան յանձնում: Ճշմարիտ է, եղել են դրամատէրերի կողմից նուիրաբերութիւններ այս ու այն դպրոցին որ եւ է շէնք կառուցանելու, սակայն այդ նրա ստացած «յաւելեալ արժէքի» մի տոկոսն էլ չի

եղել, և այդ էլ արել է այն ժամանակ երբ առաջնորդ եպիսկոպոսը, կաթողիկոսի կոնդակով սպառազինուած, մի քանի հայ գործիչներով շրջապատուած, մէ՛ծ յարգանքով ներկայացել են նրան և ողորմութիւն աղերսել: Սունդուկեանը, Շիրվանզադէն հայ ունեւոր դասի պատկերը լաւ ուրուագծել են և ցոյց տւել, որ հայ վաճառականը աւելի շատ ռուսի մէդալին է գոհել իր դրամը, քան հայ լրագրին ու դպրոցին:

Այս դրութեան մէջ մեղաւորը հայ մտաւորականն է, որ կարծել է թէ դասակարգային գիտակցութեամբ տոգորուած դրամատէրը պրօլէտարին պիտի օգնութեան գնայ. այնտեղ ուր դասակարգային պայքարն էր հրահրւում, հայ մտաւորականը դեռ միամտութիւն ունէր դրամատիրոջ «ազգային զգացմունքներին» կոչ անելով գործ անելու և պրոլէտարիատին առաջ տանելու: Դրամատէրը իրեն պրօլէտարիատից բարձր էր դասում, ազնիւ արիւնի տէր, և նրան միայն կարող էր «կոպէկներ շպրտել», քանի դեռ նրա առաջ չէր ծառանում դասակարգօրէն կազմակերպւած պրօլէտարը: Հայ դրամատէրը մեծ մասամբ միջազգային մակլէր էր, բիրժայի գաւակ, ու մեծ ուշադրութիւն նրա հայրենիքն էր. և եթէ այնուամենայնիւ «ողորմութիւն տալիս էր» հային, այդ նրա համար, որ իրեն չէին ընդունում ռուս բիւրօկրատները լիովին իրենց մէջ, նրան օտարազգի էին համարում:

Բնական է, որ այս ըմբռնումով ու ապրումով հայ ունեւորը հայ եկեղեցուն, որ գերազանցապէս իրերի բերմունքով ազգային հիմնարկութիւն էր, նայէր անտարբեր և նոյն խորթութիւնը ցոյց տար, ինչ որ դէպի ազգային-հասարակական միւս ձեռնարկութիւնները:

Հայ ունեւորի համար հայ եկեղեցին մի աւանդական արժէք էր, մի ընդհանուր-տեղիք, մի հին սովորոյթի անվնաս ինացորդ, որին նա յիշում էր, երբ

իրեն ստիպում էին յիշել. և երբ նրան յիշեցնող չէր լինում և չկար, ինչպէս այժմ, ամենայն հանգստութեամբ և սիրով մոռանում էր ու մոռացաւ։

Հայ ունեւորի համար ազգայինը գոյութիւն չունէր, ուրեմն և հայ եկեղեցին իբր այդպիսին ազգային հիմնարկութիւն և արժէք չէր։ Ասել, որ հայ ունեւորի մէջ կայ կրօնական տրամադրութիւն, կարծում եմ թիւրիմացութիւն կ'լինի. հայ մարդը վերջին շրջաններում եկեղեցում ազգայինն է փնտռել առաջին հերթին. կրօնական ոգով նա չի դաստիարակւել և չի տոգորւել, մանաւանդ հայ ունեւորը, որ առհասարակ չի ունեցել կրթական-կուլտուրական բարձր մակարդակ և ամենաշատը իր ըմբռնումներով մի մնոտիապաշտ քաղքենի է եղել։ Ասել, թէ նա հայ եկեղեցու բարեկործութեան խնդրում դեր կ'կատարէ, միեւնոյն է ասել թէ յուլիսեան շոգերին Արարատեան դաշտում ձիւն կ'գայ։ Երբ եկեղեցին այլ եւս իրաւական մարմին չէ և պետական խնամք չի վայելում, իսկ հայ ունեւորին այս դրութիւնից օգուտ չկայ, նա հեշտութեամբ երես կ'դարձնէ, և փաստն էլ այժմ այդ է։

Հայ չքաւոր և ունեւոր դասի մէջ անցման շրջան կազմող, երկուսին մի տեսակ օղակող դասն է հայ քաղքենին-մէշչանինը։ Սրա մասին, իբր առանձին գործօն ոյժի մասին, ասելիք գրեթէ չկայ։ Մի մասով սա հայ գիւղացու հետ է կապւած մի փոքր սրբագրումով. նա էլ մնոտիապաշտական-հեթանոսական ըմբռնումներ ունի, նոյնպէս աւանդականի, սովորոյթի գերի է. միւս մասով՝ այդ նրա հագուստի տարազն է, նիստ ու կացը, վարք ու բարքը, որոնցով ունեւոր դասին է աշխատում նմանուել. այդ է նրա կեանքի նպատակը. նա աւելի շատ մօտենում է ունեւորին իր ձգտումով, քան գիւղացուն ու բանւորին։

Ինչպէս առհասարակ, այնպէս և մեզանում քաղքենի դասը անգոյն, անորոշ, տարտամ ապրումների

տէր է, գոհ իր առօրեան լրացնելու ձգտումից. այսօրը նրան բաւարարում է և նրա «համաշխարհային պրօբլէմները» ընտանեկան և հարեւանական-դրացիական կարիքները և ինտրիգները լուծելու մէջն են, և նրա վերջին ցանկութիւնը 2-3 տէրտէրով թաղւելու մէջ է ամփոփւած։ Իբրեւ անցման շրջան-դաս, նա «ճահիճ» է, իսկ ճահիճը աւելի քան վտանգաւոր է հասարակական մարմնի կազդուրման, առողջացման խնդրի տեսակէտից։

Այդ կազմն ունեցող դասը հայ եկեղեցու բարեփոխութեան խնդրում բնական է, որ գործօն դեր չի կատարելու. նա տիրող դրութեան ստրուկն է և ամենից շուտ համակերպողը. նա իր փոքրիկ ու խղճուկ տաքուկ կացութեան երկրպագուն է. նրան դեկավարողը միջավայրն է. ուստի եթէ այսօր նա թէխտա է, վաղը աթէիստ կ'դառնայ. եթէ այսօր տէրտէրով թաղելն է գովասանքի արժանի և վաղը քաղաքացիական թաղումը՝ յառաջդիմութեան նշան, նա այսօր տէրտէրին կ'հրաւիրի, վաղը տէրտէրին դուրս կ'անի։ Հասարակական շարժման մէջ նա ամբոխ է, թիւ է և ոչ ոյժ։

Այդ ըմբռնումով այս դասը, որ փոքր թիւ չէ կազմում, հայ եկեղեցու բարեփոխութեան խնդրում ակտիւ դեր չունի կատարելու. սրա համար միեւնոյն է շարականները լրի՞ւ կ'ասւի թէ կիսատ, Աւետարանը աշխարհաբա՞ր կ'կարդացւի թէ գրաբար. նրան զբաղեցնողը ձեւն է և ոչ բովանդակութիւնը։

Գիւղացու համար կենսական արժէքներ ունի եկեղեցին իբր կազմակերպութիւն և ոչ իբր տեսութիւնների, սկզբունքների ներկայացուցիչ. գիւղացին իր աշխատանքի դասաւորումով, իր ապրումներով դեռ շատ է կապւած եկեղեցու արարողութիւնների, հանդէսների, թափօրների հետ, և նա անուշադիր չի լինի, երբ որոշ փոփոխութիւն առաջ բերւի. քանի դեռ ձեռք

չեն տեղ, նա անտարբեր է և անուշադիր, բայց որ ձեռք տրւի, նա կարող է խօսել և շարժւել: Այլ է մէշչանինը. նա շատ շատ մի քանի օր իբր խօսակցութեան նիւթ կ'խօսի ու կ'լռի, որովհետեւ եկեղեցին նրա կեանքի ղեկավար չէ:

V.

ՀԱՅ ՄՏԱՒՈՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ

Ա.— Ռուսահայ մտաւորականութիւնը սկիզբն է առնում իր հասարակական կեանքի ղեկավար ԺԹ-րդ դարու կիսից. մինչ այդ կային միայն անհատներ, և հասարակական կեանքի ղեկավարութիւնը հոգեւորականների, բէգերի, աղաների ձեռքին էր շնորհիւ մահմեդական աշխարհի ֆէօդալական կարգերի:

Ռուսական տիրապետութիւնից յետոյ հայ ունեւոր դասն առաջ եկաւ, որն իր զաւակներին ռուսական դպրոցներն ուղարկեց և ԺԹ-րդ դարու 50-ական թւերին համալսարանականների թիւը հաշւում էր Կովկասահայերի մէջ 20-30. բացի սրանցից կային և վենետիկեան մաշտաբի պետնական-հայկաբաններ մի քանի անգամ աւելի թւով, քան ռուսական դպրոցասարտներն էին:

Հայ մտաւորականութիւնը իր կազմութեամբ առաւելապէս դէմօկրատիկ էր և այս ու այն աստիճանի, դիրքի տէր անձանց զաւակ. ռուս մտաւորականութիւնը մինչեւ 70-ական թւականը առաւելապէս ազնւական կազմ ունէր, այնուհետեւ նրա մէջ էլ «աստիճանաւորական» տարրը ուժեղանում է: Հայ մտաւորականութիւնը առաւելապէս ռուս մտաւորականութիւնից, մասամբ և օտարներից էր ստանում իր մտաւոր պաշարը, նմանողութեամբ կազմում իր աշխարհհայեացքը և նրանց գաղափարներով տոգորւած աշ-

խատում էր ղեկավարել մեր հասարակական կեանքը:

Ընդհանրապէս մեր մտաւորականութեան ձգտումների, պայքարի, տոգորումների մէջ, լինի այդ յատուկ անհատական թէ խմբական արտայայտութիւն, լրագրում թէ բրօշիւրում, վէպում թէ ուսումնասիրութեան մէջ, նկատւում է մի գերիշխող տօն,— ժողովրդականացման տօնը. ժողովուրդը հայ մտաւորականի պաշտամունքի առարկան է, նրան երկրպագում, նրա առաջ խունկ է ծխում, նրա համար ծրագրներ է մշակում, նրա անունով ասպարէզ է ելնում, նրա դէմ խօսողին վատաբանում, անպատւում, լինի այդ մտաւորականը պահպանողական թէ ազատամիտ, սօցիալիստ թէ կրթերական: «Ժողովրդի հետ, ժողովրդի մէջ, ժողովրդի համար», — ահա նրա սիրած, փայփայած նշանաբանը:

Հայ մտաւորականութիւնը իր ամբողջ պայքարում մինչեւ ռուսական մեծ յեղափոխութիւնը երկու մօտիւ ունի, երկուսը մի ամբողջութիւն կազմող, ազգ և եկեղեցի: Սրա շուրջն է դարձել նրա ամենաուեսակ պայքարը, մամուլի տգեղ բանակռիւներից և փոխադարձ անվայել ածականներով իրար անպատւելուց սկսած մինչեւ կաթողիկոսական, ազգային-բիւրօյի, ազգային խորհրդի ընտրութիւնները, կուսակցական պայքարի բոլոր գէնքերով, թէ' ընտրութեան ժամանակ թէ' մամուլում, ուր երբեմն բոնի ոյժն էր դեր խաղում, մանաւանդ յեղափոխական շրջանում:

Ցոյց տալու համար թէ ի՛նչ տարաձութիւն է անցել ԺԹ-րդ դարում հայ մտաւորականութիւնը իր այդ երկու հարցի առպարիզում, կ'յիշատակեմ դարու սկզբի և դարու վերջի ըմբռնումներից մի մի օրինակ:

Դարու սկզբին հայ մտաւորականութեան փոխարինող հայ քեթխուդաներն այս էին ասում առաջնորդ եպիսկոպոսին. «Մէկ Աթոռ ունինք, մէկ հոգեւոր տէր.

էլ հօ ուրիշ բան էս աշխարհում չունինք: Գիշեր ցերեկ մեր խնդիրն էս ա, որ Աստուած մեր Աթոռը շէն ու պայծառ պահի, մեր հոգեւոր տիրոջ կեանքը երկար անի. ինչ ունինք ձերն ա. մեր որդիքն էլ տեղն ընկած տեղը կը ծախենք, թախ ձեր աչքը մեր վրա քաղցր ըլի:» *)

1906 թւին Էջմիածնի կենտրոնական ժողովը դրնացող հայ մտաւորականութեան ձախ թեւը, որ ղեկրիշխողն էր, ասում էր. «Փշրեցէք և ասացէք Էջմիածնի կաթողիկոսին, որ շնորհների աղբիւրը կաթողիկոսը չէ, այլ ժողովուրդը, որ ժողովուրդը կ'գայ և կաթողիկոսին կ'ասէ. Իրաւունք ենք տալիս քեզ՝ Էջմիածնի կաթողիկոսիդ՝ հանգիստ ու անխռով թագաւորելու քու վանքիդ, եկեղեցիներիդ մէջ, կապում ենք թոշակ և ասում, որ աղօթք անես այն հայերի համար որոնք դեռ կարօտ են քո աղօթքին. իսկ դրանից դուրս ոչ մի խօսք և ոչ մի գործ:» **) Երբ հաւաքւում են Էջմիածնում, նրանք ասում են. «Եկել ենք Էջմիածնի կաթողիկոսի, վարդապետների... հոգեւորականութեան, ամեն բանի վրայ խաչ դնելու:»

Ազգային խնդրի նկատմամբ հայ մտաւորականութեան ոտն տուղ Գ. Բաթիպան երգում էր.

Չէ՛ անհնար է ազգէն հրաժարիլ,
Ինչպէս որ միսը ոսկրէն բաժանել.
Սինկքոր կ'ճեամ, ատոր ու ատւաճ,
Բայց ես չեմ լինի երբեք ազգուրաց: ***)

Իսկ Ի. դարու առաջին քառորդում հայ մտաւորականութեան համար միջազգայինը դառնում է երկրպագութեան առարկայ և ազգայնամոլական տենդը դառնում է արհամարհանքի նիւթ:

*) «Վէրք Հայաստանի» 124 եր.
**) «Մշակ» 906 Թ., N. 179.
***) «Փորձ» 1879 Թ. N. 2.

Այս երկու ծայրերը ցոյց են տալիս, թէ ի'նչպէս հայ մտաւորականութիւնը առաւելապէս օտար մտաւորականութեան ռէցէպտներով է շարժւել: Հայ մտաւորականութիւնը իր առաջ ունեցել է տաճկահայերի հարցը, որը զանազան էքսպէրիմենտների է ենթարկւել և որը կլանել է հայ մտաւորականութեան ուշքը և աշխատանքը: Մինչ ռուս մտաւորականութեան մէջ եղել են կրօնական հարցերով լրջօրէն զբաղողներ, կրօնական տրամադրութեան տէր գրողներ (Տօլստոյ, Դօստոեւսկի, Լէսկով, Բուլգակով, Բերդեաեւ, Մերժկովսկի), հայ մտաւորականներին այս տրամադրութիւնը և հոսանքը խորթ է եղել. հայ մտաւորականը երբեք իր գրւածքներում և վէպերում կրօնի հարցը քննութեան չի առել, որովհետեւ նա նման տրամադրութիւն չի ունեցել և նրա համար այդ հարցը ո'չ օրւայ հարց է եղել և ո'չ հասարակական արժէք: Այս հանգամանքը բնորոշ է և յատուկ ուշադրութեան արժանի. սա ցոյց է տալիս, որ հայ եկեղեցին հայ մտաւորականին զբաղեցրել է բացառապէս ազգային տեսակէտից, որ հայ մտաւորականութեան մէջ կրօնական հոսանք, աստւածորոնում, աստւածաքննութիւն երբե'ք չի եղել, որ հայ մտաւորականը եթէ անկրօն չէ եղել, առնւազն անտարբեր է եղել դէպի կրօնը, որ նրան եկեղեցին իր բուն հիմքով, կրօնական-աւետարանական բարոյականութեան փիլիսոփայութեամբ չի զբաղեցրել:

Հայ մտաւորականութեան հասարակական գործունէութեան ասպարէզը եղել է դպրոցը, մամուլը, դրականութիւնը և բարեգործական-կուլտուրական հիմնարկութիւնները. քաղաքական անկախ կեանք չունենալով, քաղաքական կազմակերպութիւններում-հիմնարկներում չի ծառայել և փորձ ձեռք չի բերել, որի հետեւանքները հայ ժողովրդի քաղաքական անկախ կեանք ունենալուց յետոյ են երեւան եկել: Հա-

սարակական կեանքում հայ մտաւորականութիւնը երկու հոսանք է ունեցել՝ ազատամիտների և պահպանողականների, որոնք ռուսական զապատնիկների և սլաւոնոֆիլների մօտաւոր ընդօրինակուներն են եղել. յետագայում դարձել են ռուս սօցիալիստ - յեղափոխականների և սօցիալ - դէմօկրատների բաժանմունքները յանձինս հայ յեղափոխական դաշնակցութեան և հայ սօցիալ - դէմօկրատների:

Հայ մտաւորականութիւնը հէնց սկզբից մինչեւ ԺԹ-րդ դարու վերջին տասնամեակը գործել է անհատօրէն, լաւագոյն դէպքում խմբակներ կազմելով, առանց կանոնաւոր, որոշ ծրագրով ու դիսցիպլինայով կազմակերպուելու: Եւրոպական քաղաքական կազմակերպութիւններին յատուկ դիսցիպլինը մեր հոսանքներին մեծ մասամբ անծանօթ է մնացել: Մեր մտաւորականները քաղաքական պարզ, մշակուած աշխարհահայեացք կազմելու, հասարակական միջավայրը ուսումնասիրելու վրայ լուրջ ուշադրութիւն չեն դարձրել. շատ շատերը այս ու այն հոսանքին յարել են ծանօթութեան, բարեկամութեան շնորհիւ. դժբախտաբար պակաս դեր չի խաղացել և այս կամ այն հոսանքի մէջ մտնելով պաշտօն, դիրք, նիւթական բարւոք դրութիւն ձեռք բերելու նկրտումը և այդ պատճառով աւելի քան հասուն, փորձուած անձինք անդամ այս հոսանքից միւսին են անցել նրա համար, որ այս հոսանքը ուժեղ է եղել, հասարակական հիմնարկութիւնները, դպրոցը յատկապէս, նրա ներկայացուցիչների ձեռքն են եղել, հետեւապէս հարկ են զգացել պաշտօն ստանալու համար նոր-դարականութիւնից մշակականութեան անցնել կամ ընդհակառակը: Յաճախ են եղել դէպքեր, որ եկեղեցուն գովաբանելուց չկոպնողը դրութիւնը փոխելուց յետոյ եկեղեցուն հիմնայատակ անելու քարոզը ամենից բարձրն ինքն է աղաղակել հրապարակում, կամ կրօնական - աստուածաբա-

նական առարկաները իրեն մասնագէտ ընտրողը հայ ժողովրդի փրկութեան համար, յեղափոխութեան օրերին կրօնը և կրօնական առարկաները հայ ժողովրդի կործանման պատճառ է յայտարարել. կրթուած քահանաներ պահանջողը, երբ հոգեւորականութիւնը վարկաբեկելը ազատամտութիւն է յայտարարել, ինքն էլ քահանաներին հայ հասարակութեան մարմնի վրայ պատմական պալար է համարել: Ի զուր չէին երկու հոսանքները, ազատամիտները և պահպանողականները, միմիանց բնորոշում «միջազգային» և «ցիւլինտրաւոր» տիրացուներ տիտղոսներով. բնորոշն այն է, որ երկուսն էլ տիրացու էին, մէկը միջազգային, միւսը ցիւլինտրաւոր: Տիրացուներ էին, որովհետեւ երկուսի էլ պայքարի նիւթը հասարակական կեանքում եղել է տէրտէրը, տիրացուն, երեցփոխը, վարդապետը, առաջնորդը, կաթողիկոսը, եկեղեցական կալւածքը և դպրոցը, — նրանց ամենօրեայ բանակուի նիւթերի դրեթէ լրիւ ցանկը: Թերթեցէ՛ք հայ մամուլը սկսած Տփխիսի «Կովկաս», «Արարատ» թերթերից մինչեւ իրենց սօցիալիստ յորջորջողների «Յառաջ», «Երկիր», «Հորիզոն» և այլ թերթերը և կ՛տեսնէք որ ով չի ծուլացել գրիչ վերցնելու և իր մտքերը յայտնելու, անպայման իր «հրապարակախօսական ընդունակութիւն»ը առաջին անգամ այդ հարցերի մէջ է յայտնաբերել: Հասարակական կեանքի լուրջ ուսումնասիրութիւն, դասակարգերի, դասերի պարզաբանութիւն, դասակարգային պայքար, տնտեսական երեւոյթներին նուիրուած պարզաբանութիւն, հասարակական զարգացման տեսութիւնների քննութիւն մեր մամուլում գրեթէ չկայ, մինչ ռուս մտայնութեան մէջ այս հարցերը ուժեղ բանակռիւների նիւթեր են եղել, լուրջ ուսումնասիրութիւններ են նուիրել դրանց և մարդիկ որոշ աշխարհահայեացք են կազմել հասարակական զարգացման մասին: Մեզանում բաւականացել են օտարի

կարծիքները կարդալով, իսկ բուն հայ կեանքի, գիւղացու, բանւորի, բուրժուայի, կալւածատիրոջ, սրանց փոխ-յարաբերութիւնների, տնտեսական վիճակների պարզաբանութեան նուիրուած հարցեր գրեթէ բացակայ են, չնչին բացառութեամբ, ոչ միայն կովկասահայ, այլ և արտասահմանի ազատ մամուլում:

Հայ կեանքի հասարակական ամենախոշոր հիմնարկութիւնը եղել է եկեղեցին, և հայ մտաւորականութիւնը սկսած 60-ական թուականներից իր պայքարը սկսել է եկեղեցու, հոգեւորականութեան դէմ, մինչեւ որ հոգեւորականութեան հասարակական կեանքում ունեցած դիրքերը աստիճանաբար գրաւել է և վերջը իսպառ վտարել նրան հասարակական կեանքի ասպարէզից: Նա պայքարն սկսել է գրաբար լեզուի դէմ, ապա անցել է դպրոցներին. այնուհետեւ թեմական խորհուրդներն են առաջ եկել, յետագային ազգային բիւրոն, ազգային խորհուրդը և՝ քաղաքական պայմանների շնորհիւ՝ անկախ հայ պետութիւնը. հոգեւորականութիւնը տեղի է տուել առանց պայքարի, անդամուկ յետ յետ է նահանջել ու վերջը ասպարէզից ելել:

Հայ մտաւորականութիւնը հետզհետէ ուժեղացել է թուով, իր կրթական - դիտական պատրաստութեամբ աւելի է բարձրացել և ԺԹ-րդ դարու կիսից սկսել է հայ հոգեւորականութեան պարտադրել իր ուզածը, իր կամքը: Այդ շրջանից սկսած հայ հոգեւորականութիւնը չի եղել եկեղեցու հասարակական գործերին տօն տուղը, այլ հայ մտաւորականութիւնը: Հայ ժողովուրդը, իբր մասսա, անտարբեր է եղել դէպի այդ խնդիրները, և որովհետեւ ուժեղը հայ մտաւորականն է եղել, բնականաբար նրան էլ համակերպել է:

Իբր հիմնական թէզ պիտի ընդգծել այն, որ ԺԹ-րդ դարու երկրորդ կիսից մեր եկեղեցական, վարչական, դպրոցական - կալւածական և ազգային - հասարակական գործերին ուղղութիւն տուողը եղել է հայ մտաւորականութեան այս կամ այն ուժեղ հոսանքը. հայ հոգեւորականութիւնը եղել է միայն լսող, կատարող, համակերպող, լաւագոյն դէպքում իր գայրոյթը «Արարատ»ի, «Հովիտ»ի կամ «Լումայ»ի էջերում պաթետիկ ձեւով արձանագրող և դրանով էլ իր «բարոյական պարտքը» կատարած համարող, խիղճն էլ հանգստացրած: Ժողովուրդը անմասն է մնացել այդ պայքարին և կ'մնայ դեռ տարիներ շարունակ շնորհիւ իր տնտեսական կացութեան, իր մտաւոր խաւարի և իր անկազմակերպ, չզերտաւորուած, չբիւրեղացած վիճակի: Նկատեմ սակայն որ հայ մտաւորականութիւնը իր կուռ կազմակերպութեան, ուժեղ դիսցիպլինայի, արտակարգ ջանքերի շնորհիւ չէր որ կարողանում էր դիրքեր գրաւել, յաղթանակներ տանել, այլ շնորհիւ ռուսական յեղափոխութիւնների, ռուս յեղափոխական շարժումների, երբ երկրում քաղաքական կարգերը փոխուում էին և հայ մտաւորականութիւնը ընդհանուր դրութիւնից ազդելով իր նւաճումներն էր անում: Օտար - դրսի հոսանքները ղեկավարում էին հայ մտաւորականութիւնը, և այդ հոսանքների առաջ բերած յեղաշրջումների արդիւնքներից էլ օգտւում էր հայ մտաւորականը մեր միջավայրում: Ոչ միայն 70-80 ական թուականներին, այլ նաեւ դեռ 1902 թուին Լ. Սարգսեանը «Մուրճ»ում բողոքում էր, որ արտասահմանից վերադարձող մեր ուսանողները հասարակական տեսութիւնների վերջին խօսքերն են մեր երկրում քարոզում, որ նոյնն է ինչ որ թւաբանութեան չորս գործողութիւնները չիմացողին դիֆֆերենցիալ և ինտեգրալները բացատրել:*) Նոյն միտքն էր արտայայտել «Արձագանք»ը. «Ներկայումս բոլորը «յառաջդիմական» են, բոլորը «ազատամիտ», բոլորը եւրո-

*) «Մուրճ» 1902 Թ. օգ. 227 եր.

պական գաղափարների քարոզողներ, թէկուզ առանց հասկանալու այդ եւրոպական կարգ ու սարքի արժանաւորութիւնները և թերութիւնները։» *)

Սակայն ոչ միայն դրսից էր բերում հայ մտաւորականը իր հասարակական-մտաւոր բազաժը, այլ և դրսում, օտար հորիզոնների տակ սկսեց իր հասարակական գործունէութիւնը և հետուից՝ հիւսիսից սկսեց դեկավարել հարաւին։ Բուն երկրում՝ Այրարատում իշխող հոսանքը 50-60-ական թւերին վենետիկի Մխիթարեաններին էր, որոնք գիտնականներ էին համարւում և որոնց ինքնուրոյն և առաւելապէս թարգմանական գրւածքներն էին տարածւում մեր երկրում և հայ մտաւորականները սրանց միջոցով էին ծանօթանում դրսի, կամ ինչպէս հետում ասում էին «արտաքին» գիտութիւնների հետ։ Այդտեղ իշխողը գրաբար լեզուն էր. լաւ գրաբարագէտը համարւում էր հայկաբան-գիտնական։ Սրանց մէջ հայագիտութիւնը հասնում էր անհեթեթութիւնների. ոչ միայն Հայկն ու Արամը անժխտելի պատմական անձնաւորութիւններ էին, ոչ միայն աշխարհի ստեղծագործութեան հետ սկիզբն էին առել, այլ եւ Ադամն ու Եւան էլ հայերէն են խօսել և սրանց հետ գրոյց անող, դրախտում պտտող Աստւածն էլ հայերէն է խօսել. ասել է թէ հայ ազգը առանձնայատուկ խնամածութեան է արժանացել իր ինչ որ արժանիքների համար։ Հայ ժողովրդին այդպիսի յատուկ չունեցած ու չեղած արժանիքներ վերագրելը ժողովրդի մէջ մի մեծ ինքնավստահութիւն և անտեղի պարծենկոտութիւն էր առաջ բերել։ Հայ գիւղացին այս կարծիքն ունէր հայ ժողովրդի մասին. «Մենք էլ գիտենք, որ 12 խաչապաշտի եթմիշիքի (72) միլլէթի գլուխը հայն ա, հայի ժամի արարողութիւնը ու շարականը, հայի մեռոնն ու Հաւատամքը

*) «Արձագանք» 1889 Թ. N. 47, եր. 705.

մէկ ազգ էլա չունի։» *) Նոյն մեծամտութիւնը կար և հայ ազգային մտայնութեան մէջ, որը հայ մարդուն արտակարգ առաքինութիւններ էր վերագրում. հայ մարդը առիւծ ու արծիւ էր համարւում, բահերով հազարներին շանսատակ անող, սուր ակռաներով երկաթ ծամող, իսկ իրականութեան մէջ 40,000 ով սպառազինւած Կարսի տակից մինչեւ Վլատիկավկազ մի շընչում փախչող։ Շատ ուշ միայն Ծապլվարի հերոս ու Քաջ-նազար լինելները իմացւեց։

ԺԹ-րդ դարու առաջին կիսին բուն երկրի հայ մտաւորականութեան մտաւոր մնունդը վենետիկեան հրատարակութիւններն էին, յատկապէս Կովղնի փիլիսոփայութիւնը, Ռօլէնի հնախօսութիւնը և ամենքից յարգւած հանրագիտարան Թեսաւրոսը։ Սխօլաստիկ աստւածաբանական-կրօնական այս գրւածքները հայ մտայնութեան տալիս էին թթու ազգասիրական և նեղ կրօնական ուղղութիւն։ Այս ուղղութեան դէմ է սկսում իր պայքարը Հիւսիսում, Մոսկվայում սկիզբն առնող հայ նոր մտաւորականութիւնը Ստ. Նազարեանի գլխաւորութեամբ, ապա անցնում է հարաւ՝ Կովկաս, Տփխիս-Բագու, ապա շատ աւելի ուշ բուն երկիրը՝ Այրարատ, Երեւան։

Հիւսիսում հրատարակւում են «Հիւսիսափայլ», «Հիւսիս», «Ճռաքաղ», «Փարոս Հայաստանի», «Համբաւաբեր», «Մասեաց Աղաւնի», «Լսարան» թերթեր-ամսագրերը, որոնցից մի մասը դարձեալ հայկաբանական-վարժապետական էր։ Ուժեղը քննադատական բարեկործական հոսանքն էր։ Վերջիններիս մէջ իշխողը աշխարհականացնելու և ժողովրդականացնելու ձգտումն էր։ Սրանց պայքարի ցայտուն դրւագն էր անմիտ բանավէճերով, բայց սուր արտայայտութիւններով բաւական հարուստ և երկարատեւ գրաբարի և

*) «Վէրք Հայաստանի» 124 եր.

աշխարհաբարի վէճը: Սա մի դրուագ էր հիւսիսի և հարաւի, դրսի և ներսի մտաւորականների պայքարի, որը շատ արիւն պղտորեց, որի մէջ հիւսիսը եկեղեցու դէմ դուրս եկաւ, աշխարհականացման սկզբունքը պաշտպանեց և յաղթանակեց, և այս հոսանքն էլ զանազան կերպարանափոխումներ կրելով հայ կեանքում յաղթանակողն եղաւ մինչեւ վերջն էլ:

Երկրի մտաւորականութեան մէջ հասարակութիւն, հասարակական կեանք, հասարակական գաղափարներ — հարցերը դեռ տեղ չէին գտել: «Հիւսիսափայլ» ի քննադատական - հասարակական յօդուածներից յետոյ Տփխիսում, որ դարձեալ բուն հոծ հայութիւնից հեռու միջավայր էր, սկիզբն է առնում հասարակական պայքարը նեղ սահմաններում, խեղճ բովանդակութեամբ, յանձինս հակառակորդ «Մեղու Հայաստանի», մասամբ «Կռունկ Հայոց Աշխարհի» ամսագրերի:

60-ական թւականները այս երկու հոսանքների պայքարով են հարուստ: Այս գործիչները լուսաւորիչներ էին կոչւում, ազգի, ժողովրդի յառաջդիմութեան համար լոյս, ճշմարտութիւն, ուսում, դիտութիւն էին պահանջում. չկար պարզ ծրագիր. չկար քաղաքական-հասարակական մշակուած դաւանանք. չկար և կուսակցական կազմակերպութիւն. կար մի փոքր խումբ մտաւորականների, որոնք մէկը Մոսկվայից, միւսը Տփխիսից իրար ամբակոծում էին ամենավատ ածականներով ու երկուսն էլ յանուն ժողովրդի էին խօսում, ժողովրդի շահն էին պաշտպանում, բայց ժողովրդի տնտեսա-իրաւական, հասարակական դրութեան և կարգերին անծանօթ էին:

Աշխարհաբար լեզուի դասը պաշտպանող Նազարեանը և իր տաղանդաւոր աջակից, ապա բոլորովին այլ՝ դուս յեղափոխական ուղի բռնող Նալբանդեանը ուժեղ պայքար էին սկսել հայ եկեղեցու ձեւերի, ծէսերի, յատկապէս հոգեւորականների դէմ: Սա մի պայքար էր, որով աշխատում էին հոգեւորականների ձեռքից գրաւել դիրքերը: «Հոգեւորական դասը, գրում է Ստ. Նազարեանը, որ պիտի լինէր համեմիչ աղը ժողովրդի համար, անարժան առաջնորդների անհոգութեամբ անհամացել է և այդպիսաբար կորուցել է ժողովրդի աչքում այն պատիւը, որ կ'վայելէր Աստուծոյ բանի արժանաւոր սպասաւորներին»*) Աւելի խիստ էր գրում Մ. Նալբանդեանը. «Անցան և անդառնալի անցան այն խաւար օրերը, երբ մարդիկ երջանիկ էին համբուրելով մի սեւագլխի քղանց կամ զօշաքաղութեամբ և պոռնկութեամբ ապահանուած մի ձեռք:» «Ո՞ր տեղ մի գայթակղութիւն, որի պատճառը չէր մի եկեղեցական, ո՞րտեղ հարստահարութիւն, ո՞ր տեղ խռովութիւն, որի խմորը չէր եկեղեցին:»**) Մ. Նալբանդեանը հոգեւորականներին համարում է պորտաբոյծ, վարձկան, առաջարկում է նրանց կամայականութեան իսպառ վերջ տալ, թոյլ չտալ որ կաշառքով հոգեւորականներ ձեռնադրեն:

Նազարեանի համոզմունքով ազգի գոյութեան և յառաջդիմութեան ֆակտորը միայն կրօնը չէր, այլ և լեզուն. «Մի բէֆօրմ պիտոյ է առնէ մեր եկեղեցին ոտից մինչեւ գլուխ:» — «Ազգ ու կրօն չոկ չոկ խնդիրներ են և կրօնը փոխելով կարող է հայը մնալ հայ:» — «կարճամիտ են այն մարդիկ և տգէտ, որոնք հայկական ազգութիւնը պահպանելու համար ամենայն խստութեամբ չանք են անում պահել քրիստոնէական սովորութիւնները:» —«Հայ հոգեւորականը խորամանկ քուրմ է, եղուիտ, լուսաւորութիւնը «հալածող»: — Առաջարկում է, որ հայ ազգը դուրս գայ հոգեւորականութեան «խնամակալութիւնից»:***) Այս միտքն այնուհետեւ շարունակ կրկնուել է և քանի գնացել աւելի

*) Դ. Անանուն «Յուսաիայերի Հաս. զարգաց.»ը, հ. Ա. 367 եր.
**) Մ. Նալբանդեան «Փողոված. երկերի» Բ. հ. 281, 283 եր.
***) «Փորձ» 1889 Թ. N. 1, 80-83 եր.

թափ է ստացել, իր շուրջը աւելի է խմբել հետեւորդների, այնպէս որ պատեհ առթիւ հայ մտաւորականութիւնը իրականացրել է 60 տարի առաջ քարոզած գաղափարը։

Այս հոսանքի դէմ եղող Առաքել վարժապետ Աբրահամեանը, Ստեփաննոս ա. ք. Մադինեանը, Յով. Չէրքէզեանը, ապա և Պետ. Սիմէօնեանը, Մսեր Մսերեանը ժողովրդի փրկութեան համար քարոզում էին յոյս, հաւատ, սէր, համբերութիւն, վախ Աստծուց և ամօթ ընկերից։ Սրանք իրենց հակառակորդներին օտարածիններ, ազգի շահը այլ կերպ ըմբռնողներ էին համարում, օտարի ապականած օդը ծծող և օտարազգի տարազ հագնող ազգայիններ, որոնց դաստիարակութիւնը մատաղ սերնդին ամբարտաւանացնում է։ *) Սրանց առաջարկած դաստիարակութեան աղբիւրներն էին «Հայելի դաստիարակութեան տղայոց», բարոյական պատմութիւնք երեխայոց համար և նման տեսակ ոսմանտիկ-սանտիմենտալ գրուածքներ։

Սրանց մէջ աւելի յանդուգն և հրապարակախօսական ձիրք ունեցող Յովհ. Չէրքէզեանը Նազարեանին անւանում էր «լութերամիտ, լեզւազար... Եւրոպայից ելած ասիացի, մետաֆիզիկոս մոլորեալ». սրա կարծիքով Նազարեանը իր լրագիրը դարձրել է միայն «վրէժխնդրութեան գործիք»։**) Մ. Նալբանդեանի այն կարծիքի դէմ, որ չարժէ ամենաեւին կրօնական խնդիրներով զբաղւել, «Հայկական աշխարհը» գրում էր. «Մեր կարծիքը նոյնը չէ, մանաւանդ երբ ի նկատի ունենանք, որ ոչ մի տեղ այնքան պաղութիւն չէ տիրում դէպի կրօնը և եկեղեցին, որքան այժմ մեր հասարակութեան մէջ։ Սակայն հայկական ամբողջ պատմութիւնը համոզում է մեզ, որ հայկական ազգութիւնը

*) «Մեղու Հայաստանի» 1860 թ.
**) «Մեղու Հայաստանի» 1860 թ. N. 13, եր. 98.

սերտ կապւած է հայ առաքելական կրօնի հետ. հայ ազգի փրկողը հայ եկեղեցին է. պէտք է ժողովրդի մէջ զարթեցնել նախնի կրօնասիրութիւնը, դրա համար պէտք է կրօնական ընթերցանութիւն։» *) Եւ ամսագիրը հրատարակում է այդ շրջանում Ադամ Սմիթի, Իսրայէլի նահապետների ու մարգարէների պատմութիւնները մշակնադարեան ըմբռնումներով լուսաբանւած։ «Մեղու Հայաստանի»ն ազգը կրօնին ծածկող գաղափար էր ընդունում. ազգ և կրօն նրա համար նոյնն էին, ուստի և պնդում էր թէ «Ազգը սուրբ է, ազգը բարոյական է, ազգը կենդանի է, ազգը սիրելի է, ամբողջ ազգը չհաւանողը, ատողը հրէշ է, մարդկայնութիւնից դուրս էակ է։»**) «Հայկական Աշխարհ»ում Հ. Առաքելեանը գրում էր. «Հաւատացած ենք, թէ ազգը կենդանացնողը և փրկողը իւր սուրբ հաւատն է և եկեղեցին, որի ներկայացուցիչը այսօր Ս. Էջմիածնի աթոռն է. հետեւաբար և հայ ազգը իւր լուսաւորութիւնը այդտեղից է սպասում և ոչ բողոքականներից կամ կաթոլիկներից։» ***) «Եկեղեցի, դպրոց և բարեպաշտ ընտանիք», ահա սրանց կարծիքով հայ ազգի փրկութեան կենտրոնները։ ****)

Այս պայքարի մէջ յաղթանակը, հասարակական երեւոյթների տրամաբանական և իմմանենտ օրէնքի համաձայն, ձախ հոսանքին՝ հիւսիսականներին է մնում. եկեղեցին պարտւած է ելնում, գրաբարը տեղի է տալիս աշխարհաբարին, եկեղեցին այլ եւս ազգի միակ հիմքը չի ընդունւում բոլորի կողմից, այլ կայ և լեզուն։ Եկեղեցուն տրւած է առաջին հարւածը, բացւած է առաջին մեծ ճեղքւածքը, որը գնալով ընդլայնւում է։

*) «Հայկական Աշխարհ» 1876 թ.
**) «Մեղու Հայաստանի» 1876 թ. N. 18.
***) «Հայկական Աշխարհ» 1876 թ. 57 եր.
****) «Հայկական Աշխարհ» 76 թ. եր. 30.

Բ.— 1877-8 թւի ռուս-տաճկական պատերազմը օրհասական շրջան դարձաւ հայ կեանքի և և հայ մտաւորականութեան համար: Բերլինի դաշնագրի 61-րդ յօդուածը ռուսահայ հոգեւորականի, աշխարհականի, մեծի, փոքրի, տգէտի և գիտունի ուշադրութեան կենտրոնը դարձաւ և մեր մամուլի, գրականութեան մէջ գերիշխողը: Այդ հարցի լուծման համար անթիւ անհամար ծրագրներ առաջարկուեցին, մէկը միւսին չնչող, մէկը միւսին հակասող, մէկը միւսից ցնորական և անհիմն: «Արեւի տակ մի անկիւն» ունենալը դառնում է հայի համար մղձաւանջ և իր տեսականի վերլուծական շրջանից յետոյ ունենում է նաեւ գործնական շրջանը. օսմանտիկ ազատագրական գրականութիւնն է ծաղկում իրեն հիմք ընդունելով Բալկանների մանր ազգերի, յատկապէս Բուլղարների ազատագրութիւնը «Հիւսիսի Արծւի» ձեռքով: Ծիդայականի գրականութիւնը, երգը, պաշտամունքը օրւայ տիրող հոսանքն է դառնում, և ո՞վ չէր ուխտի գնում այդ համատարած պաշտամունքին, ո՞վ չէր իր լուման ձգում այդ ծակ գանձարանը, ո՞վ չէր ծափահարում: Հայ մտաւորականութեան խոշոր տոկոսը, նաեւ հայ հոգեւորականներից շատերը այդ տենդով էին բռնուած և ոչ մի սառը լուր՝ 94-96-ի տաճկահայերի կոտորածները, 905-6-ի հայ-թրքական ընդհարումները, 1915-16-ի զարհուրելի բնաջնջումը, չսթափեցրեց հայ ղեկավար մտաւորականութիւնը: Ազգը հերոս ազգ էր համարւել, ազգը պատմական իրաւունք ունէր պահանջներ անելու ինչ որ Եւրոպայից. ի՞նչ անենք որ քաղաքականութիւն կոչւածը մորթւող հային հերոս չէր ճանաչում և ոչ էլ պատմական իրաւունքն էր ընդունում, երբ ամենակալ կապիտալի շահը այլ բան էր թելադրում: Անթիւ ուղերձներ ու պատգամաւորներ ուղարկելը դարձաւ հայ մտաւորականութեան համար մի սպօրտ. ուղարկում էին Եւրոպայի խղճին դիմելու,

բայց այդ խիղճը չկար և հասցէ չունէր. ուղարկում էին աղերսելու, մինչդեռ կապիտալը աղերս-արցունք սրբող չէ, այլ ծնեցնող: Հայի անցեալը շատ փաստեր էր տւել, բայց ոչ ոք չէր հետաքրքրւել դրանցով կամ լուրջ չէր զբաղւել այդ փաստերի պարզաբանութեամբ:

80-90 ական թւի հայ մտաւորականը հային Ադամից սերւած, Ադամին հայերէն խօսեցնող մտայնութեան շառաւիղն էր և պէտք է այդ սենտիմենտալ-օսմանտիկ ինքնադոհութեան երգով տառնջէր, լար, ողբար և Եւրոպայից հայրենիք մուրար. իսկ ո՞վ էր տեսել որ մուրացիկին անկախութիւն տան:

Ազգային հարցը այդ շրջանում տաճկահայերի ազատագրութեան հարցն էր, որի երկար քննութիւնը առիթ դարձաւ ազգ գաղափարը իբր հասարակական անկախ գաղափար հրապարակ բերելու. ազգը եկեղեցուց անջատ գաղափար ճանաչւեց և հրապարակախօսութեան մէջ առաջին տեղը տրւեց նրան, իսկ բեմի եռուի մասում մնաց եկեղեցու գաղափարը:

Ազատագրութեան գաղափարը սկզբում առաւելապէս մուրացածոյ գաղափար էր, խնդրագրով, աղերսագրով լուծելու գաղափար: Հայ մարդը իր փրկութիւնը սպասում էր Եւրոպայից այն տրամաբանութեամբ, թէ ինքը քրիստոնեայ է, Եւրոպան էլ քրիստոնեայ է, տաճիկը, որի իշխանութեան տակ է հայերի մի մասը, մահմեդական է, հետեւապէս քրիստոնեան քրիստոնէին կ'օգնէ և ոչ մահմեդականին. ու ահա սկսւում է այդ ուղղութեամբ երգը, կանչը, մեղեդին ու բայաթին: Լսենք մի նմուշը, վերարտադրելու համար մեզանից 35-40 տարի առաջ դեռ իր ծաղկման, փթթման շրջանն ապրող, այժմ կարծես խորը հնութեան ծոցն անցած այդ մեղեդիներից մէկը.

Ազգե՛ր, գերի ենք, տուէք փրկութիւն,
Մեր քրտանց արդիւնք Թող մենք վայելենք.
Միթէ չէ՞ք ուզում մեր սուրբ օրհնութիւն,

Ջեր կենաց համար աղօթող լինենք։
Ազգե՛ր, ձեզ մատաղ, հասէ՛ք հայերին,
Ասէք մի դարման մեր արնոտ վէրքին։ *)

Հայ մարդը իր տունը զարդարում էր «Ոգի Հայաստանի», «Փառք Հայաստանի» երեւակայութեան ծնունդ նկարներով ու նրանց նայելով ա՛խ ու օ՛խ անում, քէֆի ժամանակ նրանց կենացը խմում։ Այդ նոյն պատօդիկ հայրենասիրութիւնը ապրծմբով սկսեց 80-ական թուականներից իբր ազգային մեծ տօն կատարել վարդանանց տօնը, և վա՛յ այն դպրոցին որ չէր տօնի հանդիսաւորութեամբ այդ տօնը հոգեւորականութեան գլխաւորութեամբ, ինչպէս և վարդանանց նկարում էլ կար վարդանի կողքին խաչը ձեռքին կանգնած Ղեւոնդ երէցը։ Հայրենասիրական այդ անպաշտօն ցոյցերի ու հանդէսների պաշտօնական արտայայտութիւնն էլ երկու հոգեւորականի և մի աշխարհականի Եւրոպական պետութիւնների դռները ծեծելու առաքելութիւնն եղաւ, երբ Խրիմեան Հայրիկը իր պատկերաւոր խօսքով ասած հարիսայի կաթսայից ոչինչ չկարողացաւ ստանալ, որովհետեւ թղթէ շերեփ ունէր, ու յուսախաբեւած վերադարձան։ Պատճառն այն էր, որ ասել էին թէ զէնք չառան Հայերը, առանց արիւն թափելու ազատութիւն չի ստացւի։ Եւ հայ աշուղը այժմ էլ նոր թեւլադրանքի համապատասխանող խաղն սկսեց, թէ մենք ինքնավարութիւն, բարի իշխան խնդրեցինք, բայց զէնք չառանք, զրաւոր խնդրեցինք, նրա համար էլ անուշադիր մնացինք։ **)

Այժմ էլ զէնքի ոգմի երգն ու գովքն սկսեց, օրօրոցում պառկած մանուկն էլ ապստամբութիւն գոռաց, մի տարեկան երեխան քնելու համար ռազմի երգեր պահանջեց, հայ պատանին ու երիտասարդը

*) «Փարոս Հայաստանի» 1880 Թ. N. 2.— կար. Յովհան.
**) » » 1881 Թ. N. 1.

բահերը առան զէնքի տեղ որ «շանսատակ» անէն թշնամուն. կարծես հայ ազգը զինուած բանակ էր դարձել, միայն թղթի վրայ...

Բաֆֆի-Ահարոնեան օսմանտիկ սուզ ու շիւան տարածող գրականութիւնն սկսեց ու ռուսահայ մտաւորականութիւնը գլխովին տարուեց դրանով, իրեն հետ ունենալով Դէրիկի, Վարագի, Ս. Գրիգորի, Աղթամարի ու այլ վանքերի վանահայրերին, զանազան «Կայծակ» ու «Որոտ» վարդապետների. սկսած ամենաբարձր հոգեւորականից մինչեւ ժամկար Հասոն բոլորն էլ հայդուկ-ֆիդայական ոգով տոգորուեցին, որովհետեւ հայ մտաւորականութիւնը այդ էր երգում, իսկ հայ հոգեւորականութիւնը պիտի կրկնէր իրեն ղեկավարող-առաջնորդող մտայնութեան երգը։

Տեսական տեսլներով սպառազինուած էր պայքարում հայ մտաւորականը. այդպէս էր 60-70ական թուերին, այդպէս էլ շարունակեց նա 80-90ականների. այդ երեւոյթ 1909-10 թուերին, երբ Ա.-Թօ-ն ճանապարհորդեց տաճկահայերի վիլայէթները և թուերով ցոյց տուեց, որ երկրի դրութեանը անծանօթ է ռուսահայ մտաւորականը. այդ ցոյց տուին Սահմանադրութեան 1918 թուի գօրահաւաքը, 1919-20 թուի կռիւները, որոնք չափազանց ցաւոտ են որ կարելի լինի կրկին վերլուծել։ Կարեւորն այն է որ դարձեալ շեշտւի թէ հայ իրականութեանը իրեն տէր համարող, ղեկավարող մտաւորականութիւնը, որ ժողովրդի 5%-ն էլ չէր կազմում, իրեն իրաւունք էր համարում ժողովրդի անունից խօսել ու քարոզել այն, ինչ ժողովրդին ե՛ւ անհասկանալի էր ե՛ւ նրա պահանջը չէր կազմում։

Դեռ 1871 թ. «Մեղու»-ի մէջ N. 7 Սարգիս վարդանեանը ժողովրդի ազատագրման, փրկութեան ճանապարհը համարում էր նրա տնտեսական ապահովութիւնը. «Ժողովրդի սառնասրտութիւնը դէպի գրագիտութիւնը, դէպի կրթութիւնը հետեւանք է չքաւո-

բութեան և այս չքաւորութեան պատճառները նրա տնտեսական կեանքի մէջ են և այս դրութիւնը վնաս է սպառնում ապագային, ուստի և գործը մասամբ տընտեսական կողմից պէտք է սկսել։» 1882 թ. Ա. Բալանթարը «Հայրենիքի ուսումնասիրութեան կարեւորութիւնը» յօդուածում *) յայտնում է որ համալսարանականները մեր երկրին անծանօթ են, ուստի և անուշադիր են. պէտք է ուսումնասիրել գիւղացուն, որը հասարակական և պատմական գործում միակ ուժեղ և անկեղծ ազգային տարրն է... Ուսումնասիրութիւնը մտցնում է մարդկանց մտածողութեան մէջ աւելի իրականութիւն, ռէալականութիւն, գործնականութիւն։ «Մեր երկիրը ուսումնասիրւած չէ» — ո՛րքան է ծամծմւել այս խօսքը, ու ո՛րքան քիչ է իրական արդիւնք տւել. ռէալ տեսակների հետեւող մտաւորականների թիւը քիչ էր և նրանք էլ ընդհանուր հոսանքի մէջ ձուլւեցին ու կլանւեցին։

Երկրին անծանօթ հայ մտաւորականը ստիպւած էր ընդունել, որ «Միակ պարզ աղբիւրը, որից կարող ենք հայ ժողովրդի վրայ տեղեկութիւններ քաղել, այդ, դառն է խոստովանել, օտարազգի գիտնականների աշխատութիւններն են։» *) Այո՛, ժամանակի հայ մտաւորականը Ելզդի բռնակալի գահն էր ուզում խորտակել, պարսից շահին թախտից վար առնել, ոուսաց ցարին կախաղան բարձրացնել, քրտերին աւտոնօմիա տալ, եկեղեցու կալւածները թուրքերին բաժանել, բայց չգիտեր թէ իր կողքին ապրող գիւղացին հիւծւում է հողազրկութիւնից, չէր ըմբռնում որ պրօլէտարանում է հայ գիւղը, չէր զբաղւում հայ մարդի տնտեսական-իրաւական դրութեան պարզաբանութեամբ։ Ինչո՞ւ, դրա պատասխանն էլ լսենք Տփխիսի մտաւորականութեան ուժեղ տարրի - ձախ հոսանքի

*) «Փորձ» 1882 Թ. N. 1, 18—20 եր.
**) «Փորձ» 1880 Թ. N. 1. 140—1 եր.

բերան «Մշակ»ից, այն էլ 1903 թւին, երբ բազմից պրել էին թէ մենք մեր երկիրը չենք ճանաչում, մեզ Եւրոպայով ապրող, մտածող համալսարանական պէտք չէ, հայ մտաւորականութիւնը գլխովին ձախութեան անբուժելի հիւանդութիւն ունի և ոչ մի արիւն առնել, ոչ մի յեղաշրջում, կոտորած, մահտարաժամ ոչինչ չի օգնի։ Այդ մտաւորականութիւնը այնուամենայնիւ ահա թէ ինչի՞ մէջ է տեսնում իր փրկութիւնը. «Միայն Եւրոպայից դառած հայը կարող է Եւրոպայի քաղաքակրթութեան թարգման հանդիսանալ հայ կեանքում։ ... Մեր նպատակն է եւրոպական քաղաքակրթուած ազգերին հասնել և նրանց հետ զուգընթացաբար շարունակել մեր գոյութիւնը։» *) Այդ նշանակում էր 1-2 դեսեատին հող ունեցող, արօրով գարի ցանող Բեսաւացին կամ Դարաչիչագցին պիտի դրակտօրով հող մշակող գերմանացու և արդիւնաբերական տեխնիկայով մարզւած անգլիացի բանւորի հետ մրցէր, ոտքը ոտքին գնար. դրա համար էլ հայ գիւղացու գլխին ցիլինտր դրին, վզին վօրօտնիկ, ձեռքերին էլ մանժէտ, որ նա Եւրոպացի դուրս գայ, և ստացւեց ծիծաղելի ու ցաւալի երեւոյթ, որովհետեւ երբ կովի վրայ թամբ են դնում, այլանդակ գործ են կատարում։

Բազուի կապիտալին խունկ ծխելը, փողաւոր աղչկայ հետ ամուսնանալը և շռայլ կեանք վարելը, ուսանողական նստարանից հայրենիք աղաղակելը, ապա հայերէն խօսելն իսկ ամօթ համարելը մեր 90-ական թւականի նոր սերնդի պատկերն էր։ Այս տիպի մտաւորականների համար հասարակական գործունէութիւնը պահանջ չէր, գիտակցական պահանջ, այլ մի դեսեատ ունենց համար, մի ռէկլամ շատերի համար, մինչեւ այն ժամանակ որ «չաղ» պաշտօն կ'գըտնւէր. այնուհետեւ հասարակական գործունէութիւնը

*) «Մշակ» 1903 Թ. N. 8.

բեռ կ'դառնար և ասպարէզը կ'մնար «պրիկաշչիկներին», վարժապետներին, անգործներին ևն.:

«Արձագանք»ը այս երեւոյթը նկատելով գրում էր. «Ամենադիւրին գրագիտութիւնը հրապարակախօսութիւնն է, հարկաւոր է ունենալ պատուած բերան և հայհոյել գիտենալ, որովհետեւ տեղից վեր ելնողը գրող-մրող է:» Հայ հրապարակախօսը հայ մտաւորականութեան համար գրում է. «Ով որ խաբեբայ, ինտրիգան, կուսարար է, նրանն է յաղթանակը հասարակական կեանքում:» *) Մամուլի առաջնորդները դարձել են «խանութի սպասաւորները, գրագրները, բախտախնդիրները և թերուսները. կօշկակարը քարոզիչ է, գրաշարը՝ գիտնական, բժիշկը՝ տեսուչ, փաստաբանը՝ ուսուցիչ:» **) «Մշակ»ն եւս իր հերթին նոյն ըողոքն է անում, աւելացնելով, թէ մեզանում հասարակական գործերը կառավարելու մի սիստեմ կայ՝ «եօլա տանել»: Եւ յիրաւի մեր գործերը սկզբից «եօլա» են տարել, որովհետեւ մարդ չի եղել, պատրաստի գիտակ անձինք չեն եղել, թէեւ մի ժամանակ հայ մտաւորականութեան գերարտադրութիւն կար:

80-ական, 90-ական թւերի հասարակական պայքարում էլ գերիշխող նոյն երկու հոսանքը կար, ինչ որ 60-70-ական թւերին: «Հիւսիսափայլ»ի գործը շարունակում էր «Մշակ»ը, «Մեղու»նը —«Նոր-Դար»ը, որին հակւած էր մի քիչ լիբերալիզմի ստւերով շղարշւած «Արձագանք»-ը: Արծրունին, որ մեղադրում էր այն հայ մտաւորականին, որը կուսակցական չէ, ինքը կազմակերպւած կուսակցութիւն չունէր, այլ իր հրապարակախօսական տաղանդի և անպայման մեծ եռանդի շնորհիւ ահագին թւով համակրողներ ունէր: Նա անխնայ էր և անդուսպ պայքարի մէջ: Նա ֆանա-

*) «Արձագանք« 1885 Թ.
**) » 1890 Թ.

տիզմի էր հասցնում իր պայքարը և նոյնը ներշնչում էր իրեն մօտ եկող, իրեն յարգող, իր թերթում թղթակցող սեմինարիստին, քաղաքային դպրոցասարեին, դործակատարին: Հասարակական պայքարը, բանակռիւը կոպտութեան, գռեհկութեան էր հասնում երկու հոսանքի կողմից էլ: «Մեղու Հայաստանի» թերթի 25-ամեակին Գ. Արծրունին ներկայացուցիչ չի ուղարկում և չի շնորհաւորում. «Արձագանք»ն էլ նոյնպէս է վարւում Արծրունու 25 ամեակին: Այդ—շրջանի հոսանքների պայքարը «թայֆայական» կերպարանք ունէր: Արծրունին աշխատում էր, թէեւ չէր յաջողում, իսկական կուսակցական պայքար մղել հասարակական խնդիրներում. հակառակորդները այդ ձեւի աշխատանքը համարում էին դաւաճանութիւն ազգի վերաբերմամբ: Նրանք դեռ այն մտայնութեան էին, թէ ազգը մի ամբողջութիւն է, վաճառականն ու գործակատարը, դրամատէրն ու բանւորը, կալւածատէրն ու դիւղացին պիտի ձեռք ձեռքի տւած աշխատեն: Նրանք դեռ այն համոզմունքին էին որ ճշմարտութիւն, արդարութիւն, անկեղծութիւն, ազգի շահ — համայնապարփակ գաղափարներ են և նրանց շուրջը շահագործողն ու շահագործւողը, տէրն ու ծառան պիտի միանան և պարտաւոր են միանալ: Նրանք չէին տեսնում, որ Այսրկովկասեան երկաթուղին իր շոգիի հետ դասակարգային կուի միկրոբները բերել ցրել էր մեր երկրում. նրանք դեռ չէին կարողանում ըմբռնել, որ կապիտալը արդէն նահապետական և հայրենի աշխարհի սիրուն հէքեաթների տեղ բերել է օրավարձի և յաւելեալ արժէքի նոր աւետարանը:

Կուսակցական պայքարը հայ մտայնութեան մէջ տեղ գտաւ 90-ական թւականներին, բայց ոչ գուտաբրիւն դասակարգային մտքով կազմակերպւած, այլ աւելի խմբական, թայֆայական: Արծրունին էր ամենից ուժեղ կուսակցութեան կազմակերպողը, բայց նա

դասակարգի վրայ չէր յենուում. նրա «Մշակական» հոսանքում տեղ էր գտնում ե՛ւ եպիսկոպոսը ե՛ւ քահանան ե՛ւ վաճառականը ե՛ւ գործակատարը ե՛ւ գիւղացին ե՛ւ կալւածատէրը ե՛ւ ուսուցիչը ե՛ւ չինովնիկը։ Այդ կուսակցութիւն չէր, այլ կօնգլօմէրատ, ուստի և 1905-6 թւի յեղափոխական շրջանում, երբ դասակարգերը հրապարակ եկան, այդ կօնգլօմէրատը փշուր փշուր եղաւ և իւրաքանչիւր դասակարգ իր տեղը գտաւ։

Ազատամիտ կոչւած «Մշակ»ի ծրագիրը ոչինչով չի տարբերւում Ս. Նազարեանի ծրագրից իր հիմնական գծերում։ Դարձեալ նոյն շաբլօն, անբովանդակ, կամ աւելի շուտ չափազանց լայն բովանդակութիւն ունեցող, անտեղի և հասարակական ծրագրային տեսակէտից տարտամ քարոզ-նշանաբանն ունի Արծրունին. «Դէպի լոյս, առաջադիմութիւն, լուսաւորութիւն, քաղաքակրթութիւն», ահա ֆէլիէտօնիստ Ասիացու, այն է Արծրունու հասարակական դաւանանքը 1892 թւին, որը նոյն յաջողութեամբ կրկնում էին գաղափարով Արծրունուն հակառակ «Նոր-Դար»ը և «Արձագանք»ը։

Ի հարկէ հայ եկեղեցին, որ դպրոց, կալւածք ունէր, Արծրունու ուշադրութեան լուրջ առարկան եղաւ, բայց աւելի Նազարեանի, քան Նալբանդեանի հետեւող, որ քարոզում էր եկեղեցու վերանորոգութիւնը։ Լսենք Արծրունուն. «Մշակը իր 19 տարւայ գործունէութեան ընթացքում, երբ խօսք է ընկնում մեր եկեղեցու մասին, չէր դադարում անընդհատ և համարձակ տոկունութեամբ կրկնելու — վերադառնանք մեր սկզբնական և մաքուր լուսաւորչական եկեղեցուն։» Արծրունու կարծիքով կրօնը էութիւնն է, եկեղեցին ձեւը. կրօնը աստւածային գաղափարն է, եկեղեցին այդ գաղափարը որոշ սիստեմի տակ դնող մարդկային օրէնսդրութեան վարչական հաստատութիւնը։ Ինչպէս մեր հին սերունդը կազմել է եկեղեցու վարչաձեւը,

կարգ ու սարքը, նոյնը 19-րդ դարու մարդը իրաւունք ունի փոխելու։ *) Արծրունին բողոքում է եկեղեցու կարգերի և հոգեւորականների դէմ. «Մեռցրած է այս քրիստոնէական ոգին, մեռցրած է աստւածային վարդապետութեան իմաստը, և նրանց տեղ, Քրիստոսի ապաստաւորների շնորհիւ, Քրիստոսի եկեղեցում թագաւորում են այժմ երկու բոլորովին ուրիշ սկզբունքներ՝ չոր ու ցամաք, անբովանդակ, անշունչ ձեւականութիւն և նիւթապէս ամենաստոր շահասիրութիւն։» **) Նրանից յետոյ «Մշակ»ը յոհասարակ բողոքում է էջմիածնի աստւածաբանների դէմ՝ «կղերականն» մակդիրը կպցնելով սրանց։ Ազատամիտ հոսանքը եկեղեցու բարեփոխութիւն է պահանջում և խստօրէն, բայց ոչ միշտ անաչառ, քննադատում է հոգեւորականութեան, այս ու այն առաջնորդին, յաջորդին, քահանային, մեղադրում է նրանց կաշառակերութեան, տգիտութեան, ընչասիրութեան, որովայնամոլութեան, բարոյական այլ եւ այլ ախտերի մէջ։

Պահպանողական ուղղութեան համար ազգի գոյութեան լաւագոյն ֆակտորը եկեղեցին է։ Սա էլ ընդունում է, որ եկեղեցին ունի թերութիւններ, որ գիւղերում անուս քահանաներ կան, հոգեւորականների մէջ իշխում է սիմոնականութիւն, կալւածները անխնամ են։ ***) Տարբերութիւնն այն է, որ այս հոսանքը եկեղեցու ծէսերի, ձեւի բարեփոխութիւն չի պահանջում, և ո՛վ այդ պահանջում է՝ նրան լութերամիտ է անւանում։ Պահպանողական հոսանքի մէջ կայ մի տարբերութիւն իր նախորդից. այդ այն է, որ մինչ 60-ական թւականներին կաթոլիկ հայերին հայ չէր համարում այդ հոսանքը, այժմ՝ 90-ական թւական-

*) «Մշակ» 1892 Թ. N. 9.
**) » 1892 Թ.
***) «Արձագանք» 1883 Թ. N. 5, 66-7 եր.

ներին՝ այլ դաւանութեան հայերին էլ հայ են համարում: Այսպիսով հայ գաղափարը լուսաւորչական գաղափարին ծածկում է. հայ լինելն է ազգի էութիւնը և ոչ լուսաւորչական լինելը. ազգ ֆակտօրի այժն աւելանում է, եկեղեցին տեղի է տալիս ազգին: Այս նըկատւում է և ծխական, թեմական դպրոցների կառավարութեան մէջ. մինչ Մակար կաթողիկոսի ժամանակ թեմական տեսուչները, թեմական դպրոցների տեսուչները հոգեւորականներ էին՝ վարդապետ, քահանայ, դպրոցներում կրօնական առարկաների թիւը շատ էր և շաբաթական 4-5 ժամ էր յատկացւում, Մկրտիչ Ա.-ի ժամանակ տեսուչները լինում են աշխարհականները և կրօնական առարկաների թիւը պակասում է, ժամերի քանակն էլ դառնում է շաբաթական երկու ժամ: Դարձեալ եկեղեցին մտաւորականութեան հոսանքին տեղի է տալիս կամայ թէ ակամայ:

Այս շրջանում մտաւորականութեան յենարանը «ազգ»ն է և ոչ եկեղեցին. նրա գործունէութեան, քննութեան առարկան ազգն է և սրան է ուզում ծառայեցնել ամեն ինչ:

Իսկ ի՞նչ էր այդ ծառայութիւնը մեր իրականութեան մէջ և ոչ դրսում՝ տաճկահայերի վերաբերմամբ: Շա՛տ խեղճ, շա՛տ համեստ, շա՛տ պարզ մի ազգասիրութիւն.— հայ թատրոն գնալը ազգասիրութիւն էր. հայ լրագիր կարդալը ազգասիրութիւն էր. երեխային հայ դպրոց ուղարկելը ազգասիրութիւն էր. հայերէն գիրք կարդալը ազգասիրութիւն էր: Այս անողը ոչ թէ իր ներքին պահանջի հետեւանքով էր անում, այլ իբր բարեգործութիւն — որ հայ թատրոնին, լրագրին, դպրոցին, գրողին օգնած լինի: Մեր խմբագրները, դերասանները, գրողները, ուսուցիչները դեռ «մեծապատիւ մուրացկաններ» էին որ այս ու այն Աբիսողոմ աղաներին պիտի գնային և մի քանի ռուբլի

ստակէին իրենց գոյութիւնը պաշտպանելու: Հայ հեղինակները 4-500 օրինակ գիրք հրատարակելով տարիների ընթացքում սպառում էին և մեծ դժւարութեամբ մի քանի ռուբլի ստանում. հայ մամուլը շաբաթական խնդրում էր բաժանորդագինը վճարել և ձրի թերթ չկարդալ. հայ դերասանը ստիպւած էր լինում տոմսակները անձամբ սրա նրա տանել և խնդրել որ շնորհ անեն թատրոն գնալ: Հայ հասարակական կեանքի խեղճութեան ցայտուն օրինակը հայ ուսուցչի յոբելեանն է կամ հայ գրողի. երբ մի կողմից մուրացկանութիւնը սարսափելի չափեր էր ընդունում, միւս կողմից յոբելեարի պատիւն էր ոտնահարում 1-3 ռուբլի դումարներ ժողովելով, չափազանցութիւնների հասցրած թմբկահարութեամբ և առաքինութիւնների ծով ներկայացնելով այն յոբելեարին, որ մի քիչ առաջ մի համեստ ուսուցիչ կամ գրող է եղել: Այդ յոբելեաններին վերջ ի վերջոյ ոլորուն ճառերն էին լինում վարձատրութիւնը յոբելեարի ու որ եւ է այդում, դանդիճում կազմւած ընթրիքը՝ այդ տրապի-կոմեդիայի էժանագին ֆէէրիա-ֆարս վերջաբանը:

Հայ մտաւորականութիւնը 80-90 ական թւականներին իր առաջ չունէր դեռ հասարակութիւն, այլ ունէր ազգ, երկու երեսով, մէկը տաճկահայ, որին չէր ճանաչում, բայց ուզում էր կրակից հանել ու միշտ իրեն էր այրում, և միւս կողմից ռուսահայ՝ որին նոյնպէս չէր ճանաչում և որի դէմ փորձեր էր կատարում: Նրա պայքարի ամենաղրական կողմը հոգեւորականութեան դէմ մղածն էր, ուր նա յաղթանակներ էր տանում, որովհետեւ դիմացինը անկազմակերպ էր և նոյնպէս իր նման «ազգ» գաղափարով տարւած:

90-ական թւականներին ռէակցիան էր իշխում տանձարձակ բիւրօկրատիզմի հետ. հայ դպրոցները, բարեգործական ընկերութիւնները փակւում, կրճատւում էին, հայ ուսուցչութիւնը իրաւազրկւում էր.

ճնշման տակ դրւած հայ մտաւորականութիւնը լուռ հանդիսատես էր. նա քաղաքական պայքարի համար կազմակերպւած չէր և իր դժգոհութիւնը սենեակում էր յայտնում, բոյնդքը զրպանում էր ցոյց տալիս: Նա ձձել էր ժամանակի ռուսական քաղքենի ոգին ու նրա համար հասարակական խնդիրը տգէտ քահանային ձեռնադրելու, երէցփոխի եկեղեցու դրամը ուտելու, հոգաբարձուի ուսուցչի ռոճիկը կտրելու հարցերն էին: Հայ հասարակական կեանքի ճնշումների նկատմամբ «օրինակելի» լռութիւն պահող հայ մտաւորականութիւնը եռանդով զբաղւում էր սերբիական շարժումներով, Տփխիսից Գլադստոնին, Դ'Իզրայէլիին խորհուրդներ տալով, Բիսմարկին և Վիլհելմ Բ.ին խելք սովորեցնելով, և չէին դադարում իրենց քաղաքագիտական-դիւանագիտական հանճարները փայլեցնել իրենց անամէջ դատողութիւններով հարուստ երկարապատում յօդւածներում: Ափսոս, որ եւրոպական դիպլօմատիան անտես էր առնում հայ ցիւրիխդրաւորի այդ «գոհար» խորհուրդները, որովհետեւ հայերին սեւամորթ էին համարում որոնց կարելի է շահագործել, բայց որոնց մարդու տեղ դնելը իրենց արժանապատւութեանը արատ կ'բերէր: Ինչ արժէք ունէր սակայն նրանց այդ անքաղաքավարի վերաբերմունքը. հայ մտաւորականը պէտք է Բօերի և Չօամենտօտի հարցը վճռէր, քանի որ հայ գիւղացու ցաւերը գիտէր և նրանց բժշկութեան միջոցը գտնում էր եւրոպական դիպլօմատներին խորհուրդներ տալու մէջ:

Մի այն 900-ական թւականներին հայ քաղքենի մտաւորականութիւնը սկսում է քաղաքականօրէն կազմակերպւել, սկզբում երերուն, սուերապատ, իսկ մի տասնամեակ յետոյ ամուր կազմակերպւած, որոշ շերտաւորութեամբ, դասակարգային երանգաւորումով. այդ հայ մտաւորականութեան երրորդ շրջանն է — կազմակերպւած, քաղաքական կուսակցութիւննե-

րի բաժանւած պայքարի և յաղթանակի շրջանը:

Գ.— Այդ շրջանում էլ դեռ հայ մտաւորականութիւնը կենտրոնացած է Տփխիսում. երկրորդ տասնամեակում Բաքուն եւս դառնում է որոշ գիրք գրաւող կենտրոն և մրցութեան է մտնում Տփխիսի հետ. իսկ ինացած հայութիւնը դեռ դարձեալ «գաւառ» է և այստեղի հայ մտաւորականութիւնը իր աչքը դարձնում է հայութեան համար կազմակերպւած «Նոր Սիոն»ի՝ Տփխիսի վրայ: Էջմիածինը մի կողմ է—ինում: Ինքը Էջմիածինն էլ կարեւոր հարցեր վճռելու դէպքում, ազգային-դպրոցական-կալւածական, իր պատգամաւոր-ներկայացուցիչ հոգեւորականին է ուղարկում Տփխիս այնտեղի Սիկար-իմաստուններից ցուցմունքներ ստանալու: Սիոնը Տփխիսն էր ու այդտեղից պէտք է «ելնէր օրէնքը»: Էջմիածինն էլ փաստօրէն ընդունում էր, որ թէեւ իրաւատէրը ինքն է, բայց իրապէս ղեկավարողը կարեւոր հարցերում Տփխիսն է:

Առաջին քաղաքական ազգային-եկեղեցական մեծ դէպքը այս շրջանում 1903 թ. Յունիսի 12-ի օրէնքով որոշւած հայ եկեղեցական կալւածքների յարքունիս գրաւելու խնդիրն էր, երբ հայ քաղաքականօրէն կազմակերպւած կուսակցութիւնները. Դաշնակցականները, մասամբ և Հնչակեաններն, այդ օրէնքի դէմ ցոյցեր կազմակերպեցին Կարս, Ալէքսանդրապօլ (այժմ Լենինական), Գանձակ, Երեւան, և հայ հոգեւորականներն էլ միացան այդ ցոյցերին: Ռուսահայը առաջին անգամ ազգովին ոուս միապետութեան դէմ ոտքի ելաւ: Հայ քաղաքական կուսակցութիւնների գործունէութիւնը տաճկահայերի մէջ էր կենտրոնացած, ռուսահայերը մի կողմ էին թողնւած. 90ական թւականների վերջերը ռուսահայերն եւս մտան այդ գործունէութեան շրջանակի մէջ, թէեւ երկրորդաբար:

Անշուշտ հայ մտաւորականութեան ըմբոստանալուն և իր ըմբոստացմանն էլ հայ ժողովրդին մասնա-

կից անելուն դրդողը ամենաեւին կրօնական ոգին չէր և ոչ էլ զուտ եկեղեցականը. նրա մէջ խօսողը ազգային ջիղն էր, որ այս դէպքում յանձինս եկեղեցու էր արտայայտւում: Ռուս նահանգապետի, ժանդարմի, ոստիկանի, անգամ Կովկասի կառավարչապետի դէմ ահաբեկման գործողութիւններ կատարող հայ ահաբեկիչը իր վիրաւորած ազգային զգացումի, պատուի կիչը իր վրէժն էր առնում. եկեղեցին - կրօնը նրա համար անարժէք դաղափարներ էին, և այդ նա չյապաղեց ցոյց տալու, երբ երկու տարի յետոյ սկսւեց ռուսական 1905 - 6 թւի առաջին յեղափոխութիւնը:

Կովկասում արդէն գոյութիւն ունէին երկու հայ քաղաքական կազմակերպութիւն, Հ. Յ. Դաշնակցութիւն և Հայ Ս. Դ.ներ Հնչակեաններին հետ, որոնք որոշ տեղերում, Բագու, Բաթում, 1902-ին ղեկավարում էին բանւորական գործադուլներ և իրենց քաղաքական գործունէութեան առաջին շրջանն էին տւել. երկրորդը 1903-ին էր. իսկ 1905 - 6 ին արդէն հրապարակ եկան իրենց ողջ ազատագինութեամբ և ապարէզի տէր դարձան:

1905 թ. Հոկտ. 17-ի հրովարտակից յետոյ որով Ռուսաստանը իբր թէ սահմանադրական երկիր էր դառնում, մշակական հոսանքը միացաւ ռուսական սահմանադիր-ռամկավարական կուսակցութեան (K.-D.) և այսպիսով կազմւեց մի երրորդ՝ բայց թոյլ, անկազմակերպ կուսակցութիւն եւս: Պահպանողականներն էլ աշխատեցին խմբւել, կուսակցութիւն կազմել «Հովիտ» - «Հովիւ» եկեղեցական-կրօնական թերթի շուրջը. սակայն ապարդիւն անցաւ այդ ձգտումը, սա մնաց մի քանի անհատների թերթ և առաւելապէս «տէրտէրական» օրգան, ինչպէս ասում էին ժամանակի կուսակցութիւնները. յամենայն դէպս սոքա քաղաքական կուսակցութիւն չկազմեցին: Ռուսահայ իրականութեան մէջ գերիշխողը Դաշնակցութիւնն էր, որն ունէր իր «շտաբը» Տփխիսում, իր գինւորները, իր կահանները, իր բանտը, դատարանը. մի խօսքով, մի պետութիւն պետութեան մէջ:

Սրա այսչափ ուժեղանալուն նպաստեց ռուս քաղաքականութեան դիւային ծրագրի արդիւնք հայ-թուրքական կոտորածը Անդրկովկասում 1905-6 թւերին, երբ ռուսահայը այլեւս ընդհանուր պետական ազատագրութեան հարցով չէր զբաղւում, այլ ստիպւած էր իր ազգային գոյութեան պահպանութեան հոգսով կլանւել: Դաշնակցութիւնը, որ գլխովին ազգային կուսակցութիւն էր, որքան և սոցիալիստական ծրագիր ունենար, հրապարակ իջաւ ազգային հարցով զբաղւելու: Տփխիսում նա ունէր կենտրոնական կոմիտէ, հրատարակում էր պրօպլամացիաներ այս ու այն ուղղութեամբ, և որովհետեւ հայ-թուրքական կոտրածներին ինքնապաշտպանութեան խմբեր կազմեց, այդ խմբերի մէջ մտան ամենաառաջադէմ մարդիկ, օգտւելով խառն ժամանակից, որոնց մէջ կային այնպիսիները, որոնք ազգային գործը իրենց դրպանին ծառայելու մէջ էին գտնում, մինչեւ այն աստիճան, որ դաշնակցութեան կենտրոնական կոմիտէն «Մշակ»ի 1905 թ. N. 236-ում յայտարարում էր, որ խաղաղ քաղաքացիների վրայ յարձակում գործողները դաշնակցականներ չեն. «Հրամայում ենք մեր գինւորներին խնդոյն և եթ ձերբակալել յանցաւորները և յանձնել կ. կոմիտէին:» Նոյն կոմիտէն յայտարարում էր, որ կան դրամ հաւաքող զանազան անձնաւորութիւններ. մինչեւ դաշնակցութեան կնիք ունեցող անդորրագրեր չներկայացնեն, այդպիսիներին դրամ չտալ: Նոյն կուսակցութեան գաւառական զանազան մարմիններ ուղածներին պէս կարգադրութիւններ էին անում, խառնւում էին ամուսնալուծական, քահանայի ձեռնադրութեան, կալւածական խնդիրներում: Էջմիածնում էլ ուղղը այդ հոսանքն էր մինչ այն աստիճան,

որ 1906 թ-ին էջմիածնի ծրագրով դպրոցական հա-
մագումարը դարձրին կենտրոնական ռուսահայ համա-
գումար: Կաթողիկոսը առաջին հերթին տալիս է թե-
մական առաջնորդների, փոխանորդների, գործակալ-
ների, վարչական հաստատութեան անդամների ըն-
տրութեան իրաւունքը, ապա թէ ռուսահայ համագու-
մարի կոնդակն է հրատարակում:

Մինչ այդ հայ մտաւորականութիւնը մամուլում պարզ կերպով այն միտքն էր արտայայտում, որ Մ. Աթոռ, եկեղեցի իրեն պէտք չեն. նրան հարկաւոր էր աւտօնօմ Երեւանեան նահանգը ֆէդէրացիայի կապով Ռուսաստանի հետ կապուած: Վրացիները Կովկասի աւտօնօմիան էին պահանջում, իսկ թուրքերը դրան հակառակ էին: Հայ մտաւորականութեան վերաբերմունքը խիստ փոխւել էր դէպի հայ եկեղեցին, նրա դպրոցը. վերջինիս համար գրում էր. «Կրօնաւորների ճանկերից պէտք է խլել դպրոցները և հին մամոռած սեղանի տեղ կանգնեցնել նոր սեղան՝ նոր աստւած պաշտելու:» Թեմական դպրոցների աշակերտները, որոնք կուսակցական կազմակերպութիւն էին ստացել, գործադուլներ յայտարարեցին, ուր աշակերտները պահանջում էին կրօնական առարկաների կրճատում և դրա տեղ բնագիտական, տնտեսագիտական առարկաներ աւանդելը: 1906 թ-ին հայ մտաւորականը յայտարարում էր, որ հայ ժողովուրդը քաղաքական հանգամանքներից ստիպւած է եղել եկեղեցուն յանձնել դպրոցը, կալւածքը. այժմ այդ հանգամանքները չկան, հետեւապէս պիտի դարձել բոլորը և ժողովրդին յանձնել: Ս. Դ. երի «Կայծ», «Կեանք» թերթերը պընդում էին, որ եկեղեցին պետութիւնից պիտի բաժանել, հոգեւորականութեանը պիտի դուրս մղել բոլոր հասարակական, կրթական հաստատութիւններից: «Կրօնը մասնաւոր, խղճի գործ է:» Հոգեւորականը մտաւոր ու բարոյական չարիք է. նա դասակարգային

տիրապետութեան սիւնն է եղել միշտ, քաղաքական բռնակալ ռէժիմի պաշտպանը: Անդամ հայ կա-դէտը այդ կերպ էր որակում հայ հոգեւորականութեան, կաթողիկոսին, որոնց գովքը արել էր շատ մե՛ծ ոգեւորութեամբ, մանաւանդ Խրիմեանի ընտրութեան ժամանակ: «Վանքերի դարաւոր փոշու ու աւանդական նախապաշարումների մէջ մնաց ու կրթւած անուսումն, հաղիւ միայն տեղեակ հայերէն լեզուին և այն էլ միայն դրաբարին, սահմանափակ, յետադէմ-ու խաւարամիտ մեր վերջին Ս. Կաթողիկոսները բաղդի չար բերմունքով կանգնած էին լուսաւորութեան գլուխ:» *) Կուսակրօնութիւնը անբարոյական երեւոյթ է և միայն անբարոյականութեան տարածման է նպաստում. «Կուսաստանները և վանքերը անառակութեան վայրեր են...»: — Ահա ի՛նչպէս էր այժմ գնահատում հայ հոգեւորականութեան հայ մտաւորականութիւնը, որի մի մասն էր ինքը, որի մօտ էր անցկացրել իր գործունէութեան մեծ մասը:

Այս գաղափարով տոգորւող մտաւորականութիւնը էջմիածնի կենտրոնական ժողովում ահա ի՛նչ պահանջներ էր առաջադրում Հ. Յ. Դաշնակցութեան բերնով. 1. կրօնը պարտադիր չէ. 2. եկեղեցական ու վանքական կալւածները համայնացնել, եկամուտները ազգային կուլտուրական հաստատութիւններին յատկացնել. 3. հոգեւորականութեանը թողնել միայն ծիսական, արարողական և դաւանական հարցերը. 4. կուլտուրական և ներքին գործերի վերաբերմամբ ընտրել օբէնադրական մարմին քառանդամ սիստեմով:**) Ժողովի ձախակողմեան թեւի անդամները յայտարարում էին թէ «Եկել ենք էջմիածնի կաթողիկոսի, վարդապետների, հոգեւոր կրօնական ամեն բանի վրայ խաչ

*) «Մշակ» 1906 Թ. N. 79.
**) » 1906 Թ. N. 186.

դնելու»*) Սրանք էին որ առաջարկում էին հայ եկեղեցու կալւածները պետականացնել և այն հողերը ուր թուրքեր են ապրում կամ քրդեր, տալ նրանց անվերադարձ։ Կային մի երկու վեղարաւոր եւս որոնք ազատամիտի քղամիդ էին հագել ու երբեմն աւելի էին յոխորտում, քան ենթադրելի էր։ Երբ մէկը միամտութեա՞մբ թէ չարամտութեամբ ժողովում հարց է դնում թէ եթէ կաթողիկոսը չլսէ ժողովին և վճիռները չստորագրէ, կաթողիկոսի դիւանապետ Տաճատ վ.-ը մեծ ապլոմբով յայտարարում էր թէ կ'ստիպեն որ ստորագրէ. իսկ երբ ռուս պետութեան ոյժին վրայ են մատնանշել, նոյն ծապլվարեան հերոսը յաղթականօրէն ասել է. «Աբարանը՝ մեր եաեան է։» Այս հայ մըտայնութեան խոշոր հոսանքի — դաշնակցութեան ոգեղիսատական գործելակերպի համար բնորոշ էր։ Սակայն յոխորտացողները ամենայն հանդստութեամբ և հնազանդութեամբ էջմիածնի գաւառապետի պահանջով հեռացան, իրենք էլ շնորհակալ լինելով, որ այդ ճղճիմ ժողովից կարողացան մի կերպ ազատուել։ Այստեղ այն կարեւոր կէտը կայ ուշադրութեան առնելու, որ հայ մտաւորականութեան մէջ որոշ վերաբերմունք էր ստեղծւել դէպի եկեղեցին ու կրօնը, հոգեւորականութիւնը, որը քաղաքական այլ պայմաններում յետագայում իրականացաւ։

Կեանքը ստիպում էր հայ մտաւորականին իրեն հետեւել և ոչ թէ հայ մտաւորականն էր ղեկավարում կեանքին. ռազմական էր ժամանակի ոգին. ռազմական էր տրամադրւած և հայ մտաւորականը։ Հայ-թուրքական ընդհարումները վեր էին ածւել կանոնաւոր ազգամիջեան կռիւների, և թէեւ Կովկասին խաղաղութիւն բերող նոր փոխարքայ Կոմս Վորոնցով-Դաշկովը իր մօտ հրաւիրել էր հայ և թուրք ազգերի

*) «Ժողիս.» 1906 Թ. N. 33. եր. 525.

ներկայացուցիչներին խորհրդակցութեան, սակայն այստեղ փոխադարձ մեղադրանքները միայն սաստկացան. հայերը թուրքերին նախայարձակ լինելու մէջ էին մեղադրում և պահանջում էին դադարեցնել. թուրքերը հայերին, աւելի շուտ Դաշնակցութեան մեղադրում էին, թէ թուրքերին արհամարհում են, Տաճկաստանը ուզում են կործանել, անդլիացուն են դիմում ընդդէմ ռուս պետութեան, քրիստոնեայ ռուս կառավարութիւնն էլ քրիստոնեայ հային է պաշտպանում, թէեւ սենատոր Կուզմինսկու Բազէի դէպքերի քննութիւնը այլ բան ցոյց տւեց։

Հայ եկեղեցին, կաթողիկոս թէ առաջնորդ, խաղաղութիւն, եղբայրութիւն էր քարոզում, եկեղեցական թափօրներ էր կազմակերպում և թուրք հոգեւորականութեան հետ խաղաղութեան նշան համբոյր էր տալիս, սակայն այդ ամենը անուժ, անզօր էր. երկրի տէրը հայ մտաւորականն էր, իսկ նա ահա ի՛նչ էր քարոզում ժողովրդին.

Վաւ կարմիր հագիր, դու հայ ժողովուրդ,
Եւ սուրդ շարժէ, քեզ ճանապարհ բաց,
Այս աշխարհի մէջ սուրն է միշտ իշխող,
Կտրիր ու անցի՛ր, անյաղթ, հզօր կաց։ *)

Ալեկոծւում էր ողջ Ռուսաստանը, նրա հետ և հայ ժողովուրդը. ազատութեան տենչով էր տարւած ռուս քաղաքացին, նրա հետ և հայ քաղաքացին, և նրա այդ ձգտումների թարգմանն էր Հ. Յ. Դաշնակցութիւնը, որի համար նրա գլխաւորներից մէկը, Յովհ. Քաջազնունին իր «Հ. Յ. Դաշնակցութիւնը այլ եւս անելիք չունի» գրքում հետեւեալ կերպով է բնորոշում նրա գործունէութիւնը. «Նա (Դաշնակցութիւնը) կարող էր օգտագործել եղած տրամադրութիւնը, ընթացք տալ կուտակված ցանկութիւններին, յոյսերին

*) «Մուրճ» 1906 Թ. N. 1. եր. 144. Ա.. Իսահակեանի.

և յոյզերին, կազմակերպել պայքարի ոյժը — այդքան կարողութիւն և եղինակութիւն ունէր: Բայց հակառակիլ հոսանքին և իր սեփական գիծը տանել, անընդունակ էր, թէկուզ այն միակ պատճառով, որ Դաշնակցութիւնը ինքը մասսայ է, բնազդներով ուժեղ բայց գիտակցութեամբ թոյլ:» Յիշելով 1903, 1905-6 թւերի շարժումները իբր լուսաբանութիւն իր ասածներին, նա աւելացնում է. «Գերագնահատում էինք հայ կարողութեան չափը, քաղաքական ու ռազմական արժէքը, ոուսներին մատուցած մեր օժանդակութիւնը: Ու գերագնահատելով մեր շատ համեստ արժանիքները բնականօրէն չափազանցնում էինք նաեւ մեր յոյսերը ու սպասելիքները:» (13-15 եր.).

Այս բնորոշման պէտք է աւելացնել սակայն մի բան, որ դաշնակցութեան մտաւորական ոյժերը իրենք իրենց ցանկութիւնները, ըմբռնումները, որ աւելի անհատական, երբեմն քաղքենի, տեսական բնաւորութիւն ունէին, վերագրում էին ժողովրդին և ժողովրդի անունից յայտարարում իբրեւ նրա պահանջը, որ ամենեւին չէր համապատասխանում իրականութեան:

Յեղափոխական շրջանում եկեղեցու դրաւիները եկեղեցուց խլելու ցանկութիւն ունեցող, եկեղեցում ամեն ինչ ծաղրի վերածող, քահանայի հասցէին «լիրբ արտայայտութիւններ անող, եկեղեցական արարողութիւնները արհամարհող, եկեղեցում պսակի, կնունքի, թաղման ժամանակ, ինչպէս և զերեզմանոցում զգեստի արարքներ թոյլ տուող» *) այդ երիտասարդ յեղափոխականները բնականաբար ռէակցիայի ժամանակ լռեցին, որովհետեւ իրենց մեծերն էլ սկսել էին առաւօտեան արշալոյսի, զարթօնքի ոգեւորուած երգերու փոխարէն 1909, 1910 թւերին երեկոյեան, վերջալոյսի, նիրհի, անուշ նինջի մեղեդին նւագել և մոռանալ ողջ ալեկո-

*) «Մշակ» 1903 Թ. N. 80.

ծումը և Աբարանի քաջերով միապետութիւնը տապալելու յոխորտանքը: Սակայն եթէ ռուս բիւրոկրատիայի առաջ հեշտութեամբ տեղի էր տալիս այդ հոսանքը, նոյնը չէր անում նա հայ եկեղեցու և կաթողիկոսի վերաբերմամբ. չէ՞ որ իր առաջ աւելի թոյլն էր կանգնած: Նա այս բնագաւառում դիրքեր էր գրաւել. ազգի գաղափարը դօմինները յայտարարեց. եկեղեցին միայն միջոց ճանաչեց այդ գաղափարի համար:

1912-13 թւի տառերի գիւտի և տպագրութեան համազգային մեծ յոբելեանին, մինչ էջմիածինը ձեռնարկեց դպրոցական ֆոնդ կազմելու, հայ մտաւորականութեան խոշոր հոսանքը գրական ֆոնդի կողմնակից եղաւ և չցանկացաւ դպրոցական ֆոնդին նպաստել, որովհետեւ, ինչպէս նրանք էին ասում, այդպիսով կ'նպաստեն եկեղեցու ուժեղանալուն, դիրքն ամրապնդելուն, իսկ դրան նրան հակառակ էին:

Մինչ առաջներում կաթողիկոսական ընտրութիւններին կենդանի մասնակցութիւն էր ցոյց տալիս հայ մտաւորականութիւնը, պայքարում էր ոգի ի բուին, վերջին կաթողիկոսի ընտրութեան ժամանակ Դաշնակցութիւնը որոշեց ի պաշտօնէ չմասնակցել, թէեւ անհատօրէն մասնակցելու իրաւունք տւեց իր հետեւողներին և մասնակցեց. սակայն ուշագրաւն է, որ այդ գերագնացօրէն ազգային կուսակցութիւնն իսկ Ի. դարու սկզբում եկեղեցուն այլեւս ազգային գործօն իսկ չի ուզում ճանաչել: Հայ մտաւորականութեան միւս թեւը, Ս. Դ.ական հոսանքը, արդէն 1910 թւին յայտարարում էր թէ «Արդի սոցիալ-քաղաքական պայմաններում հասարակական աշխարհահայեացքները դրել են որոշ սահմանում, որից այն կողմը արդէն հոգեւորականութիւնը չի կարող անցնել. նա սկսում է կորցնել իր նշանակութիւնը հայ ժողովրդի մտաւոր բարոյական կեանքում և իրերի տրամաբանական զարգացմամբ պիտի հեռու մնայ իր ազդեցիկ գործու-

նէութեան հետ միասին մեր ասպարէզից։» *) Ճշմարիտ է, եկեղեցին տասը տարի յետոյ հեռացաւ այդ ասպարէզից, սակայն այդ տասը տարուայ ընթացքում էլ նա թելադրանքով էր գործ կատարում։ Թիֆլիսում արդէն 1905 թուին միանգամ կազմուել էր Ազգային-Բիւրօ հայ-թրքական ընդհարումների առթիւ, նոյնը վերակազմուեց 1912 թուին, այս անգամ կոմս Վ.օրօնցով-Դաշկովի գիտութեամբ, երբ կաթողիկոսը տաճկահայոց դատը կրկին հրապարակ հանեց Բալկանեան պատերազմից յետոյ։ Յայտնի է, որ այդ դատի պաշտօնական դեկավարութիւնը կաթողիկոսինն էր, իսկ իսկական տօն տուողը Տփխիսի մտաւորականութիւնն էր, ուր նախօրօք քննւում էին հարցերը, հաւանութիւն գտնում և յայտնւում Էջմիածնին։

Նոյն Ազգային Բիւրօն շարունակեց իր գործունէութիւնը նաեւ 1914 թւի մեծ պատերազմից սկսած և առաջ բերեց կամաւորութիւնը (ի հարկէ Դաշնակցութեան աջակցութեամբ և ռուս բիւրօկրատիայի թելադրանքով), հայոց ընդհանրական կաթողիկոսին էլ թելադրեց որ այդ կամաւորութեան իր օրհնութիւնը տայ և նա տուեց։ Այդ շրջանից սկսած հասարակական ազգային հարցերը որոշողը, տօն տուողը Ազգային Բիւրօն եղաւ, մինչեւ որ 1917 թւին յեղափոխութեան հետեւանքով Տփխիսում կազմուեց Ազգային Խորհուրդը, ուր հայ հոգեւորականութիւնը իր ներկայացուցիչն ունեցաւ, այն էլ խորհրդակցական ձայնով։ Այդ մարմինը իր մի կոչում այսպէս էր բնորոշում իր դերը հայ կեանքում. «Ազգային խորհուրդը առանձնում է ազգային բոլոր գործերի գերագոյն դեկավարութիւնը որպէս գործադիր մարմին։» **) Հայ մտաւորականութիւնը քաղաքական բերմունքների շնորհիւ ինքն իրեն տէր դարձաւ այդ ժամանակից ազգի գործերին և ամենայն

*) «Աբօր» 1910 Թ. N. 8_9. 148 եր.
**) «Համբաւարեր» 1917 Թ. N. 36. 702 եր.

Հայոց կաթողիկոսը, որ տէրն էր ու տնօրէնն մինչեւ այդ, լռելեայն մի կողմ մնաց. կարծես նա այլ եւս չկար. իր դերը կատարեց և առանց իսկ շնորհակալութիւն ըստանալու մտաւ վարագոյրի ետեւը։ Կազմուեց Հայաստանի Հանրապետութիւն և եկեղեցին այս անգամ ե՛ւ փաստօրէն ե՛ւ իրաւաբանօրէն իր ազգային-հասարակական նախկին դիրքերից իջաւ, իրաւունքներից զրկուեց, նրա հետ միասին նաեւ հետզհետէ իր նիւթական ստացուածքից, ու թուլացաւ, նսեմացաւ, քայքայման շրջանի մէջ մտաւ, ոմանց համար յուսահատական դրութեամբ, ոմանց էլ իբր ընդ միշտ իր երգը երգելով վերջացնելով։ Սակայն մի բան միշտ մոռացութեան էր տալիս մտաւորականութիւնը, թէ ինքը չէ եկեղեցին պահողը ու քանդողը, այլ ժողովուրդը. իսկ այդ ժողովուրդը դեռ աւանդութեամբ, բնազդօրէն, իր հոգեկան կառուցւածքով եկեղեցու կարիքն ունէր ու նրան պահում էր ու կ'պահէ, որովհետեւ մտաւորականի ասածը ժողովրդին անհասկանալի էր. մտաւորականն ու ժողովուրդը ինչպէս մի քանի այլ խնդիրներում, այստեղ եւս իրար հակառակ էին և չէին ըմբռնում միմիանց, չէին հասկանում։

Հայ եկեղեցու առաջ այսպիսով կեանքը դրեց գործունէութեան մի այլ ասպարէզ, նրանից առնելով զպրոցական-ազգային խոշոր հարցերը։ Մնաց գաղութահայութիւնը, որը առաւար թիւ է կազմում և ուր հայ եկեղեցին ունի անելիքներ և անում է հնարաւորը։ Ռուսահայ միջավայրում նրա առաջ առաջին հերթին դրւում է ժողովրդի դաստիարակութեան, կրօնաբարոյական-կրթութեան հարցը։ Այս ծանր աշխատանքը պիտի կատարէ հայ հոգեւորականութիւնը, որը ԺԹ-րդ դարու երկրորդ կիսից սկսած այդ խնդրով երկրորդաբար էր զբաղւել, իրեն աւելի ազգային-զպրոցական հարցերին նւիրելով։ Հոգեւորականութեան վիճակի համառօտ պարզաբանութիւնը ցոյց կ'տայ, թէ ո՛րքան նա ի վիճակի է իր ներկայ դրութեամբ այդ նոր հարցը յաջողութեամբ լուծելու։

V.

ՌՈՒՍԱՀԱՅ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Հայաստանի մի մասի ռուսաց տիրապետութեան տակ անցնելուց յետոյ ռուս բիւրօկրատիան խմբագրեց հայ եկեղեցու վարչութեան համար մի կանոնադրութիւն, 1836 թւի «Պօլօժէնիա» անունով յայտնի, որը խճողեց տարիների ընթացքում կառավարութիւնը և որի դէմ հայ կաթողիկոսները անընդհատ են բողոքել, մինչեւ որ 1917 թւի յեղափոխութեամբ ռուս բիւրօկրատիայի ու միապետութեան հետ այդ օտարամուտ կանոնադրութիւնն էլ դադարեց գոյութիւն ունենալուց:

Ռուս բիւրօկրատիան ընդհանուր առմամբ աշխատել է հայ հոգեւորականութեան եւս ռուս հոգեւորականութեան նման իրեն հլու հպատակ, կամակատար չինովնիկութեան վերածել, և այդ նրան մեծ մասամբ չի յաջողւել, որովհետեւ հայ ժողովուրդը, յատկապէս ազգայնական գիտակցութեամբ տոգորուած մտաւորականութիւնը մի տեսակ պահակ էր կանգնած հայ եկեղեցու ազգային բնոյթը պահելու և հայ հոգեւորականութիւնը հայ մտաւորականութեան հետ էր, սրան էր լսում և երկուսով ռուսացման քաղաքականութեանը դիմադրում էին կարողացածին չափ: Այդ էր պատճառը, որ ռուս կառավարութիւնը ծուռ աչքով էր նայում հայ եկեղեցու հոգեւորականութեան և քչերը չեն եղել որ ռուս ոստիկանի, ժանդարմի, վարչական բարձր պաշտօնեաների հալածանքներին են ենթարկւել, աքսորւել, պաշտօնազուրկ եղել: Այնուամենայնիւ «Պօլօժէնիա»ն իր որոշ ազդեցութիւնն ունեցաւ հայ հոգեւորականութեան վրայ: Սինոդը, կոնսիստորիանները, առաջնորդները, փոխանորդները, վանահայրերը, գործակալները, երէցփոխները որոշ հսկողութեան տակ էին. Սինոդի պետական դատախազը պաշտօնական

հսկողն էր հայ եկեղեցու գործառնութեան վրայ: Բիւրօկրատիան աշխատում էր և իր շքանշաններով, պարգեւներով գրաւել հայ հոգեւորականութեան և պէտք է ասել, որ եղել են շքանշանի սիրահարներ, որոնք եկեղեցու բիւրօկրատացման են նպաստել՝ իրենց կուրծքը զունաւոր ժապաւէններով զարդարել ցանկանալու պատճառով:

Պարսկական-տաճկական կառավարութիւնները հայ կաթողիկոսների, եպիսկոպոսների, եկեղեցու վարչութեան նկատմամբ որոշած հաստատուն իրաւական կանոնադրութիւն չունէին, քանի որ պետութիւնն ինքը զուրկ էր նման կարգերից: Թէօդալական կարգերով ապրող այդ երկրներում իշխանաւորի կամքը և քմահաճոյքը իրաւունքի աղբիւրն էր: Եւ արեւելեան իրաձեւ այդ դէմօկրատիայում քիչ դէպքեր չեն եղել որ հայ եպիսկոպոսները, վարդապետները, քահանաները, անգամ կաթողիկոսները բանտ են նստել, ֆաւլախայի ենթարկւել, շղթայակապ խանի կամ փաշայի բանակի հետ պտտեցւել, իբրեւ տրօֆէա-յաղթանակի արտայայտութիւն, մինչեւ որ բարեկամները դրամ են հաւաքել և փրկել ընչաքաղց իշխանաւորի կամայականութեան պատճառով տանջւող ծերունի հոգեւորականին:

Ռուս բիւրօկրատիան հաշւի առնելով Հայոց ընդհանուր կաթողիկոսի արեւելեան այդ պետութիւնների կողմից կրօնապետ ճանաչելու հետ և ազգապետ ճանաչելու հանդամանքը, ընդհանրական կաթողիկոսին որոշ չափով և ազգապետ էր ընդունում, ազգային հարցերի վճռման դէպքում նրան իրաւասէր ճանաչելով:

Ռուսաց տիրապետութեան տակ անցնելով, հայ եկեղեցին որոշ կազմակերպութիւն ստացաւ, ձեււած ռուս միապետական և ռուս եկեղեցու կարգերի նմանութեամբ: Կազմեցին թեմեր, հաստատուեցին փոխանորդութիւններ, գործակալութիւններ, կոնսիստորիա-

ներ, հիմնեց Էջմիածնում Սինոդ, և հայ կաթողիկոսը ու հոգեւորականութիւնը որոշ նօրմաների, որոշ իրաւակարգի տակ դրեցին։ Այսպիսով ԺԸ-րդ դարու ֆէօդալական վարչաձեւ ու կազմակերպութիւն ունեցող հայ եկեղեցին ԺԹ-րդ դարում ստացաւ միապետական-բիւրօկրատիկ վարչութիւն, որին նպաստողը ռուս միապետութիւնն էր իր իրաւակարգով, իր բնոյթով։

Իրաւական դրութեան հետ փոխուեց նաեւ նրա տնտեսական վիճակը, ինչպէս ժողովրդի, այնպէս և եկեղեցու։ Մինչ առաջներում փակ տնտեսութիւնն էր իշխում երկրում, հայ եկեղեցին խոշոր, հաստատուն կալւածներ չունէր, ռուս տիրապետութեան տակ տընտեսութիւնը դառնում է հետզհետէ կապիտալիստական-արդիւնաբերական և հայ եկեղեցին տնտեսապէս ուժեղանում է, ձեռք բերելով տակաւ խոշոր հողային կալւածներ։ Տնտեսապէս ուժեղացող ռուսահայը հայ եկեղեցուն եւս հարստացրեց։ Էջմիածնի և այլ վանքերի վանականներն իրենց հերթին պետութեան դէմ դաւեր վարելով կալւածքներ ձեռք բերին (Հաղարծնի, Մարցի, Խաթուն-Գանձասարի, Գարեքի, Տաթեւի)։ Հայ ունեւորներն եւս իրենց հերթին եկեղեցիներին, վանքերին յատկացրին գումարներ, շէնքեր, տուն, Ջրաղաց, խանութ, և ԺԹ. դարու վերջին (1902 թ.) ռուսահայ եկեղեցիները, վանքերը ունէին 175,000 դեսեատին հող տարեկան 110,000 ո. եկամուտով, Մ. Աթոռը ունէր մօտ 85,000 ո. եկամուտ, միւս անշարժ կալւածքներից ստացւում էր 50,301 ո. եկամուտ, ընդամէնը 310,000 ո. կլոր թւով։

Աճել էր հայ ժողովուրդը, նրա հետ և բազմացել էին հայ եկեղեցիները և եկեղեցականների թիւը, այնպէս որ դարու սկզբում եթէ ռուսահայ հաշւում էր մօտ 300,000, իսկ 1897 թւի աշխարհագրով արդէն կար 1,218,463 հայ։ Սա ի հարկէ բնական աճեցման

հետեւանք չէր միայն, այլ եւ ռուս-պարսկական-տաճկական պատերազմների հետեւանքով, ինչպէս նաեւ 1894-6 թւերի տաճկահայ կոտորածների պատճառով առաջ եկած գաղթականութեան։

Ռուսահայերը ըստ եկեղեցական վարչական բաժանման ունէին վեց թեմ։ 1902 թւին 1327 եկեղեցի կար, 79 վանք. 7 եպիսկոպոս, 34 վարդապետ, 1547 քահանայ, 360 եկեղեցական այլ սպասաւորներ։ Մի քահանային ընկնում էր 731 ծխական։ 1327 եկեղեցիները ունէին 1,525,513 ո. դրամագլուխ. տարեկան եկամուտ 478,472 ո., ելք 393,636 ռուբլի. 79 վանքերն ունէին 5746 ո. 61 կ. դրամագլուխ, 43,762 ո. եկամուտ և 45,248 ո. ելք։ Մ. Աթոռը դարու վերջին ունէր մինչեւ 150,000 ո. եկամուտ և 135,000 ո. ելք։

Եկեղեցին առհասարակ չկարողացաւ տնտեսապէս զարգանալ, տնտեսական մրցման դիմանալ և հետզհետէ թուլացաւ։ Տնտեսական մրցումը Այսրկովկասում կապիտալիզմի ներմուծումով սաստկացաւ և ինչպէս վրացի, թուրք կալւածատէրերը, ազնւականները դրամագլուխ չունենալով չկարողացան մրցման դիմանալ և իրենց հողերը սկսեցին գրաւ դնել, վաճառել, հոգեւոր վարչութիւնն եւս ի վիճակի չեղաւ արդիւնաբերօրէն շահագործել իր կալւածները և ստիպւած եղաւ կապալով տալու սիստեմին դիմել, քանի որ վաճառելու իրաւունք չունէր։ Հայ հոգեւորականութիւնը կաթոլիկ հոգեւորականութեան նման տնտեսական շահաւէտ ձեւով ձեռնարկներ չկարողացաւ սկսել, նա աւելի շուտ հայ մտաւորականութեան նման օտմանտիկ-սենտիմենտալ ազդասիրութեան ոգով էր համակւած քան ռէալ կեանքի տեսլների պարզաբանութեամբ։ Այդ հոգեւորականութիւնը աւանդութեան թողած հարուստներին դիմելու եղանակն էր դործադրում իր հիմնարկութիւնները բարեկարգելու համար, քան իր ունեցած խոշոր կալւածները ռացիօնալ շահագործման ենթարկելու, իսկ օր աւուր բարձրացող, պահանջներով հարստացող հասարակական հիմնար-

կութիւններով լցուղ հայ կեանքում եկեղեցին մուրացկանութեամբ ու նուէրներ ստանալով անկարող էր յառաջդիմել, և նրա հիմնարկութիւնները, մանաւանդ ժխական դպրոցները, քահանաների վարձատրութիւնը եօթա տանելու սիստեմի մէջ մինչեւ վերջն էլ։ Եկեղեցին հիմնարկութիւն է, ունի իր այլ և այլ բարեգործական - կրթական - կուլտուրական հաստատութիւնները և սրանց պաշտօնեաները. առանց դրամական ապահովութեան չէին կարող զարգանալ այդ հիմնարկութիւնները, որքան էլ նրանք կրօնական ու ազգային բնոյթ ունենային։ Հայ հոգեւորականութեան մէջ դեռ այն մտայնութիւնն էր իշխում թէ բարի կամքը, վեհ գաղափարը, ոգեւորութիւնը բաւական են մի հիմնարկութիւն պահելու, զարգացնելու. մոռանում էին, որ եթէ այդ երբ եւ է հնարաւոր է եղել քրիստոնէութեան առաջին դարերում, քահանայրող դարի կապիտալիզմի իշխանութեան շրջանում այլեւս նոյնը անկարելի էր գործադրել։ Այդ մտայնութեամբ և իր անգործնականութեամբ հայ հոգեւորականութիւնը եկեղեցու տնտեսական ապահովութեան հարցը չկարողացաւ վճռել, թէեւ էջմիածնի կալւածները շահագործելու համար խորհրդակցութիւններ շատ եղան ու ծրագրեր շատ կազմուեցին։

Եկեղեցիների, եկեղեցականների թիւն աւելանում էր, տնտեսական զարդացումը մնում էր նոյնը. սա էլ հայ եկեղեցու այսպէս ասած սակաւահողութիւնն էր որ ունէր հայ գիւղացին։ Ահա հայ եկեղեցականների և եկեղեցիների աճեցման մի տանտամեակի պատկերը իրրեւ նմուշ այդ դրութեան.

	1895 թ.	1904 թ.
1.— Եկեղեցիներ 6 թեմում	1,318	1,344
2.— վանքեր	38	42
3.— Սրբազնզրծ. պաշտօնեաներ	1,412	1,532
4.— Եկեղեց. սպասաւորներ	359	506
5.— Ծխականներ	1,012,716	1,222,821

Մ. Սիոոն էլ իր միաբանութեան թւով սկսեց նւազել։ 1893 թւին Մ. Սիոոն ունէր 113 միաբան, 30 տարի յետոյ կար միայն 30 - 31 միաբան - պակսեցին Կարսի, Կաղզւանի, Սուրմալուի, մասամբ Ն. Նախիջեւանի եկեղեցիները. 1904 թւին կենդանի եղած 42 վանքի փոխարէն այժմ 8 վանք կայ։

Ներկայումս հայ եկեղեցու ամենածանր հարցը նրա տնտեսական ապահովութեան խնդիրն է։ Իրրեւ հիմնարկութիւն, պաշտօնեաներ ունեցող, որը ձգտում է կեանքում կատարել դործ, լինի այդ կրօնա-բարոյական թէ կուլտուր-կրթական, նա պէտք է առաջին հերթին իր տնտեսական ապահովութիւնն ունենայ։ Եթէ նախնական քրիստոնէական շրջանում դեռ պընդել կարելի էր թէ հոգին է միայն կենդանարար, այժմ պէտք է եկեղեցու կենդանութեան զարգացման համար պնդել թէ նիւթն է, տնտեսութիւնն է կենդանութիւն տուողը. իսկ տնտեսականի կողմից հայ եկեղեցին շատ է թոյլ, ուստի և կ'կազմալուծւի, կ'քայքայւի, եթէ չ'ամրապնդւի տնտեսապէս։

Ռուսահայ հոգեւորականութիւնն էլ իրրեւ դործօն այժ թոյլ է և անկազմակերպ։ Նրա մասին հայ մամուլում շատ է գրւել ու խօսւել, որ հարկաւոր լինի կրկին յիշել այն։ Յայտնի է, որ քահանայական հարցը «հին ցաւ» անունն ստացաւ, այնքան գրւեց ու խօսւեց այդ մասին. յայտնի է, որ հայ թեմակալ առաջնորդների մէջ եղել են անպատրաստ, կաշառառու անձինք, որոնց մասին ոչ միայն օրաթերթերում, այլ եւ «Արարատ» ամսագրում է գրւել։ Հոգեւորականութեան վարկը ժողովրդի աչքում հետզհետէ նսեմանում էր և այդ խոստովանում էր նոյնիսկ կրօնական «Հովիւ» թերթը. գրում էր 1906-ին որ հոգեւորականների վարկն ընկնում է, պէտք է բարեփոխւել, որ մեր կրօնականութիւնը առհասարակ կանգնած չէ իրան վայել բարձրութեան վրայ, ու այդ պատճառով ոչ մի

յարգանք չի վայելում ժողովրդի կողմից: Էջմիածնի միաբաններից մէկը գրում էր նոյն թերթում*). «Եկեղեցին ընկնում է, կորցնում է ղեկավարելու դերը, ուրեմն և իւր արժէքը ժողովրդի աչքում:» —«Եկեղեցու կարգապահութեան անկման նիւթական բարիքը վայելում են հարուստ եկեղեցականները, նրանց ծառաները ու ազգականները, իսկ բարոյական թոյնը ճարակում է խեղճ ժողովրդին ու եկեղեցուն:» Հայ քահանան քահանայութեան համար գրում էր նոյն թերթում որ «քահանան գող, աւազակ, արբեցող, անբարոյական, անկրօն և անհաւատ է, կապալով ծուխ վերցնող:» — Էջմիածինը պարզեւ է տալիս քահանաներին, որովհետեւ մէկը 100 ռ. է տուել, միւսը վարդապետին հիւրասիրել է, քէֆ է շանց տուել, երրորդը «բարեկամական» յարաբերութեան մէջ է եղել սրբազանի հետ, չորրորդը լաւ ձի է նստել, հինգերորդը սիգար ու բոնօթի է ուղարկել կամ պանիր ու կօնեակ, վեցերորդը իշխան ձուկ ևն:**) Հայ քահանան եկեղեցու բեմից ասում էր. «կղեր — ազգի աւեր»... «Մուխ ինտրիգների, ոխ ու սեւ նախանձի, որովայնամոլութեան ու տգիտութեան հին դարաւոր ապաստարան» էին ասում Էջմիածնին:***)

Յատկապէս քննադատւում էին գիւղական քահանաները, որոնք մեծ մասամբ տգէտ էին. թեմականաւարանների շատ չնչին թիւով գիւղերում քահանայ դարձան: Որքան և Սինոդը, առաջնորդներից շատերը աշխատեցին գիւղերում ուսեալ քահանաներ ունենալ, այդ վերջ ի վերջոյ չյաջողուեց, որովհետեւ տնտեսական ապահովութիւն չկար գիւղում և կրթւած մարդը չէր համաձայնում ոչ թէ միայն իրեն զոհել կտրելով կուլտուրական կեանքից, այլ եւ իր զաւակներին ուսումից, կրթութիւնից զրկել: Պակաս քննադատելի չեն եղել և քաղաքի քահանաները, որոնց մէջ ծխաբաժանութեան, կրօնի դասեր ստանալու առթիւ խիստ անվայել կռիւներ են եղել:

*) 1906 թ. «Հովիւ» N. 3.
**) «Հովիւ» 1906 թ. N. 16.
***) «Արօր» 1910 թ. N. 1, եր. 149.

Քահանայութիւնը միշտ էլ հալածանքի, անարգանքի ենթակայ է եղել հայ մտաւորականութեան, մամուլի կողմից, անտեսապէս անապահով, երբուն վիճակ ունեցող, մտաւորապէս իր շրջապատի մտայնութիւնից ցածր, բարոյական հեղինակութիւն ունենալուց հեռու և իշխանաւոր կուսակրօն հոգեւորականութեան կողմից որոշ չափով անուշադրութեան մատնւած: Այդ իշխող հոգեւորականութիւնը մատակարարում էր Էջմիածնից միաբանութիւնից, որը միւս վանքերի համեմատութեամբ ուրոյն տեղ էր գրաւում, քանի որ կաթողիկոսանիստ վանք էր:

Էջմիածնի միաբանութեան կրթական աստիճանը դարու սկզբում և վերջում բաւական մե՛ծ տարբերութիւն էր ներկայացնում: Դարու սկզբում մեծ մասամբ «Ժառանգաւորաց» դպրոցաւարտ էին միաբանները, կրօնական կրթութիւն ունեցող, կրօնաւոր իրենց ըմբռնումով, կենցաղով, նիստ ու կացով, նրանց մտաւոր պաշարի աղբիւրներն էին՝ Ս. Գիրքը և վենետիկի հայագիտական հրատարակութիւնները, նրանց զբաղման նիւթն էր հնախօսութիւն, ճանապարհորդութիւն և հայ հին մատենագրութիւնը: Նրանք ամէն օր ժամ գնացող, ժամապաշտութիւնը բերան գիտցող, «Մաշտոց»ի, «Տօնացոյց»ի կանոնները խստութեամբ պահող, եկեղեցու աւանդութիւններին չափ չատագով անձինք էին: Նրանք աւելի կրօնական, քան հասարակական-ազգային գործիչներ էին և չէին էլ կարող ուրիշ կերպ լինել, քանի որ դեռ հայ միջավայրում այդ խնդիրները հրապարակ չէին հանւած: 70-ական թւականներից սկսած միաբանութեան կազմը զգալիօրէն փոխւում է. վանք են մտնում համալսարանա-

կան կրթութեան տէր անձինք, Գէորգեան ճեմարանի հիմնարկութիւնից յետոյ նաեւ ճեմարանաւարտները, այնպէս որ 1903-4 թւերին շուրջ 20 հոգի կային. գալիս են և դրսի դպրոցաւարտները, այնպէս որ սրանց թիւը քսաներորդ դարի սկզբին գգալի տոկոս էր կազմած: Այս նոր սերունդը հնից արդէն բաւական տարբերւում էր իր մտաւոր պաշարով և աշխարհահայեացքով. սրանք այլեւս հին կրօնական նեղ աշխարհահայեացքը չունէին, հեռացել էին իսպառ անտիապաշտական ու սխօլաստիկ ըմբռնումներից. սրանց համար այլ եւս կարեւորը կրօնական-եկեղեցական պաշտամունքը չէր, ո՛չ ծէսն ու հանդէսը, այլ հասարակական-ազգային գործունէութիւնը: Ժամանակի քաղաքական ու տնտեսական դրութեան հետեւանքն էր այս (Գօլիցինի ռէժիմի շրջան) և ասպարէզից հեռացող հայ մտաւորականին փոխարինում էր որոշ տեղերում էջմիածնի միաբանը. դպրոցներից վտարւող հայ մտաւորականը ազգին ծառայելու միջոցը համարում էր էջմիածնի միաբան դառնալը:

Հասկանալի է, որ նոր սերունդի համար, աննշան բացառութեամբ, հայ եկեղեցու կրօնական-բարոյական կազմը երկրորդական տեղ էր բռնում, նրանք ամենեւին այն նախանձախնդրութիւնը եւ հետաքրքրութիւնը չէին ցոյց տալիս եկեղեցու արարողական-ծիսական կազմի վերաբերմամբ, ինչ որ ունէին հին սերնդի միաբանները: Դրա փոխարէն հասարակական, կրթական ասպարէզում նա բաւական դեր է կատարել, էջմիածնի մատենադարանը հարստացնելու, հայագիտութիւնը զարգացնելու, էջմիածինը նոր կուլտուրական հիմնարկութիւններով զարդարելու, ճեմարանը և թեմական դպրոցները կարգի բերելու, հրատարակութիւններ, ձեռագրների ուսումնասիրութիւններ անելու բաւական գգալի հետքեր է թողել 20-30 տարւայ ընթացքում: Այս բեղմնաւոր գործունէութեան շնորհիւ

էջմիածնի դիրքը և հեղինակութիւնը բաւական մեծացան և հայ մտաւորականութիւնը այս հանգամանքը լուրջ հաշւի էր առնում:

Միաբանութեան նոր սերունդը հետզհետէ իր ձեռքն էր առնում դրսի և ներսի պաշտօնները, դիրքեր գրաւում և հայ մտաւորականութեան հետ աւելի հեշտ էր դաշն կապում ու նրա հետ նոյն նպատակին ձգտում:

Էջմիածնի միաբանութիւնը, իր հետ և ռուսահայ հոգեւորականութիւնը, որ սկզբում հայ մտաւորականութեան առաջից, ապա կողքին, ապա և յետեւից էր գնացել, այդ մտաւորականութեան ազգային-հասարակական պահանջներին միշտ է ընդառաջ գնացել ու եկեղեցու ժողովրդականացման սկզբունքին լիուլի ծառայել, նպաստել, սկսած ծխական դպրոցների հոգաբարձական ինստիտուտը առաջ բերելուց մինչեւ 1906 թւի ռուսահայ ազգային կենտրոնական համագումարը, որի առթիւ «Արարատ»ը գրում էր. «Եկեղեցու շէնքը սոսկ աղօթատեղի է և ուրիշ ոչինչ. նա սխալմամբ է իւր վրայ եկեղեցի անունն առել. Հայաստանեայց եկեղեցին ժողովուրդն է և նա պիտի աշխատէ անլեզու քար ու կրի չնմանել:» *)

Այսպիսով ռուսահայ եկեղեցին և հոգեւորականութիւնը ԺԹ. դարու վերջին և քսաներորդի սկզբին տնտեսապէս քայքայւած, անապահով վիճակ ունէր, մտաւորապէս իր շրջապատի հայ մտաւորականութիւնից ցած էր, և բացառութեամբ էջմիածնի միաբանութեան և քաղաքների մի քանի քահանաների, չունէր բարոյական հեղինակութիւն: Ռուսահայ հոգեւորականութեան առաջ բաց էր կրօնական-բարոյական աշխատանքի ասպարէզը, որպիսի գործը նա նոր պիտի կազմակերպէր: Այս վիճակով նա պիտի ազգային ե-

*) «Արարատ» 1906 Թ. 489 եր.

կեղեցական ժողովի առաջ կանգնէ, հաշուետու լինի: Հայ եկեղեցուոջին նրա ազգային ժողովրդական դերի մէջ է եղել, իսկ այդ տարրը այժմ նրա մէջ թոյլ է. հոգեւորականութիւնը այս ասպարէզում մնացել է մեկուսացած:

VI.

ԵՋՐԱՓԱԿՈՒՄ

Կուլտուրայի զարգացման պատմութիւնը ցոյց է տալիս, որ կրօնական տարրը իր հին ըմբռնումներով հետզհետէ թուլանում է: Մարդը կոպիտ անոտիապաշտութիւնից անցնում է հոգեկան, գերզգացական ըմբռնումների պաշտամունքին: Այժմ այլեւս միջին դարու ըմբռնումը Աստծու, բնութեան, մարդու, սրանց ստեղծագործութեան մասին, անընդունելի է: Կրօնական ըմբռնումները դրախտի, դժոխքի, սատանայի, հրեշտակի, իրենց ամենատեսակ արհաւիրքներով ու հրապոյրներով, դադարել են եւ եթէ դեռ դիւղացին դրանցով ապրում է, հաստատ պիտենք, որ յաջորդ սերունդները նոյնպէս պիտի մերժեն այդ և դառնան այլ աշխարհահայեացքի:

Քրիստոնէական կրօնը, եկեղեցին շատ է քննադատել, շատ է դիտական լուրջ ուսումնասիրութիւններով պարզել, որ այսուհետեւ էլ կարելի լինի միամտութիւն ունենալ պնդելու միջնադարեան դաւանաբանական ըմբռնումների վրայ և չընդունելու որ մարդկային զարգացման մէջ այդ ուսմունքն ևս մի հանդրուան է դէպի կատարելագործութիւնը տանող, ինչպէս հին դարերում նախաքրիստոնէական կրօնները են եղել:

Ըստ իս ազգային եկեղեցական ժողովը գումարելուց առաջ այս ըմբռնումը պէտք է պարզ լինի և բարեփոխութեան խնդրի լուծման ժամանակ այս

մտայնութիւնը պէտք է ոչն ուղղը լինի: Պէտք է լաւ ուշադրութիւն դարձնենք այն բանի վրայ, որ այլ է կրօնը, այլ է եկեղեցին. մինչ կրօնը իր էութեամբ յաւիտենական է մարդու գոյութեան չափ, եկեղեցին աւելի շուտ իբր հասարակական կազմակերպութիւն փոփոխական է և պայմանաւորւած է դրսի հասարակական, տնտեսական և քաղաքական տեսակներով: Կրօնը դէպի անհատականացում է գնում. եկեղեցին իր էութեամբ հասարակական կազմակերպութիւն է: Եկեղեցին պատմական կատեգորիա է, իսկ կրօնը հոգեկան: Հոգեկան պահանջի դրսեւորումը փոփոխւում է ժամանակի ընթացքում, ինչպէս գեղարուեստի, նոյնպէս և կրօնի մէջ. փոխւում են դրսի պայմանները, մարդը իր ճաշակն ու ըմբռնումը փոխում է, փոխւում են և դրանց համապատասխան հոգեկան պահանջների էութիւնն ու դրսեւորումը: Ժթ-րդ դարու բոլոր յեղափոխութիւններն էլ, սկսած ֆրանսիական մեծ յեղափոխութիւնից մինչեւ ռուսական մեծ յեղափոխութիւնը, ցոյց են տալիս, որ եկեղեցին եւս փոփոխութիւնների է ենթարկւում. ինում է ուրեմն այդ փոփոխութիւնները կանոնաւորել ու ժամանակի հասուն պահանջների համապատասխան դասաւորել:

«Կրօնները ծագել են, ծաղկման հասել, միլիոնաւոր մարդկանց իրենց ենթարկել և կորել են, ոչնչանալով անհատասարութիւնների ու արտաքին ձեւերի ճնշման տակ, որոնցով մարդը յամառօրէն ծանրաբեռնել է ճշմարտութեան այն մանրիկը, որ սկզբում առաջ է բերել կրօնի ծագումը: Այդպէս է եղել միշտ, այդպէս էլ միշտ կ'լինի: Կարող ենք կասկածել այդ փաստի վերաբերմամբ, բայց անխուսափելի ապագան այդ է: Ճշմարտութիւն որոնողները նախորդներից ճանաչած օգմանների հրաժարւում են միայն նրա համար, որ նոր օգմաններ ստեղծեն, որոնք նոյնքան անբաւարար են, որքան առաջինները:» *)

*) Թոմաչար. «Պուտի դօստիժէնիա» 1915 Թ. 121-122 եր.

Այս ընդհանուր ըմբռնումը ազգային-եկեղեցական ժողովի բանիմաց մասի համար, իմ կարծիքով, դեկավար պիտի լինի. այդ դէպքում նա կ'խուսափէ միջնադարեան տիեզերական ժողովներին յատուկ մետաֆիզիկ բնոյթ ունեցող վիճաբանութիւններից և ոչխալ տեսակների վրայ յենելով կ'կատարէ դրական աշխատանք և ո'չ դատանաբանական խճողուած խընդիրների պարզաբանութեան նուիրուած մետաֆիզիկ վէճերի մարզանք: Այս առաջին հերթին:

Երկրորդ հերթին ժողովն ի նկատի պիտի ունենար ռուսահայի (նախկին ըմբռնումով) տնտեսական-քաղաքական վիճակը և այդ միջավայրին համապատասխանող բարեփոխութիւններ կատարէր: Վերջում մօտաւորապէս պարզուեց ռուսահայի վիճակը իր տընտեսական-կուլտուրական պայմանների տեսակէտից, թէեւ ուրւագծօրէն. այդ պայմաններն էլ պիտի թելադրեն ժողովականներին այն բարեփոխութիւնները, որ ժողովը պէտք է կեանքի մէջ իրականացնել աշխատէ: Այստեղ առաջին հերթին ժողովի առաջ ծառացողը եկեղեցու տնտեսական ապահովութեան հարցն է, որի բաւարար լուծումից է կախւած միւս հարցերի դրական ընթացք ստանալը:

Երրորդ հերթին ժողովն ի նկատի պիտի ունենայ որ առհասարակ ամեն ինչ դէպի ժողովրդականացումն է գնում: Նոյնը պէտք է և բարեփոխութիւնների մէջ երեւան գայ, յատկապէս եկեղեցու վարչական կազմակերպութեան մէջ: Հոգեւոր աստիճանակարգութիւնը, վարչական մարմինները, սրանց փոխադարձ յարաբերութիւնները պէտք է ազատագրուեն միապետական բիւրոկրատիական այն յաւելուածներից, որոնք այժմեան դէմոկրատիայի դարին խորթ են, անհարազատ:

Չորրորդ հերթին ժողովն ի նկատի պիտի ունենայ այն հանգամանքը, որ կրօնի խնդրում դեռ խիստ

պահպանողական տարր ունի նա յանձինս ստւարաթիւ դիւղացիութեան, որին եթէ մտաւորականութիւնը աշխատէ իր ըմբռնումները կրօնի վերաբերմամբ փաթթաթել, առաջ կ'բերէ խիստ պատակտում, անջատում, և եկեղեցին կարող է հատւածների բաժանել, որպիսի գործելակերպից խոպատ պէտք է հրաժարւել: Մտաւորականութիւնը պէտք է լաւ յիշէ, որ ըմբռնումների տեսակէտից իր և դիւղացիութեան մէջ ահագին տարբերութիւն կայ, սար ու ձոր անջատում են նրանց. եթէ մտաւորականութիւնը իր ուղածի, ըմբռնածի պէս ձեւակերպէ խնդիրները, դիւղացիութիւնը այդ ամենին օտար, խորթ կ'մնայ ու քարեփոխութիւններին նա կ'անուանէ հերձւածողութիւն: Կրօնի խնդրում աւանդականի ոյժը շատ է ուժեղ. ամեն մի աւանդութիւն, որ դիւղացու կեանքում կենսականգործնական դեր ունի, որը նրա կեանքն է դեկավարում, արհեստականօրէն փոխել հնար չէ. պէտք է ժամանակի պայմանները, ինչպէս ըրսի, այնպէս և դիւղացու աշխարհահայեացքի, իրենք փոխւեն, իրենք աւելորդ դարձնեն նրա դոյութիւնը: Որքան և ծէսը, ձեւը մտաւորականի համար էական արժէք չունենայ, դիւղացու համար, որ դեռ ոչխալ շօշափելի դրսեւորումների կարիք ունի, այդ ձեւն ու ծէսը դեռ արժէք են. հետեւապէս ժողովը այս հանգամանքը լրջամիտ ուշադրութեան պիտի առնէ. հակառակ դէպքում կրկին 1906 թւի ռուսահայ կենտրոնական ժողովի դերում կ'լինի նա:

Վաղուց է հայ եկեղեցին չի ունեցել կանոնաւոր ազգային-եկեղեցական ժողով, և նրա կարիքը վաղուց է զգացւում, սակայն առանց համապատասխան պայմանները լինելու շտապել գումարել ժողով կ'նշանակէ աւելի եւս խճողել, բարդացնել խնդիրները և առանց կանոնաւոր լուծում տալու հեռանալ: Ազգ. եկ. ժողովը մեր ազգային հասարակական զարգացման

(10)

2եկ
1273

խնդրում դեր ունի կատարելու. հետեւապէս պատասխանատու գործ է ժողովի դատարումը. պէտք է դեռ խնդիրը պարզաբանուէ շատերի կողմից և բազմակողմանի կերպով:

Պէտք է մոռանանք վերջապէս դաղութահայութիւնը, որը ազգային եկեղեցական ժողովում աւելի մեծ թիւով պատգամաւոր-ներկայացուցիչներով հանդէս կ'գայ, իսկ դաղութահայութեան եկեղեցական-կրօնական ըմբռնումները, ինչպէս և ազգային-հասարակականը տարբեր են մերինից: Երկու խաշտր հասուածների, բուն հայրենիքի և դաղութահայութեան ըմբռնումների արդիւնաւէտ զուգորդութիւնը առաջ բերելու համար մեծ տակտ ու հմտութիւն է հարկաւոր, որպէսի նպատակի հասնելու համար փոխադարձ ծանօթութիւնը և իրար հասկանալը կարեւոր է:

Ազգային-եկեղեցական ժողովը անհրաժեշտ է, բայց նախնական լուրջ նախապատրաստութիւններից յետոյ միայն: Հանգրուան ազգային ժողովի

1924 Թ. Էջմիածին:

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0397474